ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ. ԳԻՐՔ 1

Թոբիաս Գոմբերտ և ուրիշներ

Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը

AKADEMIE FÜR SOZIALE DEMOKRATIE

FRIEDRICH EBERT STIFTUNG

ISBN 978-99941-2-553-1

Հրատարակիչ՝ **Ֆրիդրիխ Էբերտ հիմադրամի** հայաստանյան մասնաճյուղ
Գերմաներեն հրատարակությունը՝ Քաղաքական Ակադեմիայի կողմից, Բոնն
Հայերեն հրատարակությունը՝ Հրայր Մարուխյան հիմադրամ, Երևան,
հունիս 2011թ.

Խմբագիրներ՝ Ջուլիա Բլասիուս, Թոբիաս Գոմբերտ, Քրիստիան Քրել, Մարթին Թիմփ
Պատասխանատու՝ Քրիստիան Քրել
Նախագծի ղեկավար՝ Ջուլիա Բլասիուս (Յոխեն Դահմ)
Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը
Էջադրող՝ Գրիգոր Հակոբյան
Թարգմանիչ՝ Սեդա Ստեփանյան
Շապիկի նկարը՝ Frédéric Cilon, PhotoAlto

Առանձին բաժինների հեղինակները պատասխանատու են բովանդակության համար:
Նրանց կարծիքը պարտադիր չէ, որ համընկնի Ֆրիդրիխ Էբերտ հիմադրամի դիրքորոշման հետ:

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱ. ԳԻՐՔ 1

Թոբիաս Գոմբերտ և ուրիշներ

Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն գերմաներեն առաջին հրատարակության **4**

Ներածություն միջազգային հրատարակության **6**

1. Ի՞նչ է սոցիալ-դեմոկրատիան **8**

2. Հիմնարար արժեքներ **11**

2.1. Ազատություն 12

2.2. Հավասարություն-Արդարություն 20

2.3. Համերաշխություն 38

2.4. Այլ տեսակետներ 41

2.5. Հիմնարար արժեքները գործնականում 44

3. Հասարակության մոդելներ. Համեմատություն **62**

3.1. Շուկայական կապիտալիզմ և ժողովրդավարություն 64

3.2. Ազատական տեսակետներ 69

3.3. Պահպանողական տեսակետներ 73

3.4. Սոցիալ-դեմոկրատիան և ժողովրդավարական սոցիալիզմը 75

4. Սոցիալ-դեմոկրատիայի

վերաբերյալ Թոմաս Մեյերի տեսությունը **90**

4.1. Սկզբնակետ 93

4.2. Ազատակամությունն ընդդեմ սոցիալ-դեմոկրատիայի 97

4.3. Շեղում. հիմնական արժեքների, իրավունքների և իրականացման գործիքների երրորդությունը 100

4.4. Դրական և բացասական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ 105

4.5. Պետության պարտականությունները 108

5. Երկրների մոդելներ **110**

5.1. ԱՄՆ 111

5.2. Մեծ Բրիտանիա 118

5.3. Գերմանիա 126

5.4. Ճապոնիա 134

5.5. Շվեդիա 141

6. Եզրափակելով՝ դեպի սկիզբ **150**

Գրականություն **152**

Խորհուրդ է տրվում ընթերցել **154**

Հեղինակների մասին **158**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

գերմաներեն առաջին հրատարակության

Քաղաքականությունը պահանջում է հստակ ուղղվածություն: Միայն նրանք, ովքեր ունակ են հստակ արտահայտելու իրենց նպատակները, կկարողանան դրանք ներշնչել նաև մյուսներին: Այս գրքում մենք կներկայացնենք, թե ինչ է սոցիալ-դեմոկրատիան այսօր՝ 21-րդ դարում, որոնք են նրա հիմնարար արժեքները, նրա նպատակները և թե ինչպեսկարելի է այն կիրառել գործնականում:

Մի բան հստակ է. սոցիալ-դեմոկրատիա հասկացությունը կանխորոշված կամ ստատիկ վիճակ չէ, այլ՝ մշտապես քննարկվող և վիճարկվող գործընթաց: Այս աշխատությունը պատրաստի պատասխաններ չի տալիս, այլ տրամադրում է ծանոթանալու երևույթին և մտորելու:

Այս գրքի հիմնական ընթերցողները կլինեն Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի կրթական ծրագրերին մասնակցող անձինք, որոնց համար այն կլինի տեղեկատվության հիմնական աղբյուր: Այն կարող է օգտակար լինել նաև նրանց, ովքեր հետաքրքրված են սոցիալ-դեմոկրատիայով և ցանկանում են ակտիվ մասնակցություն ունենալ այդ թեմայով քննարկումներին:

Հաջորդ բաժիններում ձեզ կծանոթացնենք սոցիալ-դեմոկրատիայի հանդեպ տարբեր մոտեցումների: Ազատություն, արդարություն և համերաշխություն. ահա սրանք են սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները, որոնք ծառայում են որպես սկզբնակետ: Այս հիման վրա այստեղ կքննարկվեն այն ուղիները, որոնցով սոցիալ-դեմոկրատիան տարբերվում է քաղաքական այլ հոսանքներից: Եվ, վերջապես, կանդրադառնանք Թոմաս Մեյերի *«Սոցիալ-դեմոկրատիայի տեսությանը» (Theorie der Sozialen Demokratie)*, որ ծառայում է որպես կարևոր ձեռնարկ, քննարկելու համար 5 երկրներում իրականացվող և գործնականում կիրառվող սոցիալ-դեմոկրատիան:

«Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» առաջին գիրքն է: Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի կողմից կտպագրվեն այլ աշխատություններ ևս:

Կցանկանայի շնորհակալություն հայտնել Թոբիաս Գոմբերտին և Մարթին Թիմ-փին: Թոբիաս Գոմբերտը գրել է այս աշխատության մեծ մասը, որին բազմաթիվ փուլերում օգնել է Մարթին Թիմփը: Ավելին, որպես խմբագիրներ նրանք հանդես են բերել զարմանալի ունակություններ և մասնագիտական հմտություններ: Շնոր-հիվ նրանց խանդավառության և աշխատանքի, գիրքը հնարավոր եղավ տպագրել այսքան կարճ ժամանակահատվածում: Նրանք, ինչպես նաև այս նախագծում ընդգրկված մյուս հեղինակները, իրենց բացառիկ համագործակցության համար արժանի են մեր շնորհակալական խոսքին:

Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի խորհրդանիշը կողմնացույցն է: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը իր Ակադեմիայի միջոցով ցանկացել է տրամադրել դիրքո-րոշումների և կողմնորոշումների հստակեցման մի ընդհանուր սխեմա: Մենք ուրախ կլինենք, եթե մեր ծրագրերն օգնեն գտնելու ձեր քաղաքական ուղին: Մշտական հանրային ներգրավվածությունը և քննարկումները շատ կարևոր են սոցիալ-դեմոկրատիայի գաղափարը կենդանի պահելու համար:

Քրիստիան Քրել
Տնօրեն
Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիա

Ջուլիա Բլասիուս
Նախագծի ղեկավար
«Սոցիալ-դեմոկրատիա». գիրք1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
միջազգային հրատարակության

Որո՞նք են սոցիալ-դեմոկրատիայի, ազատականության և պահպանողականության միջև տարբերությունները:

Սոցիալ-քաղաքական իդեալական մոդելների փնտրտուքը և դրա շուրջ քննարկումները համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի պայմաններում առավել կարևոր են, քան երբևէ: Ծուկայի ձախողման հետևանքները շատ ավելի ակնհայտ են, իսկ ակտիվ և արդյունավետ լուծումներ գտնելու հորդորները՝ նպատակային: Լեհման եղբայրների ձախողման հետևանքով ոչ միայն ծնկի բերվեցին աշխարհի ամենամեծ ազգային տնտեսությունները, այլև փորձության ենթարկվեցին քաղաքական շատ սկզբունքներ և դոգմաներ (պնդումներ), որոնք դեռ ոչ վաղ անցյալում համարվում էին ակնառու և անվիճելի: Ժողովրդավարական քաղաքականության հիմնարար հարցերը կրկին դարձան հրատապ: Ինչպե՞ս գլոբալիզացիայի դարաշրջանում հասնել սոցիալական արդարության: Ինչպե՞ս մերօրյա հասարակություններում վերացնել անձնական շահի և համերաշխության միջև լարվածության մթնոլորտը: Ո՞րն է ազատության և հավասարության իմաստը ներկա սոցիալ-քաղաքական իրականության մեջ: Եվ ո՞րն է պետության դերը այս սկզբունքների կիրառման գործում:

Սոցիալ-դեմոկրատիայի մասին սույն գրքով Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամս այս և այլ հիմնարար հարցերի պատասխանելու համար առաջարկում է իր օգնությունը, այն է՝ սեփական հետազոտություններով և վերլուծություններով նպաստել ժողովրդավարության կայացմանը և հասարակության զարգացմանը, օժանդակել խաղաղությանն ու անվտանգությանը, փնտրել գլոբալիզացիայի հասնելու ուղիներ՝ համերաշխության պայմաններում և աջակցել Եվրամիության ընդլայնմանն ու խորացմանը: Գրքի միջազգային հրատարակությունը նախատեսված է ավելի քան 100 երկրներում ապրող՝ քաղաքական որոշումներ կայացնող և կարծիք ձևավորող մարդկանց համար:

Սոցիալ-դեմոկրատիայի մասին այս գիրքը Գերմանիայում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի գործունեությունն է քաղաքական կրթության ասպարեզում: Առաջին հատորը նվիրված է *«Սոցիալ-դեմոկրատիայի հիմքեր»-ին:* Մյուս հատորները, որոնք կոչվում են *«Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան»* և *«Բարեկեցիկ պետությունը և սոցիալ-դեմոկրատիան»*, արդեն լույս են տեսել գերմաներեն լեզվով:

Գրքում ներկայացված օրինակների մեծ մասն արտացոլում է Գերմանիայի կամ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ այլ երկրների քաղաքականությունը և հասարակությունը: Օրինակները ներկայացնում են քաղաքական կատարյալ մոդելներ և գործողություններ, որոնք այլ սոցիալ-քաղաքական ենթատեքստերում նույնպես ունեն որոշակի համապատասխանություն: Ֆրիդրիխ Էբերտ հիմադրամի միջազգային աշխատանքների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ հիմարար արժեքները և կատարյալ սոցիալ-դեմոկրատիան չեն ճանաչում ո՛չ աշխարհագրական, ո՛չ մշակութային և ո՛չ լեզվական սահմաններ:

Այդ իսկ պատճառով կցանկանայի, որ սոցիալ-դեմոկրատիայի մասին միջազգային հրատարակության այս գիրքն ունենար մեծաքանակ և նվիրված ընթերցողներ:

Քրիստիան Կեսպեր
Տնօրեն
Միջազգային համագործակցության բաժին

1. ԻՆՉ Է ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Ի՞նչ է սոցիալ-դեմոկրատիան. չորս պատասխան

«*Սոցիալ-դեմոկրատիա. արդյոք պարզ չէ՞, թե ինչ է սա: Այն, որ* դեմոկրատիան հավասարության հիմքի վրա ծառայելու է հասարակության յուրաքանչյուր անդամին, անկապտելի գաղափար է: Սա արդյոք ինքնին ակնհայտ չէ՞»:

«*Սոցիալ-դեմոկրատիա. արդյոք մենք Գերմանիայում չունե՞նք այն* սոցիալ-շուկայական տնտեսության մոդելի տեսքով»:

«Սոցիալ-դեմոկրատիա. այն պատկանում է միայն Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը և հետևաբար վերաբերում է միայն սոցիալ-դեմոկրատներին. դա նրանց տեսությունն է»:

«Սոցիալ-դեմոկրատիա. և ինչու ոչ՝ դեմոկրատական սոցիալիզմ: Դա չէ՞ այդ հասկացության ավանդական իմաստը»:

Բայց ո՞վ է իրավացի

Այս պահից, իսկ գուցե և ավելի վաղ, բանավեճերը դառնում են առավել շփոթեցուցիչ: Բայց ո՞վ է իրավացի: Նշմարվում է Բաբելոնյան աշտարակի ուրվագիծը և առաջնթացը թվում է սարսափելի:

Առաջնահերթ խնդիրն ընդհանուր լեզու գտնելն է, հասկանալու և տարբեր դիրքորոշումները բացատրելու հնարավորություն տալը: Ուղիները դեռ պետք է համաձայնեցվեն, բայց առաջին հերթին պետք է գտնել ընդհանուր սկզբնակետը: Սոցիալ-դեմոկրատիայի իմաստի մասին այս չորս մոտեցումներից յուրաքանչյուրն ինչ-որ կարևոր բան է առաջարկում քննարկումների համար, որոշ մտահոգություններ նրա ստեղծման և ակնկալիքների հարցում, այլ կերպ ասած, թե օրինաչափորեն ինչ կարելի է սպասել սոցիալ-դեմոկրատիայից:

Ոմանք կհարցնեն, թե ինչ է արդեն արվել, այսպես ասած, փորձառական քննություն անցած հասարակության մեջ:

Երրորդ խումբը, ընդհակառակը, կհարցնի, թե ովքե՞ր են հասարակության մեջ սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները: Այս հարցը հատուկ կարևորություն ունի:

Եվ վերջապես, կան մարդիկ, որոնց հետաքրքրում է արդեն հաստատված գաղափարից շեղվելու առավելությունը: Այնուամենայնիվ, հարցն այն է,, թե որն է սոցիալ-

դեմոկրատիայի ամենակարևոր բաղկացուցիչ մասը և ինչով է այն տարբերվում այլ դիրքորոշումներից:

Մեզ անհրաժեշտ է հստակություն

Յուրաքանչյուրը, ով ցանկանում է ներկայացնել սոցիալ-դեմոկրատիան, այնուամենայնիվ, պետք է առաջին հերթին պարզաբանի, թե ինչ է ուզում ասել և ինչ լսարանի է ուղղում իր խոսքը: Սոցիալ-դեմոկրատիան չունի ֆիքսված (ամրագրված) իմաստ: Այն անորոշ է և մարդիկ դա նույնացնում են մի ամբողջ շարք արժեքների հետ: Այդ գաղափարն ընկալվում է սոցիալապես, քանի որ այն ներգործում է սոցիալապես և ընդունվում կամ մերժվում է տարբեր շահագրգռություններ ունեցող սոցիալական խմբերի կողմից:

Այս չորս հարցերը հաստատում են, որ մինչ սոցիալ-դեմոկրատիան կիրառելը, պետք է ճշգրտորեն սահմանել կիրառման հետ կապված բոլոր պայմանները և լիովին գիտակցել, թե ինչ սոցիալական նպատակներ են հետապնդվում:

Սոցիալ-դեմոկրատիա հասկացության սահմանումը

«Սոցիալ-դեմոկրատիա» գաղափարը տեսական բանավեճերում բազմաթիվ բնորոշումներ է ստացել: Այստեղ չկա միակ և պարտադիր սահմանում:

Իսկ ինչպե՞ս վարվել բազմազան սահմանումների առկայության պարագայում: Նախ՝ ակադեմիական քննարկումների համատեքստում ի հայտ եկած կոնցեպտուալ հիմքերի բացատրությունները պետք է համեմատվեն; Ապա՝ պետք է ուսումնասիրվեն այն հիմքերը, որոնք հեղինակները կտրամադրեն իրենց տեսությունը հաստատելու համար: Փորձով հաստատված արդյունքների հետ պետք է համակերպվել: Պետք է պարզել նաև՝ սահմանումները հստա՞կ են, արդյոք փորձառական տվյալները չե՞ն հակասում միմյանց, և արդյոք սկզբնաղբյուրը ճի՞շտ է մեկնաբանվել:

Գործնական կիրառում

Ակադեմիական շրջանակներում սրանք վստահաբար շատ կարևոր հարցեր են: Իսկ նրանց համա՞ր, ովքեր սոցիալապես և քաղաքականապես ակտիվ են, բայց ընդգրկված չեն այս շրջանակներում և տեսական խնդիրների մեջ խորանալու ժամանակ էլ չունե՞ն: Առանց լիովին անտեսելու տեխնիկական բացատրությունները և սահմանումները, ո՞ւր ենք գնում այստեղից:

Տարբեր մոտեցումներ

Այս գիրքը չի կարող լուծել այդ հարցը, բայց կարող է բանավեճերի համար սկզբնակետ հանդիսանալ: Այդ նպատակով ուրվագծված են տարբեր քաղաքական և տեսական մոտեցումներ: Ամեն անձ պետք է ինքը գտնի սեփական դիրքորոշումը: Այս գիրքը չի կարող և պետք էլ չէ, որ նրա փոխարեն անի դա: Այն ավելի շատ կարող է ներշնչանքի աղբյուր ծառայել:

Ստորև կքննարկվեն մի շարք մոտեցումներ, և ընթերցողն ինքը կորոշի, թե որն է առավել համոզիչ:

Վերևում արված մեր հարցադրումներից բխում է, որ ուսումնասիրությունը պետք է ընթանա հետևյալ մակարդակներով՝

- *նորմատիվ*, որը փնտրում է սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները և սկզբունքները,
- *տեսական*, որն առնչվում է սոցիալ-դեմոկրատիայի տեսության հետ,
- *փորձառական*, որը հանգամանորեն ուսումնասիրում է սոցիալ-դեմոկրատիայի կիրառումը տարբեր երկրներում:

Մենք մանրամասն, առանձին գլուխներով կքննարկենք այս երեք մակարդակները:

Տեսական մակարդակ Թոմաս Մեյեր. «Սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը»

Նորմատիվ մակարդակը կքննարկվի հաջորդ երկու գլուխներում (գլուխ 2 և 3), որտեղ ըստ ամենայնի կուսումնասիրվեն ազատության, արդարության և համերաշխության հիմնական արժեքները և կպարզաբանվի, թե ինչպես են գործնականում կիրառվում հասարակության տարբեր մոդելները (ազատականություն, պահպանողականություն և սոցիալ-դեմոկրատիա):

Տեսական մակարդակն ուսումնասիրվելու է 4-րդ գլխում՝ վկայակոչելով Թոմաս Մեյերի *«Սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը»*: Մենք ընտրեցինք Մեյերի տեսությունը, քանի որ այն ընդգրկում է հստակ փաստարկներ և ներառում է տարբեր մակարդակներ:

5-րդ գլուխը, որը նվիրված է փորձառական մակարդակին և որտեղ հողում է արվում տարբեր երկրների փորձին, իր դիրքորոշումն է ստանում Թոմաս Մեյերից, որն իր *«Սոցիալ-դեմոկրատիան գործնականում»* (*Praxis der Sozialen Demokratie*) աշխատությունում նշում է, որ սոցիալ-դեմոկրատիան կարելի է կիրառել տարբեր գործիքներով, ինչպես նաև հաջողության տարբեր աստիճաններով:

2. ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

Ազատություն, հավասարություն, եղբայրություն

«Liberté, egalité, fraternité!». սրանք այն հիմնական կարգախոսներն էին, որ հնչում էին Ֆրանսիական հեղափոխության ժամանակ և այսօր էլ մնում են որպես ժողովրդավարական կուսակցությունների հիմնական արժեքներ: Դրանց ձևավորումը սկսվեց 19-րդ դարում, բուրժուազիայի առաջխաղացման հետ: Շուտով այդ գաղափարները գրավեցին ողջ աշխարհը, իսկ 20-րդ դարի կեսերից դարձան ստանդարտներ, որոնցով չափվում էին պետությունները և հասարակությունները:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների համաձայնագրերը որպես հիմք

Սա արտացոլվել է նաև Միացյալ ազգերի կազմակերպություն իրավական փաստաթղթերի հիմքում: 1966թ. մարդու իրավունքների երկու համաձայնագրերում հիմնական քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները օրինականացվեցին և վավերացվեցին աշխարհի գրեթե բոլոր երկրներում՝ դառնալով գլոբալ իրավական հիմք: Հիմնական իրավունքները պետք է ապահովեն հիմնական սկզբունքների փոխանցումը դեպի իրավական դաշտ:

Պետք է նշել, որ շատ երկրներ, միասնաբար, համաձայնության եկած, չեն կիրառում հիմնական իրավունքները: Ավելին, կան երկրներ, որտեղ այդ իրավունքները կոպտորեն խախտվում են:

Հիմնական արժեքները և իրավունքները

Որոշ երկրներում, կասկած կա, հիմնական իրավունքները պարտադրվում են, ինչի պատճառով էլ հիմնարար արժեքները թերի են մնում, ունենում են շատ բացթողումներ: Այս դեպքում հարցը ոչ թե տեսական է, այլ տվյալ երկրի, ինչպես նաև նրա առանձին մարզերի, հասարակության ներկայացուցիչների համար քաղաքական և սոցիալական հարաբերությունների քննարկման թեմա:

Սակայն քաղաքական կուրսի որոշման ժամանակ հիմնարար արժեքները և դրանց իրականացումը հիմնական իրավունքների տեսքով, քաղաքական կուրսի հաջողության գնահատման չափանիշներ են: Ուստի հարկավոր է այս արժեքները համաձայնեցնել հենց սկզբից:

2007թ. մանրամասն քննարկվեց հիմնարար արժեքների և քաղաքական կողմնորոշման հարցը: Գերմանիայում երկու ամենամեծ կուսակցությունները՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ՍԴԿ) և Քրիստոնեադեմոկրատական միությունը (ՔԴՄ), ընդունեցին իրենց նոր ծրագրերը, ինչի նպատակներից մեկն էր՝ նկարագրել, թե ինչպես պետք է սահմանվեն ու կիրառվեն հիմնարար արժեքները ներկա քաղաքականության մեջ:

Հիմնական արժեքները և իրավունքները որպես քաղաքական ուղեցույց

Սոցիալ-դեմոկրատիան նորմատիվ մակարդակում նույնպես շատ բան է վերցնում հիմնարար արժեքներից և մարդու հիմնական իրավունքներից: Նորմատիվ պահանջները և այն, թե ինչքանով դրանք կարող են իրականացվել, հանդիսանում են բոլոր քաղաքական ուղղությունների ճգնաժամային պահը:

Պատմականորեն հիմնարար արժեքները և դրանց հարաբերակցությունը միմյանց հետ դեռ 18-րդ դարից (Լուսավորչական դար) անընդհատ ենթարկվել են փոփոխությունների:

Այսօր ընդհանուր առմամբ կարելի է ելնել երեք հիմնարար արժեքներից՝ ազատություն, հավասարություն-արդարություն և համերաշխություն:

2.1. Ազատություն

Ազատության արմատները

Անկասկած ազատությունն այն հիմնարար արժեքն է, ինչն ընդունում են բոլոր քաղաքական ուժերը: Այն ձեռք ձեռքի տված քայլում է Լուսավորչական դարի մտածելակերպի և, ինչպես պատմաբաններն են անվանել, «բուրժուական» ժամանակաշրջանի (մոտավորապես 1815-1915թթ.) մտածելակերպի հետ: Փիլիսոփաներ Ջոն Լոքը, Ժան Ժակ Ռուսոն, Էմանուել Կանտը և Կարլ Մարքսը, ինչպես նաև քննադատական տեսության շատ ներկայացուցիչներ, տարբեր պատմական ժամանակահատվածներում ներկայացրել են ազատության իրագործման ուղիները:

Ազատության մասին քննարկումներն ընդհանուր առմամբ երեք հարցի շուրջ են.

1. ինչպե՞ս սահմանել ազատությունը,
2. ինչպե՞ս իրականացնել կամ երաշխավորել ազատությունը հասարակության համար,
3. որո՞նք են ազատության սահմանները հասարակության մեջ:

Ինչպե՞ս սահմանել ազատությունը

Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքի կողմից ազատության սահմանումը հաղթահարել է ժամանակի փորձությունները.

Մարդու բնական ազատությունը ազատությունն է գոյություն ունեցող ցանկացած ուժերից: Չլինել որևէ մեկի կամքի կամ օրենսդրական իշխանության տակ, այլ ունենալ օրենքներ, որոնք կհանդիսանան կանոններ իր գործունեության համար: Մարդու ազատությունը հասարակության մեջ չպետք է բխի որևէ այլ օրենսդրական ուժից, քան նրանից, որը սահմանվել է համաձայնեցմամբ: Մարդը չպետք է լինի որևէ մեկի տիրապետության տակ կամ որևէ օրենքով սահմանափակված, այլ այն օրենքներով, ինչ օրենսդիրը կորոշի համաձայն այն վստահության, որ կվայելի:
(Լոք, 1977թ. 213 *«Կառավարման երկու տրակտատ»,* մաս 1, գլուխ 4)

Ըստ Լոքի՝ տարբերակվում է ազատության 3 տեսակ. ազատություն սեփական անձի հանդեպ, սեփական մտքերի և զգացմունքների ազատություն, և ազատություն՝ տնօրինելու օրինական ճանապարհով ձեռք բերված սեփականությունը: Ազատության այս 3 ասպեկտները ներառվել են բազմաթիվ սահմանադրություններում, ինչպես նաև մարդու հիմարար իրավունքների սահմանման մեջ: Ջոն Լոքի այս սահմանման հետ կապված բազմաթիվ տեսակետներ են քննարկվել և մեկնաբանություններ արվել:

Ազատությունը և բնական իրավունքը

Լոքը կարծում էր, որ յուրաքանչյուրին այս ազատությունները տրված են ի վերուստ, նրանք դա ձեռք են բերում ոչ թե հասարակության զարգացման շնորհիվ, այլ այդ իրավունքներն «ունեին ավելի վաղ»:

Պետք է նշել, որ բնական այս իրավունքների «պահպանումը» հնարավոր է միայն առաջադիմական փոփոխությունների շնորհիվ: Դրանք ավելի ուշ կվերափոխվեն և կդառնան հասարակությանը անհատների կողմից ներկայացվող պահանջներ:

Ինչպես է ազատությունը երաշխավորվում և իրականացվում հասարակության մեջ

Լոքի հիմնական փաստարկը, ենթարկվելով բազմաթիվ փիլիսոփայական շեղումների, մինչ օրս պահպանել է իր ուժը և համարվում է ազատության՝ որպես հիմնական արժեքի քննարկման մասին սկզբնակետ: Լոքը մինչ օրս էլ համարվում է ազատականության խոշորագույն մտածողներից մեկը:

Սակայն նույնիսկ Լոքին արվող այս հղումներին՝ մենք չենք կարող անտեսել այն փաստը, որ այս դեպքում ազատության գաղափարն ամրագրված է պատմական տեքստում և չի կարող ճիշտ ընկալվել առանց իր բնօրինակի: Այն չի կարող նաև անմիջապես կիրառվել ժամանակակից իրականությունում: Եվ ուրեմն՝ ինչպե՞ս պետք է ազատությունը երաշխավորվի և իրագործվի հասարակության մեջ:

Պատմական քննարկումների ժամանակ Լոքը, ինչպես նաև Լուսավորչական դարաշրջանի այլ փիլիսոփաներ, դեմ էին այն մտայնությանը, թե, հիմվելով բնական անհավասարության վրա, կարելի է արդարացնել մեծամասնության համար արդարության բացակայությունը: Բնությունից շնորհված հավասարությունը և դրա հետ մեկտեղ՝ հավասար ազատությունը իսկական հեղափոխական պնդումներ էին այն բացարձակ հասարակության մեջ, որտեղ իշխողներն օրինականացրել էին ասես Աստծո կողմից շնորհված իրենց կանոնները:

Ջոն Լոքը (1632– 1704թթ.) ազատականության առաջին և հեղինակավոր ներկայացուցիչներից է:

Լոքը մեծ դեր է ունեցել փորձառականության զարգացման գործում, ուսումնասիրել է, թե ինչպես են մարդիկ սովորում կենսափորձի վրա: Փորձերի համեմատությունն այստեղ հանդիսանում է տեսության սկզբնակետ:

1960թ. Լոքը հրատարակեց իր «Կառավարության երկու տրակտատ» աշխատությունը, որով խարխլեց անգլիական միապետության տեսական հիմքերը և մշակեց սահմանադրություն, որը հիմված էր հասարակության մեջ ազատությունների վրա:



Նկար 1. Ջոն Լոքի ազատության մասին հասկացությունը

Այդուհանդերձ Լոքը չէր սահմանափակվում միայն բնական ազատության գաղափարով, այլ փորձում էր նաև գտնել հասարակության մեջ բնական ազատությունը հասարակական պայմանագրերի միջոցով իրականացնելու ուղիներ:

Եզրափակելով իր փաստարկը, նա վստահեցնում էր, որ հասարակությունում ազատությունը դառնում է մարդու սեփականությունը, ինչն էլ մարդն աշխատում է իրագործել: Մտքի և զգացմունքների ազատությունը պետք է ապահովված լինի հասարակության մեջ՝ հնարավորություն ընձեռելով մարդկանց մասնակցելու քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացներին: Ինչպես նաև ազատություն՝ տնօրինելու օրինական ճանապարհով ձեռք բերված սեփականությունը՝ թույլ տալով մասնակցել ազատ շուկայական հարաբերություններին, ուր բոլորի մուտքը պետք է ազատ լինի: *Հասարակությանը ոչ միայն անհրաժեշտ է բնական ազատության իրավունքը, այլև այն պետք է պաշտպանված լինի ցանկացած սոցիալական կարգավորումից:*

Ռուսոյի՝ Ջոն Լոքի ազատության հասկացության քննադատությունը

Ինչպե՞ս պետք է իրականացվի ազատությունը հասարակությունում. սա էր այն հարցը, որի պատճառով 18-րդ դարում Ջոն Լոքի տեսությունը ենթարկվեց քննադատության: Հավանաբար ամենաազդեցիկ քննադատներից էր Ժան Ժակ Ռուսոն, որ 4 դրույթով դեմ դուրս եկավ ու հակադրվեց Լոքին.

1. Լավ սոցիալական պայմանագիրը կարող է ի հայտ գալ միայն այն դեպքում, երբ հասարակությունը գիտակցաբար հրաժարվի իր բնական իրավունքներից և հետ ստանա դրանք որպես քաղաքացիական իրավունքներ:

2. Ժամանակակից բուրժուա-միապետական հասարակություններում հասարակական պայմանագիրը չի կարող լինել հաջող:

3. Երկարատև «ազատություն» կարող է իրականացվել միայն քաղաքական որոշումներին օրենքով հասնելու դեպքում: Միայն այդ դեպքում է մարդն իր[1] սեփական ցանկությամբ ու դրա շնորհիվ ազատ:

4. Ռուսոյի համար ազատության գաղափարը կապված էր նաև զարգացման հետ: Ռուսոն հավատում էր, որ յուրաքանչյուրն իր մեջ ունի կարողություններ, որը նա անվանում էր *«perfectibilité»* (Benner/Brüggen 1996: 24): Այդպիսի ունակությունները կանխորոշված չեն, բայց դրանք զարգանում են հասարակությանն ընձեռած սովորելու և ապրելու պայմաններին համապատասխան:

[1] Գենդերային կողմնակալությունից խուսափելու համար օգտագործվում է այս անորոշ ձևը:

Իդեալական հասարակություն՝ հավասար և ազատ

Հատկապես զարմանալի է քննադատության առաջին կետը: Ինչո՞ւ պետք է մարդը հրաժարվի իր բոլոր բնական իրավունքներից հանուն այն բանի, որ հետո դրանք կրկին հետ ստանա: Արդյոք սա չի՞ հանգեցնի բռնակալության: Ռուսոյի այս ռադիկալ պնդումներն ապշեցնող են: Նա ընտրեց այս ռադիկալ ձևակերպումը, քանի որ մասամբ ուզում էր հստակեցնել, որ ազատությունը բոլորի համար է և հասարակության մեջ ոչ մի սոցիալական անհավասարություն չպետք է լինի: Նրա ներկայացրած իդեալական հասարակությունը հիմված էր ազատության և հավասարության վրա:

Ժան Ժակ Ռուսոն (1712-1778) ֆրանսիական հեղափոխության նախակարապետներից է:

Ռուսոյի՝ հասարակության մեջ անհավասարության հասնելու մասին այս հիմական և կարևոր աշխատությունը, մասամբ փիլիսոփայական, մասամբ էլ պատմափորձառական է:

Նրա հետագա աշխատությունները նվիրված են ժողովրդավարական պետության տեսությանն ու կրթությանը:

Ազատություն միայն հարուստների՞ համար

Այսպես Ռուսոն փորձում էր հասկանալ՝ ինչքանով է հնարավոր հասարակության մեջ ազատության իրականացումը: Նրա՝ ժամանակի հասարակության ուսումնասիրությունները պարզել են, որ ազատության հռչակումը հիմականում պաշտպանում էր հարուստներին: Նա ընդգծել է այս փաստը՝ ներկայացնելով այն իրական փաստարկները, որոնցով հարուստները կարող էին ճնշել աղքատներին՝ ձևական սոցիալական պայմանագրով և դրանից բխող միակողմանի ազատությամբ.

«Եկեք միավորվենք, – հորդորեց նա աղքատներին, – որպեսզի պաշտպանվենք ճնշումներից, զսպենք փառամոլությունը և պաշտպանենք մարդու ունեցվածքը, եկեք մշակենք արդարության և խաղաղության կանոններ, որոնց առանց բացառության պետք է հետևեն բոլորը, կանոններ, որոնք որոշ չափով բարեփոխումներ կմտցնեն՝ ստիպելով և՛ հարուստներին, և՛ աղքատներին պահպանել փոխադարձ պարտավորությունները: Այլ կերպ ասած՝ եկեք մեր ուժը միմյանց դեմ լարելու փոխարեն միավորենք որպես բարձրագույն իշխանություն, որը մեզ կկառավարի իմաստուն օրենքներով, կպաշտպանի հասարակության բոլոր անդամներին, հետ կմղի ընդհանուր թշնամուն և կպահպանի մեր մեջ համերաշխությունը»: (Ռուսո, 1997: *«Մտորումներ անհավասարության ծագման մասին»*, մաս II, 215– 217)

Ազատությունն ըստ Ռուսոյի՝ կարող է վստահաբար օգտագործվել նաև որպես Knock-down-ի հասցնող փաստարկ: Բայց սա ստիպում է ավելի հանգամանորեն ուսումնասիրել ազատության դեմ բողոքները՝ հասկանալու համար, արդյո՞ք դա պետք է տարածվի բոլորի վրա:

Ազատության և ուժի փոխադարձ կապը

Ռուսոյի քննադատության երրորդ կետը վերաբերում է ազատության մեկ այլ ասպեկտի՝ մասնավորապես ուժի հետ կապին: Մինչդեռ Լոքը և առավել ևս Թոմաս Հոբսը ենթադրում էին, որ չնայած օրենքներն *օրինականացվում են* մարդկանց կողմից, սակայն ամենևին էլ պարտադիր չէ իրականացնել դրանք: Ռուսոն այս հարցում ուներ ռադիկալ ժողովրդավարական տեսակետ: Նա պնդում էր, որ անհատը ազատ է, այսինքն իր սեփական քաղաքական ցանկությունների կրողն է միայն այն դեպքում, երբ նա սահմանափակված է օրենքով, որի ստեղծմանը ինքն է մասնակցել:

«Ունակությունը, որ զարգացնում է բոլորին»

Իր քննադատության չորրորդ կետում Ռուսոն անդրադառնում է Լոքի ազատությանը՝ որպես գլխավոր հարցի կոնցեպցիայի: Նա կարծում էր, որ մարդիկ օժտված են ազատությամբ, ինչպես նաև որոշ ունակություններով և այլ ունակություններ ձեռք բերելու կարողությամբ: (Benner/Brüggen 1996: 24). Անհատականության զարգացման ունակությունը ժողովրդավարական հասարակության կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում:

Որո՞նք են ազատության սահմանափակումները հասարակության մեջ

Թե որքան է անհատի ազատությունը հասարակության մեջ և պետության հետ հարաբերություններում՝ անվերջ քննարկման նյութ է: Արդյոք թույլատրելի՞ է գաղտնալսությունը կամ արդյոք արտակարգ իրավիճակի դեպքում պաշտպանության նախարարն իրավունք ունի՞ հրամայելու դիմել չափազանց կտրուկ միջոցների (ասենք՝ գնդակոծել ուղևորատար ինքնաթիռը). սրանք հարցեր են, որ առաջ են բերում ազատության սահմանափակումներ:

Երկու պատասխան

Ազատության սահմանափակում հասկացության հետ հաճախ նշվում է փիլիսոփայական երկու պատասխան.

«Ճիշտ է, ժողովրդավարության պայմաններում մարդիկ գործում են այնպես, ինչպես ցանկանում են, սակայն քաղաքական ազատությունը չի ենթադրում անսահմանափակ ազատություն: Կառավարությունում, օրինակ, ազատության գաղափարը կայանում է նրանում, որ պետք է անենք այն, ինչ պետք է անենք, այլ ոչ թե ստիպված լինենք անել այն, ինչ չպետք է անենք:
Մենք պետք է անընդհատ մտովի պատկերացնենք ազատության և անկախության տարբերությունները: Ազատության հասկացությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուրն ազատ է անել այն, ինչ թույլատրելի է օրենքով, և եթե քաղաքացին անի այն, ինչ արգելված է օրենքով, ապա նա արդեն կհասնի դիվահար ազատության, քանի որ մյուսները նույնպես կձգտեն ունենալ նույն իրավունքները»:
(Մոնտեսքյո, 1992թ. *«Օրենքի Ոգու մասին»*, գիրք XI)

«Գոյություն ունի միայն մեկ խիստ կարևոր պայման. առավելագույնս գործել համաձայն օրենքի, որը միաժամանակ կդառնա համընդհանուր օրենք»: (Կանտ, 1995: 51 *[Groundwork of the Metaphysics of Morals] «Բարոյականության մետաֆիզիկայի հիմքերը»*):

Մոնտեսքյո

Ըստ Մոնտեսքյոյի՝ ազատության սահմանափակումը կապված է օրենքին հետևելու պարտավորության հետ և դրա հետ զուգահեռաբար անհատը պետք է ակնկալի, որ ամեն մարդ կենթարկվի օրենքներին:

Շառլ Լուի Մոնտեսքյո (1689-1755թթ.), իրավաբան և քաղաքական մտածող, հայտնի է իր *«Օրենքների Ոգու մասին»* աշխատությամբ (1748թ.):

Ի թիվս այլ բաների, նա կողմակից էր սահմանադրական միապետությանը և օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատմանը:

Կանտ

Կանտի ձևակերպումն ավելի հեռանկարային է: Այն սահմանափակում է ազատությունն աբստրակցիայի ավելի բարձր մակարդակներում: Ցանկացած գործողություններում պետք է մտածել՝ արդյոք սա կդառնա՞ համընդհանուր օրենք: Հարցի այս ընդարձակումը դուրս է գալիս միայն օրենքին հնազանդվելու շրջանակներից և միևնույն ժամանակ ընդգծում է, թե ինչպես կարող է ազատությունը գործել օրենքի շրջանակներում: Մի պարզ օրինակով կարելի է ավելի պատկերավոր ներկայացնել ասվածը: Օրենքով արգելված չէ 4x4 տիպի մեքենա վարելը, որը բնապահպանությանը մեծ վնաս է հասցնում, բայց եթե բոլորը վարեն նման մեքենաներ, ապա աշխարհը կկանգնի բնապահպանական աղետի առջև:

Իմանուել Կանտ (1724-1804թթ.), Լուսավորչական դարաշրջանի գերմանացի նշանավոր փիլիսոփա: Իր աշխատություններում նա անդրադարձել է ժամանակաշրջանի գրեթե բոլոր փիլիսոփայական խնդիրներին:

Նրա հեղինակավոր աշխատություններից են *«Զուտ բանականության քննադատությունը»* (1781թ., *Kritik der reinen Vernunft*), *«Գործնական բանականության քննադատությունը»* (1788թ., *Kritik der praktischen Vernunft*), *«Դատողական քննադատություն»* (1790թ., *Kritik der Urteilskraft*), *«Մշտական խաղաղություն»* (1795թ., *Zum ewigen Frieden*), *«Բարոյականության մետաֆիզիկա»* (1796/97թթ., *Metaphysik der Sitten*):

Ազատության սահմանափակումները բարոյական են և կապված են հանրային բարօրության հետ

Կանտի համար անհատի ազատության սահմանափակումները կրում էին բարոյական բնույթ, որը կապված էր հանրային բարօրության հետ: Անձի ազատության սահմանափակման այս հեռանկարը ոչ մի դեպքում չէր նշանակում ազատության սահմանափակում հասարակությունում: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Համբուրգի ծրագրում հստակ ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության իրավունք և կարողություն: Բայց մարդը կարո՞ղ է ապրել

այդպես՝ դա արդեն կախված է հասարակությունից»:
Ավելի ուշ, որոշ տեսություններում, օրինակ՝ ազգությամբ հնդիկ Նոբելյան մրցանակակիր և տնտեսագետ Ամարտիա Սենտը, խոսելով «հնարավորությունների» մասին, որոնք հեռու են ֆինանսական հավասարության շրջանակներից, պահանջում է ակտիվ մասնակցություն հասարակության կյանքին:[2]

Սոցիալ-դեմոկրատիայում ազատության հարցի քննարկման արդյունքում ի հայտ են գալիս մի շարք չափանիշներ:

Ազատությունը և սոցիալ-դեմոկրատիան

«Ազատությունը» Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Համբուրգի ծրագրում

«Ազատությունը ենթադրում է ինքնորոշում: Յուրաքանչյուր ոք ունի ազատության իրավունք և կարողություն: Սակայն անհատը կարո՞ղ է ապրել այդպես՝ դա արդեն կախված է հասարակությունից: Յուրաքանչյուր ոք պետք է ապրի առանց նվաստացնող կախվածության, կարիքի ու վախի և պետք է հնարավորություն ունենա իրացնելու իր հնարավորությունները և մասնակցելու հասարակական ու քաղաքական կյանքին: Սակայն անհատը կարող է օգտագործել իր ազատությունը միայն այն ժամանակ, երբ վստահ է, որ ունի համապատասխան սոցիալական ապահովություն»: (Համբուրգի ծրագիր, 2007, 15)

Չափանիշներ, որոնք հանդիպում են սոցիալ-դեմոկրատիայում ազատության հարցը քննարկելիս:

- Անձնական ազատությունը, ինչպես նաև հասարակական կյանքում ակտիվ մասնակցություն ունենալու և որոշումներ կայացնելու ազատությունը պետք է հիմնովին հաստատված և ապահովված լինեն:
- Ազատության գաղափարը ենթադրում է, որ մարդը կարող է ապրել այդ ազատության մեջ: Դա պահանջում է հասարակական միջոցառումներ իրականացնել և ինստիտուտներ հիմնել այն հնարավոր դարձնելու համար: Ազատության ֆորմալ հիմնավորումը որպես ֆունդամենտալ իրավունք, դեռ բավարար չէ:
- Ազատությունը ենթադրում է, որ մարդիկ կգործեն առավել արդյունավետ և պատասխանատու: Սա կրթության խնդիրն է ժողովրդավարական հասարակության մեջ:

[2] Գերմանիայի առաջին երկու կառավարությունների ներկայացրած չքավորության և հարստության մասին հաշվետվություններն ընդգրկում էին ոչ միայն չքավորության սահմանման ցուցանիշները, այլև սոցիալական ներգրավվածության և բացառման ցուցանիշները:

2.2. Հավասարություն-Արդարություն

Հավասարությո՞ւն, թե՞ արդարություն

Շատերը հայտնվում են դժվարին կացության մեջ, երբ հարցը վերաբերում է երկրորդ հիմնական արժեքին: Արդոք սա հավասարությո՞ւն է, թե՞ արդարություն:

Այս անորոշությունը կարելի է բացատրել պատմափիլիսոփայական հեռանկարում.



Նկար 2. Հասարակություն և հիմնարար արժեքներ

Պատմականորեն, սկսած ֆրանսիական հեղափոխությունից, գոյություն ունեն 3 հիմնարար արժեքներ՝ ազատություն, հավասարություն և համերաշխություն (*«liberté, egalité et fraternité»*). Փիլիոսփայական տեսանկյունից այնուամենայնիվ կարող ենք խոսել «արդար հասարակության» մասին, եթե իրականացվում են այս երեք հիմնարար արժեքները:

Փիլիսոփայական կոնցեպցիայի և ժամանակակից քաղաքական գործածության տարբերությունները

«Հավասարության» մասին քննարկումներում միաժամանակ ի հայտ է գալիս նաև այնպիսի մի հարց, թե ո՞րն է նյութական և ոչ նյութական բարիքների արդարացի բաշխումը: Արդյունքում՝ սկսած 1980թ.-ից «արդարությունը» հաստատվում է որպես հիմնարար արժեք, որպեսզի հստակեցվի կամ էլ ավելի գործնական դառնա հավասարության կոնցեպցիան: Միաժամանակ խոսվում էր ազատության, արդարության և համերաշխության մասին: Այնուամենայնիվ արժե վերլուծել փիլիսոփայական այս քննարկումները: Ի տարբերություն ազատություն հասկացության, որը կարելի է կիրառել բոլորի վրա, հավասարությունը և արդարությունը հանդիսանում են հարաբերական հասկացություններ, որոնք վերաբերում են յուրաքանչյուր անդամի անձնական ազատությանը հասարակության այլ անդամներից:

Փիլիսոփայորեն արդարությունն ավելի բարձր հասկացություն է: Ստորև հեղինակը փորձում է առավել դիպուկ և կոնկրետ սահմանել արդարություն հասկացությունը:

«Ի՞նչ է արդարությունը: «Ի՞նչ է» հարցը տրվում է միայն ինչ-որ բանին: Իսկ արդարությունը առանձին վերցրած բան չէ: Արդարությունը հարաբերությունների կատեգորիա է: Այն վերաբերում է մարդկանց հարաբերություններին: Հետևաբար հարցը ոչ թե պետք է հնչի «ի՞նչ է արդարությունը», այլ «ինչի՞ մասին է արդարությունը»: Արդարության խնդիրն է, թե ինչպես է անհատը հարաբերությունների մեջ մտնում համայնքի հետ, որի անդամն է նա, ինչպես նաև հասարակության այլ անդամների հետ: Մարդիկ անհրաժեշտություն են զգում պարզաբանելու իրենց տեսակետը նրանց նկատմամբ, ում հետ մտնում են փոխհարաբերության մեջ՝ պարզելու, թե իրենք ինչպես են ընկալվում, ինչքանով են գնահատված: Եթե մարդկանց ինքնագնահատականը համապատասխանում է նրան, թե ինչ են իրենց մասին մտածում, ապա նրանք զգում են, որ իրենց հանդեպ արդարացի են: Այսպիսի դատողությունները ի հայտ են գալիս նյութական կամ ոչ նյութական բարիքների բաշխման հարցում»: (Հեյնրիխ, 2002թ., 207)

Հավասարությունը և արդարությունը որպես հարաբերական հասկացություններ

Արդարության մասին հասկացությունը տարբեր ընկալումներ ունի: Անհատապես որևէ մեկը կարող է զգալ, որ իրեն արդարացի չեն վերաբերվել, մինչդեռ տվյալ վերաբերմունքը կարող է օբյեկտիվորեն «արդարացի» լինել: Ի՞նչն է արդարացի և ի՞նչը ոչ. այս հարցը կարող է սահմանվել միայն սոցիալական բանակցությունների միջոցով: Այլ կերպ ասած՝ արդարությունը պահանջում է՝

- նյութական և ոչ նյութական բարիքների բաշխում հասարակության կողմից,
- բարիքների բաշխում օրինական, ընդունված չափանիշներով, որոնց բոլորը համաձայն են:

Եթե առկա են այս երկու բաղադրիչները, կարող ենք խոսել արդարության մասին: Իսկ հավասարությունը ենթադրում է այդ նյութական և ոչ նյութական բարիքների բաշխման հատուկ ձև:

Հավասարություն և արդարություն հասկացությունները պետք է սահմանվեն զգուշորեն

«Հավասարությունը պետք է լինի սկզբնակետ և ոչ սոցիալական կարգուկանոնի հիմք: Այս հիմնական նորմը պարտադիր է, որպեսզի արդեն բաշխման ժամանակ ցանկացած անարդարություն լուծվի այդ նորմի հիման վրա: Բաշխման հիմնական նորմը հավասարությունն է՝ հաշվի առնելով բոլոր նրանց, ում պետք է ներառել այդ բաշխման ժամանակ: Ի տարբերություն արդարության, հավասարությունը կարիք չունի որևէ չափանիշների: Եթե բարիքների բաշխման համար գոյություն չունի որևէ չափանիշ, որևէ սահմանում, ինչի համաձայն մեկը կարող է ստանալ առավել կամ մյուսից ավելի շուտ, ապա այդ բարիքները պետք է բոլորին հասնեն հավասարապես»: (Հեյնրիխ, 2002թ., 211)

Հետևաբար պահանջվում է հավասարություն, երբ չկա որևէ սոցիալական փաստարկ, որը կարող է արդարացնել խտրականությունը բարիքների բաշխման ժամանակ:

Խնդիր. ինչպե՞ս կարող է «արդարացի խտրականությունը» արդարացվել

Այստեղ առանց որևէ տեսության կարող են սահմանվել հավասարության և արդարության կոնցեպցիաները՝ հակասելով միմյանց: Այնուամենայնիվ հարց է ծագում, թե ինչպե՞ս կարելի է արդարացնել «անհավասար բաշխումը»: Գոյություն ունեն բազմաթիվ հիմքեր և սահմանումներ: Ցանկացած ոք, ով հետաքրքրվում է քաղաքականությամբ, պատկերացնում է, թե ինչպես կարելի է արդարացնել կամ քննադատել տարվող քաղաքականությունը:

Այս մասում կներկայացվի արդարության չորս հասկացություն, որոնք 1980-1990թթ. քննարկվել են ինչպես տեսական, այնպես էլ քաղաքական մակարդակներում: Այս բոլոր սահմանումներից պարզ է դառնում, որ արդարության մեջ ռացիոնալություն փնտրելը հեշտ չէ, և սա քաղաքական բանավեճերի հարց է:

Արդարության չորս մոտեցում

Ջոն Ռոուլզի *«Արդարության տեսությունը»*

- Ազատական արդարության տեսության քննադատությունը սոցիալիստների կողմից,
- Նենսի Ֆրեյզերի սահմանումը՝ «ճանաչել և վերաբաշխել»,
- Արդարության քաղաքական չափորոշիչները:

2.2.1. Ջոն Ռոուլզի *«Արդարության տեսությունը»*[3]

Ջոն Ռոուլզ (1921-2002թթ.), փիլիսոփա, ազատական ավանդույթների բարոյականության ջատագով: Հարվարդի համալսարանի քաղաքական փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր: 1971թ. տպագրեց իր *«Արդարության տեսություն»* հայտնի աշխատությունը:

Նրա տեսությունը սոցիալ-դեմոկրատական շրջանակներում բուռն քննարկումների առարկա է դարձել 1980-1990թթ.:

Ջոն Ռոուլզ

Ջոն Ռոուլզի *«Արդարության տեսություն»* աշխատությունը փիլիսոփայական կոնտեքստում շատ հետաքրքիր քննարկումների թեմա է: Նրա՝ ազատական ավանդույթներով տեսությունն առաջին անգամ ներկայացվեց դեռ 1971թ., սակայն քաղաքական ազդեցություն ունեցավ միայն 1980-1990թթ.: Այն հանդես եկավ Ռեյգանի և Թեթչերի շուկայական ռադիկալ դարաշրջանում, որպես հակառակ տեսակետ, և իրականացվեց Հելմուտ Կոլի «հոգևոր և բարոյական հեղափոխման» կառավարության կողմից (պատմական կոնտեքստում տես Nida-Rümelin, 1997, 15): Ռոուլզի տեսությունը լայնորեն քննարկվում էր հատկապես սոցիալ-դեմոկրատների շրջանակներում:

« Արդար հիմնական կանոնների» հաստատում

Իր տեսության մեջ Ռոուլզը վերլուծել է ծագած կոնֆլիկտների կարգավորումը մի հասարակությունում, որի անդամները պետք է համագործակցության միջոցով փոխանակեին համեմատաբար սակավ բարիքները: Այս նպատակին հասնելու համար հակասող շահերը պետք է ստեղծեին «արդար հիմնական կանոններ»՝ ինստիտուտներին բնորոշ տեսքով (սահմանադրություն, տնտեսական և քաղաքական շրջանակներ և այլն): Ռոուլզն իր տեսության մեջ այս անորոշ ենթադրությունները պարզապես կանոնակարգել է մի շարք կանոններով և սկզբունքներով:

Նա սկսել է հետևյալ ենթադրությամբ՝

- ֆունդամենտալ մտքերը և սկզբունքները կարող են կանոնակարգվել, ինչին համաձայն կլինեն բոլորը:
- Ժամանակակից դեմոկրատիան ենթադրում է, որ մարդիկ միմյանց ընդունեն որպես հավասար և ազատ:
- Այս հիմքերի վրա կարող են ի հայտ գալ սոցիալ-համագործակցության ուղիներ:

[3] Ջոն Ռոուլզի տեսությունն ամբողջովին ներկայացնելը դուրս է մեր քննարկման շրջանակներից: Նպատակն է պարզապես քննարկել այն գործնական խնդիրները, որոնք առաջանում են քաղաքական պրատիկայում արդարության հասկացության սահմանման ընթացքում:

Մտքի փորձառություն, ազատ, հավասար և նպատակասլաց մարդկանց «յուրօրինակ տեսակետները»

Ռոուլզը, ինչպես և Լոքը, ենթադրում էր, որ այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ են սկզբնական պայմաններ: Այնուամենայնիվ նա ներկայացնում էր ոչ թե իրական, այլ հիպոթետիկ մի իրավիճակ, երբ ազատ և հավասար մարդիկ, առաջնորդվելով միայն անձնական շահերով, համախմբվում էին արդարության սկզբունքների շուրջ համաձայնության գալու համար:

Ըստ Ռոուլզի, այս գործընթացի հիմնական նպատակն էր համայնքի, ինչպես նաև հասարակության անդամների փոխհամաձայնությունը՝ հիմնված արդար պայմանների վրա:

«Մաքսիմին» (maximin) կանոնը

Էքսպերիմենտալ մտքերի մեկ այլ ասպեկտն էլ այն էր, որ մարդիկ չեն գիտակցում հասարակության մեջ իրենց դերը: Ըստ Ռոուլզի, յուրաքանչյուր ոք պետք է հետաքրքրված լինի նաև նրանց դերով, ովքեր առավել քիչ են ապահովված («Մաքսիմին» կանոն):

Քննարկման կետեր և վարժություններ

Ջոն Ռոուլզն ընթերցողներին հրավիրում է մասնակցելու մտավոր էքսպերիմենտի: Պատկերացրեք ձեզ ազատ, հավասար, նպատակասլաց և ռացիոնալ մարդկանց հավաքում՝

- ո՞ր սկզբունքների հետ կհամաձայնեիք,
- ո՞ր սկզբունքները կլինեին վիճահարույց,
- ի՞նչ փաստարկներով կլուծվեին վիճահարույց հարցերը,
- այդ սկզբունքներից որո՞նք կիրականացվեին մեր հասարակությունում:

Արդարության երկու սկզբունքները

Ռոուլզի լայնամասշտաբ տեսության մեջ պետք է ավելի ուշադիր վերլուծել այս երկու հիմնական սկզբունքները, որպեսզի հնարավոր լինի ասել՝ արդոք դրանք արդարացի՞ են, թե՞ ոչ:

Արդարացի բաշխման նոր սահմանում

Ռոուլզի գլխավոր ներդրումն այն է, որ սոցիալական բարիքների վերաբաշխման մասին դասական ազատական քննարկումները վերասահմանեց արդարացի բաշխման իր տեսությամբ: Այսպիսով Ռոուլզը հողում կատարեց ազատական ավանդույթներին, որոնք իրենց մեջ ունեն քաղաքացիական իրավունքների և ազատությունների պահանջ և կապեց այն սոցիալ-դեմոկրատական հավասարության և արդարության գաղափարներին:

Երկու հիմնական սկզբունքներ

Իր *«Արդարության տեսությունում»* նա ձևավորեց երկու սկզբունք.

1. «Յուրաքանչյուր ոք պետք է ունենա հավասար իրավունք ընդարձակ հավասար հիմնական ազատությունների համակարգում, որը համատեղելի է նման ազատության հետ բոլորի համար համակարգում»: (Ռոուլզ, 1979թ., 81)[4]

2. «Սոցիալական և տնտեսական անհավասարությունները պետք է այնպես կանոնակարգվեն, որ երկուսն էլ ա) լինեն ամենաշահեկանը ամենատկարի համար, բ) կցված լինեն աշխատատեղերի, որոնք բաց կլինեն բոլորի համար՝ արդար հավասար պայմաններով»: (Ռոուլզ, 1979թ., 336)

Հիմնական ազատություններ

Առաջին սկզբունքն իր մեջ ներառում է հիմնական ազատությունների ողջ համակարգը, որը պետք է ունենա և կիրառի յուրաքանչյուր ոք: Այսինքն՝ հավասարություն օրենքի առաջ և անձի իրավունքների ապահովում: Ուստի պետք է խոսվի օրենքի առաջ հավասարության և երաշխավորված սեփական իրավունքի մասին: Այս սկզբունքը գրականության մեջ ընդունվեց բոլորի կողմից:

Ռոուլզը ենթադրում էր, որ ազատական ավանդույթների համաձայն առաջին սկզբունքը պետք է կարևորվեր երկրորդից:[5]

Սկզբունքների տարբերությունը

Ի տարբերություն լայնորեն ընդունված առաջին սկզբունքի, երկրորդը, այսպես կոչված «տարբերությունների սկզբունքը», շատ ավելի բարդ է: Ռոուլզը առաջարկում էր վերացական նորմեր, համաձայն որոնց խտրականությունը կարող է արդարացվել: Անարդարացի բաշխումը կարող է արդարացվել, եթե կա երկու պայման.

1. եթե դա նրանց օգտին է, ովքեր առավել վատ վիճակում են,
2. գրասենյակները և պաշտոնները բաց ու ազատ են բոլորի համար:

«Արդար անհավասար բաշխման» պայմանները

Իր առաջին պայմանը՝ «արդար անհավասար բաշխումը», Ռոուլզը ձևակերպեց անհավասար բաշխման դեպքում ակնկալվող հետևանքների տեսանկյունից. եթե բոլորն օգուտ պիտի ստանան, ներառյալ կարիքավորները, ապա անհավասար բաշխումը (և նրա հետագա հետևանքները) կարելի է գնահատել արդարացի: Ուստի հետևանքների հարցի քննարկումը կարելի է դեռ հետաձգել:

[4] Այս ձևակերպումը հանդիսանում է Կանտի ավելի վաղ կատարած ձևակերպման հոմանիշը. «Յուրաքանչյուր գործողություն համարվում է արդարացի և կարող է գոյակցել, եթե համապատասխանում է յուրաքանչյուրի և բոլորի ազատ կամքին և ունիվերսալ օրենքին» (Կանտ, 1963թ., 33)

[5] Ինչպես Մեյերն է բացատրում, սրա ապացուցումը հանդիսանում է խնդրահարույց, ինչպես գործնական այնպես էլ տրամաբանական տեսակետից (նայել էջ 93)

Երկրորդ պայմանը վերաբերում է հավասար մուտքի իրավունքին: Եթե բոլորին հասանելի է գրասենյակներ և պաշտոններ զբաղեցնելը, ապա անարդարացի բաշխումը նույնպես կարող է արդարացվել: Այսինքն՝ «հնարավորություն պետք է ունենան բոլորը»:

Գործնական օրինակ

Սկզբունքների տարբերությունը վիճահարույց է ոչ միայն փիլիսոփայական, այլև քաղաքական տեսանկյունից: Մինչ որոշելը՝ արդյո՞ք դա արդարության համարժեք սահմանում է, պետք է այն կիրառվի գործնականում: Ստորև ներկայացված է մի քանի քաղաքական փաստարկ, որոնք պետք է գնահատել և որոշել՝ արդյոք դրանք արդարացի՞ են՝ ելնելով Ռոուլզի երկու սկզբունքներից:[6] Լավագույն տարբերակը կլինի, եթե առաջին հերթին բնազդաբար գնահատեք՝ արդարացի՞ է, թե՞ ոչ:

Քննարկում: Պրոգրեսիվ եկամտահարկ. այո՞, թե՞ ոչ

Չնայած այն հանգամանքին, որ ճնշող մեծամասնությունը դեմ էր Պոլ Կիրխհովի և ուլտրաազատականների փաստարկներին, դրանք դեռ պետք է իրենց զարգացումը ունենային: Պոլ Կիրխհովը Գերմանիայի Քրիստոնեադեմոկրատական միության ֆինանսների նախարարն էր և 2005թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ առաջարկեց, որ բոլորը հարկվեն եկամտի 25 տոկոսի չափով, չնայած որ պրոգրեսիվ եկամտահարկը Գերմանիայում գործում է վերջին տասնամյակներին, ըստ որի՝ հարկերի չափն ավելանում էր եկամտին զուգահեռ:

Այլ կերպ ասած՝ բոլորի եկամուտները ենթարկվում են պրոգրեսիվ եկամտահարկի կիրառելի տոկոսադրույքով:

Հարց

Որքանո՞վ են արդար այս երկու մոդելները:
Կքննարկենք Ռոուլզի տեսության շրջանակներում:

[6] Ի դեպ, Ռոուլզի տեսությունը կընկալվի սխալ, եթե անհավասարությունը դիտարկենք սկզբունքների տարբերությունից: Ռոուլզը ենթադրում էր, որ արդարությունը հանդիսանում է երկու սկզբունքների պայման:

2.2.2. Սոցիալիստների քննադատությունը՝ ուղղված արդարության ազատական հասկացությանը

Սա ազատության, հավասարության և սեփականության իրավունքի կատարյալ դաշտ է: Ազատություն, քանի որ և՛ գնորդը, և՛ վաճառողը գործում են իրենց ազատ կամքով: Նրանք միմյանց հետ հարաբերությունների մեջ են մտնում որպես ազատ մարդիկ, որոնք հավասար են օրենքի առաջ: Հավասար են, քանի որ հավասարապես ստանում են այն, ինչ ուզում են: Սեփականություն, քանի որ տնօրինում են այն, ինչ միայն իրենց է պատկանում: (Կ. Մարքս, *«Կապիտալ»*, գիրք 1)

Սոցիալական իրականությունը

Արդարություն և հավասարություն հասկացությունները ներկայացված են Ռոուլզի և Հեյնրիխի փիլիսոփայական տեսություններում[7], որտեղ դրանք հստակեցված և տարբերակված են՝ համաձայն հեղինակների տեսակետների: Հետևաբար դրանք ներկայացվում են որպես տեսություններ, այլ ոչ սոցիալ-իրականության մեջ գոյություն ունեցող ինչ-որ երևույթներ: Արդարության երևույթը սահմանելու համար պետք է, որ այն իրագործվեր տվյալ հասարակության մեջ:

Այնուամենայնիվ հիմնական պահանջներից է, որ այդ հիմնարար արժեքներն ունենան իրենց ազդեցությունը հասարակության վրա: Արդարության մասին սոցիալիստների կոնցեպցիան հանդես եկավ հենց այս տեսանկյունից:

Ինչպե՞ս մեկնաբանել հասարակությունում անհավասարության և անարդարության գերակշռությունը

Արդարության մասին սոցիալիստական հասկացությունը պահանջում է մեկնաբանել անհավասարությունը և անարդարությունը: Աղքատության և հարստության վիճակագրությունից պարզ երևում է, որ հասարակությունն ինքնուրույն չի կարող հասնել հավասարության և արդարության: Անհավասարությունը և անարդարությունը ոչ թե պատահականության կամ անհավասարակշռության արդյունք են, այլ ժամանակակից հասարակության համակարգային խնդիրներից մեկն են հանդիսանում: Անհավասարության և անարդարության առաջացման հիմնական, բայց ոչ միակ պատճառն են հանդիսանում կապիտալիստական տնտեսությունում առկա արտադրական հարաբերությունները:

Սոցիալիստների փաստարկները վերջին 150 տարիներին ձևավորվել են երկու հիմնական ուղղությամբ: Մի կողմից՝ նրանք պահանջում են սոցիալական բարե-

[7] Պետք է նշել, որ Հեյնրիչը չուներ որևէ լիբերալ տեսություն, առաջին հերթին այն սոցիալ-փիլիսոփայական կամ ռադիկալ փիլիսոփայական էր:

կեցության վերաբաշխում, մյուս կողմից՝ բարիքների արտադրման և ձեռք բերման եղանակների հիմնովին փոփոխություն, որպեսզի ազատությունն իրականացվի բոլորի համար: Հիմնական գաղափարն այն է, որ հավասարությունը պետք է իրական լինի, որպեսզի ապահովվի բոլորի ազատությունը:

Ռոուլզն իր մոտեցումով հակասում էր այս մտքին՝ վստահեցնելով, որ ընդհանուր առմամբ կարիքավորներն առավել օգուտ կունենան սոցիալ-շուկայական տնտեսության պայմաններում:

Անհավասարությունը կարո՞ղ է շահավետ լինել բոլորի համար

Սոցիալիստական մոտեցումները հակասում են Ռոուլզի այն մտքին, որ տնտեսական անհավասարությունը կարող է օգուտ բերել (մասնավորապես նրանց, ովքեր առավել կարիքավոր են): Սոցիալիստներն, ընդհակառակը, ենթադրում են, որ դրանից ավելի կսրվեն անհավասարությունն ու անարդարությունը: Վերջին փորձերի վրա հիմնված ուսումնասիրությունները հենց դա են վկայում:[8]

Այս գաղափարական բաժանումը ձախակողմյան քաղաքական շրջանակներում իր արտահայտությունն ունեցավ նաև տեսականորեն: Արդարության մասին բանավեճերում երկու տարբեր մոդելները կանգնեցին կողք կողքի. մի կողմից սոցիալական և նյութական բարիքների բաժանման արդարություն, մյուս կողմից՝ այս կամ այն սոցիալական խմբին ընդունելու և տարբեր սոցիալական պաշտոնները հասանելի դարձնելու արդարություն: Այլ կերպ ասած՝ սոցիալական կարգավիճակ: Այս բանավեճն առկա է ոչ միայն տեսական, այլև քաղաքական մակարդակում: Բայց այս հակասությունը՝ մի կողմից արդարացի բաշխման, մյուս կողմից՝ արդարացի հասանելիություն ունենալու իրավունքը, հիմնականում հանդիսանում է կողմերի կանխակալ կարծիքների արդյունք:

Բաշխված արդարությունն ընդդեմ հասանելիության արդարության

Մասնավորապես այն տեսաբանները, ովքեր մեծ նշանակություն են տալիս արդար հասանելիությանը, չեն անտեսում վերաբաշխման հարցը: Ավելի շուտ սեղանին է դրված արդարության մասին ավելի բարդ հասկացություն, որը արդարության խնդիրը հանգեցնում է տնտեսական անհավասարությանը:

Այս վեճը հատկանշական է նաև այնքանով, որ կարող է ենթադրել աշխատողների տարանջատում տարբեր թիրախային խմբերի, որոնք որպես այդպիսին կարևոր են սոցիալ-դեմոկրատների համար: Այս պահի դրությամբ, թիրախային խմբերից յուրաքանչյուրը, ինչպես ավելի վաղ, բևեռացված է ազատության և հավասարության իր պատկերացումներում:

[8] Օրինակը գտնելու համար նայել հետևյալ ուսումնասիրությունները. Bourdieu et al. 1997; Castel 2000; Schultheis/Schulz 2005

Ստորև հակիրճ ներկայացնենք Նենսի Ֆրեյսերի երկչափ արդարություն հասկացությունը, որը հիմնականում ներառում է արդարության երկու ասպեկտ:

2.2.3 Նենսի Ֆրեյզերի երկչափ արդարություն հասկացությունը

Երկչափ արդարություն հասկացությունը

Արդարության մասին իր այս հասկացությունում Նենսի Ֆրեյզերը փորձում է մեղմել արդարացի բաշխման-վերաբաշխման և արդարացի հասանելիության իրավունքը կամ ազատական մոտեցումը և առաջարկում է արդարության երկչափ կոնցեպցիա:

> *«Տեսականորեն խնդիրն այն է, որ պետք է մշակել արդարության երկչափ հասկացություն, ուր իրենց տեղը կգտնեն ինչպես սոցիալական արդարությունը, այնպես էլ տարբերությունների ճանաչմանն ուղղված պաշտպանողական պնդումները: Գործնականորեն խնդիրն այն է, որ պետք է մշակել ծրագրային քաղաքական կողմնորոշում, որն իր մշակման գործընթացով կարող է ներգրավել վերաբաշխման քաղաքականության լավագույնը՝ ճանաչողական քաղաքականության լավագույնի հետ»:* (Ֆրեյզեր, 2003: 17 f.)

Ֆրեյզերի դրույթը հետևյալն է՝ ամեն անարդարություն կամ անբարենպաստ պայման իր մեջ ներառում է տնտեսական թերություններ և անտեղյակություն՝ իրեն բնորոշ համամասնություններով:



Նկար 3. Նենսի Ֆրեյզերի արդարության կոնցեպցիան

Գործնական օրինակներ

Որպես օրինակ դիտարկենք այն խտրականությունը, որն ուղղված է համասեռամոլների դեմ՝ առաջին հերթին հասարակությունում հարգանքի և ստատուսի հարցում: Միաժամանակ այն անխզելիորեն կապված է գրանցված օրինական ամուսնա-

կան զույգերի հարկման պարտավորությունների հետ: Այստեղ արդարության կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ հաշվի առնվեն բոլոր թերությունները թե՛ ստատուսի, թե՛ տնտեսական կարևորության հարցում:

Նենսի Ֆրեյզեր (1947թ.), Նյու Յորքի Սոցիալական հետազոտությունների նոր դպրոցի քաղաքական և սոցիալական գիտությունների պրոֆեսոր: Ֆեմինիզմի տեսության հայտնի տեսաբան:

Հրատարակել է ֆեմինիզմի տեսությանը և արդարության խնդիրներին վերաբերող աշխատություններ, ինչպես նաև քննադատական տեսություններ, հոդվածներ:

Արդարությունը պահանջում է բազմակողմ ռազմավարություն

Որպես երկրորդ օրինակ, դիտարկենք գործազուրկների անարգումն ու վտարումը հասարակության կողմից: Թեև այդ խավի սոցիալական բացառումը պատճառ է անբարենպաստ նյութական հանգամանքների, փորձառական ուսումնասիրությունները կրկին հաստատում են, որ հասարակությունում հարգանքը և ճանաչումը, այլ կերպ ասած՝ սոցիալական կարգավիճակը, լուրջ խնդիրների առջև է դնում նրանց, ովքեր նման իրավիճակում հանդիսանում են տուժող կողմ: Որպեսզի հնարավոր լինի իրագործել արդարությունը և ապահովել նրանց մասնակցությունը հասարակական կյանքին, հարկավոր է մշակել նոր ռազմավարություն, որը համապատասխանաբար հաշվի կառնի այս երկու հարթությունները:

Հավասար մասնակցության գաղափարը

Ֆրեյզերը ներկայացնում է անարդարության և խտրականության ուսումնասիրությունների վերլուծության կարգը: Նա փորձում է նորմատիվորեն հստակ ձևակերպել, թե ինչ է արդարությունը: Նա արդարությունն ընկալում է որպես հավասար մասնակցության իրավունք:

«Իմ կոնցեպցիայի նորմատիվ հիմքը մասնակցության հավասարությունն է: Ըստ այդ նորմի, արդարությունը պահանջում է սոցիալական մեխանիզմներ, որոնք թույլ կտան հասարակության բոլոր անդամներին հարաբերակցվել միմյանց հետ որպես հավասարի: Վստահ եմ, որ հավասար մասնակցության համար պետք է իրագործվի երկու պահանջ. առաջինը՝ նյութական ռեսուրսները պետք է այնպես բաշխվեն, որ ապահովվեն մասնակիցների անկախությունը և ձայնի իրավունքը: Սա ես կանվանեմ հավասար մասնակցության օբյեկտիվ պայման: Այն բացառում է տնտեսական կախվածությունը և անհավասարությունը, որոնք խոչընդոտում են հավասար մասնակցությունը: […] Երկրորդ պայմանը պահանջում է ինստիտուցիոնալ մոդելներ, որոնք մասնակիցներին կընձեռեն հավասարաչափ հարգանք և հավասար հնարավորություններ՝ հասնելու սոցիալական գնահատանքի: Սա ես կանվանեի հավասար մասնակցության սուբյեկտիվ նախապայման»: (Ֆրեյզեր, 2003թ., 54)

Այստեղ Ֆրեյզերը, ինչպես Ռոուլզը, նշում է այն չափանիշները, որոնցով ցանկանում է երկու հարթություններում հիմնել արդարացի կամ անարդարացի խտրականության կանոններ: Նա առաջարկում է հետևյալը.

(Ան) արդարության խտրականության չափանիշները

«Երկու հարթություններում էլ հիմնական չափանիշները ծառայում են անհիմն և հիմնավոր պահանջները տարբերակելու համար: Եթե ճանաչման կամ բաշխման ասպարեզում խնդիրներ ծագեն, ապա հայցվորները պետք է հայտ ներկայացնեն, որ տվյալ պայմանները խոչընդոտում են հասարակական կյանքին հավասար մասնակցելուն»: (Ֆրեյզեր, 2003թ., 57)

Թեստի ընթացակարգ

1. *Վերլուծություն.* ի՞նչ խտրականությունների մասին է խոսքը: Ինչպե՞ս են դրանք բացահայտվում այս երկու հարթություններում:
2. *Չափանիշի կիրարկում.* ի՞նչ ձևով են սոցիալական դրույթները (կանոնները) խանգարում հավասար մասնակցությանը:
3. *Այլընտրանք.* ի՞նչ փոփոխություններ և ի՞նչ ռազմավարություն է հարկավոր հավասար մասնակցության պայմաններ ստեղծելու համար:

Այս թեստային քայլերը (վերլուծություն, չափանիշ, այլընտրանք), ըստ Ֆրեյզերի, հիմնականում ժողովրդավարական բանակցությունների և սակարկման թեմա են:

Տեսական կամ իրական օրինակներ նույնպես կարելի է ներկայացնել: Որպես ապացույց, օրինակ, ունիվերսալ (կամ քաղաքացիների) առողջապահական ապահովագրությունն ընդդեմ նախասահմանված ապահովագրության դրույթի:

Արդարության կիրառման երկու ռազմավարություն

Ֆրեյզերը քննարկում է սոցիալական անարդարության հետ պայքարի երկու ռազմավարություն՝ հաստատման և փոխակերպման (Ֆրեյզեր, 2003թ., 102): Օրինակ, ազատական սոցիալական պետությունը ունի դրական, հաստատուն ռազմավարություն՝ բարվոքելու տնտեսության բացասական ազդեցությունը ազատ շուկայական տնտեսության պայմաններում՝ չնայած որ տնտեսական անարդարությունը կապիտալի և աշխատանքի միջև ոչ թե վերացված է, այլ պահպանվում է, բայց՝ չափավոր:

Սոցիալիստները կողմնակից են փոխակերպման ռազմավարությանը, մասնավորապես ազատ շուկայական տնտեսությունը սոցիալիստական տնտեսական համակարգով փոխակերպելուն:

Մեկնակետ. ոչ ռեֆորմիստական բարեփոխում

Ֆրեյզերը հերքում է երկու ռազմավարությունները՝ ներկայացնելով երրորդ տարբերակը (Անդրե Գորզից հետո), այսպես կոչված ոչ ռեֆորմիստական բարեփոխումները: Նա այս ոչ այնքան հասկանալի կոնցեպցիան կապում է սոցիալ-դեմոկրատական ծրագրերի հետ.

«Ֆորդի ժամանակաշրջանում այս ռազմավարությունը սոցիալ-դեմոկրատիա հասկացությանը ձախակողմյան երանգներ հաղորդեց: Այս տեսանկյունից սոցիալ-դեմոկրատիան ազատական պետության և փոխակերպվող սոցիալիստական պետության միջև էր դիտարկվում որպես փոխզիջում: Ավելի շուտ դիտարկվում էր որպես դինամիկ վարչակարգ, որի հետագիծը ժամանակի ընթացքում կդառնար փոխակերպվող: Գաղափարը հետևյալն էր՝ համակարգել սկզբնական բարեփոխումները՝ ներառելով ունիվերսալ սոցիալ արտոնություններ, պրոգրեսիվ հարկումը, մակրոտնտեսական քաղաքականությունը և ստեղծել աշխատատեղեր բոլորի համար, ոչ շուկայական հասարակական լայն սեկտոր, ինչպես նաև ստեղծել հասարակական կամ կոլեկտիվ սեփականություն: Չնայած այս ուղղություններից և ոչ մեկը չփոխեց կապիտալիստական հասարակությունը: Ենթադրվում էր, որ դրանք միասին կկարողանային փոխել ուժերի հավասարակշռությունը կապիտալից դեպի բանվորականությունը: Այս սպասելիքները վիճելի են: Գործնականում դրանք երբեք չեն փորձարկվել, և նեոլիբերալիզմը հաջողությամբ վերջ տվեց այս փորձին»: (Ֆրեյզեր, 2003թ., 110)

Այս ոչ ռեֆորմիստական բարեփոխումների նպատակն էր՝ *մամուլի միջոցով* ստեղծել արդարության մասին սոցիալ-ազատական և սոցիալիստական կոնցեպցիա:

2.2.4. Արդարության քաղաքական չափորոշիչները՝ «Նվաճումների կամ արժանիքների վրա հիմված արդարություն» և «Կարիքների վրա հիմված արդարություն»

Անհավասար բաշխման քաղաքական արդարացումները. քաղաքական երկու կոնցեպցիա

Փիլիսոփայական բանավեճերը ցույց են տալիս, որ արդարությունը կարող է ունենալ տարբեր սահմանումներ: Սակայն արդարության փիլիսոփայական բացատրությունները կարող են և ամբողջական չլինել: Խնդիրը հետևյալն է՝ ունենալ համեմատական մի սահմանում, որը ենթարկված կլինի հասարակական քննարկումների և որը պահանջված կլինի սոցիալական տարբեր խմբերի (արհմիություններ, գործատուների ասոցիացիա, քաղաքական կուսակցություններ) կողմից:

Ինչպես ակնհայտ դարձավ փիլիսոփայական բանավեճերի ընթացքում, արդարության հարցը վերաբերում է նյութական և ոչ նյութական բարիքների բաշխմանը, ինչն էլ գնահատվում է որպես արդար կամ անարդար:

Քաղաքական բանավեճերում հաստատվել են արդարության երկու այլ կոնցեպցիաներ ևս, որոնց նպատակն է տարբեր տեսակետներով արդարացնել և օրինականացնել բարիքների բաշխման հարցը:

Նվաճումների վրա հիմնված արդարություն

Նվաճումների վրա հիմնված արդարության գաղափարի արտահայտման ձևերից մեկը հետևյալ կարգախոսն է. նվաճումները պետք է դարձյալ պարգևատրվեն: Ազատ- դեմոկրատական կուսակցության և Քրիստոնեադեմոկրատական միության ընտրողները սովորաբար այն կարծիքի են, որ նվաճումները կամ արժանիքները գնահատվում և իրենց արտահայտությունն են գտնում բարիքների բաշխման ժամանակ: Նվաճումների վրա հիմնված արդարությունը ենթադրում է, որ բարիքների բաշխման հարցում այն պետք է սահմանվի ըստ անհատի նվաճումների:

Օրինակ՝ եկամուտների շեմը առողջության ապահովագրության հարցում: Եթե եկամուտները թույլ են տալիս, կարելի է ընտրել մասնավոր առողջապահական ապահովագրություն տարեկան որոշակի եկամուտ ունենալուց հետո (որպես կանոն՝ ավելի լավ բուժում): Զախակողմյան մոտեցում ունեցողները համաձայն չեն և նույնիսկ ընդդիմանում են այս մոտեցմանը:

Զախակողմյանները նվաճումների վրա հիմնված արդարությունն օգտագործում են որպես բավական հիմնավոր փաստարկ այն բանի, որ ամուր ուսերը պետք է կրեն ավելին: Նրանք, ովքեր շատ ունեն, պետք է շատ էլ ներդնեն հասարակության բարօրության գործում: Սոցիալական ապահովությունը (գործազրկություն և կենսաթոշակային ապահովագրություն) սոցիալական կարգավիճակի հարցում ևս ներառում է երաշխիքներ. նրանք, ովքեր ներդրումներ են արել, նաև կստանան շատ:

Նմանատիպ փաստարկները կարող են քննադատության ենթարկվել աշխատավարձերի համակարգում ևս: Արդյոք ընկերության զարգացման համար ընկերության տնօրենն ավելի՞ն է անում, քան հասարակ աշխատողը: Արդյոք ֆոնդային բորսայի աշխատողն ավելի՞ արժանի է ստանալու ավելի շատ, քան, ասենք, բուժքույրը:

Նվաճումների վրա հիմնված արդարությունը քննարկվել է տարբեր քաղաքական ճամբարների կողմից: Այն հաստատվել է որպես հիմնական քաղաքական փաստարկ՝ հօգուտ անարդարացի բաշխման: Այնուամենայնիվ այն առաջին հերթին

վերաբերում է սոցիալական հարաբերություններին և հանդիսանում է բանակցությունների թեմա:

Կարիքների վրա հիմված արդարություն

Կարիքների վրա հիմված արդարությունը վերաբերում է նրան, թե ինչ կարող է ստանալ անհատը, եթե նա ունի որևէ բանի կարիք: Օրինակ, մի մարդ կարող է բուժման կարիք ունենալ: Առողջ մարդը չի կարող պահանջել, որ բուժման հարցում իրեն առավելություն տան, քանի որ չունի այդ սոցիալական անհրաժեշտությունը կամ հասարակությունը դա չի ճանաչել: Սոցիալական օրենսգրքի փոփոխությունների մեծ մասն ունի կարիքների վրա հիմված կողմնորոշում: Կարիքների վրա հիմված արդարությունը, որպես օրինականության սկզբունք, ունի իր տեղը մեր սոցիալական համակարգում:

Երկու փաստարկներն էլ իրենց հերթին կրկին դառնում են քաղաքական բանավեճերի թեմա:

2.2.5. Թեմայից շեղում. հավասարությունը և արդարությունը որպես սոցիալ-դեմոկրատական հասկացություն

Շեշտադրումների տեղաշարժը արդարության մասին բանավեճերում

Չնայած արդարության կոնցեպցիայի շուրջ տարբեր փիլիսոփայական մոտեցումների առկայությանը, Ֆեդերատիվ Հանրապետության ստեղծումից հետո էլ սոցիալ-դեմոկրատիայի շրջանակներում քաղաքական հասկացությունների պատմական զարգացումը շարունակում է հետաքրքրություններ առաջացնել: Շեշտադրումների փոփոխությունը կարող է ի հայտ գալ արդարության հասկացության շուրջ քաղաքական բանավեճերում: Դրանք, ճիշտ է, տեսական բանավեճերի ծնունդ չեն, սակայն կրում են այդ բանավեճերի կնիքը:

Այժմ, մասնավորապես, քննարկենք սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական թեզերը, քանի որ սոցիալ-դեմոկրատները, հատկապես Գերմանիայում, ընդունվում են որպես սոցիալական արդարության կուսակցություն:

Նախ՝ փորձենք տեսնել մեզ հետաքրքրող հասկացությունների հետևողականությունը: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության կառավարման տարբեր ժամանակահատվածներում արդարություն հասկացությունը քաղաքական ասպարեզում փոխակերպման է ենթարկվել, փոխել է իր ձևը: Ժամանակի ընթացքում «հավասա-

ություն» հասկացությունն իր մեջ ավելի շատ բան է ներառել, այն է՝ «հավասար հնարավորություններ», իսկ ավելի ուշ՝ «արդար հնարավորություններ»:

Հավասարություն

1959 թ. Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Բադ Գոդերսբուրգում, կուսակցական համաժողովից հետո հավասարության կոչեր անելով, հնարավորություն ունեցավ ընտրողների նոր զանգվածներ, մասնավորապես ձախակողմյան քաղաքական ուժեր ներառելու իր մեջ: Այդ կոչերը ընդգրկում էին տարբեր ոլորտներ, սակայն կուսակցության ուշադրության կենտրոնում էր աշխատանքի ոլորտը: Հավասարության գաղափարը առաջին հերթին կիրառելի էր դիտվում գործող արտադրական հարաբերությունների պայմաններում անազատության և շահագործման երևույթների բացահայտման համար: Հիմնական նպատակը աշխատավոր խավի մասնակցության ընդլայնումն էր քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացներին (թերևս արժե հիշել ածխային և ծանր արդյունաբերության աշխատավորների 1950-ական թթ. գործադուլների ալիքը՝ իրադարձություններ, որ արդեն մոռացության են մատնվել): Սոցիալ-դեմոկրատներն այս կերպ ձգտում էին հասնել հավասարության, այլ կերպ ասած՝ աշխատավոր խավի առավել մեծ զանգվածներ ներգրավել քաղաքական որոշումների ընդունման գործընթացում՝ ելնելով աշխատանքային և կենցաղային պայմաններից: Արդյունքը միանշանակ չէր: Թեև կային մասնակի հաջողություններ, բայց որոշումներ ընդունելու գործընթացում ներգրավվածության հարցով հավասարության պահանջը աշխատանքի ոլորտում դեռ երկար ժամանակ չէր իրագործվում:

Հնարավորությունների հավասարություն

Բրանտի ժամանակաշրջանում այսպես կոչված սոցիալ-ազատական կոալիցիայի (սոցիալ-դեմոկրատական և ազատ դեմոկրատական կուսակցություններ) շրջանակներում ի հայտ եկավ «հավասար հնարավորությունների» հասկացությունը, որի արձագանքները զգալի են նաև այսօր (և ոչ միայն սոցիալ-դեմոկրատների շրջանակներում): Բրանտի ժամանակաշրջանում այն բնութագրվում էր հատկապես իր առաջադիմական էությամբ: Այս նոր հասկացությամբ, որպես կանոն, ընդունվում էր, որ գոյություն ունի հասարակական անհավասարություն: Միևնույն ժամանակ այն կենտրոնանում էր կրթության ոլորտի վրա: Կրթության ոլորտի ընդլայնման պահանջը դարձավ նոր ընտրազանգվածների ներգրավման հիմնական միջոցներից մեկը: Եվ անհավասարության հասկացությունն արդեն ընդգրկում էր ոչ միայն նյութական բարիքների բաշխման ոլորտը, այլև առաջ էր գալիս հասարակության համար կրթության հնարավորությունների հավասար բաշխման պահանջը: Ինքնին ենթադրվում է, որ սոցիալ-դեմոկրատների համար նյութական բարիքների անհավասար բաշխումը և ուսուցման հնարավորությունների անհավասար բաշխումը քայլում են կողք կողքի: Այնուամենայնիվ Ազատա-

կանները հավասարության և հավասար հնարավորությունների գաղափարների փոխկապակցման հարցի վրա ավելի քիչ էին կենտրոնացած և շեշտը դնում էին հավասարության հասկացությունը արդար հնարավորություններ հասկացությամբ փոխարինելու վրա: Հավասար հնարավորությունների գաղափարն այն էր, ինչի վրա կարող էին հենվել ազատականները: Հակառակ դեպքում անհնարին կլիներ սոցիալ-ազատականների կոալիցիան:

Խնդիրների համատեղումը մեկ կիզակետում հանգեցրեց սոցիալական նոր կազմավորման և ընդհանուր քաղաքականության վերանայման: Հավասար հնարավորությունների հասկացությունն այս փոփոխությունների բնորոշ գծերից մեկն էր: Ներկայացվելով ճիշտ ժամանակին, երբ սոցիալական պետությունը ընկալվում էր որպես դրական երևույթ, այն հնարավորություն տվեց նաև կայունացնելու տնտեսական իրավիճակը:

Արդար հնարավորություններ

Սոցիալ-դեմոկրատների կառավարման երրորդ ժամանակաշրջանում, կանցլեր Գերհարդ Շրյոդերի օրոք, հավասար հնարավորությունների հասկացությունը լրացվեց այսպես կոչված արդար հնարավորություններով: Արդար հնարավորություններ հասկացության մեջ շեշտն ավելի շատ դրվում էր բաշխման ասպեկտի վրա: Այդ հասկացությամբ նշվում էր, որ հասարակության մեջ հնարավորությունները կապված են նյութական և ոչ նյութական ռեսուրսների բաշխման հետ: Միաժամանակ այդ ռեսուրսները սահմանափակ են՝ ելնելով տնտեսական պայմաններից: Սա այդ կառավարության հիմնական որոշիչ փաստարկն էր:

Սահմանափակ հնարավորությունները պետք է բաշխվեն արդարացի, և Շրյոդերի քաղաքականությունը փոխառել էր քաղաքական նվաճումների կամ արժանիքների վրա հիմնված արդարության պատկերացումը: Աջակցություն և մարտահրավեր (Fördern und Fordern) բանաձևն իր մեջ ներառում է հնարավորությունների ընձեռում և նյութական ռեսուրսների բաշխում, ինչպես նաև սպասվելիք շահույթ:

Արդար հնարավորություններ հասկացությունը պառակտեց ձախակողմյաններին

Քաղաքական բանավեճերում արդար հնարավորություններ հասկացությունը պառակտեց ձախակողմյաններին:

Ամենագլխավոր հարցերը հետևյալներն էին՝

- իրո՞ք ռեսուրսներն այդքան քիչ են, և եթե այո, ապա կոնկրետ որքանո՞վ: Թե՞ դա ավելի շատ քաղաքական կամքի հարց է, և այս դեպքում բազմաթիվ տարբերակներ կարող են իրագործվել հասարակական ֆինանսների և սոցիալական ապահովագրության վերաբերյալ:

- Կարո՞ղ է, արդյոք, ներկա սոցիալական պարտավորությունների բաշխումը և օժանդակությունը համարվել արդարացի (օրինակ՝ բիզնեսի ծանրաբեռնվածության նվազեցում այն դեպքում, երբ սոցիալական ապահովագրությունում արվում են կրճատումներ):

Անկախ այն բանից, թե անհատն ինչպես է պատասխանում այդ հարցերին, պարզ է դառնում, որ արդարություն հասկացությունը բավական վիճահարույց է թե՛ տեսական, թե՛ քաղաքական տեսակետից:

Արդարության մասին բանավեճերում առաջացած մարտահրավերները սոցիալ-դեմոկրատիայի համար

- Արդարությունը հիմնարար արժեք է այնքան ժամանակ, քանի դեռ վերաբերում է նյութական և ոչ նյութական բարիքների բաշխմանը: Ասելով սա, սոցիալ-դեմոկրատները չունեն այն ստանդարտ կոնցեպցիան, որի վրա հիմնվում են: Որպես օրինականության սկզբունք արդարություն հասկացությունը սոցիալապես արդյունավետ է, սակայն տեսականորեն՝ հակասական:
- Արդարությունը տարբեր սոցիալական ոլորտներում պետք է գործի տարբեր կերպ:
- Հավասարությունը բարիքների հավասար բաշխման ժամանակ կարիք չունի արդարացման: Արդարության տեսակետից հավասար բաշխումից շեղումը պետք է սահմանվի և բանակցությունների թեմա դառնա:
- Իրական ազատությունն անհերևակայելի է առանց հավասարության:

«Արդարությունը» Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության Համբուրգի ծրագրում

«Արդարությունը հիմնված է յուրաքանչյուրի արդար արժանապատվության վրա: Այն հավասար է հավասար ազատության և հավասար հնարավորության՝ անկախ մարդկանց սեռից և կարգավիճակից: Այնուամենայնիվ արդարություն նշանակում է հավասար մասնակցություն կրթության, աշխատանքի, սոցիալական ապահովության, մշակույթի և ժողովրդավարության խնդիրների լուծմանը, ինչպես նաև հավասար հասանելիություն բոլոր հանրային բարիքներին: Երբ եկամուտների և ունեցվածքի անհավասար բաշխումը հասարակությունը բաժանում է երկու խմբերի՝ մեկը, որ տալիս է, իսկ մյուսը, որ ստանում է հրահանգներ, սահմանափակվում են օրինական հավասար իրավունքները և անխուսափելիորեն առաջ է գալիս անարդարություն: Այդ իսկ պատճառով արդարությունը պահանջում է եկամուտների, ուժի և սեփականության արդարացի բաշխում: Նվաճումները պետք է ընդունվեն և հարգվեն: Նվաճումների վրա հիմնված եկամուտների և սեփականության բաշխումը արդարացի բաշխում է: Սեփականության իրավունքն իր հետ բերում է նաև պարտականություններ: Նրանք, ովքեր ունեն մեծ եկամուտ կամ ավելի շատ սեփականություն, քան մյուսները, պետք է նաև ավելի մեծ ներդրում ունենան հասարակության բարեկեցության գործում»: (Համբուրգի ծրագիր, 2007թ., 15)

2.3. Համերաշխություն

Համերաշխություն հասկացության սահմանումը

Հասկացություններից ամենաքիչը քննարկվել է համերաշխությունը (կամ *«fraternité»*- ֆրանսիական հեղափոխության ժամանակ): Անկասկած դա նրանից է, որ համերաշխություն հասկացությունն առնչվում է ողջ մարդկությանը և առավել դժվար է այն ինտեգրել տեսական հիմնավորումներով: Համերաշխություն հասկացությունը կարելի է միայն մոտավոր սահմանել՝ հղումներ կատարելով մի շարք հեղինակների,[9] որպես

- համայնքների և մարդկանց՝ միմյանց նկատմամբ պատասխանատվության զգացում, որն
- առաջանում է ընդհանուր հետաքրքրություններից և
- արտահայտվում է կողմերի այնպիսի պահելաձևով, որն օգտակար է հասարակություններին: Որոշ դեպքերում համերաշխությունը կարող է նույնիսկ անհատի կարճաժամկետ շահերին հակառակ լինել, բայց,

[9] Օրինակ՝ Հոնդրիխ, 1994թ, Կարիգիետ, 2003թ.:

- ֆորմալ պահանջներից դուրս, այն ի վերջո հանգեցնում է փոխադարձ արդարության:

Կապը համերաշխության և սոցիալական ինքնության միջև

«Համերաշխությունն» այնուամենայնիվ ընդհանուր սոցիալական ինքնության հարց է, որը սկիզբ է առնում ընդհանուր կենսաձևից և ընդհանուր արժեքներից: Խոսելով այս մասին՝ ամերիկացի սոցիոլոգ, բարոյականության խնդիրների մասնագետ, փիլիսոփա Մայքլ Վալզերը անում էր նաև որոշ վերապահումներ: Օրինակ, որ համերաշխությունը «կարող է վտանգավոր լինել, երբ այն միայն զգացմունքային է, այլ ոչ թե հիմված ամենօրյա համագործակցության վրա»: (Վալզեր, 1997թ., 32):

Համերաշխությունը որպես ամենօրյա համագործակցության կոնցեպցիա

Ամենօրյա համագործակցությունը վերաբերում է սոցիալական ինստիտուտներին և կառույցներին, որոնց շրջանակներում համերաշխությունը կարող է զարգանալ և աջակցել սոցիալական ապահովությանը:

Ինքնին համերաշխությունն անկասկած կարող է ստանալ ինչպես բացառիկ, այնպես էլ խտրական բնույթ: Աջակողմյան ծայրահեղականների *«esprit de corps»-ը* կարող է դրա մեկ օրինակը լինել: Ժողովրդավարական հասարակություններում, որոնք զարգանում են բաց և բազմակարծիք քաղաքացիական հասարակության պայմաններում, այս կեղծ համերաշխությունն իրենից ներկայացնում է մի մեծ և թերագնահատված սպառնալիք: Այն հասնում է իր ճակատագրական շեմին, երբ սոցիալական համախմբվածությունը սնվում է ուրիշների նկատմամբ խտրականությունից:

Համերաշխությունը հավասարության և ազատության կարիք ունի

Մենք չենք կարող խոսել համերաշխության մասին առանց ժողովրդավարական հասարակությունում ազատություն և հավասարություն իրագործելու:

Որքան էլ դժվար է ըմբռնել այս հասկացությունը, այնուամենայնիվ ինստիտուցիոն տեսակետից այն էական դեր է խաղում սոցիալիստական մտքի պատմության մեջ: Օրինակ՝ սոցիալական ապահովագրության մեծ նախագծերը (գործազրկություն, հիվանդություն, կենսաթոշակի և դժբախտ պատահարներից ապահովագրություն) աշխատուժի համերաշխության ինստիտուտներն են: Դրանց հիմնադրումը 1880-ական կամ1920-ական թթ. պայմանավորված էր այն անսահման ճնշումներով, որոնք գործադրվում էին աշխատողների և սոցիալիստների (սոցիալ -դեմոկրատներ) կողմից անգամ Բիսմարկի պահպանողական իշխանության տարիներին:

Կորպորատիվ շարժումները ևս կարող են բնութագրվել որպես համերաշխության համայնք, որտեղ համայնքի յուրաքանչյուր անդամ, հիմվելով ընդհանուր շահերի վրա, կարող է էականորոն չեզոքացնել շուկայական մրցակցությունը:

Բացի այդ, պետք է նաև նշել, որ արդյունավետ համերաշխությունը ենթադրում է հետաքրքրությունների փոխզիջում: Համերաշխությունը կկայանա միայն այն դեպքում, երբ քաղաքական բանավեճերում հաշվի առնվեն տարբեր, բայց ընդհանուր հանրային հետաքրքրությունները:

Համերաշխությունը և սոցիալ-դեմոկրատիան

Համերաշխության բանավեճերում առաջացած մարտահրավերները սոցիալ-դեմոկրատիայի համար

- կապը հասարակության համերաշխության համար կարող է խթանվել, բայց ոչ ստեղծվել.
- սոցիալ-դեմոկրատիայի պայմաններում պետք է մանրամասնորեն ուսումնասիրվի, թե ինչպես են պետությունն ու քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ազդում համերաշխության ամրապնդմանը.
- համերաշխության հարցը միշտ պետք է քննարկվի հավասարության և ազատության իրականացման հարցերին զուգահեռ:

«Համերաշխությունը» Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության Համբուրգի ծրագրում

«Համերաշխություն նշանակում է երկկողմ կապվածություն, պատկանելություն և օգնություն: Սա ենթադրում է պատրաստակամություն պաշտպանելու և օգնելու միմյանց, ուժեղներին և թույլերին, սերունդներին և ժողովուրդներին: Համերաշխությունը փոփոխությունների համար ստեղծում է ուժ, սա աշխատավորական շարժման օրինակ է: Համերաշխությունը մեծ ուժ է, որը հասարակության անդամներին կապում է միմյանց՝ պատրաստակամ միմյանց օգնելու: Այն ունի ընդհանուր կանոններ, և բարեկեցիկ պետությունն իր մեջ ներառում է քաղաքականապես երաշխավորված և կազմակերպված համերաշխություն»:

(Համբուրգի ծրագիր, 2007թ., 16)

2.4. Այլ Տեսակետներ

Մարտին Թիմկի

Բնականաբար քաղաքական ոլորտում սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները միակը չեն: Այլ կուսակցություններ ևս կուսակցական ծրագրերում կամ այլ հիմնական փաստաթղթերում ձևակերպել են իրենց հիմնարար արժեքները: Ստորև համառոտ կշարադրենք այդ ձևակերպումները: Սակայն չենք ներկայացնի այդ ձևակերպումներն ամբողջությամբ: Մենք պարզապես կներկայացնենք դրանք՝ առանց մանրամասների մեջ մտնելու:

«Աստծո կողմից ստեղծված» պնդումը Քրիստոնեա-դեմոկրատական միության տեսակետում

Տեսակետ՝ «Աստծո կողմից ստեղծված»

Քրիստոնեա-դեմոկրատական միության (ՔԴՄ) հիմնարար արժեքներն են ազատությունը, արդարությունը և համերաշխությունը: Սրանք ձևակերպվել են 2007թ. դեկտեմբերին Հաննովերում կայացած համագումարում հաստատված կուսակցական ծրագրում: Չնայած այդ արժեքներն առաջին հայացքից նման են Սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ՍԴԿ) Համբուրգի ծրագրում ձևակերպված արժեքներին, սակայն առավել ուշադիր քննարկումների ընթացքում ի հայտ են գալիս մի շարք տարբերություններ: Օրինակ, ՔԴ միությունը հստակ ընդգծում է իր ուղղվածությունը՝ քրիստոնյաների մարդասիրություն և «Աստծո կողմից ստեղծված»: ՔԴ միության համար քրիստոնեությունը զբաղեցնում է կենտրոնական տեղ, մինչդեռ ՍԴԿ-ի համար այն հանդիսանում է միայն աղբյուրներից մեկը, որից նա վերցնում է իր հիմնարար արժեքները: (Բավարիայի տարածաշրջանային ՔՍՄ կուսակցությունն էլ առավել հետևողական է իր այս հիմնական նպատակին հասնելու հարցում: Նա կարևորում է նաև պահպանողական սերը հայրենիքի նկատմամբ և հայրենասիրությունը):

Այնուամենայնիվ ազատություն հասկացության ՔԴՄ պատկերացումը որոշակիորեն տարբերվում է ՍԴԿ-ի պատկերացումից: Նախ ասենք, որ ՔԴՄ-ն իր ազատության հասկացությունը ձևակերպում է ավելի մանրամասն, քան մյուս երկու հիմնարար արժեքները: Իսկապես, այս կուսակցության ծրագիրը վերնագրված էր՝ «Նոր արդարություն՝ առավել ազատության շնորհիվ»: Երկու կուսակցություններն էլ ընդգծում են ազատության՝ որպես հիմնարար արժեքի, առաջնահերթությունը, սակայն ՍԴԿ-ն պնդում է, որ երկու արժեքներն էլ ունեն հավասար ստատուս: Բացի այդ, ՔԴՄ ծրագիրն ավելի շատ ուշադրություն է դարձնում քաղաքացիական իրավունքների և ազատությունների բացասական կողմերին, քան դրական, չի անդրադառնում քաղաքացիական իրավունքների և ազատությունների մեծացմանը:

Գերմանիայի Ազատ-դեմոկրատական կուսակցության երեք հիմնարար արժեքները՝ ազատություն, ազատություն, ազատություն:

Ազատություն, ազատություն, ազատություն

Ազատ դեմոկրատական կուսակցությունը (ԱԴԿ) չունի իր կուսակցական ծրագիրը: Այնուամենայնիվ, ծանոթանալով կուսակցության ստեղծման հիմնարար փաստաթղթերին, որոնցից մեկն էլ «Հիմնարար սկզբունքների հռչակագիրն» է, որն ընդունվել է 1997թ. կուսակցության ֆեդերալ համաժողովում, կասկած չի մնում, որ ազատությունն ԱԴԿ-ն ընդունում է որպես հիմնարար արժեք: Կարելի է մտածել, որ սա միանգամայն ընդունելի է մի կուսակցության համար, որի հիմքում քաղաքական ազատականությունն է: Սակայն կարելի է հակասել այս մտքին, ասելով, որ սա շատ համառոտ տարբերակ է: Այնուամենայնիվ արժե նշել, որ ազատության տարբեր ասպեկտներ կենտրոնական դեր են խաղացել Ջոն Լոքի՝ հասարակության մասին գաղափարներում: Ջոն Լոքը քաղաքական ազատականության հիմնադիրներից է: Ի տարբերություն նրա՝ ԱԴԿ-ն փորձում է իր կողմնորոշման յուրաքանչյուր ասպեկտ կապել ազատության հասկացության հետ: Այնպիսի լոզունգներ, ինչպիսիք են «Ազատություն նշանակում է առաջընթաց» կամ «Ազատություն նշանակում է համատեղելիություն ապագայի հետ», ցույց են տալիս, որ ազատ դեմոկրատները փորձում են միմյանց կապել այն հիմնարար արժեքները, որոնց կարևորությանը ոչ ոք չի կասկածում: Սակայն պարզ է, որ եթե հասարակությունը գլխավոր արժեք է հայտարարում միայն ազատությունը՝ ի հաշիվ համերաշխության և արդարության համագործակցության, շուտով հանդիպելու է դժվարությունների և վտանգելու է սոցիալական համախմբվածությունը:

Ինչ-որ բան բոլորի համար. Bündnis 90-Կանաչներ

Բազմազանության մեջ ինչ-որ բան բոլորի համար

Ինքնորոշման հարցը Կանաչների համար կարևորագույն տեղում է: Արդարության մասին հասկացությունը նրանց ընկալմամբ այնքան շատ ասպեկտներ ունի, որ դժվար է դրանք միանգամից ըմբռնել: Բաշխական արդարությունը Կանաչները կարևորում էին մասնակցության մեջ, սերունդների մեջ, ինչպես նաև կարևորում էին գենդերային և միջազգային արդարությունը: Իհարկե, ոչ մի վատ բան չկա սրանցից և ոչ մեկի մեջ, այնուամենայնիվ, այս ամենին հավասար կարգավիճակ տալը, առանց որևէ առաջնահերթությունների, մի փոքր շփոթեցնում է, և չի հասկացվում, թե ինչ են պատկերացնում արդարություն ասելով: Ինչպես և սպասելի է բնապահպանական կուսակցությունից, հիմնարար արժեքները լրացվում են նաև կայունության մասին կոչերով՝ քաղաքական բոլոր ասպարեզներում: Առավել քիչ համոզիչ է թվում Կանաչների հաստատակամությունը կայունության ընձեռնման հարցում, չնայած, որ նրանք անշեղորեն կարևորում են նաև հավասար կարգավիճակի շնորհման հարցը՝ ազատություն, արդարություն և համերաշխություն հիմնարար արժեքների հետ միասին:

Ամեն ինչ դեռ հեղհեղուկ վիճակում է. *Die Linke*-Ձախակողմյաններ

Այսօր Ձախակողմյան կուսակությունը, որը հիմվել է «Դեմոկրատական-սոցիալիզմ» և «Աշխատանք և սոցիալական արդարություն-ընտրական այլընտրանք» կուսակցությունների հիման վրա, դեռ չի հաստատել իր կուսակցական ծրագիրը: Աշխատանքային ծրագիրը, որի հիման վրա այս երկու կուսակցությունների միաձուլումը իրագործվել է, հիմնարար արժեքների վերաբերյալ ունի միայն մի քանի հպանցիկ կետեր: Կան հղումներ ժողովրդավարությանը, ազատությանը, հավասարությանը, արդարությանը, ինտերնացիոնալիզմին և համերաշխությանը՝ որպես հիմնարար արժեքների: Նրանք ընդունում են պատմականորեն անհատական ազատության հասկացությունը և պնդում, որ առանց դրա հավասարությունը վերափոխվում է անօրինականության և հետերոնոմիայի: Սա շատ հստակ է, և սոցիալ-դեմոկրատները, հավանաբար, կհամաձայնեին, թեև իրենք այլ կերպ կձևակերպեին. օրինակ, որ ազատությունն առանց հավասարության վերածվում է ազատության միայն հարուստների համար: Իրոք, հավասարության և արդարության միջև կապը Ձախակողմյանների ապագա ծրագրերում պետք է հստակորեն ենթարկվի մոնիթորինգի:

2.5. Հիմնարար արժեքները գործնականում

Ուսումնասիրելով հիմնարար արժեքները տեսական մակարդակում, կցանկանայինք դրանք ներկայացնել նաև գործնականում: Ի՞նչ դեր են խաղում հիմնարար արժեքները սոցիալ-դեմոկրատիայի համար ամենօրյա քաղաքական բանավեճերում:

Տարբեր ոլորտներում մի շարք օրինակներ պետք է նոր գաղափարներ առաջ բերեն և զարգացնեն դրանց հետագա արտացոլումը:

2.5.1. Կրթական քաղաքականություն

Հիմնական ծրագիր. «Դպրոցներն ապագայի նոր հնարավորություններ են ստեղծում»: Առաջադեմ կրթական քաղաքականության տեղային իրականացում[10]

Մարկ Հերտեր

Առաջին PISA-ի (Սովորողների կրթական ձեռքբերումների ու նվաճումների գնահատման միջազգային ծրագիր) ուսումնասիրություններն ի հայտ բերեցին գերմանական կրթական համակարգի բացթողումները: 2003թ. կրթական համակարգն ինտենսիվ քննարկման նյութ դարձավ ազգային, մարզային և տեղական մակարդակներում: Քննարկումների հիմնական առարկան այն էր, որ Գերմանիայում կրթության արդյունքները, հատկապես այլ երկրների համեմատությամբ, սերտորեն կապված էին երիտասարդների սոցիալական կարգավիճակի հետ: Համենայն դեպս ինչի կնմանվեր սոցիալապես արդար և միասնական դպրոցական համակարգը, որը միևնույն ժամանակ բոլոր ցանկացողներին կրթության և մասնագիտության հարցերում որոշումներ ընդունելու միանման ազատություն էր ընձեռում: Համում ՍԴԿ-ն քննարկեց այս հարցը և մշակեց սոցիալ-դեմոկրատական համապարփակ մոտեցում, այսպես կոչված հիմնական ծրագիր, որ հետևյալ կարգախոսն ուներ. «Դպրոցները ապագայի նոր հնարավորություններ են ստեղծում»: Համ քաղաքը նաև հանդիսանում է ադմինիստրատիվ շրջան՝ իր իրավունքներով (*kreisfreie Stadt*):

[10] Այս օրինակը հիմված է ՍԴԿ-ի՝ Համում դպրոցների զարգացման ծրագրի մշակման վրա:

Համում գործում են դպրոցներ, և քաղաքային իշխանություններն իրենք են պատասխանատու այդ դպրոցների հետագա զարգացման համար: Այս պարագայում հարց է ծագում՝ ի՞նչ նպատակով կազմվեց «Հիմնական ծրագիր» կոչվածը:
Մինչ այդ Համում, որտեղ իշխում էր ՔԴՄ-ՍԴԿ կոալիցիան, դպրոցներում կրթության քաղաքականությունն ավելի շատ կամայական բնույթ էր կրում: Այլ կերպ ասած՝ երբ դպրոց ընդունվողների թվաքանակը աճում էր կամ նվազում, ըստ դրա դպրոցներն ընդլայնվում էին, սովորողները տեղափոխվում էին մեկ այլ դպրոց և այլն: Եվ երբ այդ խառնաշփոթը վերանում էր, դրությունը շտկելու համար այլևս քայլեր չէին ձեռնարկվում, այլ պարզապես ամեն ինչ հանդարտվում էր մինչև հաջորդ «ճգնաժամը»:
Այս իրավիճակը չի նպաստում ապագային ուղղված դպրոցական համակարգի հիմքերի ստեղծմանը:
Նոր դպրոցական կրթության հասկացության համար հիմք դարձավ այն նոր հասկացությունը, որ ոչ միայն դպրոցական համակարգը, այլև մյուս համակարգերը, որոնք առնչվում են երեխաների և երիտասարդների բարեկեցության հարցերին, ընդհուպ կրթական և ուսուցողական տարբեր ծրագրերի աջակցելը, աշխատանքի շուկան և ինտեգրացիան, որոշիչ դեր ունեն կրթության գործում: Հիմնվելով հետազոտությունների արդյունքների վրա՝ Հիմնական ծրագիրը ձևավորեց երկարաժամկետ նախագծեր և գործունեության ոլորտներ, որոնց նպատակն էր կրթական ոլորտի արդյունքների բարելավումը:

Սոցիալ-դեմոկրատիայի «Հիմնական ծրագիրը»

Ծրագրի նպատակը խնդրի լուծման սոցիալ-դեմոկրատական այլընտրանքային առաջարկությունների առաջքաշումն էր, օրինակ, թե ինչպես պետք է կրթական դրույթները կառավարվեն մեծամասնության կողմից: Հին դպրոցական կրթական քաղաքականության ձախողման երկու ցուցանիշ՝ չհաշված PISA-ի ուսումնասիրությունները, հստակ ցույց տվեցին այս ծրագրի կարևորության աստիճանը:

- Համում համալսարան ընդունվելու համար անհրաժեշտ միավորներ հավաքում էին 30 տոկոսից պակաս դիմորդներ: Համը զգալիորեն հետ էր մնացել Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի երկրամասի այլ *kreisfrei* քաղաքներից: Հարևան Մյունստերում, օրինակ, անցողիկ միավոր էր հավաքում դիմորդների մոտ 50 տոկոսը:
- Չնայած բարեկեցիկ շրջանների ուսանողների 50 տոկոսը շարունակում էր ուսումը *գիմնազիաներում* (հավասարազոր է ԱՄՆ-ի միջնակարգ դպրոցներին), ավանդաբար աշխատավոր դասակարգին պատկանող շրջաններում, ինչպիսին Հերրինգենն է, սովորողների ընդամենը 19,5 տոկոսն է շարունակում կրթությունը:

Միևնույն ժամանակ լուծումներ էին պահանջում նաև սոցիալ-ժողովրդագրական զարգացումները: Այն աշակերտների թվաքանակը, ովքեր մինչև 2015թ. պետք է տարրական դպրոցից անցում կատարեին միջնակարգ դպրոց, 2005թ. տվյալների համեմատ նվազել էր 1/4 մասով: 2010թ. տվյալներով այսուհետ Համում ծնված ամեն երկրորդ երեխան ապագայում ունենալու է էմիգրանտի կենսագրություն (immigrant background): Հասարակությանը նրանց ինտեգրացիան և նրանց գիտելիքների լիարժեք օգտագործումը ոչ միայն քաղաքական հարցերի լուծման հիմքն է, այլև կառուցվածքային փոփոխությունների վտանգի տակ գտնվող քաղաքի հաջող զարգացման հիմնական պայմանը:

Ի՞նչ նկատի ունենք ազատություն ասելով Մշտական հոգատարություն բոլորի հանդեպ

Հիմնական ծրագրի առաջին սկզբունքն է մշտական հոգատարություն՝ ողջ ծավալով: *Որակյալ* խնամք՝ մարդու ծնված օրվանից, որը ժամանակի ընթացքում մանկավարժական մոտեցումներով հանդերձ ավելի կընդլայնվի 3-6 տարեկան հասակում: Դրան կհաջորդի 14 տարեկանների համար այսպես կոչված ողջ օրվա հոգատարություն հասկացությունը: Այս կերպ իրականություն կդառնա աշխատանքի և ընտանեկան կյանքի համատեղելիությունը: Ավելին, քաղաքային իշխանությունները երեխային մեծացնելու պայմանների հետ կապված ոչ մի օրենք չեն ընդունում և առաջին անգամ ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն են տալիս ծնողներին: Այս դեպքում ազատությունը չի դառնում միայն հարուստ ընտանիքների իրավունքը, որոնք կարող են դայակ վարձել: Այդ ազատությունը վերաբերում է բոլոր ընտանիքներին՝ թույլ տալով պլանավորել իրենց կյանքը:

Իրական սոցիալական արդարություն Շրջանային ընդհանուր կրթական դպրոցներ՝ նոր հնարավորություններ ընձեռելու համար

Հիմնական ծրագրի մեկ այլ հիմնական սկզբունք էլ ենթադրում է՝ Համի բոլոր 7 շրջաններում ապահովել դպրոցական համակարգի առավել ակտիվություն և թափանցիկություն: Բոլոր քննությունները պետք է հասանելի լինեն յուրաքանչյուր շրջանում: Նպատակն է կոտրել այն կարծրատիպը, թե ուսանողի հաջողակությունը կապված է նրա սոցիալական կարգավիճակի հետ: Սոցիալական արդարությունն այնուամենայնիվ սկսում է հավասար մասնակցության և հավասար հասանելիության իրավունքից և բոլորի համար է ստեղծում հավասար հնարավորություններ ուսումը շարունակելու համար: Ինտեգրացիա և անհատների աջակցություն հասկացությունները ոչ թե հակադրվում, այլ գտնվում են միմյանցից կախման մեջ:

Շրջանային ընդհանուր կրթական դպրոցները (Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի շրջանը՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության մոդելով) 5-րդ և 6-րդ ընդհանուր կրթական դասարաններից հետո սովորողներին հնարավորություն են տալու ինտեգրվելու տարրեր դասարանների, որոնք բաժանվում են երեք խմբի. *Hauptschule* (ինչպես Միացյալ Թագավորության միջնակարգ կրթության համակարգն է), *Realschule* (միջին դպրոց, որն ունի որոշակի կողմնորոշում դեպի գործնական առարկաները) և *Gymnasium* (գիմնազիա): Սակայն բոլոր այս տարբերակները պետք է ներառվեն մեկ դպրոցի շրջանակներում: Շատ բան կփոխվի նաև տեղական մակարդակում, օրինակ՝ Հերինգենի շրջանում առաջին անգամ շրջանային ընդհանուր կրթական դպրոցները կունենան գիմնազիաներ և ընտրովի առարկաներով կրթական դպրոցներ: Գիմնազիաներ կունենան նաև մյուս շրջանների ընդհանուր կրթական դպրոցները: Բայց, հասկանալի է, որ ժողովրդագրական փոփոխությունների հետևանքով որևէ շրջան ի վիճակի չի լինի պահելու այդ հավելյալ դպրոցներն առանց ընդհանուր կրթության:

Համերաշխություն, որ ավելի մեծ իմաստ ունի Սոցիալական օգնության բյուջե

Դպրոցական կրթական քաղաքականության առաջարկի 3-րդ հիմնական տարրը սոցիալական օգնության բյուջեն է: Միևնույն ժամանակ հաշվի է առնվում այն հանգամանքը, որ տարբեր դպրոցներ ունեն տարբեր կարիքներ և պայմաններ:

Այն շրջաններում, որոնցում ներգաղթած ուսանողների թիվն ամենաբարձրն է, սոցիալական խնդիրները կարող են լուրջ ազդեցություն ունենալ դպրոցական կյանքի վրա: Դպրոցի բյուջեն հիմնականում օգտագործվում է տարրական կարիքներ հոգալու համար՝ դասագրքեր, նախաճաշ, դպրոցական արշավներ, այն դեպքում, երբ այլ շրջաններում այդ գումարները ծախսվում են ուսուցման որակը բարելավելու, ամենօրյա հոգատարության, հատուկ նախագծերի և սարքավորումների վրա: Արդյունքում ստացվում է, որ այն շրջաններում, ուր ամենաշատ օգնություն է հարկավոր, հնարավորություններն ամենանվազագույնն են: Մյուս կողմից՝ սոցիալական օգնության բյուջեն գործելու է առանց որևէ խառնաշփոթի. յուրաքանչյուր աշակերտի համար դպրոցը ստանալու է որոշակի օգնություն՝ գումար, որին կավելանա և 10 տոկոս, երբ դրա կարիքը լինի: Այս դեպքում դպրոցները կհոգան աշակերտի հատուկ կարիքները և բյուջեի հիմնական մասը կօգտագործեն, ինչպես մյուս դպրոցները: Այս բյուջեն էականորեն տարբերվելու է մեկ շնչին ընկնող ավանդական բյուջեից: Սա կլինի *համերաշխության* բյուջե ֆինանսապես ապահովված և ֆինանսապես ավելի ծանր վիճակում գտնվող դպրոցների համար, որպեսզի հավասարեցվեն ֆինանսավորման հնարավորությունները և երաշխավորվի հաջող ուսուցումը:

Երկխոսություն

Այն բանից հետո, երբ այս նախագիծը վերջնականապես մշակվի ենթաշրջանների և կուսակցական կոալիցիոն խորհրդի կողմից, բոլոր 7 շրջաններում կներկայացվի և կքննարկվի ծնողների, մանկավարժների, աշակերտների և այլ շահախնդիր կողմերի շրջանակում: Հիմնական հարցն այն է, թե արդյոք այս գաղափարը կկիրառվի՞ համապատասխան շրջաններում:

2.5.2. Սոցիալական քաղաքականություն

Ունիվերսալ առողջապահական ապահովագրություն ընդդեմ ֆիքսված (ամրագրված) ապահովագրության. առողջապահական արդար քաղաքականության հարցը

Քրիստինա Ռենտչ և Մարթին Թիմի

2004թ. Առողջության պահպանման արդիականացման օրենքը, ինչպես նաև նախկինում առողջապահական համակարգում ընդունված բարեփոխումների մեծ մասը, կապված է առողջապահական ապահովագրության ծախսային մասի հետ: Այնուամենայնիվ կասկած չկա, որ պետք է նաև մտածել այն միջոցների մասին, որոնք կապված են եկամտի հետ: Հարց է, թէ ինչպես կարելի է կայուն պահել առողջության ապահովագրման կանոնադրական եկամուտները. այս առումով քաղաքական մարտահրավերները խիստ հակասական են: Ելնելով առողջապահական օգնության ֆինանսավորման համերաշխությունից՝ հարկավոր է շուտափույթ միջոցներ ձեռնարկել մի կողմից մեծահասակների թվի աճի, մյուս կողմից՝ ազգային եկամուտների այն մասի առնչությամբ, որոնք մուտք չեն գործում սոցիալական վճարումների համակարգ: Այս հարցի վերաբերյալ կան միմյանց հակասող քաղաքական տարբեր մոտեցումներ: 2005թ. ընտրությունների ժամանակ ՔԴՄ-ն և ՍԴԿ-ն կանգ առան ապագա առողջապահական պարտադիր ապահովագրության սկզբունքորեն տարբեր մոդելներ վրա:

Քանի որ հիմնականում հանրային բանավեճերի ընթացքում ունիվերսալ առողջապահական ապահովագրությունը և ֆիքսված ապահովագրությունը հանդես են գալիս միասնաբար, ապա եկեք նախ պարզենք, թե իրականում ի՞նչ են նշանակում դրանք:

Ունիվերսալ առողջապահական ապահովագրություն

ՍԴԿ-ն առաջարկում է պարտադիր առողջապահական ապահովագրությունը

հասցնել ունիվերսալ առողջապահական ապահովագրության մակարդակին, որտեղ, ինչպես ենթադրվում է, յուրաքանչյուր ոք կվճարի իր հնարավորությունների սահմաններում: Այդուհանդերձ հարկման գումարն այլևս կապված չի լինի միայն հիմնական եկամտի հետ, այլ հաշվի կառնվեն այլ եկամուտների աղբյուրները ևս: Ունիվերսալ առողջապահական ապահովագրության հետ մեկտեղ պարտադիր առողջապահական ապահովագրությունը կշարունակի ֆինանսավորվել աշխատավորների և գործատուների հարկերից: Եկամուտ չունեցող, սակայն ապահովագրված անձինք, ինչպես նաև նրանց երեխաները, նույնպես կներառվեն ապահովագրության մեջ և չեն կրի ֆինանսական պարտավորություններ:

Ֆիքսված ապահովագրություն

ՔԴՄ-ի կողմից այս մոդելը ներկայացվում է որպես «պրեմիում առողջություն», որը կազմված է ամենամսյա ֆիքսված վճարներից: Այդ վճարները պետք է կազմեն աշխատավորների եկամուտների 6,5 տոկոսը: Սա, ինչպես ավանդներն են ներդրվում սոցիալական ապահովագրության ոլորտում, կուղղվի առանձին ֆոնդ, որից կփոխհատուցվեն նրանք, ովքեր կներդնեն 7 տոկոսից ավելի: Գործատուների առողջապահական ապահովագրության ավանդները նույնպես կվճարվեն այս ֆոնդից: Այն երեխաների ավանդները, որոնք փակվում են պարտադիր ապահովագրության միջոցով, հետագայում կֆինանսավորվեն հարկերի հաշվին:

Մասնավոր առողջապահական ապահովագրության ապագան

Գերմանիայում առողջապահական համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ որոշ մարդիկ համերաշխության ավանդներ ներդնելու պատասխանատվություն չեն կրում: Օրինակ, քաղծառայողները, ովքեր ունեն հարկերից վճարվող առողջապահական ապահովագրություն, ի սկզբանե բացառված են այս համակարգից, այն դեպքում, երբ ինքնազբաղվածներն իրավաբանորեն պարտավորված չեն ապահովագրություն ապահովելու իրենց համար, անկախ այն բանից, թե որքան է իրենց եկամուտը: Այն աշխատողները, որոնց եկամուտը բարձր է որոշակի սահմանից, կարող են ընտրել մասնավոր առողջապահական ապահովագրություն: Սա նշանակում է, որ հասարակության մի ամբողջ զանգված այսպես կոչված առողջապահության համերաշխության ավանդ չի ներդնում: Կախված հեռանկարից և քաղաքական արժեքներից, սա կարող է դիտարկվել որպես խնդիր կամ դրական մրցակցություն առողջապահական ոլորտում:

Մասնավոր առողջապահական համակարգը ենթակա է արտաքին տարբեր ազդեցությունների՝ կախված այն բանից, կներդրվի՞ ունիվերսալ կամ պարտադիր առող-

ջապահական ապահովագրություն, թե՞ ոչ: Չնայած ունիվերսալ առողջապահական ապահովագրության հիմնական նպատակն է մասնավոր առողջապահական ապահովագրությունը ներառել համերաշխության ֆինանսավորման համակարգի մեջ, ֆիքսված առողջապահական ապահովագրությունը մասնավոր թողնում է անփոփոխ: Անշուշտ հարկային մուտքերը կօգտագործվեն, որպեսզի ազատվեն մասնավոր կերպով ապահովագրված երեխաների համար ավանդներ ներդնելու պատասխանատվությունից:

Համերաշխական ավանդի վրա հիմնված ֆինանսավորում. Արդար մասնակցություն ըստ վճարունակության

Ակնհայտ է, որ համերաշխության ներդրման բարձրացումը հանդիսանում է ունիվերսալ առողջապահական ապահովագրության հիմնական յուրահատկությունը: Պետք է բոլորը մասնակցեն ընդհանուր առողջապահական ապահովագրությանը, որպեսզի ֆինանսավորվի այդ համակարգը: Սակայն սա չի նշանակում, թե կվերանա մրցակցությունը: Պարզապես կհեշտանա տարբեր սոցիալական կարգավիճակում գտնվող մարդկանց ներդրումների հետ կապված հաշվարկը: Դրա փոխարեն ունիվերսալ համակարգի հաստատման դեպքում կստեղծվի արդար մրցակցություն՝ պարտադիր դրույթներով: Ապահովագրող ընկերությունները կմրցակցեն տրամադրվող ծառայությունների առավել լավ որակի համար և ոչ թե միայն «լավ ռիսկերի» (առավել երիտասարդ և առողջ հաճախորդներ) համար:

ՔԴՄ-ն հավաստիացնում է, որ իր մոդելն էությամբ արդար է: Նրանք բերում են այն փաստարկը, որ ֆիքսված առողջապահական ապահովագրությունն ավելի շատ ներդրումներ է ընդգրկում հարկային համակարգից, որի բոլոր հարկատուներն ընդհանուր առողջապահական համակարգում ավանդներ են ներդնում: Սակայն կասկածելի է՝ դա կբերի՞ ֆինանսական բեռի արդարացի բաշխման, թե՞ ոչ: Պետական բյուջեից ֆինանսավորումը նշանակում է, որ նրանք, ում եկամուտը ցածր է կամ միջին, առավել շատ ֆինանսական ծանրություն են վերցնում իրենց վրա, քան բարձր եկամուտ ունեցողները, որոնց ֆինանսական պարտավորություններն ընդհանուր առմամբ նվազում են, ինչը հետևանք է վերջին 10 տարիներին վարվող ֆինանսական քաղաքականության:

Եկամուտների, համամասնորեն ներդրման այս ձևաչափը շատ ավելի արդարացի է, որն ավելի լավ է իրագործում ունիվերսալ առողջապահական ապահովագրությունը՝ մի կողմից պահելով պրոգրեսիվ, այլ ոչ ֆիքսված ավանդների վրա հիմնված ֆինանսավորումը, մյուս կողմից՝ ներառելով նաև աշխատավարձից բացի ստացվող եկամտի մյուս աղբյուրները: Ամեն դեպքում այն, ինչն իրոք հակառակ է

համերաշխության հասկացությանը, դա այն է, որ ֆիքսված առողջապահական ապահովագրության դեպքում քաղծառայողները կազատվեն այդ վճարումներից և մասնավոր առողջապահական ապահովագրությունը, համենայն դեպս, ձևականորեն կպահպանի իր մրցունակությունը:

Սա նաև արդարության հարց է, թե բնակչության ո՞ր խմբի ֆինանսական ծանրաբեռնվածությունը կմեծանա կամ կնվազի: Այն դեպքում, երբ ունիվերսալ առողջապահական ապահովագրությունը թույլ է տալիս ծանրաբեռնվածության նվազեցում այն ընտանիքներում, որտեղ կան երկու և ավելի երեխա, ֆիքսված առողջապահական ապահովագրության համակարգի ներդրմամբ այդ ընտանիքները ստիպված կլինեն տարեկան 900 եվրո ավելի վճարել: Միայնակների դեպքում իրավիճակը միանգամայն հակառակն է. ֆիքսված առողջապահական ապահովագրության ներդրման պարագայում նրանք տարեկան կխնայեն ավելի քան 1300 եվրո, մինչդեռ ունիվերսալ առողջապահական ապահովագրության դեպքում նրանց խնայողությունը շատ ավելի քիչ գումար կկազմի:

Համերաշխության տեսանկյունից ունիվերսալ առողջապահական ապահովագրությունը ֆիքսված առողջապահական ապահովագրության համեմատ ունի մի շարք առավելություններ: Իսկ արդարության տեսանկյունից կախված, թե ո՞ր ասպեկտներն են կարևորվում՝ բաժանմա՞ն, մասնակցությա՞ն, կարիքների՞, թե՞ արժանիքների վրա հիմված արդարությունը: Դուք ինքներդ կարող եք հասնել այս հարցի պատասխանին:

2.5.3. Աշխատանքային շուկայի քաղաքականություն

Ապահովության հարատև բացակայություն. աշխատանքի նոր հորիզոններ և սոցիալ-դեմոկրատական արժեքները

Մատիաս Նեիս

Երկրորդ համաշխարհային պատերազմից մի քանի տասնամյակ ի վեր Գերմանիայում կապիտալիստներն ու աշխատավոր խավերը շահերի տեսանկյունից բավականին հաջող փոխզիջման էին հասել: 1949թ. աննախադեպ հաջող տնտեսական աճի պայմաններում Գերմանիայում վարձու աշխատանքը նորմալ երևույթ էր: Աշխատանքը մարդկանց նաև հնարավորություն էր տալիս իրագործել իրենց սոցիալական ապահովության իրավունքը՝ ապահովելով նաև թոշակի իրավունքը: Սոցիալական ապահովությունը աշխատողին ապահովում էր աշխատանքից անօրինական ազատումից, ինչպես նաև օրենքով ապահովվում էին առողջական և անվտանգության նրանց իրավունքները և աշխատավարձի մասին պայմանագրային պարտավորությունները (Dorre, 2005):

Վարձու աշխատանքի այս ձևը, որը հայտնի է նաև այսպես կոչված տիպային աշխատանքային հարաբերություններ կամ պետության կողմից ամրագրված աշխատանքի ստանդարտ պայմանագիր, տալիս էր ճանաչման նվազագույն պայմաններ կամ սոցիալական կարգավիճակ՝ նյութական ապահովվածության հետ միասին:

Այդ ժամանակահատվածը ներդաշնակ ժամանակաշրջան էր, բայց և կոնֆլիկտներից ոչ զուրկ: Փոխզիջումն անընդհատ վիճարկվում էր և կարողությունների անհավասար բաշխումը, լավագույն դեպքում, աստիճանաբար նվազում էր: Այնուամենայնիվ բնակչության մեծ մասը կարող էր վստահ լինել, որ շնորհիվ սեփական ուժերի, աստիճանաբար կկարողանա բարելավել իր կենսամակարդակը:

Սակայն 1980-ականներից սկսած՝ ստանդարտ աշխատանքային պայմանագիրը կորցրեց իր կատարյալ տեսքը: Չնայած աշխատողների մեծ մասն աշխատում էր տիպային զբաղվածությամբ, նրանց քանակն այնուամենայնիվ նվազում էր: Զբաղվածության աճ էր նկատվում այլ ասպարեզներում՝ կես դրույքով, ժամանակավոր կամ գործարքային աշխատանք, ֆիքսված ժամկետներով կամ մարգինալ կես

դրույքով աշխատանք[11]: Ինչպես անժամկետ, այնպես էլ լրիվ աշխատանքային օր ունեցող աշխատանքային պայմաններում սոցիալական ապահովության հարցը ճնշումների ենթարկվեց: Կենսաթոշակային ֆոնդերի մասնակի սեփականաշնորհումը, անօրինական կրճատումների ապահովության թուլացմանն ուղղված նախագծերը և պարտադիր կոլեկտիվ պայմանագրի իրագործումը այն ակնհայտ քայլերն էին, որ ի հայտ եկան, հատկապես Գերմանիայի արևելքում:

Զարգացումների այս ընթացքի համար կային մի շարք պատճառներ: Օրինակ, ծառայությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների (IT) ոլորտի աշխատանքների կարևորության զարգացումը հանգեցրեց աշխատանքի կազմակերպման այլ, ավելի ճկուն ձևերի, քան նախկին արտադրական մոդելներն էին: Այն պայմաններում, երբ մրցակցությունը ոչ միայն կազմակերպությունների միջև է, այլև նույն կազմակերպության ներսում, բաժիններում և խմբերում, սոցիալական ապահովությունը հետզհետե վերածվում է աշխատանքի կազմակերպման ճկունությունն ապահովող լրացուցիչ ազդակի: Այն կազմակերպությունները, որոնք մրցակցության մեջ առավելություն ստանալու համար փորձում էին նվազեցնել կամ նույնիսկ վերացնել աշխատողների ապահովությանն ուղղված դրույթները, կարողանում էին իրենց նպատակին հասնել միայն կարճ ժամանակով:

Մարդկանց մեծ մասը մտահոգ էր այս տիպի զարգացումից: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի կողմից արված հետազոտությունները ցույց են տալիս, որ հարցվածների 63 տոկոսը մտահոգ է հասարակությունում այս տիպի զարգացումներից: (Neugebauer, 2007): Տնտեսության մեջ ի հայտ եկած փոփոխությունների արդյունքում այս վիճակը, որ հասարակության լայն զանգվածների մեջ անվստահություն էր առաջացրել, ֆրանսիացի սոցիոլոգ Պիեռ Բուրդյեի կողմից ստացավ «անհուսալիություն» անվանումը: Անհուսալիությունը խոսում է ոչ միայն աշխատավարձերի կամ հաստատուն պայմաններով աշխատանքային պայմանագրի կետերի նվազեցման, այլև այն մասին, թե ինչպես է արտահայտվում և գործում անվստահությունը:

Եթե հաշվի առնենք դա, ապա ակնհայտ է, որ անհուսալիությունը չի վերաբերում միայն նրանց, ովքեր գտնվում են զբաղվածության անհուսալի վիճակում: Այն ներխուժում է աշխատավորական տնտեսության հենց սիրտը: Կայուն աշխատանք ունեցող բազմաթիվ մարդկանց անհանգստություն էր պատճառում իրենց տեղում ժամանակավոր կամ գործարքային հիմունքներով աշխատողի տեսնելը: Տեսնելով գոյություն ունեցող այդ այլընտրանքային աշխատուժը՝ նրանք պատրաստ

[11] 1999-2003թթ. ժամանակահատվածում կես դրույքով աշխատավորների քանակը 5 միլիոնից հասել է 9 միլիոնի:

են զիջումների գնալ աշխատավարձի կամ աշխատանքային պայմանների վերաբերյալ բազմաթիվ հարցերում, ինչը երբեք չէին անի հակառակ պարագայում: Ոչ ստանդարտ աշխատանքային գրաֆիկով աշխատողներն իրենց համարում էին կայուն աշխատանքային պայմանագրով աշխատողների և վարձու աշխատանքային շուկայից դուրս գտնվողների մեջտեղում: Նրանք մտավախություն ունեին կորցնելու իրենց աշխատանքը և միաժամանակ ցանկանում էին ունենալ ստանդարտ (կայուն) աշխատանքային պայմանագիր: Այս բոլորը հանգեցնում էր ապահովության հարատև բացակայության:

Ո՞րն է այս զարգացումների հետևանքը սոցիալ-դեմոկրատիայի համար: Կայուն աշխատանք հասկացության արժեքը սոցիալ-դեմոկրատիայի համար անգերագնահատելի է: Սոցիալական պետության ստեղծման համար դա հիմնական գործոններից մեկն է, որի հիմքի վրա ձևավորվում են երեք հիմնարար արժեքները: Այն ստեղծում է ապահովության երաշխիք շատերի, բայց ոչ բոլորի համար, և դրանով անհրաժեշտ նախապայման ստեղծում արդյունավետ և դրական ազատության համար:

Այն, ինչ համաձայն արդարության արժեքների ձեռք էր բերվել վերաբաշխումից (արդարության արժեքին համապատասխան), արվել էր մեծ մասամբ զբաղվածության համակարգի միջոցով: Վերջին հաշվով, սոցիալական ապահովությունն ուղղված էր համերաշխության հիման վրա մեղմելու կյանքի ծանր պայմանները: Սոցիալական ապահովությունը, որը ստեղծվում էր նորմալ աշխատանքի շնորհիվ, ստիպեց հասարակության լայն խավերին նույնականացնել սոցիալ-դեմոկրատիան հիմնարար արժեքների հետ: Մասնավորապես ՍԴԿ-ն իր կուսակցական ծրագրում հղումներ էր կատարել ստանդարտ աշխատանքային պայմանագրերի հարաբերություններին և հատկապես շուրջօրյա զբաղվածությանը: Նորմալ աշխատանք հասկացության ընդլայնման նպատակն էր՝ կուսակցությունը լայն խավերին ընկալելի դարձնել որպես սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական ստանդարտներ կրող կուսակցություն և նրանց դարձնել կայուն աշխատանքի համար պայքարի մասնակից:

Սակայն ստանդարտ աշխատանքային հարաբերությունների հետ կապը հետզհետե տարրալուծվեց, և ստեղծվեց մի իրավիճակ, որտեղ սոցիալ-դեմոկրատիայի արժեքները դեռ հզոր արձագանք ունեին բնակչության մեծամասնության շրջաններում, բայց, ի տարբերություն անցյալի, այս արժեքներն արդեն այնքան էլ սերտորեն չէին շաղկապվում որևէ քաղաքական միավորի հետ: Դրա հիմնական պատճառը աշխատանքի տրանսֆորմացիան և քաղաքականության ձախողումն էր, քանի դեռ աշխատանքի կազմակերպման ճկունության հովանու ներքո չէր վերահաս-

տատվել սոցիալական ապահովությունը: Ի՞նչ էր սա նշանակում սոցիալ-դեմոկրատիայի նոր մոդելի համար և հիմնարար արժեքների հետ հարաբերություններում:

Ազատություն

Նոր մոտեցումներն աշխատանքին իրենց հետ բերում են ազատության նոր խոստումներ: Աշխատավորների փոքր խմբերը, որպես անկախ կամ ինքնակառավարվող, կարող են օգտվել ազատությունից և ստեղծել իրենց սեփական աշխատանքը նախագծերի տեսքով, որոնք չեն վերանայվի որևէ ղեկավարության կողմից: Այս խմբերը կարող են նաև պարգևատրվել «ճկունության» համար: Ունենալով բավարար ռեսուրսներ, խումբը կարող է փոխակերպել կարճաժամկետ աշխատանքը՝ ստեղծելով հնարավորություններ հետագա վերապատրաստման համար: Ժամանակավոր աշխատանք ունեցողների մեծ մասի համար, ովքեր չունեն հնարավոր պաշտպանվածություն, նմանատիպ իրավիճակը հավասարազոր է աղետի, որը կտրուկ սահմանափակում է ազատության նրանց իրավունքները:
Շատ կարևոր է, որ սոցիալ-դեմոկրատիան զարգացնի ազատության՝ որպես դրական, իրական և սոցիալական երևույթի խոստումը: Սա իր մեջ ներառում է կոլեկտիվ սոցիալական ապահովության նոր գործիքներ: Ազատությունը հնարավորություն է տալիս զարգացնելու ճկունությունը, որը կարող է իրագործվել յուրաքանչյուր աշխատողի կողմից, եթե, իհարկե, նրանք հուսալքված չեն անխուսափելի դժվարությունների դեմ պայքարում:

Արդարություն

Ի՞նչն է արդար և ո՞վ է այն մարդը, որ իրավունք ունի օրինական պահանջներ է ներկայացնել, որոնք հաստատապես պայմանավորված են այդ անհատի զբաղվածության կարգավիճակով: Պատմականորեն այնպես է ստացվել, որ եթե անհատը ցանկություն է հայտնում ակտիվորեն մասնակցել որևէ գործի և իր աշխատանքով ապացուցում է դա, ապա դա կոչվում է անհատի մասնակցություն հասարակական կյանքին: Նույնիսկ այդ դեպքում արդարության հասկացությունը տարբեր սոցիալական խմբերի համար խիստ տարբեր է: Օրինակ՝ տարբեր սեռերի միջև, որ նաև ներառում է պատասխանատվության անհատականացման միտումներ:

Այս նորմերը պետք է որ կայուն լինեին, բայց տնտեսական նոր պայմաններում դրանք ունեցան որոշ զարգացումներ և դարձան անարդարության իսկական ուղեցույցներ: Արդյունքում արտադրողականությունը կամ նվաճումները պահպանվում են, սակայն աշխատանքի հնարավորությունները հետզհետե դառնում են ավելի նվազ: Աշխատանքի կորուստը ժամանակ առ ժամանակ դառնում է անկայուն ժամանակաշրջանին բնորոշ երևույթ: Այդուհանդերձ այս երևույթն ընդունե-

լի չէ: Նրանք, ովքեր ցանկանում էին աշխատել նման անհուսալի պայմաններում, գտնում էին կանոնավոր աշխատանք, իսկ մերժվածներից առավել եռանդուն աշխատանք էր պահանջվում: Սակայն այս անհատականացումը հանգեցնում էր հասարակության մեջ անարդարության է՛լ ավելի խորացման: Այս պայմաններում արդարությունը կարող էր վերածվել հավասարություն հասկացության հականիշի:

Սոցիալ-դեմոկրատիայի առաջ կանգնած մարտահրավերներից մեկն էլ արդարություն և հավասարություն հասկացությունների միջև հակասության չեզոքացումն է: Քաղաքական տեսանկյունից սա նշանակում է թույլ տալ անհատականությանը բարձրանալ այն աստիճանի, որ յուրաքանչյուր ոք ունենա ինքնորոշման հնարավորություն: Միայն այս հիմքի վրա անհատից կարելի է պահանջել առավելագույն պատասխանատվություն:

Համերաշխություն

Կոլեկտիվ ապահովագրության համակարգերի վերակազմավորումը զբաղվածության նախկին համակարգում եղած համերաշխության ինստիտուցիոնալ արտահայտությունն էր: Այն պայմանավորված էր համերաշխության վարքագծում ի հայտ եկած համընդհանուր ճգնաժամով: Ներկայումս հասարակության մեջ տարաձայնությունների հիմնական գիծն անցնում է ունևորների և չքավորների միջև: Այդ տարաձայնություններն ունեն որոշակի աստիճաններ, որոնց շրջանակներում կոլեկտիվ ապահովագրության համակարգերը բազմաթիվ անգամ քննարկվել են՝ լրացվելով «ներսում» և «դրսում» հասկացություններով: Այս երկու տարբերակումներն իրար չեն բացառում, սակայն վերաբերում են միանգամայն այլ սոցիալական կոնֆլիկտների:

Աշխատավայրերում առկա սուր մրցակցությունը, հատկապես այն պայմաններում, երբ գիտակցում ես, որ կան մարդիկ, ովքեր պատրաստ են քո փոխարեն կատարել այդ աշխատանքը, նպաստում է համերաշխության ամենաանցանկալի դրսևորումների: Նրանք, ովքեր «ներսում» են, «դրսում» գտնվողներին ընկալում են որպես սպառնալիք: Եվ հակառակը՝ նրանք, ովքեր կոլեկտիվ սոցիալական ապահովության տեսանկյունից ունեն կայուն աշխատանք, վատ են ընդունվում գործազուրկների կամ անկայուն աշխատանք ունեցողների կողմից և դիտվում են որպես իրենց ճանապարհը փակող խոչընդոտ:

Ընթացիկ զարգացումների լույսի ներքո հարց է ծագում, թե ինչպե՞ս ըմբռնել համերաշխություն հասկացությունը ներկայիս աշխատանքային շուկայում: Այդ հարցին պատասխանում է սոցիալ-դեմոկրատիայի այն հիմնական տեսակետը, ըստ որի խնդրի լուծման բանալին է համարվում համերաշխության նոր հիմքերի վրա

ստեղծված հասարակական ապահովության արդյունավետ միջոցների կիրառումը: Այդ կերպ միայն հնարավոր կլինի վերականգնել սոցիալական ապահովությունը: Այդ նպատակի համար պետք է մշակվեն համապատասխան միջոցներ, որոնց շնորհիվ մարդիկ կարող են հուսալ, որ կստեղծեն աշխատանքային կարիերա, ինչն էլ կնվազեցնի հակամարտությունը «ներսում» և «դրսում» գտնվողների միջև:

Նոր աշխատանքային տնտեսության պայմաններում սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքների և աշխատանքի կապը չի կարող այլևս համարվել ենթադրվող, ինքնաբերաբար գոյություն ունեցող մի բան, ինչպես նախկինում էր: Սակայն հին պատկերացումները դեռ շատ ամուր են, ինչն ընդգծում է նոր բանավեճերի անհրաժեշտությունը երեք հիմնարար արժեքների՝ ազատության, արդարության և համերաշխության բովանդակության շուրջ:

Արժևորման տեսակետից այն ձևերը, որոնցով ազատությունը, արդարությունը և համերաշխությունը հարաբերակցվում են նոր աշխատանքային տնտեսության պայմաններում, սոցիալ-դեմոկրատիայի գաղափարներում պետք է դառնան առաջնահերթ: Ոչինչ ցույց չի տալիս, որ զբաղվածությունը վերջին հաշվով կկորցնի իր կարգավիճակը որպես մասնակցության և ճանաչման կարևոր բաղադրիչ: Այնպես որ հասարակության մեջ աշխատանքի բնույթը կշարունակի վճռական ազդեցություն ունենալ սոցիալ-դեմոկրատիայի բնութագրի վրա:

2.5.4. Բարձրագույն կրթության վերաբերյալ քաղաքականություն

Ուսման վարձը նախատի՞նք սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքներին

Ֆրեդերիկ Բոլ

Մինչև 2005թ. բարձրագույն կրթության մասին օրենքը (*Hochschulrahmengesetz*) հնարավորություն էր ընձեռում ուսանողներին ազատ մուտք գործել գերմանական քոլեջներ և համալսարաններ: Այս օրենքի շնորհիվ ֆեդերալ կառավարությունը բարձրագույն կրթական համակարգի համար ապահովում էր օրինական հենք, միաժամանակ առանձին երկրամասերն էլ պատասխանատվություն էին կրում դրա կազմակերպման համար:

Երկրամասերը կրթական քաղաքականության հարցում ունեն ինքնավարություն, սակայն տեսանք, որ ուսման վարձի հետ կապված նրանց լիազորությունները կրճատվեցին: Արդյունքում 2002թ. երկրամասերը՝ Բավարիան, Բադեն Վյուրթեմբուրգը, Համբուրգը, Սաարը, Սաքսոնիան և Սաքսոնիա-Անհալթը, հայց ներկայացրին Սահմանադրական դատարան: 2005թ. սկզբին կայացված դատական որոշումն իրենց օգտին էր: Ըստ դրա՝ յուրաքանչյուր ֆեդերալ երկրամաս այլևս ինքն էր որոշելու բարձրագույն կրթությունը վճարովի կամ անվճար հիմունքներով տրամադրելը: Այս հարցի շուրջ տարբեր երկրամասերում տարբեր մոտեցումներ կարելի է նկատել, և անկասկած այս հարցը հետագայում էլ դեռ նոր զարգացումներ կունենա: 16 երկրամասերից յոթը՝ Բադեն Վյուրթեմբուրգը, Բավարիան, Համբուրգը, Հեսսենը, Ներքին Սաքսոնիան, Սաարը, Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիան, վերջին երկու տարիներին սահմանել են վճարովի բարձրագույն կրթություն՝ սկսած առաջին կիսամյակից: Վճարի չափը տարբեր շրջաններում տարբեր է. առավելագույնը 500 եվրո՝ մեկ կիսամյակի համար:

Որոշ երկրամասերում, օրինակ՝ Թյուրինգիայում, Ռայնլանդ Պֆալցում, Սաքսոնիայում, բակալավրի աստիճան ստանալն անվճար է: Սակայն տարբեր կանոնակարգ է գործում այն ուսանողների համար, որոնց չի հաջողվել հատկացված ժամանակահատվածում ավարտել ուսումը: Օրինակ՝ համաձայն Ռայնլանդ Պֆալցում գործող օրենքի ուսանողները պետք է ավարտեն իրենց ուսումը երեք կիսամյակի ընթացքում: Եթե ուսանողը ի վիճակի չէ այն ավարտել նշված ժամկետում, ապա հետագա յուրաքանչյուր կիսամյակի համար պետք է վճարի 650 եվրո: Սաքսոնիայում, Շլեզվիգ Հոլշտայնում, Մեկլենբուրգ-Առաջավոր Պոմերանիայում, Բեռլինում և Բրանդենբուրգում ուսման համար որևէ վճարում գոյություն չունի:

Ուսման վարձի ներդրման հարցը սերտորեն կապված է տվյալ ժամանակաշրջանի կառավարության հետ: ԳԴՄ-ն և Ազատ-դեմոկրատական կուսակցությունը կողմ էին արտահայտվել վճարովի ուսուցմանը՝ սկսած առաջին կիսամյակից, մինչդեռ սոցիալ-դեմոկրատները, Կանաչները և Ձախ կուսակցությունները պահանջում էին անվճար ուսուցում:

Եթե կան մարդիկ, ովքեր ցանկություն ունեն սովորելու, սակայն ուսման վարձը թույլ չի տալիս իրականացնել այդ ցանկությունը, ապա սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից հարց է ծագում՝ ինչքանո՞վ են հիմարար արժեքները՝ արդարությունը, ազատությունը և համերաշխությունը (չնայած վերջինը երկրորդական դեր է խաղում) այսօր սահմանափակված:

Ազատություն

Լրատվամիջոցների ներկայացմամբ, Գերմանիայում բարձրագույն կրթական համակարգը համարվում է անկատար և թերի, որը զուրկ է բավարար հարմարություններից: Վճարովի ուսուցման կողմնակիցները պնդում են, որ միակ միջոցը վճարովի ուսուցումն է: Բացի այդ, ուսանողները, ովքեր վճարում են ուսման դիմաց, կարող են առավել պահանջկոտ լինել: Դասախոսներն ավելի շահագրգիռ կլինեն ուսանողների հետ աշխատելու, քանի որ նրանց ուսման վարձերից է վճարվելու իրենց աշխատավարձը: Միաժամանակ նաև փաստում են, որ դա ուսանողին կդարձնի կրթական համակարգի կոորդինացիոն մասնիկ, կտրամադրի գնահատելու քոլեջների և համալսարանների ուսուցման որակը՝ դրանով իսկ հանգեցնելով ուսումնական հաստատություններում ուսանողի կարիքների հանդեպ առավել բարձր պատասխանատվության: Այս տեսանկյունից ուսանողներն ուսման ընթացքում կունենան առավելագույն ազատություն, քանի որ նրանց ֆինանսական ներդրումը հնարավորություն է տալիս ազդելու այն ամենի վրա, ինչը համալսարանները պարտավոր են տրամադրել:

Վճարովի ուսուցման ընդդիմախոսներն էլ մյուս կողմից վստահեցնում են, որ ուսումնական հաստատություններ մուտքը պետք է ազատ լինի: Քոլեջները և համալսարանները պարտավոր են բարձրացնել երկրի հասարակական բարեկեցությունը, ինչպես նաև նպաստել նրա տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը: Գլոբալիզացիայի այս պայմաններում մարդկանց հաջողությունը կախված է կրթական ասպարեզ ազատ մուտք ունենալու հնարավորությունից: Որակյալ կրթական անվճար համակարգը առողջ հասարակության հիմքն է: Միայն այս պարագայում է հնարավոր և՛ քաղաքական, և՛ հասարակական մասնակցությունը կառավարման գործին:

PISA-ի ուսումնասիրությունները կրթական խնդրի վերաբերյալ հաստատում են, որ կրթությունը կախված է սոցիալական կարգավիճակից և եկամուտներից: Չնայած դրան, անգամ ուսուցումը վճարովի դարձնելու պայմաններում ոչ մի երաշխիք չկա, որ այն ավելի լավը կդառնա: Գերմանիայում բարձրագույն կրթության համար պետությունը չի կարող շրջանցել իր ֆինանսական պատասխանատվությունը: Կրթության համար ծախսվող գումարները, ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, երկար ժամանակ միջինից պակաս էին: Կրթության հետ կապված հարցը ոչ թե դատարկ բյուջեի արդյունք է, այլ ավելի շատ վերաբաշխման և քաղաքական կամքի հարց:

Բացի այդ, նույնիսկ եթե ուսանողները պետք է վճարեն իրենց կրթության համար, դա երաշխիք չէ, որ ավելի լավը կլինի ուսման մակարդակը: Ուստի Գերմանիայի պետությունը չի կարող բարձրագույն ուսման խնդիրներում անտեսել իր ֆինանսա-

կան պարտականությունները: Կրթության ծախսերը Գերմանիայում ավելի ցածր են, քան Եվրոպայի շատ երկրներում: Կրթության վատ վիճակը արդյունք է ոչ թե դատարկ դրամարկղի, այլ վերաբաշխման և քաղաքական կամքի բացակայության:

Ենթադրվում է, որ ուսման համար վարձ սահմանելուց հետո պետությունը ավելի կհեռանա կրթությունը ֆինանսավորելու խնդրից և ուսանողներին ուղղակի կօգտագործի որպես եկամտի նոր աղբյուր: Այն միայն կհանգեցնի ծանրաբեռնվածության աղբյուրների տեղաշարժի, այլ ոչ թե Գերմանիայում քոլեջների և համալսարանների որակի բարելավման:

Արդարություն

Ուսման վարձի կողմակիցները նշում են պետական ռեսուրսների անկման փաստը և պահանջում, որպեսզի ուսանողը վճարի կրթության դիմաց: Նրանք վստահեցնում են, որ բոլոր հարկատուները պարտավոր են վճարումներ կատարել քոլեջների և համալսարանների համար, չնայած որ նրանցից շատերը տվյալ պահին չեն օգտվում բարձրագույն կրթության ընձեռած հնարավորությունից: Բոլոր ուսանողներն, ըստ նրանց, պետք է վճարեն նույն վարձը, և քանի որ բարձրագույն կրթություն ունեցողների երեխաներն ավելի մեծ ներկայություն ունեն Գերմանիայի համալսարաններում, քան ուրիշ սոցիալական խմբերի երեխաները, նրանք պետք է վճարեն իրենց արդար բաժինը:

Վճարովի կրթության ընդդիմախոսները նշում են, որ կրթություն ստանալը չպետք է կախված լինի սոցիալական ծագումից կամ տնտեսական իրավիճակից: Մարդու հնարավորությունները չպետք է սահմանափակվեն նման հանգամանքներով: Ուսման վարձի առկայությունն ամենաշատն ազդում է սոցիալապես ամենածանր վիճակում գտնվողների վրա: Ուսման վարկավորման համակարգը նույնպես այս հարցին լուծում չի կարող տալ, քանի որ սոցիալապես անապահով խավը հակված չէ նոր պարտքեր կուտակելու, ուստի անհամեմատ ավելի քիչ է հակված բարձրագույն կրթություն ստանալու: Հավասար հնարավորությունների կարող ենք հասնել միայն այն դեպքում, երբ քաղաքացիական իրավունքները և ազատությունները երաշխավորված լինեն բոլորի համար: Սա իր մեջ ներառում է նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ ազատ մուտքի հնարավորություն: Վճարովի ուսուցման կողմակիցները սիրում են ընդգծել այն հանգամանքը, որ բարձրագույն կրթություն ստացածներն ավելի շատ գումար են վաստակում, քան նրանք, ովքեր չունեն այդ կրթությունը: Սակայն հայտնի է, որ արդար հարկային համակարգը երաշխավորում է, որ ավելի շատ դրամ վաստակելու հնարավորություն ունեցողները օգնեն ավելի ծանր վիճակում գտնվողներին:

Պետությունը պետք է կատարի իր պարտավորությունները և որքան հնարավոր է ուսման նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ընձեռի իր քաղաքացիներին: Սա ամրագրված է նաև 1966թ. ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ, որն, ի դեպ, վավերացրել է նաև Գերմանիան: Այս միջազգային համաձայնագրով, որ վերաբերում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին, հայտարարվում է, որ ուսումնական հաստատությունները պետք է լինեն անվճար:

Սոցիալ-դեմոկրատիան և բարձրագույն կրթության ֆինանսավորման ապագան

Համբուրգում տեղի ունեցած գիտաժողովի ժամանակ ՍԴԿ-ն ընդունեց մի որոշում, ըստ որի կրթությունը Գերմանիայի բոլոր քոլեջներում և համալսարաններում պետք է լինի անվճար: Ավելին, ՍԴԿ-ն պարտավորվեց կրթական ոլորտում ընձեռել հավասար հնարավորություններ՝ անկախ սովորողի սոցիալական որևէ խմբի պատկանելությունից և ֆինանսական դրությունից: Համբուրգում կուսակցության նոր ծրագիրն արտացոլում է այս որոշումը՝ հայտարարելով, որ ՍԴԿ-ն ցանկանում է «տրամադրել ազատ մուտք ուսումնական հաստատություններ և ավելացնել այն ուսանողների թիվը, ովքեր, ելնելով իրենց սոցիալական վիճակից, առավել ակտիվ կմասնակցեն ուսումնական գործընթացին: Այն նաև ընդգծում է, որ երկրամասերում կրթության հանդեպ քաղաքականությունը պետք է առավել ակտիվանա՝ հաշվի առնելով մարդկանց պահանջները»:

Պետք է ընդհանուր ջանքեր գործադրեն և՛ ֆեդերալ կառավարությունը, և՛ երկրամասերը, որպեսզի ավելանա ուսանողների թիվը, ինչպես նաև բարձրանա Գերմանիայի համալսարաններում դասավանդողների որակավորումը: Սոցիալ-դեմոկրատները պատրաստվում են զարգացնել Դաշնային ակադեմիական վարկային ծրագիրը, որպեսզի ընդլայնվեն գիտական թոշակներ ստանալու հնարավորությունները:

Գերմանիայում կրթության համար ծախսվող գումարների չափը պետք է ավելանա: Հաճախ ուսման վարձի հարցի շուրջ որոշումներ ընդունելը վերածվում է ոչ թե գործնական, այլ քաղաքական անհրաժեշտության: Ուսման վարձը չի կարող լուծում լինել այնքան ժամանակ, քանի դեռ այն դեմ է ազատության իրականացման գործընթացին և արդարության մասին սոցիալ-դեմոկրատիայի պատկերացումներին:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է պատկերված շապիկի վրա

«Շպիգել» (*Der Spiegel's*) պարբերականի 2007թ. հոկտեմբերի 22-ի համարի շապիկի սադրիչ պատկերը

«Շպիգել», №43, www.spiegel-online.de (22,10,2007).

Ծաղրանկարում պատկերված են ԳՍԴԿ մի շարք ղեկավար գործիչներ, որոնք նավաբեկության ժամանակ ցատկել են փրկամակույկի վրա: Կապիտան Գերհարդ Շրյոդերը մնացել է սուզվող նավի մեջ, մինչդեռ Գրեգոր Գիզին և Օսկար Լաֆոնտենը մեկական փրկամակույկ են զավթել: Ծաղրանկարը մակագրված է այսպես. «Եթե լողում ենք կողք կողքի»[12]՝ խաղալով «լողալ» բառի հետ որպես «չիմանալ» բառի հոմանիշի, որն անգլերեն լավագույն դեպքում կհնչեր՝ «ծովում լինել միայնակ», չիմանալով, թե որտեղ է այս ճանապարհորդությունը ավարտվում: Եվ ամենասարսափելին այն է, որ ծաղրանկարը ներկայացնում է դրամատիկ մի նավաբեկություն, որն ամեն ինչի հետ խորտակում է նաև մարդկանց կողմնորոշվելու զգացողությունը:

Ի՞նչը շապիկի վրա պատկերված չէ. որոշ մեկնաբանություններ և բացատրություններ

Ի՞նչ եք մտածում *«Շպիգելի»* շապիկին պատկերված նկարի վերաբերյալ: Ի՞նչ է սա ասում մարդկանց քաղաքական հայացքների մասին (տվյալ դեպքում՝ ՍԴԿ-ի): Այն խաղում է մարդկանց վախի և տպավորությունների վրա, այն է՝ գործող քաղաքականությանը պակասում է հիմնական ուղղության զգացողությունը, որն այս պայմաններում անխուսափելի է և որ ամեն ինչ ձախողվելու է: Այս ծանոթ ասո-

[12] Սա նաև հղում է աշխատավորական 'Wann wir schreiten Seit' an Seit' երգին:

ցիացիաները, ինչպես և ամբողջ պատկերը, դիտավորյալ սենսացիոն են դարձված, քանի որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական «սոցիալ-դեմոկրատական կողմնացույցը» և ցանկացած դեմոկրատական կուսակցության ոչ թե թույլատրվում է, այլ անհրաժեշտ է, որ քննարկվեն առաջընթացի ուղղությունները և հետո միայն որոշումներ ընդունվեն:

Ուղղության մասին բանավեճերն անհրաժեշտ են

Ավելին, չկա որևէ պատճառ, որից ելնելով կարելի է ասել, որ ՍԴԿ-ն սուզվում է կամ խորտակվում: Արմատական քաղաքական փոփոխություններն արտասովոր երևույթ չեն, այլ ավելի շուտ անհրաժեշտություն են կուսակցական ղեկավարության փոփոխությունից կամ ընտրություններում ձախողումից հետո: Սա ամենևին էլ նավաբեկություն չէ:

«Ենթարկումը» նույնպես հակասում է դեմոկրատական եղանակով կուսակցական որոշումներ ընդունելուն, ինչի էությունն ինքնին ենթադրում է կուսակցության ուղղության վերաբերյալ բանավեճեր, երբ առաջանում են կարիքներ և կոորդինացիայի պահանջ՝ յուրաքանչյուրի սոցիալ-դեմոկրատական ուղեցույցին համապատասխան:

Մյուս կողմից, *«Շպիգել»* պարբերականի շապիկը ներկայացնում է մեզ ավտորիտար տեսակետներ ունեցող քաղաքական գործիչների, ովքեր չեն համաձայնեցվում ժողովրդավարության հետ: Հենց այս սոցիալ-քաղաքական կողմնացույցն է, որ պատկերված չէ այս ծաղրանկարում. այնուամենայնիվ ոչ մի քաղաքական կուրս չի կարող հաստատվել առանց դրա:

Այժմ քննարկենք, թե ինչ է նշանակում «ուղիղ նավարկել»:

Սոցիալ-քաղաքական ուղեցույց

Սոցիալ-քաղաքական ուղեցույցը ենթադրում է որոշակի պատկերացումներ քաղաքական ուղղվածության մասին, որի հիման վրա կարելի է նաև ներկայացնել սեփական տեսակետը և վերցնել սեփական ուղղություն:

Որո՞նք են առանցքակալները, և ի՞նչ է այդ ուղղության համար անհրաժեշտ

Փոխաբերական իմաստով՝ բաց ծովում նավարկելիս ուղղության հարցն առաջանում է առօրյա քաղաքական որոշումներ ընդունելու ընթացքում: Եթե անգամ հիմնական հարցերը չեն քննարկվում, միևնույն է, ասպարեզում դարձյալ հիմնական համոզմունքներն են:

Չնայած դժվար է բացատրել, սակայն դրա առավելությունը կայանում է նրանում, որ մեզանից յուրաքանչյուրն ունի իր սեփական ուղեցույցը, բայց բոլորին չէ, որ տրվել է նույն ուղեցույցը: Եվ ինչպես օգտագործել այդ ուղեցույցը, որպեսզի ուղ-

ղությունը նույնը լինի, դա արդեն յուրաքանչյուրի անձնական հարցն է: Դեմոկրատական կուսակցություններում և կազմակերպություններում այս հարցը լուծվում է քննարկումների միջոցով:

Ի՞նչ է պահանջում ուղղության հարցը

Ուղղությունն ունի երկու հիմնական պահանջ. առաջին՝ պետք է ունենալ սեփական տեսակետ այն մասին (այլ կերպ ասած՝ քննության ենթարկել), թե որտե՞ղ է գտնվում և որտե՞ղ է իրեն տեսնում հասարակությունը:

Երկրորդ պայմանը՝ որ կարողանաս ընդունել այն քաղաքական ուղղությունը, որով ցանկանում ես առաջ շարժվել:

Սկզբնակետ և նպատակ կամ իրականություն և ձգտում. երկուսն էլ կարող են արտահայտվել մրցակցող սոցիալ-քաղաքական գաղափարներում: Ազատական, պահպանողական կամ սոցիալ-դեմոկրատական փաստարկները փորձում են սահմանել այդ սկզբնակետը և ճշտել այն ուղին, որով հնարավոր կլինի ուղղորդել դրանք իրենց նախընտրած ուղղությամբ:

Եթե ցանկություն կա քննարկելու սոցիալ-դեմոկրատիան որպես հասարակության մոդել կամ շարժման ուղղության հնարավոր ձև, որը հասարակությունը հնարավոր է և ընտրի, պետք է այն քննարկել հասարակության այլ մոդելներին զուգահեռ:

3.1. Շուկայական կապիտալիզմ և ժողովրդավարություն

Երկու կոնցեպցիա՝ շուկայական կապիտալիզմ և ժողովրդավարություն

Մինչ տարբեր կոորդինատներ քննարկելը, հստակեցնենք երկու հասկացություններ, որոնք այսօր հաստատուն կերպով գոյություն ունեն մեր հասարակությունում՝ շուկայական կապիտալիզմ և ժողովրդավարություն:

Շուկայական կապիտալիզմը մի համակարգ է, որտեղ

- առկա է ապրանքների ազատ փոխանակում,
- ապրանքների արտադրությունն իրականացվում է կապիտալիստական համակարգով՝ հիմնվելով մասնավոր սեփականության իրավունքի վրա,
- մի կողմում աշխատավորներն են, մյուս կողմում՝ կապիտալիստները,
- գոյություն չունի որևէ նորմատիվ կարգավորում, բայց կան որոշ հաստատություններ, որ կարող են տրամադրել շուկայական շրջանակները:

Ժողովրդավարությունը հանդես է գալիս որպես պատմականորեն զարգացած մի համակարգ, որտեղ՝

- ցանկանում ես իրականացնել քո հավասարազոր ազատության իրավունքը,
- ժողովրդավարությանը հարիր և մեծամասնության կողմից ընդունված որոշումները հանգեցնում են քաղաքական ինքնավարության,
- հստակ սահմանված են պետության, հասարակության կարիքները, որպեսզի բոլորին հնարավորություն տրվի մասնակցելու այդ կարիքների լուծման գործընթացին:

Հակասությունները շուկայական կապիտալիզմի և ժողովրդավարության միջև

Այս նվազագույն սահմանումները ցույց են տալիս, որ հասարակությունը, որը ցանկանում է գործել միաժամանակ երկու պայմաններում էլ՝ շուկայական կապիտալիզմի և ժողովրդավարության, անխուսափելիորեն լինելու է ճնշման տակ, քանի որ շուկայական կապիտալիզմի, ինչպես և ժողովրդավարության պայմաններում, այս համակարգերն անխտիր հակասելու են միմյանց:

Շուկայական կապիտալիզմն արգելափակում է ժողովրդավարությունը, եթե՝

- արտադրության բարիքների բաշխման անձնական իրավունքից օգտվում է միայն մի մասը, ինչն անխուսափելիորեն ստեղծում է բարիքների բաշխման անհավասարություն և անհամատեղելի է հավասար ազատություն և հասարակության գործընթացներին մասնակցություն հասկացությունների հետ,
- մինչ այդ հասարակության մեջ ուժերի բալանսը միշտ եղել է հօգուտ գործատուների, ինչը հերքում է աշխատողի իրավունքը՝ հիմվելով ինքնորոշման իրավունքի վրա,
- շնորհիվ շահույթի համար մրցավազքի, հանուն եկամուտների է՛լ ավելի մեծացման, շուկայական կապիտալիզմը չի նպաստում բոլորի համար առավել բարեկեցիկ կյանք ստեղծելուն,
- ապահովված է միայն ժողովրդավարության սկզբունքներով,
- պետության միակ պարտավորությունն է ապահովել խաղաղություն և կարգուկանոն:

Ժողովրդավարությունը կխոչընդոտի շուկայական կապիտալիզմին, եթե՝

- սահմանափակվի միայն ժողովրդավարական որոշումներով և նույնիսկ բացառի ձեռնարկատիրոջ ազատության իրավունքը,
- ժողովրդավարական որոշումների հիման վրա առկա լինի պետության միջամտությունը. օրինակ՝ մասնավոր սեփականության բռնագրավում հօգուտ լայն խավերի, դրանով իսկ վտանգի տակ դնելով անհատի զարգացումն ու ազատությունը, այլ կերպ ասած՝ խախտվի անհատի անձնական ոլորտը:

Հասարակության և տնտեսության ձևերը լարվածության մեջ

Նկարում՝ Ժողովրդավարությունը և շուկայական կապիտալիզմը կարող են ներկայացվել դինամիկ դաշտում.



Նկար 4. Հասարակական մոդելների դասակարգման կոորդինատային համակարգը

Շուկայի կամ տնտեսության ձևերի համար համաձայնեցված-չհամաձայնեցված սլաքը կարող է ընդունելի լինել. մի կողմից՝ չհամաձայնեցված շուկայական պայմաններում ամեն բան թողնված է ինքնակառավարման, մյուս կողմից՝ կարգավորվող շուկայի պայմաններում՝ կարգավորվող տնտեսություն:

Մյուս տեսանկյունից, մի կողմում ավտորիտար պետություններում նկատվող լարվածությունն է, մյուս կողմում՝ ժողովրդավարության կողմից առաջարկվող քաղաքացիական իրավունքներն են և անհատի ազատությունները:

Շուկայական կապիտալիզմը և ժողովրդավարությունը երկու հիմնական հասկացություններն են, որ ունեն իրենց հասարակական կոորդինատները: Քաղաքական տեսություններն իրենց նպատակները սահմանելիս կողմնորոշում են, թե ինչպես օգտագործեն այս կոորդինատները և ինչ ուղղությամբ շարժվեն:

Ինչպե՞ս են դասակարգվում հասարակական տարբեր մոդելները

Այժմ պատասխանենք այն հարցին, թե ինչպես են դասակարգվում հասարակական տարբեր գաղափարները կամ մոդելները՝ համակարգի հետևյալ կոորդինատներին համապատասխան.

- ազատական դիրքորոշում,
- պահպանողական դիրքորոշում,

- սոցիալիստական դիրքորոշում,
- սոցիալ-դեմոկրատական դիրքորոշում:

Վարժություններ և քննարկումներ

Դասակարգեք վերը նշված հասարակական մոդելները: Ներկայացրեք փաստարկներ ձեր դասակարգման վերաբերյալ, սակայն նշեք նաև որոշ հակափաստարկներ: Մինչ գրքի հետագա ընթերցումը, գտեք ձեր սեփական տեսակետներն այս կոորդինացիոն համակարգում:

Եթե տատանվում եք՝ ինչպես դասակարգել դրանք, ապա պետք չէ անհանգստանալ, քանի որ անորոշության համար կան բոլոր հիմնավորումները: Քիչ անց կտեսնենք, որ կարող են լինել նաև համակարգային բարդություններ:

Հնարավոր է, որ այս տարբերակումները օգտակար լինեն: Առաջին հերթին փորձեք լրացնել այս կոորդինացիոն համակարգը հասարակության մոդելների ձեր պահանջներին համապատասխան: Երկրորդ՝ մոդելներն առավել իրատեսորեն տեղադրեք քաղաքականության հասկացության ձեր պատկերացումների հիման վրա:



Նկար 5. Դիրքավորումն ըստ պահանջի և իրականության

Ի՞նչն է պատճառը, որ հակասություն է առաջանում պահանջի և իրականության միջև՝ կախված հասարակական մոդելներից

Այստեղ առաջ է գալիս հետաքրքիր հարցադրում. գոյություն ունի՞ հակասություն պահանջի և իրականության տարբերակների միջև, և եթե այո, ապա ի՞նչն է դրա պատճառը: Փաստարկները ներկայացնելիս պետք է բացառել «մենք ուղղակի սխալ ենք» տարբերակը:

Հիշեք կոորդինացիոն այս երկու համակարգերն իրենց դասակարգման մոդելներով, երբ քննարկենք հետևյալ բացատրությունները, որպեսզի տեսնենք՝ դրանք որևէ օգուտ տալի՞ս են, թե՞ ոչ:

Պահանջների և իրականության միջև տարբերությունների հարցը կարող է լուծվել, եթե նախ՝ համապատասխան հասարակական մոդելը ենթարկվի մանրազնին տեսական վերլուծության, և ապա՝ քննության ենթարկվի փորձառական տվյալներով: Օրինակ, ասենք՝ պետությունն իր համար ընտրել է կոնկրետ որևէ մոդել և իրականում գործել այդ մոդելի շրջանակներում: Եթե պահանջի և իրականության միջև այստեղ առկա է մեծ տարակարծություն, ապա այն կարող է մասնակիորեն արդարացվել նաև սխալ քարոզչությամբ. օրինակ՝ երբ իշխանությունը պահելու նպատակով փորձ է արվում վաճառել մի բան: Դա, կարծես, բոլորի շահերից է բխում, սակայն իրականում բխում է միայն փոքրամասնության շահերից: Եթե որևէ մեկը խաբված չէ, նման հանգամանքներում, ապա հիմնական հարցը միշտ պետք է հնչի հետևյալ կերպ՝ Cui bono? «Ո՞ւմ է սա ձեռնտու». ո՞վ է շահում փաստարկների նման շարադրումից:

Մի կողմից՝ «Ո՞ւմ է սա ձեռնտու» (Cui bono?)

Տարակարծություն կարող է լինել, նախ և առաջ, միայն տեսական մակարդակում, և այս դեպքում ստացված փորձառական արդյունքները և տեսական պահանջները չեն կարող համապատասխանել ներկա սոցիալական պահանջներին:

Մյուս կողմից՝ ուտոպիզմը որպես ախտորոշում

Այլ կերպ ասած՝ կարող ենք գործ ունենալ հասարակական մի այնպիսի մոդելի հետ, որի իրագործումը մոտ ապագայում անհայտ է և արդյունքում համարվում է ուտոպիստական: Սա չի նշանակում, թե պահանջները պետք է ենթարկվեն քննադատության: Այնուամենայնիվ միակ բանը, որ պետք է քննադատվի, այն է, թե ներկա պայմաններում նման քաղաքական ուտոպիզմը մարդկանց խանգարո՞ւմ է գործողություններ իրականացնել իրական կյանքում, թե՞ ոչ: Այս առնչությամբ կարող ենք խոսել երկրորդ կարգի պարտավորության մասին, այսինքն՝ քաղաքական գաղափարը պետք է լինի իրատեսորեն հասանելի ժողովրդավարական ուղիներով:

Ուտոպիզմս առանց սոցիալական գործողությունների հնարավոր չէ հանդուրժել: Հանդուրժել կարող են միայն նրանք, ովքեր գտնվում են բարեկեցիկ վիճակում:

Այսպես կամ այնպես, ուտոպիզմը չի ձգտում ձևավորել քաղաքականություն, և հասարակության կեցության հարցերը չեն կարող գտնել իրենց հստակ պատասխանները: Այն միայն պարզ է դառնում, երբ առանձին քաղաքական խմբեր դա փորձարկում են իրենց քաղաքական ստրատեգիաներում:

Տվյալ պահին բավարար է կողմնորոշմամբ պարզաբանելը, թե ինչու պահանջները և իրականությունը երբեմն տարանջատվում են:

Երբ ստորև ներկայացվեն քաղաքական միտումները և դպրոցները, ամենալավ բանը, ինչ կարելի է անել, որոշելն է, թե որտե՞ղ կիրականացնեիք հասարակության մասին այդ գաղափարները: Ստորև հակիրճ ներկայացված են հասարակության վերաբերյալ տարբեր գաղափարներ՝ ազատականություն, պահպանողականություն, սոցիալիզմ և սոցիալ-դեմոկրատիա: Վերջում բերվում են մի քանի օրինակներ իրական կյանքից:

Քանի որ սա կլինի բավականին համառոտ դասակարգում, որոշ տեքստեր զետեղված կլինեն յուրաքանչյուր բաժնի վերջում:

3.2. Ազատական տեսակետներ

Ազատական տեսակետներն ազատ շուկան կարևորում են ժողովրդավարության և շուկայականի միջև հարաբերություններում և ընդգծում ձեռնարկատիրության ազատությունը: Այս կարգի պետություններում մեծ մասամբ սահմանափակված է ժողովրդավարական եղանակով որոշումներ ընդունելու գործընթացը, որը գործում է որպես կարգը պահպանող, ինչն էլ պահանջում է, որ պետությունը միայն երաշխավորի շուկայի հետագա գործունեությունը: Ազատական մոտեցումների մի շարք հիմնական ենթադրություններ.

- Շուկան իրապես կարգավորվում է ինքնակառավարմամբ՝ ապահովելով նյութական և ոչ նյութական բարիքների բաշխումն ըստ հասարակական պահանջի:
- Ազատությունն ունի բացարձակ առաջնահերթություն հավասարության և համերաշխության հանդեպ, իսկ անհատը՝ հասարակության հանդեպ:
- Ազատությունն իրագործվում է անմիջապես շուկայի միջոցով: Շուկայական ազատության (հիմնական) սահմանափակումներն այս պայմաններում հավասարազոր են ազատության՝ որպես հիմնական հասկացության սահմանափա-

կումներին և, այդ իսկ պատճառով, պետք է բացառվեն:

- Պետության խնդիրն է շուկայում համագործակցության համար ստեղծել ապահով պայմաններ և նվազագույն դրույթներ՝ ապահովագրելու անակնկալ անախորժություններից, որ կարող է պատահել մարդկանց կամքից անկախ, բայց ոչ որպես հիմնական իրավունք: Այս սահմանափակ քաղաքական տարածքը կարգավորվում է ժողովրդավարական եղանակով: Պետությունը պատասխանատու է միայն հասարակության իրավական, ինստիտուցիոնալ շրջանակի համար:
- Մարդկության պատկերը ուղղված է դեպի անհատի ազատությունը, ինչի շնորհիվ նրանք տարբերվում են ըստ իրենց նվաճումների և ապրում են առավելագույնս օգտագործելով հնարավորությունները («utility maximisers»): Շուկայական ազատությունը պայմանավորվում է նաև պետությունից ազատ լինելով. պետությունը միայն ապահովում է, որպեսզի չխախտվի անհատի անձնական անկախությունը: Պետությունը պետք է պաշտպանի մարդկանց անկախությունը, սակայն չներխուժի անձնական անկախության սահմաններից ներս:
- Ազատական հասկացությունը ենթադրում է անկախ կենտրոնական բանկ, որը հետապնդում է արժույթի կայունությունը որպես հիմնական նպատակ (մոնետարիզմ):

Պատմականորեն ազատականությունը ծագել է բուրժուական հասարակությունում: Ազատականության հեղինակավոր փիլիսոփաներից և հիմադիրներից է Ջոն Լոքը (1632– 704թթ., տես գլուխ 2.1):

Դասական լիբերալիզմ

Դասական ազատականության ազդեցությունը մեծ է պետության առանձին կառույցների, բայց ոչ ամբողջ տնտեսության կառուցվածքի վրա: Դասական լիբերալիզմն այսօր ազդեցություն է գործում նաև սոցիալ-դեմոկրատական դատողությունների վրա (տես գլուխ 3.4):

Ֆրիդրիխ ֆոն Հայեկ. նշանավոր նոր ազատականներից մեկը

20-րդ դարի առաջին կեսին նոր ազատականներից[13] ոմանց ներդրումներով էականորեն ռադիկալացվեցին Լոքի հավասարակշռված դիրքորոշումները:

[13] Ստորև «նոր լիբերալ» տերմինն օգտագործում ենք տեսական հասկացություններ ներկայացնելու համար: Այն դասական լիբերալիզմից հետո իր զարգացումն ապրեց 20-րդ դարի երկրորդ կեսին՝ հատկապես 1980-ական թթ. հետո: Անշուշտ վերջին տարիներին քաղաքական ձախակողմյան ուժերի կողմից «նեոլիբերալ» տերմինը սահմանվեց նսեմացուցիչ մի բան: Անկախ նրանից, թե ինչ ենք հասկանում խոսելով նեոլիբերալ գաղափարների մասին, այսօրվա հասարակությունում ընդունված է բոլոր բացասական միտումները բնութագրել որպես նեոլիբերալ: Այս փաստարկի ոչ ճիշտ վերլուծությունից խուսափելու համար այստեղ մենք կօգտագործենք «նոր լիբերալ» տերմինը:

Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկ (1899–1992թթ.), ավստրիացի տնտեսագետ և 20-րդ դարի հայտնի ազատական մտավորական: Ազատ շուկայի վառ կողմնակից և պետության ցանկացած տիպի միջամտության հակառակորդ, ինչպես նաև սոցիալիզմի ամենախիստ քննադատ:

Օրինակ. Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկը[14] ներկայացնում էր մի տեսակետ, ըստ որի՝ ազատությունը և ժողովրդավարությունը կարող են իրագործվել բացառապես տնտեսական համակարգի շրջանակներում՝ հիմնվելով անսահմանափակ մասնավոր սեփականության և մրցակցության վրա: Հասարակությունը հանդես է գալիս որպես ինքնաբուխ կարգ, որում տնտեսական սուբյեկտները շուկայի միջոցով ազատորեն փոխազդում են ասոցիացիաների և մրցակցության վրա: Պետության խնդիրն է սահմանել ընդհանուր կանոններ, որոնք կկարգավորեն անհատների վարքագիծը միմյանց հանդեպ (տես Կոներտ, 2002թ., 287): Հայեկի համար նշանակություն չուներ, որ ազատությունը և ժողովրդավարությունն իրականում հասանելի են միայն քչերին: Այս պայմաններում անհայտ է մնում նաև այն փաստը, որ նման անսանձ կապիտալիզմի պայմաններում մեկի տնտեսական անկախությունը կարող է գոյություն ունենալ մեկ ուրիշի տնտեսական կարիքների և անկախության հաշվին: Հայեկի փաստարկների շուրջ հանգամանալից քննարկում չի նախատեսվում: Կոներտը ներկայացնում է ավելի նուրբ տեսակետներ:

Մեկ այլ նոր ազատական՝ Վիլհերմ Ռոպկե

Նոր ազատական փաստարկներում պահանջների և իրականության խոտորումը ակնհայտ է նաև Վիլհելմ Ռոպկեի ձևակերպումներում: Ռոպկեն ներկայացնում է մի տեսակետ, ըստ որի սոցիալիզմի բռնապետական ձևի միակ այլընտրանքն է ազատականությունը: Նա գրում է. «Ով դեմ է կոլեկտիվիզմին, պետք է ընդունի շուկայական տնտեսությունը»: Սակայն շուկայական տնտեսությունը ենթադրում է ազատ շուկա, ազատ մամուլ և գների ճկունություն, այլ կերպ ասած՝ հարմարավետություն և արտադրողների ստորակարգություն՝ ըստ պահանջների գերակայության: Բացասական առումով սա մենաշնորհային և համակենտրոնացման բացարձակ հականիշ է, և այս շահագրգիռ խմբերի անարխիան, ինչպես Պենելոպեի փեսացուները, տարածվելու է բոլոր երկրների վրա: Շուկայական տնտեսությունը ենթադրում է ընտրության իրավունք, այլ ոչ կոլեկտիվիզմի աղավաղված սկզբունք: Ընտրության իրավունքը միակ նորմալ սկզբունքն է, որ առկա է, որպեսզի ստեղծվի հարուստ կենսափորձ ունեցող և բավականին տեխնոլոգիապես հարուստ հասարակարգ: Սակայն այն տնտեսական գործընթացներն իրա-

[14] Այստեղ շատ կարևոր է ընդգծել, որ ֆոն Հայեկի փաստարկները մի շարք կարևորագույն կետերում տարբերվում են նոր լիբերալների այլ տեսակետներից (օրինակ՝ հասարակության սահմանադրության կամ պատմական կոնցեպցիայի հարցերում): Այս իսկ պատճառով նույնիսկ նոր լիբերալների շրջանակներում ֆոն Հայեկը հատկապես ազդեցիկ է, բայց ոչ անվիճելի:

Հետագա ընթերցանության համար. նոր ազատականներ և քննադատներ՝

Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկ (1946թ.), The Road to Serfdom. («Ճանապարհ դեպի ստրկություն»)

Վիլհելմ Ռոպկե, (1942թ.), The Social Crisis of Our Time («Մեր ժամանակի սոցիալական ճգնաժամը»)

Վիլհելմ Ռոպկե, (1946թ.) Civitas Humana (տպագրված է նաև որպես «Քաղաքացիական հասարակության բարոյական հիմքերը»)

Հանգորգ Կոներտ, (2002թ.), 'Zur Ideologie des Neoliberalismus – Am Beispiel derLehre F. A. von Hayeks', in: Conert, էջ . 275– 296

Դեվիդ Հարվեյ, (2007թ.), «Համառոտ պատմություն նեոլիբերալիզմի մասին»

պես կարգավորելու, պիտանի դարձնելու համար պետք է լինի իրական, այլ ոչ թե մենաշնորհների կողմից կոռումպացված (Ռոպկե, 1946թ., 74):

Այստեղ արդեն առկա են հակասություններ, որոնք հանդիպում են ազատականների որոշ տեսակետներում: Նախ՝ ինքնակարգավորվող շուկան ենթադրաբար ազատ է քաղաքական կարգավորումներից, սակայն մենաշնորհների ձևավորումը խիստ քննադատության է ենթարկվում, և ապա՝ պետության կողմից պետք է հսկողություն ապահովվի, որպեսզի մրցակցության փաստը միշտ առկա լինի: Այս կոնֆլիկտներն առաջանում են ազատ շուկայի պայմաններում, այնուամենայնիվ շուկան չի կարող կարգավորել այս խնդիրներն ինքնուրույն և այստեղ հարկավոր է պետական հսկողություն:

Բացի այդ, նոր ազատական տեսակետը ենթադրում է, որ շուկայի ազատ լինելու հանգամանքը բավարար է, որպեսզի ապահովվի անհատի ազատությունը. ենթադրություն, որը շուկայական կապիտալիզմի շնորհիվ սոցիալական արդարության բացառման պայմաններում չի կարող լինել երկարատև:

Սկսած 1960-ականներից, կազմվել են բազմաթիվ նոր ազատական հետազոտությունների ցանցեր, կազմակերպվել քաղաքական խորհրդատվություններ, հիմնվել են տնտեսական ինստիտուտներ և լոբբիստական կազմակերպություններ: Այս ցանցի զարգացմանը նպաստել է նաև 1980-ականներին Թեթչերի և Ռեյգանի[15] կառավարման ժամանակաշրջանում նեոազատականական հեղափոխությունը: Նոր ազատական տեսակետները, որպես օրենք, աջակցություն էին գտնում որոշակի կապիտալի սեփականատերերի և նրանց կողմից, ում կյանքն ինչ-որ չափով ապահովված էր (դասական կրթություն ստացած միջին խավ և գործարար վերնախավ): Հետևաբար նոր ազատականությունը երկու դեպքում էլ հանդիսանում էր բարձրաշխարհիկ հասարակության մոդել, քանի որ դա ձևավորվել էր ապահովված հասարակության կողմից և ներկայացնում էր նրանց շահերը:

[15] Գոյություն ունի շատ արժեքավոր աշխատություն «նեոլիբերալական համագործակցության» մասին՝ Պլևե/Վալպեն (2001թ.)

3.3. Պահպանողական տեսակետներ

Պահպանողականություն. կողմնորոշված է դեպի այն, ինչն արդեն գոյություն ունի

Պահպանողական տեսակետները ընկալման տեսակետից ամենաբարդն են: Դա պայմանավորված է պատմական և համակարգային պատճառներով:

Պատմականորեն պահպանողականությունը, ինչպես հենց բառի իմաստն է հուշում, հիմնված է պահպանելու այն ամենը, ինչ ստեղծված է: Արդյունքում դժվար է սահմանել դրա վերացական, ունիվերսալ հասկացությունը պատմական կոնտեքստում: Մի խոսքով՝ պահպանողականությունը միշտ էլ գոյություն է ունեցել, բայց նրա հստակ սահմանումն ու բնորոշումը չկա:

Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում և 19-րդ դարի առաջին կեսին պահպանողականները ներկայացնում էին ծագումային կորպորատիվ առավելությունները և վերնախավի շահերը: Գերմանական կայսրության ստեղծման ժամանակ նրանք ներկայացնում էին գերմանական փոքր պետությունների շահերը և, ի վերջո, ներկայացնում էին Կայսրությունը, այն դեպքում, երբ Վեյմերյան Հանրապետությունում նրանք պայքարում էին Կայսրության վերականգնման և ժողովրդավարության դեմ: 1980-ականներին պահպանողականները վերադարձան դասական ազատական տեսակետների և կոչ էին անում չեղյալ համարել 1970-ականների բարեփոխումները: Պահպանողականները չունեն հաստատուն մոտեցումներ:

Այնուամենայնիվ կարելի է թվարկել պահպանողական մտքի մի քանի հիմնական կետեր՝ հիմնականում հղում կատարելով մեր ժամանակաշրջանին:

- Պահպանողականները հիմնվում են ընտանիքի հիմնական արժեքների, անձնական պատասխանատվության և արժանիքների կամ նվաճումների վրա: Մեծ տեղ է հատկացվում ավանդույթներին:
- Պետությունը, որպես կանոն, ածանցվում է «ամենաբարձր կանոնների» արժեքներից, որոնք իրենց արտացոլումն են գտել տվյալ ազգի պատմության մեջ: Որպես օրենք, այս «ամենաբարձր կանոններն» ապահովում են ավելի ստորակարգային կողմնորոշում ունեցող մտածելակերպ և առավել դրական վերաբերմունք հասարակության վերնախավի հանդեպ: Այս կերպ արդարացվում է սոցիալական անհավասարությունը:
- Գերմանիայում, ինչպես նաև շատ այլ երկրներում, պահպանողական մտածելակերպն առավել բնորոշ է քրիստոնյաների պատկերացումներին: Կաթոլիկ-սոցիալական դոկտրինի հիմնական գաղափարները՝ բարեգործությունը, դրամական օժանդակությունը և այլն, վկայակոչվում են որպես արժեքներ:

- Վերջին տարիներին նոր բուրժուական արժեքներ տերմինը (տե՛ս Բուրշ-տեյն/Հեյն/Ժոռկե, 2007: 201) նույնպես գործածվում է պահպանողական-ների կողմից:
- Այն ներկայացնում է քաղաքացիների[16], որոնց կյանքում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ընտանիքը, բարոյականությունը, անձնվիրությունը, քաղաքա-վարությունը, ունեն մեծ նշանակություն, նրանք ինքնավար անհատականու-թյուն են և մասնակցում են քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Ուդո Դի Ֆաբիոն բանաձևում է սա հետևյալ կերպ. «Այսօր լինել բուրժուա, նշանակում է ընդունել գոյություն ունեցող կապը ցանկության և պահանջի, սիրո և կոնֆլիկտի, զրկանքի և բարգավաճման միջև: Հասկանալ ազատու-թյունը որպես պարտավորությունների ազատություն և հաջողությունն ընկալել միայն սեփական աշխատանքով ձեռք բերված բարիք՝ առանց պարտադրելու աշխատանքի նկատմամբ նվիրվածություն, և լարված աշխատանքն ընդունել որպես բացարձակ: Լինել բուրժուա, նշանակում է հաշվի նստել հասարակու-թյան և նրա անդամների, այդ թվում նաև խոցելի խավերի և կարիքավորների հետ, հավասարության և ազատության հետ միասին նպաստել նաև համե-րաշխության զարգացմանը» (Դի Ֆաբիո, 2005թ., 138): Նոր բուրժուական արժեքների հասկացությունը իր մեջ ընդգրկում է նաև անհատի ազատու-թյան հասկացությունը, որն առավելապես ուղղված է դեպի բարոյականու-թյունը, որի կենտրոնում անհատն է: Սա տարբերվում է ոչ միայն սոցիալական և սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող հասկացությունից, այլև ազատական տեսակետներից:
- Սկսած 1980-ականներից՝ Հելմուտ Կոլի կառավարության շրջանում, տեղի ունեցավ մի կողմից քրիստոնեա-պահպանողական և մյուս կողմից՝ տնտեսա-կան ազատականության՝ մարդկության մասին ունեցած պատկերացումների միաձուլում: Սակայն Անգելա Մերկելի կառավարությունն իր գաղափարնե-րում ընդգրկեց սոցիալ-դեմոկրատիայի ավելի շատ տարրեր, որոնք սակայն փոքր-ինչ վերանայվել էին և որոշ չափով հարմարեցվել, ինչն էլ նպաստեց ՔԴՄ-ում արդիականացման կողմնակիցների և պահպանողականների միջև հակասությունների առաջացմանը:

Պահպանողականության հետ կապված հատկապես պետք է ընդգծել, որ շատ դժվար է սահմանել հաստատուն կուսակցական դասակարգումը և պատմական գաղափարական հիմքերը:

Հետագա ընթեր-ցանության համար. պահպանողակա-նություն՝

Ուդո Դի Ֆաբիո, (2005 թ.), "Die Kultur der Freiheit", («Ազատության մշակույթը»), Մյունխեն

Էդգար Ջանգ, (1932 թ.), "Deutschland und die conservative Revolution", Մյունխեն

Մարտին Գրեյֆեն-հագեն (1971 թ.) "Das Dilemma des Konservativismus in Deutschland", Մյունխեն

[16] Գերմաներեն Bürger բառն ունի նաև «բուրժուա» իմաստը:

Առավել դյուրին է ուղղակի ընդգծել, թե որոնք են պահպանողական տեսակետներ ունեցող թիրախային խմբերը: Դրանք հիմնականում ապահովված և կրթված միջին դասն է, բիզնես էլիտան, ինչպես նաև հոգևորականները հատկապես կաթոլիկները:

3.4. Սոցիալ-դեմոկրատիան և ժողովրդավարական սոցիալիզմը

Մոդելի մեջ ներառված պատմական զարգացումները

Ժողովրդավարական սոցիալիզմը որպես տեսական և սոցիալ-դեմոկրատիան որպես քաղաքական ուժ, կապված աշխատավորական շարժումների հետ, վաղուց արդեն ունեն ավանդույթներ: Ի տարբերություն ազատական և պահպանողական գաղափարների, այս քաղաքական մոդելն ապացուցել է իր ճկունությունը: Այն իրենից ներկայացնում է իրադարձություններին նայելու այնպիսի տեսակետ, ըստ որի միշտ գիտակցվում է նրա պատմական լինելը: Ուստի արժե հակիրճ ուսումնասիրել սոցիալական միտումի առաջացման մի շարք պատմական գաղափարահենքեր:

3.4.1. Աշխատավորական շարժման նախակարապետները

Ե՞րբ «սոցիալիզմը», որպես գաղափար, դարձավ ազդեցիկ

Ե՞րբ է առաջացել սոցիալական ժողովրդավարության մասին գաղափարը: Այս հարցին դժվար է պատասխանել: Ըստ Հերման Դունկերի՝ «սոցիալիզմի պատմությունը սկսվում է մարդկության պատմությունից» (Դունկեր, 1931թ., 9): Ոմանք սոցիալիզմի ծնունդը կապում են քրիստոնեության հետ: Ոմանք էլ վկայակոչում են ֆրանսիացի և անգլիացի վաղ սոցիալիստներին: Այսպիսով, հիմվելով պատմության վրա, անընդհատ կարելի է գտնել սոցիալիզմի գաղափարի ստեղծման նոր աղբյուրներ: Անկասկած այս տեսակետներից յուրաքանչյուրն ունի իր հիմքերը և նույնիսկ հավաստիությունը: Այնուամենայնիվ այս հարցը որոշակիորեն մոլորության մեջ է գցում, քանի որ գաղափարի ազդեցիկությունը և դրա պատճառները շատ ավելի կարևոր են, քան բուն գաղափարի ծագման ժամանակը:

Այս հարցին կարելի է միանշանակ պատասխանել. Գերմանիայում սոցիալիզմի գաղափարն առավել ազդեցիկ դարձավ 19-րդ դարում՝ ինդուստրիալիզացման և աշխատավորական շարժման հետ մեկտեղ:

Այս գրքում չենք կարող ներկայացնել սոցիալիստական գաղափարների համապարփակ ուսումնասիրությունը, սակայն հակիրճ կներկայացնենք սկզբնական հիմնական կետերը և ռադիկալ փոփոխությունների ժամանակաշրջանը:

1848 թվականից մինչև 19-րդ դարի վերջ. Քաղաքական միտումների առաջացումը

1848 թ. Գերմանիայում ոչ միայն բուրժուական հեղափոխություն տեղի ունեցավ, այլև Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի կողմից ստեղծվեց *«Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»*:

Սկզբնական շրջանում Մարքսի ծրագիրը ձևավորվել էր աշխատավորական շարժման համար և գրված էր աշխատավորների համար հասկանալի լեզվով:

Կարլ Մարքս (1818-1883թթ.), կարկառուն սոցիալ-տնտեսագետ և 19-րդ դարի հայտնի փիլիսոփա: Կապիտալիզմի մասին նրա տնտեսական վերլուծությունները մինչ օրս մեծ նշանակություն ունեն և շատ ավելի խորիմաստ են, քան նրա հետնորդներինը և քննադատներինը:

Ծրագրի տեսական հիմքերն առավել կարևորվեցին նրա հետագա աշխատություններում: Սոցիալիզմի՝ որպես ժամանակաշրջանի կոնցեպտուալ մոդելի վերաբերյալ հիմնական ենթադրությունները կարելի է գտնել հետևյալ դրույթներում.

Բնութագրվում է որպես անհավասարության և ազատության բացակայություն

- Մարքսն իր տեսակետների հիմնավորումն սկսում է այն կետից, որ շուկայական կապիտալիզմը շատերին բերում է անհավասարության և զրկում ազատությունից՝ ազատություն տալով միայն մարդկանց որոշ մասին: Մի կողմից կապիտալիստներն են, իսկ մյուս կողմից՝ նրանք, ովքեր չունեն սեփական կապիտալ և ստիպված են աշխատել աշխատավարձի դիմաց: Շուկայական կապիտալիզմը հիմնված է շահի վրա, ինչի պատճառով էլ աշխատանքը չի վարձատրվում ըստ կատարվածի: Այս կերպ կապիտալի սեփականատերերը կարող են շարունակել է՛լ ավելի մեծ կապիտալ կուտակել, անկախ այն բանից, կապիտալի սեփականատերը մասնավոր անձ է, թե՝ մեծ ընկերություն:

Մրցակցություն և ճնշում աշխատավորների վրա

- Կապիտալի սեփականատերերի միջև առկա էր կապիտալի կուտակման մրցակցություն և անընդհատ ճնշումներ, որպեսզի արտադրության մեջ առավել մրցունակ պայմաններով կատարվեն վերաներդրումները: Այս դրույթն անընդհատ ճնշում էր աշխատավորներին և հանգեցնում ոչ միայն աղքատության, այլև արտադրանքի ավելորդ կուտակման: Արտադրանքն այլևս չէր սպառվում և կապիտալ այլևս չէր կարող ներդրվել, ինչից էլ, սպառման շուկայի բացակայության պայմաններում, արտադրությունը ճգնաժամ էր

ապրում: Հենց դա էր Մարքսին հիմք տալիս ենթադրելու, որ տնտեսական ճգնաժամերը շուկայական-կապիտալիստական համակարգի կարևոր և անհրաժեշտ բաղադրիչներ են:

- Հավասարության և ազատության բացակայությունը, որը համարվում է շուկայական կապիտալիզմի համակարգային հետևանքներից մեկը, հակասում է հավասարության և ազատության սկզբունքի պահանջներին:
- Ժողովրդավարություն կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ արտադրության միջոցները պետականացվեն և կապիտալի օգտագործման մասին որոշումները կայացվեն ժողովրդավարական կառույցների միջոցով: Սակայն մասնավոր սեփականությունը, ի տարբերություն արտադրության միջոցների, չպետք է հանդիսանա ազգայնացման առարկա:
- Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ մարքսիստական տեսլականը հիմնված է հակասությունների վրա. մարդիկ, որ ի ծնե ազատ են, հավասար և համերաշխ, ապրում են անհավասար և անազատ համակարգի պայմաններում, որն ուղղված է առավելագույն շահույթի ստացմանը: Մարդկության այս տեսլականն իր մեջ ունի հզոր նորմատիվ պահանջներ:

Մարքսի և Էնգելսի այս և մյուս տեսություններն աշխատավորական շարժման կարևորագույն սկզբնակետն են:

Այնուամենայնիվ այս քաղաքական ծրագրերի արդյունքները մնացին շատ սահմանափակ, քանի որ Մարքսը և Էնգելսը իրենց վերլուծություններում չկարողացան հաշվի առնել բազմաթիվ գործոններ, որոնցից է, օրինակ, սոցիալիստական գաղափարախոսության և պետության փոխհարաբերությունը:

Լասսալի ենթադրությունները

Ֆերդինանդ Լասսալ (1825-1864թթ.). Էական դեր է խաղացել 1863 թ. Լայպցիգում Allgemeiner Deutscher Arbeiterverein Գերմանիայի աշխատավորական ընդհանուր ասոցիացիայի կազմավորման գործում: Իր *«Զեռք բերված իրավունքներ»* աշխատությունում նա կողմ էր արտահայտվում պետության ժողովրդավարական կարգերին:

Այնուամենայնիվ այս հարցերը սկզբնակետ հանդիսացան նաև Ֆերդինանդ Լասսալի համար: Հատկապես կարևոր է սկզբնական ենթադրությունն այն մասին, որ յուրաքանչյուր պետության ցանկացած օրինական համակարգի համար ամենակարևորն անձի ազատությունն է: Դրա հիման վրա Լասսալի համար, օրինակ, հիմնական օրենքներն ընդհանուր առմամբ պետք է սահմանեին, թե ինչն է ճիշտ և ինչն է սխալ:

Այս հիմքի վրա պետությունն առաջին հերթին պետք է ընկալվեր որպես ազատ մարդկանց միություն: Սա պրովոկացիոն պատկերացում էր, քանզի ավելի ուշ ստեղծված Պրուսական պետությունը և Գերմանական կայսրությունը ունեին միապետական-հիերարխիկ կառուցվածք:

«Պետության գործառույթը կայանում է նրանում, որ խթանի ազատության հասկացության հետագա զարգացումը մինչև դրա լիակատար իրագործումը… Պետության նպատակը միայն անձնական ազատության և սեփականության պահպանումը չէ, որի համար էլ անհատը, ըստ բուրժուական պատկերացման, մտավ պետության մեջ: Հակառակը, պետության գործառույթը կայանում է հենց նրանում, որ կառավարի անհատներին այս միության միջոցով՝ ընձեռելով նրանց հնարավորություն հասնելու այնպիսի բարձունքների, որոնց նրանք երբեք չէին հասնի լինելով անհատներ. կրթության հնարավորություն ընձեռել նրանց, ընձեռել նրանց իշխանություն և ազատություն, որոնք նրանք երբեք չէին կարող ունենալ մնալով անհատներ»: (Լասսալ, Աշխատավորական դասի ծրագիր, 1862թ. [գերմաներեն հրատարակություն] 1987թ., 222)

Պետության խնդիրը պետք է լինի մարդկանց կրթելը և զարգացնելը, մինչ նրանք հասնեն իրենց այդ ազատությանը: Լասսալի համար չորրորդ իշխանության կամ աշխատավորական դասի կարևորությունը կայանում էր նրանում, որ պետության այս գաղափարը առաջ քաշվի: Այսպիսով, հիմնական պահանջն աշխատավորական ասոցիացիաների կազմման միջոցով ունիվերսալ ընտրական իրավունքի տրամադրումն էր: Լասսալի կարծիքով, այս ամենը պետք է ստեղծվեր պետության օժանդակությամբ:

Լասսալը ներկայացրեց երկու հիմնական սկզբնակետ սոցիալիզմի և սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ քննարկումների համար. մի կողմից՝ ժողովրդավարական պետության հարցը և նրա սոցիալական նախապայմանները, մյուս կողմից՝ այն հարցը, թե ո՞ր մարտավարությունը լավագույնս կպաշտպանի աշխատավորների իրավունքները:

Վիլհելմ Լիբկնեխտը և Ավգուստ Բեբելը

Վիլհելմ Լիբկնեխտը և Ավգուստ Բեբելը Լասսալի տեսակետների ամենակարկառուն քննադատներից էին: Պատճառն այն էր, որ Լասսալի ծրագիրն իրեն չարդարացրեց: Առանց մամուլի ազատության, հավաքների ազատության, ասոցիացիաների ազատության և պետության հետ հարաբերությունների և արմատական փոփոխությունների, աշխատավորների շահերը չեն կարող ներկայացվել պետության մեջ և նրա կողմից:

Վիլհելմ Լիբկնեխտ (1826-1900թթ.) և **Ավգուստ Բեբել** (1840-1913թթ.), 1869թ. Սոցիալ-դեմոկրատական աշխատավորական կուսակցության ամենաազդեցիկ հիմնադիրներն են: Բացի այդ, առաջին սոցիալ-դեմոկրատ ներկայացուցիչներն էին *Ռայխստագում* (1867-1870թթ. Հյուսիսային Գերմանիա): 1890 թվականից Լիբկնեխտը նաև *Vorwärts* հանդեսի գլխավոր խմբագիրն էր:

Կուսակցական միավորման գիտաժողով Գոտայում, 1875թ.

1875 թ. Գերմանիայում Աշխատավորական ընդհանուր ասոցիացիան (*Allgemeine Deutsche Arbeiterverein*) և Սոցիալ-դեմոկրատական աշխատավորական ակուսակցությունը (*Sozialdemokratische Arbeiterpartei*) Գոտայում տեղի ունեցած համագումարի արդյունքում միավորվեցին և ստեղծվեց Գերմանիայի Սոցիալ-աշխատավորական կուսակցությունը (*Sozialistische Arbeiterpartei Deutschlands*): Այսպիսով Գերմանական Կայսրությունում դրվեց սոցիալ-դեմոկրատիայի հետագա զարգացման, ինչպես նաև Բիսմարկի հակասոցիալիստական օրենքների դեմ առաջին հիմնաքարը: Այս ժամանակահատվածում կոնֆլիկտները քիչ թե շատ հարթվել էին, սակայն դրանք ավելի ուշ կրկին ի հայտ եկան, ինչն էլ հանգեցրեց աշխատավորական շարժման պառակտման:

3.4.2. Պառակտում աշխատավորական շարժման մեջ

Վիճահարույց տեսական հարց և երեք հիմնական ճամբարներ

1890-ականներին սոցիալ-դեմոկրատական շրջանակներում կոնֆլիկտ առաջացավ տեսական մի հարցի շուրջ: Արդյոք կապիտալիզմը գտնվում է ճգնաժամի վերջի՞ն փուլում, և աշխատավորական շարժումը կարո՞ղ է պրոլետարական դասակարգային պայքարում վերջ դնել կապիտալիզմին և հասնել սոցիալիզմի, և այս ամենն ինչպե՞ս կանդրադառնա սոցիալ-դեմոկրատիայի հետագա ռազմավարության վրա:

Առաջացան երեք հիմնական ճամբարներ (թեմային առավել հանգամանալից ծանոթանալու համար տես Euchner/Grebing et al. 2005: 168; Grebing 2007: 66– 94).

Կարլ Կաուտսկի (1854-1938թթ.), ՍԴԿ-ի *«Die neue Zeit»* տեսական ուղղվածության թերթի հիմնադիր խմբագիրն էր: Կաուտսկին մեծ դեր ունեցավ հասարակության վերաբերյալ մարքսիստական վերլուծությունները ՍԴԿ-ում ներդնելու գործում: Նա, Էդուարդ Բերշտեյնի հետ, Էրֆուրտյան ծրագրի հիմնական հեղինակներից էր:

Կարլ Կաուտսկու և Ավգուստ Բեբելի խումբը

Մարդիկ, ովքեր համախմբված էին Կարլ Կաուտսկու և Ավգուստ Բեբելի շուրջը, հույս ունեին, որ խորհրդարանական մեծամասնությունը և լավ կազմակերպված աշխատավորական դասը կհանգեցնեն սոցիալիզմի, բայց ի վերջո հանգեցին այն եզրակացության, որ արմատական ուղղվածություն ունեցող կայսերական քաղաքականությանը և նրա իմպերիալիստական ուղղվածությանը, որոնք երկիրը

տանում էին դեպի պատերազմ, կարող էին դիմադրել արտախորհրդարանական գործողություններով, ասենք՝ մասսայական գործադուլների ակցիաներով: Աշխատավորական շարժումը կարող էր հանգեցնել սոցիալիզմի հաստատմանը, բայց միայն ուժի միջոցով:

Ռևիզիոնիստներ. Էդուարդ Բերշտեյն

Էդուարդ Բերշտեյն (1850-1932թթ.), սոցիալ-դեմոկրատիայում ռևիզիոնիզմի ամենակարկառուն գործիչներից: Իր *«Սոցիալիզմի նախադրյալները և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները»* (*«Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie»*) աշխատությունում վիճարկեց մարքսիստական տեսակետները: Բերշտեյնը նույնպես 1891թ. Էրֆուրտյան ծրագրի համահեղինակ է:

Պատմական զարգացման այս հասկացության հետ զուգահեռ, գոյություն ուներ այսպես կոչված ռևիզիոնիզմ, որի վրա մեծ ազդեցություն ուներ Էդուարդ Բերշտեյնը: Նա փորձում էր վիճակագրական տվյալների հիման վրա վերանայել մարքսիստական դոկտրինան: Արդյունքում պարզեց, որ կապիտալիստական պետության և հասարակության միջև փոփոխություններ, այնուամենայնիվ, հնարավոր է իրականացնել: Ավելին, կապիտալիզմը չի փլուզվի, ընդհակառակը, այն ճգնաժամը, որ գոյություն ուներ կապիտալիստական հասարակարգի ներսում, ոչ թե կաճեր, այլ կնվազեր: Ամրապնդելով արհեստակցական միությունները և կոոպերատիվները, հասարակությունում կարելի է հասնել բարեփոխումների, որոնք ի վերջո կհանգեցնեն սոցիալիզմի: Արհեստակցական միության անդամ Ադոլֆ ֆոն Էլմը ռևիզիոնիստական ծրագրի էությունը բնութագրեց հետևյալ կերպ.

«Էվոլյուցիայից մինչև հեղափոխականության - անդադար ժողովրդավարացման, ինչպես նաև հասարակության տարբեր օղակների սոցիալականացման միջոցով կարելի է հասնել կապիտալիստական հասարակարգի վերափոխմանը սոցիալիստականի. սա է ռևիզիոնիստական տեսակետը կուսակցության մեջ»: (մեջբերում Euchner/Grebing et al. 2005: 171)

Ռոզա Լյուքսեմբուրգ

Ռոզա Լյուքսեմբուրգ (1871-1919թթ.), Լիտվայում և Լեհաստանի թագավորությունում Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմադիր, ՍԴԿ առաջատար տեսաբան: Հայտնի է իր իմպերիալիզմի մասին տեսությամբ: 1899թ. նա մեկնեց Բեռլին: 1918թ. Գերմանիայի Կոմունիստական կուսակցության հիմադիրներից էր: 1919թ. սպանվեց Ֆրեյկորպսի զինվորների կողմից:

Ռոզա Լյուքսեմբուրգը, ի տարբերություն Բերշտեյնի, պնդում էր, որ կապիտալիզմը կհանգի իր վախճանին ներքին ճգնաժամի և հատկապես կապիտալի սեփականատերերի անդադար մրցակցության հետևանքով:

Արտադրության կապիտալիստական եղանակը պահանջում է անընդ-

հատ ընդլայնում և տարածքների ձեռք բերում այն երկրներում, ուր չեն տիրում կապիտալիստական կարգեր: Նա նաև հերքում էր հեղափոխության և ռեֆորմի միջև տարբերության առկայությունը:

«Սոցիալական բարեփոխումների համար ամենօրյա պայքար, որպեսզի գոյություն ունեցող պայմաններում բարելավվեն աշխատավորների կենսապայմանները, ինչպես նաև պայքար դեմոկրատական ինստիտուտների համար, որոնք ներկայացնում են սոցիալ-դեմոկրատիան. սա է պրոլետարական դասակարգի պայքարի միակ ուղին, և պետք է աշխատել՝ հասնելու վերջնական նպատակի, այն է՝ քաղաքական իշխանության և աշխատավարձի վճարման համակարգի փոփոխության: Սոցիալ-դեմոկրատիայի համար կա անբաժանելի կապ սոցիալական բարեփոխումի և սոցիալական հեղափոխության միջև. դա այն է, որ սոցիալական բարեփոխումը միջոց է, իսկ արմատական սոցիալական փոփոխությունը՝ նպատակ»: (Լյուքսեմբուրգ, 1899թ., 369)

Ռոզա Լյուքսեմբուրգը դեմ չէր խորհրդարանական գործունեությանը, սակայն կարծում էր, որ այն բավարար չէ սոցիալիզմի հասնելու համար: Այդ իսկ պատճառով հակված էր դեպի առավելագույնս արտախորհրդարանական աշխատավորական շարժումը:

Պառակտում աշխատավորական շարժման մեջ

Աշխատավորական շարժման մեջ գոյություն ունեցող այս երեք միտումները, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատները, կարող էին համախմբվել Կայսրության կողմից ճնշումներին դիմակայելու համար (*Kaiserreich*): Այնուամենայնիվ ՍԴԿ մեծամասնության կողմից հաստատված պատերազմական վարկերն ու ծախսերը, ՍԴԿ-ի և Անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների (*Unabhängige Sozialdemokratische Partei Deutschlands*) պառակտումը, ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը և այն հարցի հրատապությունը, թե ինչպես է կազմավորվելու ժողովրդավարական հասարակությունը, հանգեցրին աշխատավորական շարժման պառակտման:

1919 թվականը և Վեյմերյան հանրապետության ձևավորումը

1919թ. ՍԴԿ-ն ձևավորեց Վեյմերյան հանրապետության առաջին կառավարությունը: Այն դեմ էր պահպանողականներին, ազգայնականներին, ռադիկալ ուժերին, բայց նաև դեմ էր կոմունիստներին: Այս պատմական դիպվածն առաջին անգամ հնարավորություն ընձեռեց ձախակողմյաններին ձևավորելու քաղաքականություն, բայց բերեց նաև պառակտումներ սոցիալական ոլորտների շուրջ բանավեճերում:

1919թ.-ին պետության ձևավորման երկու «տարբերակ»

Այն ժամանակ, երբ կոմունիստները և սոցիալիստներից ոմանք կողմ էին աշխատավորների և ռազմական խորհուրդների միջոցով պետության ստեղծմանը, սոցիալ-դեմոկրատները էական դեր ունեցան ներկայացուցչական ժողովրդավարության կազմավորման հարցում և այն ձևավորեցին 1920-ականներին:

Ֆրիտս Նաֆտալին ամփոփեց սոցիալ-դեմոկրատական մոտեցումները.

> *«Այն ժամանակ, երբ կապիտալիզմը դեռևս ամբողջովին ազատ էր, տնտեսության ոչ մի այլընտրանք անկազմակերպ կապիտալիզմին հնարավոր չէր երևակայել, բացի սոցիալիստական կազմակերպությունը… Հետզհետե պարզ դարձավ, որ կապիտալիզմի կառուցվածքը փոփոխական է և կապիտալիզմը մինչ փլուզվելը կարող է նաև ճկվել»* (Նաֆտալի, 1929թ., մեջբերված է Էունչեր / Գրեբինգ, 2005: 305)

Պատմական տարբեր տեսակետներ

Խոսքը խնդրո առարկա՝ հեղափոխության և ռեֆորմների հասկացությունների միջև տարբերության մասին է: Մի կողմից՝ հեղափոխական, գերակշռում էր այն կարծիքը, որ պետք է ազատվել պետության սահմանադրությունից և նրա՝ սեփականության հանդեպ վերաբերմունքից, որպեսզի հնարավոր լինի հասնել մի նոր հասարակության, իսկ մյուս կողմից՝ ռեֆորմիստական տեսակետն էր, որ ժամանակակից հասարակությունը, հետևելով պետության սահմանադրությանը, անընդհատ ռեֆորմների միջոցով պետք է զարգանա և հասնի ժողովրդավարական սոցիալիզմի:

Այս տարբեր տեսակետներն իրենց արտացոլումն են գտել պետության տարբեր մոդելներում



Նկար 6. Համայնքային խորհրդի համակարգ և կազմակերպված կապիտալիզմ

Ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը

ՍԴԿ-ի կողմից առաջարկված ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը սահմանվել էր հօգուտ պառլամենտական ժողովրդավարության և քաղաքական ու տնտեսական ոլորտների բաժանման: Ե՛վ տնտեսական, և՛ քաղաքական ոլորտներում իրականացվելու են ժողովրդավարացման գործընթացներ՝ ելնելով աշխատավորների համընդհանուր շահերից: Այս ենթատեքստում ժողովրդավարական սոցիալիզմը ենթադրում է համընդհանուր համագործակցություն սոցիալիստական տնտեսության և աշխատավորների ներկայացուցիչների՝ արհեստակցական միությունների, կորպորատիվ շրջանակների և պառլամենտական ժողովրդավարության միջոցով:

Գոդեսբերգի «Մրցակցություն այնքան, որքան հնարավոր է, պլանավորում այնքան, ինչքան անհրաժեշտ է» 1959թ. ծրագիրը

1959թ. Գերմանիայում ՍԴԿ-ն հանդես եկավ ազատ շուկայի համար իր սոցիալ-դեմոկրատական բանաձևով. «Մրցակցություն այնքան, որքան հնարավոր է, պլանավորում այնքան, ինչքան անհրաժեշտ է» (Dowe/Klotzbach, 2004: 332): Այս տեսակետն ավելի շատ ընդգծում էր ժողովրդավարական սոցիալիզմի գաղափարը, քան նոր տնտեսական և քաղաքական կարգերը: Այն միևնույն ժամանակ ընդունում էր շուկայական կապիտալիզմը քաղաքական ոլորտի առաջնորդության ներքո: Սակայն սոցիալ-դեմոկրատները հրաժարվեցրին պլանային տնտեսություն հասկացությունից, որն այդ ժամանակ իրագործվում էր Խորհրդային Միությունում:

3.4.3. Ժողովրդավարական սոցիալիզմն ընդդեմ պետական սոցիալիզմի

Անջատում մարքսիզմից

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ՍԴԿ-ի ներսում ժողովրդավարական սոցիալիզմի և պետական սոցիալիզմի մասին գաղափարների հակասություններն է՛լ ավելի ակնհայտ դարձան: 1959թ. Գոդեսբերգի ծրագրով ՍԴԿ-ն պաշտոնապես հետ կանգնեց մարքսիստական աշխարհայացքից, թեև ոչ բոլոր իր վերլուծություններից: Դրա հետ մեկտեղ հրաժարվեց նաև սոցիալիզմին ուղղված զարգացումներից որպես բնական անհրաժեշտություն: Փոխարենը սոցիալիզմը բնութագրվեց որպես մշտական խնդիր, որը կարելի էր արդարացել կրոնական և փիլիսոփայական միջոցներով: Ժողովրդավարական սոցիալիզմի կենտրոնական սահմանման մեջ ներառված էին երեք հիմնարար արժեքներ՝ ազատություն, արդարություն և համերաշխություն: Սոցիալ-դեմոկրատներն ածանցում են հիմնական պահանջները՝ ելնելով այս երեք արժեքներից: Նրանք կազմեցին դեպի ազատություն և ժողովրդավարություն տանող մի հռչակագիր:

> *«Սոցիալիզմն անհնար է առանց ազատության: Սոցիալիզմի կարելի է հասնել միայն ժողովրդավարության միջոցով: Ժողովրդավարություն հնարավոր է լիովին իրականացնել միայն սոցիալիզմի միջոցով»:* («Սոցիալիստական ինտերնացիոնալի սկզբունքների հռչակագիր», Ֆրանկֆուրտ, 1959թ., մեջբերված է Dowe/Klotzbach, 2004: 269)

Ազատության այս ընկալումը ժողովրդավարական սոցիալիզմը միանգամայն սահմանազատում է տոտալիտար համակարգերից, մասնավորապես արևելյան բլոկի այսպես կոչված ժողովրդական դեմոկրատիայից:

3.4.4. ՍԴԿ-ն այսօր. նոր մարտահրավերներ և նոր պատասխաններ

Դեմոկրատական սոցիալիզմը՝ որպես տեսական, սոցիալական ժողովրդավարությունը՝ որպես գործողությունների սկզբունք

Աշխատավորական շարժման մեր ակնարկը առաջին պլան մղեց պետության և հասարակության գործառույթների ռազմավարական քննարկումը: Դեմոկրատական սոցիալիզմը ՍԴԿ-ի վճռական տեսականն է, որը ՍԴԿ-ն պարտավորվել է իրականացնել: Մենք ցանկանում ենք այնպիսի հասարակություն, որտեղ կտիրեն ազատությունը, հավասարությունը և համերաշխությունը: Համաձայն Համբուրգի ծրագրի, ՍԴԿ-ի գործողություններում սոցիալ-դեմոկրատիան հիմնական սկզբունքն է: Այն կուսակցությանը մղելու է դեմոկրատական սոցիալիզմի՝ որոշումները ժողովրդավարական մեթոդներով

ընդունելու և քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքներն իրականացնելու:

«Մեր պատմությունը կազմավորվել է դեմոկրատական սոցիալիզմի գաղափարներով: Այն ազատ և հավասար մարդկանցից կազմված մի հասարակություն է, ուր իրականացվում են հիմնարար արժեքները: Այն պահանջում է համակարգված տնտեսություն, պետություն և հասարակություն, որտեղ հիմնական քաղաքական, քաղաքացիական, սոցիալական և տնտեսական իրավունքները երաշխավորված են բոլորի համար, և որտեղ բոլորը կապրեն շահագործումից, ճնշումներից և բռնություններից ազատ, հետևաբար՝ սոցիալական և մարդկային անվտանգ պայմաններում: Դեմոկրատական սոցիալիզմի գաղափարը մեզ համար մնում է ազատ և արդար հասարակության մի տեսլական, ուր առկա է համերաշխությունը և դրա իրականացումը որպես հարատև խնդիր: Մեր գործողությունների սկզբունքը սոցիալ-դեմոկրատիան է»: (Համբուրգի ծրագիր, 2007թ., 16):

Այսօրվա մարտահրավերը

Սոցիալ-դեմոկրատիան շուկայական գլոբալիզացիայի ներկա պայմաններում որոշելու է՝ ինչպես արձագանքել ֆինանսական շուկաների ազդեցության մեծացմանը, արմատական փոփոխություններին, որ տեղի են ունենում աշխատանքային շուկայում, ինչպես շուկայական կապիտալիզմի և դեմոկրատիայի միջև ստեղծել նոր հավասարակշռություն: Այլ կերպ ասած՝ ինչպես հասնել դեմոկրատական սոցիալիզմի՝ ելնելով վերը նշված պայմաններից: Այնուամենայնիվ ՍԴԿ Համբուրգի ծրագիրը ցույց է տալիս, որ ոչ միայն նոր հարցեր են առաջացել, այլև առաջին պատասխաններն են գտնվել (տես նաև գլուխ 6):

Համբուրգի ծրագրում քննարկվեց նաև համաձայնեցված տնտեսության և ներկայացուցչական դեմոկրատիայի իրականացումը քաղաքական առաջնորդությամբ՝ եվրոպական և գլոբալ մասշտաբներով՝ որպես ապագայի պահանջ:

«Այսօրվա գլոբալիզացիայի պայմաններում շուկան պետք է ձևավորվի քաղաքականապես, վեր որևէ ազգային խնդիրներից: Մեր մոտեցումը հետևյալն է. մրցակցություն այնքան, որքան հնարավոր է, պետության կողմից կարգավորում այնքան, ինչքան անհրաժեշտ է» (Համբուրգի ծրագիր, 2007թ., 43):

Սոցիալ-դեմոկրատիայի, ազատականության և պահպանողականության կոնցեպտուալ մոդելների առավել մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ սրանք իրական այլընտրանք են և վստահեցնում են, որ այսօրվա կուսակցությունների քաղաքական ծրագրերը գրեթե անզանազանելի են:

3.4.5. Շեղում. Դի Լինկը (Զախ) և իր հակասությունները

«Դի Լինկ»

1990թ. Վենդը (բեկումային պահ, հիմնականում նշանակում է 1989թ. Արևելյան Գերմանիայում կոմունիստական համակարգի փլուզում) արևելքում ծնունդ տվեց մեկ այլ ձախակողմյան կուսակցության՝ ԴՍԿ-ին (Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություն), որն առաջին հերթին հանդիսացավ ԱԳՍՄԿ-ի (Արևելյան Գերմանիայի Սոցիալիստական միության կուսակցություն) ժառանգորդ կազմակերպությունը: Միաժամանակ կուսակցությունը միավորվեց ԱՍԱԱ՝ «Աշխատանքային և սոցիալական արդարության այլընտրանք»-ի հետ և ձևավորվեց որպես «Դի Լինկ» կամ «Զախ», և հիմնավորվեց Գերմանիայի արևմտյան մասերում:

Առայժմ անհնար է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում Դի Լինկը, քանի որ այն դեռևս փոփոխությունների փուլում է: Օրինակ, 2007թ. կուսակցությունը որոշեց ստեղծել հիմնական ծրագրային կետեր, բայց ոչ դասական կուսակցական ծրագիր:

Իր ծրագրային կետերում Դի Լինկը ևս առաջարկում է դեմոկրատական սոցիալիզմ:

«Ժողովրդավարությունը, ազատությունը, հավասարությունը, արդարությունը, ինտերնացիոնալիզմը և համերաշխությունը մեր հիմնարար արժեքների ուղեցույցն են: Դրանք անբաժան են խաղաղության, բնապահպանության և ազատության հարցերից: Դեմոկրատական սոցիալիզմի գաղափարը կազմում է Զախերի քաղաքական նպատակների ուղեցույցը: Դի Լինկի քաղաքական գործողությունները բխում են նպատակների, ուղղության և հիմնարար արժեքների ուղեցույցից: Ազատությունը և սոցիալական արդարությունը, ժողովրդավարությունը և սոցիալիզմը, մեկը մյուսի մաս են կազմում: Հավասարությունն առանց անհատի ազատության ավարտվում է անիրավունակությամբ և հպատակեցմամբ: Ազատությունն առանց հավասարության վերածվում է ազատության միայն հարուստների համար: Նրանք, ովքեր ճնշումների են ենթարկում մյուսներին, նույնպես անազատ են: Սոցիալ-դեմոկրատական համակարգի նպատակն է տրանսֆորմացիոն գործընթացների շնորհիվ հաղթահարել կապիտալիզմը և ստեղծել այնպիսի հասարակություն, որում մեկի ազատությունը ոչ թե սահմանափակում է մյուսի ազատությունը, այլ հանդիսանում է այդ ազատության անհրաժեշտ պայման»: (Դի Լինկ. «Հիմնական ծրագրային կետեր», 2007թ., 2):

Այս հիմնական ծրագրային կետերից զատ, կարելի է ներկայացնել մի քանի այլ կետեր ևս, որոնք օգնում են պատկերացում կազմել Դի Լինկի նպատակների և խնդիրների մասին.

- Դի Լինկը քաղաքական հետերոգեն մի շարժում է, որն իր շուրջ է համախմբել Գերմանիայի նախկին Սոցիալ-միացյալ կուսակցության (ԳՍՄԿ) ներկայացուցիչների, ինչպես նաև նախկին սոցիալ-դեմոկրատների, ովքեր որոշ պատճառներով հիասթափված էին իրենց կուսակցությունից, նոր սոցիալական շարժման ներկայացուցիչների, արհեստակցական միությունների, բողոքականների, պրագմատիկ տեղական քաղաքական գործիչների, կոմունիստների և այլոց: Այս խմբերն իրենց հետ կուսակցություն բերեցին հասարակության վերաբերյալ տարբեր գաղափարներ, որոնք դեռ չբացահայտված կոնցեպտուալ մոդելներ էին կամ տեսակետներ:
- Դի Լինկը հաճախ ներկայացվում է որպես դժգոհների, բողոքողների կուսակցություն: Այս որակավորումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ իր մեջ ներառում է երկու տարբեր ասպեկտներ: Առաջին հարցը վերաբերում է նրան, թե ովքե՞ր են Դի Լինկի ընտրողները: Գերմանիայի արևելյան և արևմտյան հատվածներում դրանք բավական տարբեր են: Երկրորդ խնդիրը վերաբերում է քաղաքական ռազմավարությանը և քաղաքական այն գործողություններին, որ ցանկանում են իրականացնել, և այստեղ ի հայտ են գալիս բավական տարբեր արդյունքներ՝ կապված ֆեդերալ պետության և ֆեդերալ կառավարության հետ:
- Որոշ գիտական հրատարակություններում Դի Լինկը որակվում է ոչ միայն որպես ծայրահեղ հետերոգեն, այլև ակնհայտ հակասական: Օրինակ՝ մի կողմից կուսակցությունը ներկայանում է որպես պրագմատիկ, չափավոր և արդիական, իսկ մյուս կողմից՝ այն գրեթե էքստրեմիստորեն հետևում է քրիստոնեական/օրթոդոքս գաղափարախոսությանը (cf. Decker et al. 2007: 327): Կուսակցությունը բավական պրագմատիկ քաղաքականություն վարող տարբեր մարզային կառավարությունների կազմում, հակասություններ դրսևորելով իր նպատակների իրագործման հարցում, հաճախ հակասում է իր իսկ հայտարարած նպատակներին: Սա նրա էտապայնության մասին ևս մեկ ապացույց է:

Քանի որ Դի Լինկի երևույթն արդեն գոյություն ունի, դեռ կարիք կզգացվի քննարկելու, թե ի՞նչ ձևով է այն վերջականապես հիմվելու: Համենայն դեպս, նրա քաղաքական գաղափարների շուրջ դեռ տեղի կունենան քաղաքական բանավեճեր:

3.4.6. Սոցիալ-դեմոկրատիայի հասկացությունը մարդկության վերաբերյալ

Տարբեր աղբյուրների միավորումը. «Սոցիալ-դեմոկրատիայի ըմբռնումը մարդկության վերաբերյալ»

Սոցիալ-դեմոկրատիայի՝ մարդկության մասին հասկացությունը անորոշ է: Այն վերցվել է տարբեր աղբյուրներից և բնութագրվում է որպես հիմնարար պլյուրալիզմ: Այն որոշակիորեն համալրվել է աշխատավորական շարժումներց, ազատական տեսություններից, քրիստոնեական և հրեական դոկտրիններից, առկա են նաև հումանիստական և մարքսիստական ազդեցությունները: Ինչպես և ազատականությունը, այն վկայակոչում է անհատի ազատությունը, բայց դրա հետ մեկտեղ մարքսիստական մոտեցմամբ քննության է առնում տարրական իրավունքների իրականացման ճանապարհին առկա սոցիալական խոչընդոտները: Իրենց *«Սոցիալ-դեմոկրատիայի ապագան»* գրքում Մեյերը և Բրեյերը փորձել են մարդկության վերաբերյալ ազատական (նոր ազատական) հասկացությունը տարբերակել սոցիալ-դեմոկրատիայի հասկացությունից: Ամփոփելով մարդկության վերաբերյալ սոցիալիստականհասկացությունը, ստորև ներկայացնում ենք հետևյալ աղյուսակը.

	Ազատական ժողովրդավարություն	Սոցիալ-դեմոկրատիա	Սոցիալիստական դեմոկրատիա
Մարդաբանություն	թերահավատ մարդաբանություն	իրատեսական մարդաբանություն	նորմատիվ ուտոպիստական մարդաբանություն
Ազատության վերաբերյալ հասկացություն	բացասական	դրական	դրական
Վարքային դրդապատճառներ	անձնական շահեր	անձնական և համայնքային շահեր	համայնքային շահեր որպես անձնական
Մարդկության վերաբերյալ հասկացություն	ռացիոնալ հաշվարկված էգոիզմ	կողմնորոշված է մերձեցման	կողմնորոշված է դեպի ռազմատենչություն և ապագայի «նոր մարդուն»

Աղբյուրը՝ Մեյեր/Բրեյեր, 2005թ., 33, Վերջին սյունակը վերցված է Գոմբերտից

Չնայած այս աղյուսակն էականորեն հեշտացնում է տարբերությունների ընկալումը, բայց միևնույն ժամանակ առաջ է բերում տարբերությունների նոր միտումներ.

- Ազատական տեսությունները, որպես կանոն, հիմված են այն համոզմունքի վրա, որ շարժում է մարդկանց «անձնական հետաքրքրությունը»: Այդ անձ-

նական հետաքրքրությունը կարող է իրականացվել, եթե ուղղված չէ այլոց կամ պետության դեմ՝ իրականացնելու ազատությունը նաև բոլորի համար:

- Սոցիալիստական տեսության վաղեմի ցանկությունն է կայացնել այնպիսի հասարակություն, որը պիտանի է մարդկանց համար «նոր մարդու» միջոցով (cf. Adler 1926 և Heinrichs 2002: 308– 14): Այս տեսակետից, մարդիկ պատմականորեն այնքան են այլախեղվել կապիտալիստական հասարակարգի կողմից և սոցիալական անհավասարությունից, որ հետին պլան են մղվել հասարակական շահերը որպես անձնական ընկալելու, միմյանց աջակցելու և համերաշխ լինելու կարողություն: Կրթությունը և դաստիարակությունը համատեղ կարող են հաղթահարել այս հասարակության մեջ առկա կյանքի պայմանների տարբերությունները և պահանջել մարդկության ազատ ու համերաշխ գոյություն:
- Սոցիալ-դեմոկրատիան, մարդաբանության վերաբերյալ Մեյերի և Բրեյերի առաջարկով, փորձում է հասնել հավասարակշռության՝ անձնական շահերի և ընդհանուր շահերի համապատասխանեցմամբ: Այլ կերպ ասած՝ գաղափարն այն է, որ հավասարակշռվեն օրինական շահերը:

Հետագա ընթերցանության համար.

Վոլտեր Էուչներ, Հելգա Գրեբինգ Geschichte der sozialen Ideen in Deutschland. Sozialismus – Katholische oziallehre – Protestantische Sozialethik. Ein Handbuch, երկրորդ հրատարակություն, Վիստբադեն, էջ 3-595

Թոմաս Մեյեր և Նիկոլ Բրեյեր, (2005թ.), Die Zukunft der Sozialen Demokratie, Բոնն

Դիեթեր Դով և Կուրթ Կլոթբախ (2004թ.), Programmatische Dokumente der Deutschen ozialdemokratie, չորրորդ վերանայված և համալրված հրատարակություն, Բոնն

4. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՄԱՍ ՄԵՅԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է սոցիալ-դեմոկրատիան. երեք պատասխան

Նախորդ գլուխներում քննարկված հիմնարար արժեքները և հասարակության բազմաթիվ մոդելների վերաբերյալ ունեցած մեր կարծիքը ցույց են տալիս, որ սոցիալ-դեմոկրատիան հիմնվում է գաղափարների ավանդույթի վրա: Սոցիալ-դեմոկրատիան էականորեն տարբերվում է այլ մոդելներից: Ավելի ստույգ՝ ազատության, հավասարության և համերաշխության վերաբերյալ հիմնարար արժեքները վկայակոչում է որպես արդար հասարակության հասնելու միջոց, և սահմանափակվում է ազատականությանը, պահպանողականությանն ու սոցիալիզմին արվող հղումներով:

Ներածության սկզբում խոսվել է *սոցիալ-դեմոկրատիայի տեսության* մասին: Ինչպես և նշվել է, որ սոցիալ-դեմոկրատիա հասկացությունը պետք է հստակորեն սահմանվի, եթե այն քննարկվելու կամ կիրառվելու է որպես փաստարկ:

Այս ենթատեքստում շարադրվել են սոցիալ-դեմոկրատիայի չորս հնարավոր հեռանկարներ: Այժմ հպանցիկ նշենք դրանցից երեքը.

1. «*Սոցիալ դեմոկրատիա. արդյոք սա ինքնապարզաբանման հարց է՞»: Այն* հասկացություն է, որ իր մեջ ներառում է հետևյալը՝ ժողովրդավարության անբաժանելի մաս, որը բխում է բոլորի շահերից և ենթադրում է սոցիալական հավասարություն: Արդյոք սա ակնհայտ է՞:
2. «*Սոցիալ-դեմոկրատիա. արդյոք Գերմանիայում այն արդեն չունե՞նք* շուկայական տնտեսության սոցիալական մոդելի տեսքով»:
3. «*Սոցիալ-դեմոկրատիա. այն պատկանում է միայն Գերմանիայի Սոցիալ- դեմոկրատական կուսակցությանը,* հետևաբար վերաբերում է միայն սոցիալ-դեմոկրատներին. դա նրանց տեսությունն է»:

Տեսության գործնական-քաղաքական կիրառման տեսանկյունից այս հարցերը արդարացիորեն պետք է քննարկվեն առաջին հերթին: Դրանք պետք է իրենց լուծումը ստանան, եթե սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը կիառվելու է քաղաքականության մեջ:

Առաջին հարցը՝ *«արդյոք սոցիալ-դեմոկրատիան ինքնապարզաբանման հարց է՞»*, արդեն գտել է իր պատասխանը: Պետք է մշակվի սոցիալ-դեմոկրատիայի հստակ բնութագրումը, քանի որ հասկացությունը առաջացնում է որոշ ասոցիացիաներ, որոնք կարող են հստակեցվել միայն միասնական տեսքով:

Անշուշտ այս հասկացությունն իր մեջ ներառում է էական նորմատիվ հիմքեր: Այլ կերպ ասած՝ սոցիալ-դեմոկրատիայի իրականացման նպատակով կարող են հղումներ կատարվել մի շարք նորմերի և կանոնների:

Հիմնական արժեքների քննարկումները ցույց տվեցին, որ մի շարք փիլիսոփայական փաստարկներ կարող են օգնել հստակեցնելու սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը, բայց դրանք բավարար չեն, որպեսզի կազմվի նորմատիվ հիմքը, քանի որ ներառված են բազմաթիվ, երբեմն իրար հակասող սահմանումներ: *Հետևաբար, սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը*, որպես սկզբնակետ, պահանջում է առավել հստակ նորմատիվային հիմք:

Երկրորդ հարցը. *«Սոցիալ-դեմոկրատիա, արդյոք մենք այն արդեն չունե՞նք շուկայական տնտեսության սոցիալական մոդելի տեսքով»:* Սա առավել մանրամասն կքննարկենք երկրի օրինակով (տես գլուխ 5): Վկայակոչելով գոյություն ունեցող տնտեսության և հասարակության մոդելների միջև գերիշխող լարվածությունը, արդեն նշվել է, որ միանգամից անհնար է հասնել սոցիալ-դեմոկրատիայի: Ավելին, գոյություն ունեցող հասարակության մոդելների բազում տարբերակների պայմաններում տարբեր շահագրգիռ խմբեր կցանկանային ուղղորդել հասարակությունը դեպի իրենց համար շահավետ ուղի: Եվ «գերմանական մոդելի» կամ «սոցիալական շուկայական տնտեսության» ցանկացած վկայակոչում բավարար չէ, քանի որ դրանք անուշադրության են մատնում բազում սոցիալ-քաղաքական շերտերի:

Երրորդ հարցը. *«Սոցիալ-դեմոկրատիա. այն պատկանում է միայն Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, հետևաբար վերաբերում է միայն սոցիալ-դեմոկրատներին»,* ընդհանրապես չի կարող համարվել իրավացի կամ ողջամիտ:

Սոցիալ-դեմոկրատիայի ընկալումը որպես կուսակցություն և քաղաքական ուղղություն լիովին բնական է, բայց ոչ սպառիչ:

«Ժամանակակից ընկալմամբ սոցիալ-դեմոկրատիան հանդիսանում է ժողովրդավարության տեսության հիմնական հասկացություն և անվանումս օգտագործվում է քաղաքական ծրագրի միտումները բնութագրելու համար: Չնայած օգտագործման այս երկու եղանակները տարբեր կերպ են փոխկապակցված, երկուսն էլ հղում են կատարում երկու տարբեր պահանջներ ունեցող հարաբերությունների: Սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը կապված չէ ոչ իր նորմատիվ հիմքերով, ոչ դրա իրականացման բացատրական դերով, ոչ էլ նույնիսկ իրականացման համեմատական քննարկումներով: Այն որոշակիացնելու համար քաղաքական առաջնորդները, ում տրված է իրականացնելու այն, պետք է դրա իրականացման յուրաքանչյուր քայլում դրսևորեն իրենց աջակցությունը ծրագրի գործնական իրականացմանը, որը բխում է սոցիալ-դեմոկրատիայի հիմքերից: Տարբեր քաղաքական գործիչներ սոցիալ-դեմոկրատիան կարող են օգտագործել որպես իրենց ծրագրերի պիտակ, եթե կարծում են, որ այն կծառայի իրենց շահերին, անկախ նրանից, թե իրենց քաղաքական նպատակները համընկնո՞ւմ են սոցիալ-դեմոկրատիայի տեսության հետ, թե՞ ոչ»: (Մեյեր, 2005թ., 12):

Սոցիալ-դեմոկրատիան որպես կոնցեպտուալ մոդել

Այսպիսով, սոցիալ-դեմոկրատիան որպես կոնցեպտուալ մոդել և սոցիալ-դեմոկրատիան որպես քաղաքական կուսակցություն կամ տենդենց, փոխհարաբերվում են տարբեր կետերում, բայց դրանք միևնույն հասկացությունը չեն: Որպես կոնցեպտուալ մոդել, սոցիալ-դեմոկրատիան պետք է իր առջև խնդիր ունենա մեթոդապես քննության առնելու նորմերը և արժեքները, դրանք տեղափոխելու հիմնական արժեքների դաշտ, դրանք իրականացնելու տարբեր երկրներում և ակնդետ հետևելու գործընթացին: Այլ հարց է՝ քաղաքական կուսակցությունն, արդյոք, պե՞տք է իր վրա վերցնի այս գաղափարների իրականացումը:

Ստորև քննարկենք սոցիալ-դեմոկրատիան որպես կոնցեպտուալ մոդել, որն իր զարգացումս ապրեց 1980-1990-ական թվականներին:

Որպես սկզբնակետ կկիրառենք սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը, որը ներկայացրել է Թոմաս Մեյերը, և որի շուրջ ընդհանուր առմամբ կան սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ բազում բանավեճեր:

.

4.1. Սկզբնակետ

Սոցիալ-դեմոկրատիայի տեսության վերաբերյալ Մեյերի ելակետը ժողովրդավարության և շուկայական կապիտալիզմի միջև փոխհարաբերությունների հարցն է:

Սկզբնական հարց. ո՞րն է սոցիալիզմի և շուկայական կապիտալիզմի կապը

Ե՛վ ժողովրդավարությունը, և՛ շուկայական կապիտալիզմը հանդիսանում են մեր հասարակության էական հատկանիշները, որոնք ձևավորվել են իրար դեմ որոշակի հակամարտության ընթացքում:

Նկար 7. Հարաբերությունները ժողովրդավարության և շուկայական կապիտալիզմի միջև

Մեյերը վստահեցնում էր, որ, չնայած հակասություններին, կապիտալիզմը և ժողովրդավարությունը նաև փոխլրացնում են միմյանց: Շուկայական կապիտալիզմը ինքնին հանդիսանում է ժողովրդավարության հասկացության ստեղծման և կայունացման աղբյուր, մյուս կողմից՝ փաստում է նրանց միջև առկա «ուշագրավ» լարվածությունը, քանի որ չկարգավորված շուկայում գոյություն չունեն հասարակական և քաղաքական գործընթացներին բոլորի մասնակցությունը ապահովող նախապայմաններ:

Գոյացման պայմաններ և անորոշության գործոն: Ո՞րն է ժողովրդավարության և շուկայական կապիտալիզմի կապը

Մեյերը տնտեսական համակարգի և ժողովրդավարության հարաբերությունը բնութագրում է այս երկու թեզերի տեսանկյունից. մի կողմից նա վերլուծում է ժողովրդավարություններում պատմականորեն առաջացած պայմանները, իսկ մյուս կողմից՝ փորձառրական հետաքննություն է կատարում ժողովրդավարության և շուկայական տնտեսության փոխգործակցության մասին այսօրվա հասարակություններում:

Այս երկու թեզերն առաջին հայացքից ակնհայտ չեն, նրանք առավել տեսական մակարդակում են, բայց և, ինչպես տեսնում եք, քաղաքականապես հակասական են: Ի՞նչն է Մեյերին ուղղորդել դիտարկելու այս թեզերը հակափաստարկների միջոցով:

4.1.1. Պատմական հիմնավորում

Պատմական փաստարկ

Առաջին հերթին գործ ունենք պատմական փաստերի հետ: Ըստ Մեյերի՝ պատմականորեն ժողովրդավարությունն ի հայտ եկավ Եվրոպայում ազատ շուկայի ի հայտ գալու հետ մեկտեղ կամ դրա շնորհիվ: Այն տարբեր ժամանակահատվածներում և տարբեր երկրներում ներկայացվել է բուրժուական հասարակության տեսքով:

«Բուրժուական հասարակություն նշանակում է այնպիսի տնտեսական, սոցիալական և քաղաքական մոդելների համադրություն, որոնք, հաղթահարելով աբսոլյուտիզմը, նաև սոցիալական ծագման առավելությունները և կղերական հովանավորությունը, թույլ են տալիս, որպեսզի իրականացվի անհատի ազատության իրավական կարգավորումը բոլորի համար, ինչը երաշխավորում է մարդկանց գոյակցությունը համապատասխան հիմունքներով, կազմակերպում է շուկայական տնտեսությունն իրավական կարգավորման մրցակցությամբ, երաշխավորում է մարդկանց կենսական պայմանների բարեփոխումները. իսկ այս երկուսն էլ սահմանափակում են պետության ուժը ազատական իրավական պետության տեսքով, որը հիմնված է օրենքի վրա և սանձված հետևյալ միջոցներով՝ հասարակական կարծիքով, քաղաքական մարմինների ընտրություններով, որոնք տեղի են ունենում քաղաքականապես հասուն անձանց կամքին համապատասխան»: (Կոկա, 1995թ., 23):

Ազատ շուկան, արտադրական բուրժուազիան և քաղաքացիական իրավունքների և ազատությունների գաղափարը, որ սահմանվում է պետության կողմից, իրենց զարգացումն են ապրել փոխադարձ կախման մեջ լինելով և պատմականորեն չեն կարող տարանջատվել:

4.1.2. Ժողովրդավարության համեմատական ուսումնասիրության հիմնավորում

Ժողովրդավարության կայունության հետազոտությունների հիմնավորում

Այնուամենայնիվ Մեյերի տեսությունը հիմնված է նաև փորձառական հետազոտությունների վրա, որոնք կատարվել են ժողովրդավարության կայունության ուսումնասիրության ուղղությամբ:

Տրանսֆորմացիոն հետազոտությունների փորձառական արդյունքները (առաջնային օբյեկտները եղել են նախկին Խորհրդային Միության պետությունները) ցույց են տալիս, որ ազատ շուկայական տնտեսությունները կարող են դրական, կայունացնող դեր ունենալ դեմոկրատիայի ստեղծման հարցում: Այնուամենայնիվ

կան նաև փորձառական տվյալներ, որ փաստում են հակառակը, մասնավորապես, երբ տնտեսական իշխանությունը ներգործում է քաղաքական ոլորտի վրա և քայքայվում է ժողովրդավարական կարգով մասնակցության իրավունքը՝ հօգուտ մենաշնորհների և վերնախավի: Սա տանում է դեպի կեղծ ժողովրդավարություն:

Սա ցույց է տալիս, որ սոցիալ-դեմոկրատական ցանկացած տեսություն պետք է դիտարկել ոչ միայն որպես պետության ֆորմալ ձևավորման կարգ, այլև այն պետք է քննարկել փորձառական կարգով. արդյոք տվյալ երկրում առկա՞ են դեմոկրատական կառույցներ, արդյոք իրականացվո՞ւմ են մարդկանց հիմնական իրավունքները:

Ընդհանուր առմամբ, Մեյերը վստահեցնում էր, որ շուկայական տնտեսությունը կարող է «օգնել» ժողովրդավարությանը:

Պետք է նշել, որ Մեյերը ժողովրդավարության և կապիտալիզմի միջև հարաբերությունները չէր համարում սովորական կամ ոչ քննադատելի հակասություն, որին մենք արդեն հանդիպել ենք: Այնուամենայնիվ ժամանակակից բանավեճերը պետք է հստակ սահմանազատվեն պատմական արմատներից:

«Ուշագրավ» լարվածություն ժողովրդավարության և կապիտալիզմի միջև

Ե՞րբ է շուկայական կապիտալիզմը կոնֆլիկտի մեջ մտնում համայնքի հետ

- Շուկայական կապիտալիզմը տանում է դեպի (տնտեսական) անհավասարություն:
- Նյութական ռեսուրսների անհավասար բաշխումը հանգեցնում է նաև ժողովրդավարական գործընթացների և հասարակական կյանքում մասնակցության հնարավորությունների անհավասար բաշխման:
- Շուկայական կապիտալիզմն առավելապես աշխատում է գլոբալ հիմքերի վրա, մինչդեռ ժողովրդավարական մասնակցությունը կատարվում է ազգային հիմքի վրա: Դրանով շուկայական կապիտալիզմն առանձին երկրներում վտանգում է ժողովրդավարական կառույցները:

Շուկայական կապիտալիզմն իր մեջ ունի կենտրոնախույս ուժեր, որոնք օժանդակում են անհավասարությանը և անվստահությանը, ինչը պոտենցիալ կերպով վտանգի տակ է դնում դեմոկրատական օրինականության հիմքերը և կայունությունը:

Որևէ կասկած չկա, որ ազատ շուկան և հասարակության ազատությունը հակասում են իրար:

Ըստ Մեյերի, ժողովրդավարությունը և շուկայական կապիտալիզմը գտնվում են փոխադարձ լարվածության մեջ:

Այդ լարվածությունը չի կարելի ուղղակի մերժել կամ անտեսել. պատմական և փորձառական հետազոտությունները ցույց են տվել, որ, միևնույն է, այն գոյություն ունի:

Հղում կատարելով ազատականության և ժողովրդավարության կոնցեպտուալ տարբեր մոդելների, կարող ենք ասել, որ ազատության պահանջից հրաժարումը, որը պատմականորեն կապված է ազատական ավանդույթների հետ, կլինի նույնքան ճակատագրական, որքան և դրա ընդունումը նոր-ազատական կառույցներում: Հետևաբար, առավելապես կարևոր է իրականության մեջ է՛լ ավելի փորձառու կերպով հետազոտել ազատականության և սոցիալ-դեմոկրատիայի միջև հարաբերությունները:

Այս կապակցությամբ Մեյերն իր տեսությունում տարբերակում է ազատական տեսության շրջանակներում զարգացած երկու «իդեալական» տեսակ՝ ազատակամություն (libertarianism) և սոցիալ-դեմոկրատիա:



Նկար 8. Դեմոկրատական տեսության պարադոքսը

4.2. Ազատակամությունն ընդդեմ սոցիալ-դեմոկրատիայի

Սոցիալ-դեմոկրատիայի տեսությունն ազատակամական դեմոկրատիայի տեսությունից տարբերվում է նորմատիվորեն, տեսականորեն և գործնականորեն: Այս երկու տեսությունների արմատներն էլ ազատական-դեմոկրատական են, քանի որ իրենց զարգացումն ապրել են 17-18-րդ՝ Լուսավորչական դարաշրջանում:

Ազատակամական և ազատական-դեմոկրատական հասկացությունները տարբեր գիտնականներ մեկնաբանում են յուրովի: Հարկ է ներկայացնել դրանց առավել հստակ սահմանումները՝ բանավեճերում քննարկելու համար:

Պետք է ընդգծել, որ ազատակամությունը և սոցիալ-դեմոկրատիան կատարյալ մոդել են, որոնք, սակայն, որևէ տեղ իրականացված չեն իրենց անաղարտ տեսքով: Փոխարենը՝ ազատակամությունը և սոցիալ-դեմոկրատիան որոշ չափով դիտվում են որպես տարբեր բևեռներ, որոնցում հասարակությունները դասակարգվում են ըստ իրենց սահմանադրությունների:

Նկար 9. Ազատակամական դեմոկրատիայի, ազատական-դեմոկրատիայի և սոցիալ-դեմոկրատիայի համեմատությունը

Ազատական դեմոկրատիա

- Ազատական դեմոկրատիայի արմատները ազատականության եվրոպական ավանդույթներից են գալիս (տես գլուխ 2.1.),
- ներառում է ժողովրդավարական պլյուրալիզմ՝ օրենքի գերակայության ներքո,
- հիմված է մարդու իրավունքների վրա:

Ազատակամական դեմոկրատիա

Ազատակամական դեմոկրատիան[17], որպես կատարյալ տիպային կոնցեպտուալ մոդել, բնութագրվում է որպես՝

- սեփականություն՝ առանց սոցիալական պարտավորությունների,
- ինքնակարգավորվող շուկա,
- քաղաքական ոլորտում դեմոկրատիայի սահմանափակում և դրա հիման վրա բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների տրամադրում (տես գլուխ 4.4.),
- մարդու իրավունքների ֆորմալ վավերականություն:

Սոցիալ-դեմոկրատիա

Ի տարբերություն դրա, սոցիալ-դեմոկրատիան բնութագրվում է որպես՝

- սոցիալական և տնտեսական իրականությունում հիմական իրավունքների առկայություն,
- հասարակության կերտվածք որն իրականացնում է այս հիմական իրավունքները (ինչպես պաշտոնական, այնպես էլ տեսական մակարդակներում),
- բացասական և դրական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ, որոնք գործնականում իրականացվում են և ունեն ֆորմալ վավերականություն:

Ովքե՞ր են համապատասխան դերակատարները

Ազատակամական և սոցիալ-դեմոկրատիայի կոնցեպտուալ տիպային կատարյալ մոդելների միջև Մեյերը կատարել է տեսական բաժանում, որը կարող է օրինակ ծառայել ինչպես անհատների, այնպես էլ կուսակցությունների իրական քաղաքական կարծիքների ձևավորման հարցում:

Դեմոկրատիայի և շուկայական կապիտալիզմի միջև գոյություն ունեցող լարվածությունը որևէ ամրագրված պահանջի շուրջ մոտեցումների տարբերություն չէ, այն ի հայտ է գալիս տարբեր սոցիալական սուբյեկտների միջև բանակցությունների արդյունքում: Այս երկուսի միջև ուժային հարաբերությունները երկրի ներսում ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխությունների ենթարկվել՝ նոր հարաբերություններ հաստատելով դեմոկրատիայի և շուկայական կապիտալիզմի միջև:

[17] Ակնհայտ է, որ «ազատակամությունը» կամ ազատակամական տիպը ընդհանուր առմամբ համընկնում է լիբերալիզմի հետ (տես վերևում): Մեյերն այս նոր կոնցեպցիան ներկայացնելիս փորձում էր ընդգծել, որ պատմական լիբերալիզմի հիմական գաղափարներն էականորեն տարբերվում են այս նոր լիբերալ ռեդուկցիոնիզմից: Այս դեպքում սոցիալ-դեմոկրատիայի և լիբերալիզմի միջև գոյություն ունի հնարավոր կապ:

Շուկայական կապիտալիզմի և դեմոկրատիայի միջև հաստատված լարված և բարդ հարաբերություններում և դրանց կառուցվածքներում որպես տարբերությունների օրինակ՝ համեմատենք Գերմանիայի Հիմնական օրենքը և ՄԱԿ-ի դաշնագրերը քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին (տես գլուխ 4,3): Այն ժամանակ, երբ 1949թ. ընդունված Հիմնական օրենքը, ունենալով նացիստական ռեժիմի անցյալ, հստակ հիմնավորում էր քաղաքացիական իրավունքները և ազատությունները, Ֆեդերատիվ Հանրապետությունում բուրժուաների կամ ավանդական միջին դասի և Ձախերի միջև ուժի բալանսը նշանակում էր, որ Հիմնական օրենքում քաղաքացիական իրավունքների և ազատությունների իրականացման հարցը դեռևս անորոշ է: Հետևաբար իրավական բանավեճերում Հիմնական օրենքը մեկնաբանվում էր տարբեր կերպ. իրավաբանների մի մասը գտնում էր, որ հիմնական իրավունքները սամանված են օրենքում և համարվում են ամենագլխավոր հարցերը, իսկ մյուս մասը՝ առավել քննադատող մեկնաբանները, գտնում էին, որ մասնավոր սեփականության հարցը դեռ հստակեցված չէ (Հավերկատե, 1992թ., տես նաև 4.3. գլխում զետեղված Հիմնական օրենքում ֆունդամենտալ իրավունքների և ՄԱԿ-ի դաշնագրերի համեմատական աղյուսակը):

Օրինակ. բանակցություններ Գերմանիայի հիմնական օրենքի շուրջ

1960-ական թվականների ՄԱԿ-ի դաշնագրերը, ի տարբերություն միջազգային հեռանկարների և այդ ժամանակաշրջանի սոցիալական զարգացումների, առավել զարգացրեցին բացասական և դրական քաղաքացիական իրավունքների և ազատությունների ձևակերպումները:

Համեմատություն ՄԱԿ-ի դաշնագրերի հետ

Ինչպես արդեն նշվել է, այս հարցին տարբեր տեսություններ տարբեր պատասխան են տալիս, երբ նշում են ժողովրդավարության և շուկայի միջև հարաբերությունները:

Առաջին հերթին, այսպես կոչված ազատակամության և *սոցիալ-դեմոկրատական տեսության* տարբեր տեսական միտումներ են նկատվում այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է ժողովրդավարությունը և շուկան հարաբերվեն՝ հաշվի առնելով դրանց համապատասխան բացատրությունները:

Այս երկու տեսական միտումներն էլ ունեն նույն արմատը՝ լիբերալիզմ, որն իր զարգացումն էր ապրել 17-րդ դարում:

Հարցի էությունն այն է, թե ինչպես է իրականացվում անհատի ազատությունը հասարակությունում: Այս հարցին կան բազմաթիվ պատասխաններ, որոնք գնահատելու համար անհրաժեշտ է առավել հստակ սահմանել «Քաղաքացիական իրավունքների և ազատությունների» կոնցեպցիան:

Որոշիչ հարց. ինչպե՞ս է իրականացվում ազատությունը հասարակությունում

Բացի այդ, մինչ ազատակամության և սոցիալ-դեմոկրատիայի քաղաքացիական իրավունքների և ազատությունների վերաբերյալ տարբեր սահմանումների քննարկումը, անհրաժեշտ է կատարել մեկ այլ կոնցեպտուալ հստակեցում և.ս. ինչո՞ւ ենք խոսում քաղաքացիական իրավունքների և ազատությունների մասին, այլ ոչ ուղղակի ազատության և հիմնարար արժեքների մասին:

4.3. Շեղում. հիմնական արժեքների, իրավունքների և իրականացման գործիքների երրորդությունը

Հիմնական արժեքների, իրավունքների և իրականացման գործիքների երրորդությունը

Արդեն նշել ենք, որ քաղաքական տեսությունները և փիլիսոփայությունն առաջարկում են հիմնարար արժեքների՝ ազատության, հավասարության և համերաշխության տարբեր հասկացություններ: Այդ իսկ պատճառով ի հայտ եկավ այսպես կոչված հիմնական պլյուրալիզմը, որը հանդիպում է տարբեր քաղաքական կոնցեպտուալ մոդելներում և միտումներում:

Հիմքերի այս բազմազանությունը խնդիր է առաջացնում այն ժամանակ, երբ փորձում ենք հանգել սպառիչ տեսության: Եթե այդ տեսությունն առնչվում է կոնկրետ որևէ ասպեկտի կամ հիմնական ճյուղի, կորցնում է կապը ընդհանրության հետ և, հետևաբար, կտրվում է նաև փիլիսոփայական, բարոյագիտական և կրոնական ավանդույթներից:

Ո՞ն է հնարավորինս բազմակողմանի փաստարկման հիմքը

Ըստ Թոմաս Մեյերի, պետք է ընտրել *սոցիալ-դեմոկրատական տեսության* հնարավորինս բազմակողմանի փաստարկման հիմքը: Այն պետք է լինի ոչ թե մշակութային յուրահատկությամբ օժտված մի բան, այլ նկարագրվի որպես ընդհանուր դեմոկրատիայի օրինական դաշտ:

Արդյունքում՝ հիմնարար արժեքները չեն օգտագործվում որպես փաստարկման հիմք, սակայն մշակութային յուրահատկությամբ դրանք փոփոխական են:

Երեք մակարդակ

Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերի ցանկացած շարադրում պետք է կատարվի մեկ այլ մակարդակից: Այլ կերպ ասած՝ կարելի է ընդգծել այդպիսի երեք մակարդակ.



Նկար 10. Հիմնարար արժեքների, հիմնական իրավունքների և գործիքների բառածանցումը

Հիմնարար արժեքներ

Հիմնարար արժեքների՝ ազատության, հավասարության և համերաշխության մակարդակում հստակ է անհատների և հասարակության միջև համագործակցությունը և հասարակական կյանքի կազմակերպման հարցը: Հասարակությունը, ինչպես արդեն նշել ենք, հիմնարար արժեքները սահմանում և արձանագրում է իր սոցիալ-քաղաքական և փիլիսոփայական մոտեցումների հիմքում:

Հիմնական իրավունքների մակարդակում հիմնարար արժեքները տեղափոխվում և վերածվում են սոցիալապես պարտադիր, դեմոկրատապես օրինականացված գործողությունների նորմերի: Ի տարբերություն հիմնարար արժեքների, դրանք հիմնական պլյուրալիզմի առարկա չեն, այլ հասարակությունում կարգավորում են գոյակցությունը՝ անկախ հասարակության սոցիալական հիմքերից:

Գործիքների մակարդակում սահմանվում են սոցիալական ինստիտուտներ, որոնց միջոցով պետությունը կամ նահանգների միությունը բավարարում է գործողությունների համար այն անհրաժեշտ պահանջները, որոնք ի հայտ են գալիս հիմնական իրավունքները տրամադրելիս: Ինչպես ցույց են տալիս տարբեր երկրների ուսումնասիրությունները, դրանք տարբեր երկրներում և տարբեր մշակութային պայմաններում էականորեն տարբեր են:

Եթե կարիք կա *սոցիալ-դեմոկրատիայի տեսության* համար ապահովել փաստարկման առավելագույն լայն հիմքեր, ապա որպես սկզբնակետ պետք է ընդունվեն հիմնական իրավունքները: Մեյերը որպես փաստարկման հիմք է ընտրել ՄԱԿ-ի դաշնագրերը քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքների վերաբերյալ: Կան մի շարք փաստարկներ հօգուտ Մեյերի մոտեցման:

- Հիմնական իրավունքների համար ՄԱԿ-ի դաշնագրերը ողջ աշխարհում համարվում են առավել միասնական և պարտադիր միջմշակութային և միջազ-

գային աղբյուր: ՄԱԿ-ի դաշնագրերը վավերացվել և որպես օրենք ընդունվել են ավելի քան 140 երկրներում:

- ՄԱԿ-ի դաշնագրերն ուղղված են միջազգային համագործակցության միջոցով սոցիալական զարգացմանն ու հիմնական իրավունքների տարածմանը: Այն երկրները, որոնք վավերացրել են այս դաշնագրերը, ձգտում են շարունակաբար բարելավել հիմնական իավունքների գործնական իրականացումը:
- ՄԱԿ-ի դաշնագրերն իրենց մեջ ներառում են իրավունքների առավելապես ընդարձակ և ճշգրիտ ձևակերպումներ, որոնց կարող է հավակնել ամեն ոք:

Վերջին փաստարկը լավագույնս կարելի է ներկայացնել՝ համեմատելով հիմնական իրավունքները Գերմանիայի Հիմնական օրենքում և ՄԱԿ-ի դաշնագրերում.

ՄԱԿ-ի դաշնագրերի և Հիմնական օրենքի համեմատություն

Կարգավորման ոլորտ	Հիմնական օրենք	ՄԱԿ-ի դաշնագրեր
Անհատական իրավունքներ	«Մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Պետության պարտականությունն է այն հարգել և պաշտպանել»: (Կետ 1)	«Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից»: (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիր, 6-րդ հոդված, 1-ին կետ) «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք»: (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիր, 9-րդ հոդված, 1-ին կետ)
Աշխատանքի իրավունք	«(1) Յուրաքանչյուր գերմանացի ազատ է իր մասնագիտությունը, աշխատանքը և ուսուցման վայրն ընտրելու հարցում: Աշխատանքի կամ մասնագիտության ձեռք բերման հետ կապված պրակտիկայի հարցը կարող է կարգավորվել օրենքով: (2) Որևէ մեկը չի կարող պարտավորված լինել կատարելու հատուկ տիպի որևէ աշխատանք, բացառությամբ այն աշխատանքների, որոնք հասարակական ծառայության ավանդական պարտավորություններ են և ընդունելի են ու հավասար բոլորի համար»: (Կետ 12)	«1. Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որը ներառում է յուրաքանչյուրի՝ ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնվում է, և կձեռնարկվեն այդ իրավունքի ապահովմանն ուղղված համապատասխան քայլեր: 2. Սույն դաշնագրի մասնակից պետության կողմից այս իրավունքի լիարժեք իրականացմանը հասնելու նպատակով ձեռնարկվող քայլերն ընդգրկում են տեխնիկական և մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ծրագրեր, տնտեսական, սոցիալական ու մշակութային անշեղ զարգացման և արտադրական լրիվ զբաղվածության ձեռք բերման ուղիներ ու մեթոդներ այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու քաղաքական և տնտեսական հիմնարար ազատությունները»: (Հոդված 6, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիր)

Կարգավորման ոլորտ	Հիմնական օրենք	ՄԱԿ-ի դաշնագրեր
Սեփականություն. կյանքի չափանիշներ	«(1) Սեփականությունը և ժառանգման իրավունքը պետք է երաշխավորվեն: Դրանց բովանդակությունը և սահմանափակումները ևս պետք է օրենքով սահմանված լինեն: (2) Սեփականության առկայությունն իր մեջ ներառում է նաև պարտավորություններ: Դրա օգտագործումը հասարակությանը ևս պետք է օգուտ բերի»: (Կետ 14)	«Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ իր և ընտանիքի համար բավարար կենսապայման, համարժեք սնունդ, հագնվելու և բնակարան ունենալու իրավունքը և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները կձեռնարկեն պատշաճ միջոցներ՝ այս իրավունքի իրականացումն ապահովելու համար՝ ընդունելով ազատ կամքի արտահայտության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը»: (Հոդված 11, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիր)
Կրթություն	«(1) Յուրաքանչյուր ոք ունի անհատականության ազատ զարգացման իրավունք այնքան ժամանակ, քանի դեռ չի խախտել այլոց իրավունքները և սահմանադրական կարգը կամ բարոյական օրենքը»: (Կետ 2) «(1) դպրոցական ընդհանուր կրթական համակարգը պետք է վերահսկվի պետության կողմից: (2) Ծնողները և խնամակալներն իրավունք ունեն որոշելու, թե իրենց երեխաները ստանա՞ն կրոնի վերաբերյալ կրթություն, թե՞ ոչ»: (կետ 7)	«1. Սույն դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Նրանք միակարծիք են, որ կրթությունը պետք է ուղղված լինի անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հանդեպ, ինչպես նաև պնդում են, որ կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալու ազատ հասարակության կազմավորմանը, նպաստելու բոլոր ազգերի և ռասայական, էթնիկ կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխզիջմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, և աջակցելու խաղաղության պահպանմանն ուղղված Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը: 2. Սույն դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով. ա/ տարրական կրթությունը պարտադիր է և անվճար բոլորի համար […] գ/ բարձրագույն կրթությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, հավասարապես մատչելի է բոլորին՝ համապատասխան միջոցներով, մասնավորապես առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով […]»: (Հոդված 13, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիր)

ՄԱԿ-ի երկու դաշնագրերը տրամադրում են մանրակրկիտ և նուրբ վերլուծություն այն մասին, թե ինչպես պետք է իրագործվեն հիմնական իրավունքները միջազգային համագործակցության միջոցով: Տնտեսական, սոցիալական և մշակութային

իրավունքների վերաբերյալ դաշնագրերը փաստում են.

«1. Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ռեսուրսների սահմաններում, անհատական և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, մասնավորապես տնտեսական և տեխնիկական բնագավառներում, մասնավորապես օրենսդրական միջոցներով ձեռնարկել միջոցներ՝ առաջադիմորեն հասնելու Դաշնագրում ներկայացված իրավունքների լիարժեք իրականացմանը»: (Հոդված 2, կետ 1)

ՄԱԿ-ի դաշնագրերի զարգացման հեռանկարները

ՄԱԿ-ի դաշնագրերում ամրագրված այս դրույթների զարգացման հեռանկարը հանդիսանում է պետությունների պարտավորությունը զարգացնելու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները բոլոր հնարավոր եղանակներով. այդ հեռանկարը հիմնավորված է հիմնական քաղաքական իրավունքներում: Սա հանգեցնում է ակտիվ պետության մոդելի:

Այնուամենայնիվ պետությունը, որը ոչ միայն ակտիվ միջամտում և տրամադրում է այդ հիմնական իրավունքները, այլև իր գործողություններով սահմանում է դրանք, կոնֆլիկտի մեջ է մտնում դեմոկրատիայի ազատակամական հասկացության հետ:

ՄԱԿ-ի դաշնագրեր, որոնք խախտվում էին ողջ աշխարհում, քանի որ բավարար չեն դրանց իրականացման միջոցները

Այնուամենայնիվ պետք է գործել զգուշորեն, քանի որ աշխարհի շատ երկրներում հիմնական իրավունքների իրականացումն անկանոն է: Օրինական իրավունքների և դրանց իրականացման միջև կա մեծ անդունդ: Այդ իմաստով ՄԱԿ-ի կոնվենցիաների արժեքի վերաբերյալ քննադատական հարցերը լիովին հասկանալի են: Հաստատակամ միջազգային հաստատությունների քանակը բավարար չէ:

Հարկ է նշել, որ հիմնական օրենքի համեմատ ՄԱԿ-ի դաշնագրերը հիմնական իրավունքները ձևակերպում են առավել հստակ, ինչը կարող է ապահովել սոցիալ-դեմոկրատիան իր պահանջների հիմքով:

Հիմնական օրենքի 20-րդ հոդվածում նշվում է, որ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը համարվում է դեմոկրատական և սոցիալ-ֆեդերատիվ հանրապետություն: Այնուամենայնիվ ՄԱԿ-ի դաշնագրերով ստանձնած այն պարտավորությունները, որ ունեն մասնակից երկրները, կատարման տեսանկյունից զգալիորեն սահմանափակ են: Բանավեճերն այն հարցի շուրջ, թե ակտիվ պետությունները ինչպես պետք է իրենց դրսևորեն, պարզաբանվում է հիմնական իրավունքների առավել մանրակրկիտ քննության ժամանակ: Ակնհայտ է դառնում նաև, որ հետևողական ազատակամությունը հակասում է ինքն իրեն:

4.4. Դրական և բացասական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ

Իսայա Բերլինը իր 1958թ. *«Ազատության երկու կոնցեպցիա»* գրքում տարբերակում է քաղաքացիական իրավունքների և ազատությունների երկու տեսակ.

- բացասական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ (օրինակ՝ մարմնական փսասվածքներից ազատ լինելու իրավունքը), որոնք երաշխավորում են պետության և հասարակության կողմից ոտնձգություններից,
- դրական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ (օրինակ՝ կրթության իրավունքը), որոնք միտված են հասարակության և պետության ձեռնարկած քայլերով խթանելու և նպաստելու անհատի ազատությանը:

Դրական և բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների սահմանումը

Ազատական դեմոկրատիան առաջին հերթին սահմանվում է հասարակության յուրաքանչյուր անդամին վերաբերող քաղաքացիական իրավունքների և ազատությունների տեսանկյունից: Ըստ Իսայա Բերլինի, տարբերություն կարելի է սահմանել բացասական (ֆորմալ և պաշտպանական) և դրական (սոցիալապես ապահով) քաղաքացիական իրավունքների և ազատությունների միջև:

Ազատակամական և սոցիալ-դեմոկրատական մոտեցումներում բացասական և դրական քաղաքացիական իրավունքների և ազատությունների հարցում գոյություն ունի հարաբերական կարևորության էական տարբերություն:

Մեյերի *սոցիալ-դեմոկրատիայի տեսությունում* այն հանդիսանում է հիմնական սկզբնակետ, որն օգնում է առավել հստակ ներկայացնելու քաղաքացիական իրավունքների և ազատությունների բանավեճերը: Ինչպես արդեն ընդգծել ենք, պետք է սկսենք կատարյալ տեսակի վերաբերյալ փիլիսոփայական քննարկմամբ, անկախ նրանից, թե այդ կատարյալ տեսակը գոյություն ունի՞ որևէ երկրում, թե՞ ոչ (դրանք, իհարկե, որևէ տեղ գոյություն չունեն իրենց անաղարտ ձևով):

Փիլիսոփայական փաստարկի տեսակետից ազատակամական դեմոկրատիան սոցիալ-դեմոկրատիայից տարբերվում է հետևյալով.

Ազատակամական թեզ

Ազատակամական թեզ

Դրական քաղաքացիական իրավունքների և ազատությունների շնորհումը սահմանափակում և վերացնում է բացասական քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները: Բացասական քաղաքացիական իրավունքները և ազատություններն ունեն բացարձակ առաջնահերթություն. սա է Բերլինի թեզի համա-

ռոտ էությունը, որն այսօր ևս ներկայացվում է բազում նոր ազատակամների կողմից:

Սոցիալ-դեմոկրատական տեսության թեզը

Սոցիալ-դեմոկրատական տեսության թեզ

Բացասական և դրական քաղաքացիական իրավունքները և ազատությունները պետք է համարվեն հավասար, եթե դրանք օրինական են և իրականացվում են *բոլորի* համար:



Նկար 11. Բացասական և դրական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ

Սոցիալ-դեմոկրատական և ազատակամական տեսակետների այս տարբերությունը ստիպում է առավել ուշադիր քննել, թե դրական և բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները ինչպես են կապված միմյանց հետ:

Մեյերը տրամաբանական հիմքերով հերքում է ազատակամական փաստարկները:

Ազատակամություն. բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների բացարձակ առաջնայնություն

Ազատակամական փաստարկները բացասական քաղաքացիական իրավունքներին ու ազատություններին բացարձակ առաջնահերթություն են տալիս դրական քաղաքացիական իրավունքների ու ազատությունների նկատմամբ, մինչդեռ *սոցիալ-դեմոկրատական տեսությունը* պնդում է հավասար հիմքերով տրամաբանական և դինամիկ հարաբերություններ այս երկուսի միջև:

Սոցիալ-դեմոկրատական տեսությունն այստեղ հերքում է ազատակամական տեսությունը՝ ապացուցելով դրական և բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների միջև կապը:

Մեյերի փաստարկները հիմնվում են այսպես կոչված չորս քայլ ներառող ապացույցի վրա. նա սկսում է այն ենթադրությունից, որ բացասական քաղաքացիական իրավունքները և ազատություններն իրական են և պետք է գործածվեն ամենուրեք՝ ազատակամական փաստարկներում ևս, և այն, ինչ հարկավոր է այս նպատակի համար, բացասական իրավունքների և ազատությունների առկայությունն է և դրանց բացարձակ առաջնությունը:

Նախադրյալներ

Ազատակամական թեզը հերքվում է այն դեպքում, երբ համապատասխան հանգամանքների պայմաններում անհատը չի կարողանում կիրառել իր բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները, իսկ դրական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ չեն տրամադրվում:

Երբ է հերքվում ազատակամական թեզը

Նման հանգամանքներից է, օրինակ, երբ անձը, որ չունի ֆորմալ գործող և արդյունավետ դրական քաղաքացիական իրավունքներ կամ ազատություններ կրթության ոլորտում, հնարավորություն չունի օգտվելու այն ենթակառուցվածքներից, որոնք գոյություն ունեն հասարակական կյանքին մասնակցելու համար: Նա չի կարող ստանալ այնպիսի կրթություն, որ իրեն է հարկավոր, ունակ չէ օգտագործելու իր բացասական իրավունքները կամ արտահայտելու իր ազատության իրավունքը: Եվ այդ բացասական իրավունքներն ու ազատությունները չունեն որևէ արժեք:

Հերքումը օրինակի միջոցով

Եթե բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները պետք է լինեն ավելի քան ֆորմալ գործող և արդյունավետ բոլորի համար, ապա դրական քաղաքացիական իրավունքները և ազատությունները պետք է շնորհվեն: Սա նշանակում է, որ ունևորները պետք է ընդունեն սոցիալական վերաբաշխումը: Իսկ այս հանգամանքը համարվում է սեփականության հարցում բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների փոքրիկ խախտում:

Եզրակացություն. դրական և բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների փոխհամագործակցություն

Եթե դիտարկենք տրամաբանական տեսանկյունից, բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները չպետք է ունենան բացարձակ առավելություն: Բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները չեն կարող գործել և լինել արդյունավետ բոլորի համար, եթե ամրագրված չեն դրական քաղաքացիական իրավունքներով և ազատություններով:

Բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները կարող են լինել արդյունավետ միայն այն դեպքում, երբ երաշխավորվում են դրական քաղաքացիական իրավունքները և ազատությունները: Ֆորմալ քաղաքացիական իրա-

վունքները և ազատությունները չեն կարող լինել օգտակար, եթե դրանք չեն կարող իրականացվել յուրաքանչյուրի կողմից:

Առանց ունեցվածքի սոցիալական վերաբաշխման, որը հիմնականում կազմակերպվում է պետության կողմից, քաղաքացիական իրավունքները և ազատությունները չեն կարող իրագործվել բոլորի համար: Մեյերն իր տեսությունը եզրափակում է նրանով, որ բացասական և դրական քաղաքացիական իրավունքների և ազատությունների միջև հավասարակշռության կարելի է հասնել միայն պետության կողմից դրանց համաձայնեցման և իրականացման շնորհիվ:

4.5.Պետության պարտականությունները

Բոլոր դրական և բացասական քաղաքացիական իրավունքների և ազատությունների իրականացումը պետության պարտականությունն է: Ի տարբերություն ազատակամական պետության, որտեղ հիմնական իրավունքներն ուղղակի սահմանվում են, դրանց իրականացումը թողնելով շուկային, վստահեցնելով, որ յուրաքանչյուրի համար իրական արդյունավետ հիմնական իրավունքների իրականացումը թողնվում է պետության վրա: Այս կերպ գործունեության համար պետությանը վերապահվում է ակտիվ դեր և պարտականություններ:

Կարևորագույն պարտականությունները

- Ապահովել անհրաժեշտ ենթակառույցներ և ընդհանուր շահերը ներկայացնող ու բոլորին հասանելի ծառայություններ, տրամադրել երաշխիքներ և ընդլայնել հնարավորությունները:
- Սոցիալական վերաբաշխման միջոցով ստեղծել պայմաններ, որոնք քաղաքացիներին հնարավորություն կտան ակտիվ և անկախ մասնակցելու հասարակական կյանքին և դեմոկրատիայի կերտման գործընթացներին:
- Կազմավորել շուկայական տնտեսություն, որ ժողովրդավարական կառույցները և աշխատավորների իրավունքները լինեն պաշտպանված և ազատորեն ներկայացված:

Անհրաժեշտ գործիքներ

Պետության համար այս պահանջների իրականացման նպատակով օգտագործվող գործիքները տարբեր երկրներում տարբեր են: Այն կարելի է ներկայացնել հետևյալ պարզ օրինակով.

Գերմանիայում սոցիալական ապահովության համակարգը զարգացել է 1890-ականներից: Այն մեծ դեր է ունեցել մարդկանց բարեկեցիկ կյանքով ապրե-

լու գործում: Միաժամանակ այն արմատավորվել է շնորհիվ աշխատավորների համերաշխության և ապահովել կառավարության՝ որպես կազմակերպչի հավատարմություն նոր զարգացվող պետության հանդեպ:

Այլ երկրներում, օրինակ Սկանդինավներում, գոյություն ունի հարկերի վրա հիմնված սոցիալական համակարգ: Այստեղ ևս, ինչպես կարելի է նկատել երկրների համեմատական ուսումնասիրությունից (տես գլուխ 5), տրամադրվում են ընդհանուր շահերը ներկայացնող ծառայություններ, իսկ անհատի պահանջները պետության հանդեպ բավարարված են: Այնուամենայնիվ համակարգերի համեմատությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն չնչին տարբերություններ այն հարցի շուրջ, թե ինչքանով են իրականացվում բացասական և դրական քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:

Տարբեր միջոցներ

Գործելու պարտականությունը, որը բխում է քաղաքացիական իրավունքներից և ազատություններից, որոշ չափով բավարարվում է կազմակերպման երկու տարբերակներով:

Քաղաքացիական իրավունքների և ազատությունների իրականացման հարցը միայն հատուկ գործիքներով չի որոշվում, չնայած դրանք ևս պետք է քննարկվեն: Սոցիալ-դեմոկրատիան բազմակողմանի կոնցեպտուալ մոդել է, որը չի սահմանափակվում մարդու իրավունքների ֆորմալ իրականացմամբ: Այն նաև չի հանդիսանում միայն փիլիսոփայական հիմք, որը հեռու է իրականությունից: Ավելի շուտ սա բաց մոդել է, որը պետք է համոզիչ լինի մարդկանց համար՝ ընտրելով քաղաքական գործունեության համար այնպիսի ուղեցույց, որը ամենատարբեր միջոցներով կիրականացնի նրանց քաղաքացիական իրավունքները և ազատությունները: Այն նաև պետք է հնարավոր դարձնի հիմնարար արժեքների՝ ազատության, հավասարության/ արդարության և համերաշխության իրականացումը:

Սոցիալ-դեմոկրատիան տեսական քմահաճույք չէ, այլ ընդհանուր մարտահրավեր և գործնական խնդիր:

5. ԵՐԿՐՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐ

Ի՞նչ պետք է արվի. իրականացման տարբեր մոդելներ

Պետությունը կարող է հիմնական իրավունքներից բխող իր պարտականություններն իրականացնելու համար ընտրել տարբեր գործիքներ:

Այս կոնտեքստում սոցիալ-դեմոկրատիան չի կարելի սահմանել որպես արդեն գոյություն ունեցող ձևանմուշ. այն տարբեր երկրներում տարբեր է՝ ելնելով տվյալ երկրի հիմքերից: Քանի որ սոցիալ-դեմոկրատիան չի սահմանափակվում քաղաքացիական իրավունքների և ազատությունների ֆորմալ իրականացմամբ, այն պետք է քննարկվի յուրաքանչյուր երկրի սոցիալ-դեմոկրատական զարգացման տեսակետից, այսինքն՝ արդյոք այդ երկիրն արդեն ընտրե՞լ է սոցիալ-դեմոկրատիան որպես զարգացման հիմք, թե՞ դեռ ձգտում է հասնել դրան:

Թոմաս Մեյերը և իր համախոհները համեմատում են տարբեր երկրների փորձառական տվյալները՝ ի տարբերություն դեմոկրատական այլ տեսությունների, որոնք զուրկ են նման համեմատություններից:

Հինգ օրինակ

Այստեղ ներկայացված է սոցիալ-դեմոկրատիայի տարբեր աստիճանների 5 օրինակ.

- ԱՄՆ. հաշվի առնելով նրա հիմնական յուրահատկությունները, գրեթե ազատակամական պետություն է և ունի սոցիալ-դեմոկրատիայի իրականացման ընդամենը մի քանի տարր:
- Մեծ Բրիտանիա. համարվում է ոչ ներառական սոցիալ-դեմոկրատիա:
- Գերմանիա. չափավոր ներառական սոցիալ-դեմոկրատիա:
- Ճապոնիա. չնայած այլ հարցերում անհամեմատելի է արևմտյան երկրների հետ, այդուհանդերձ ունի չափավոր ներառական սոցիալ-դեմոկրատիա:
- Շվեդիա. ունի ամենաբարձր ներառական սոցիալ-դեմոկրատիա:

Երկրների օրինակներն այստեղ ներկայացված են հակիրճ: Երկրների համեմատություններին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս Մեյերի «Տեսության» 2-րդ հատորը (Մեյեր, 2006թ.):

5.1. ԱՄՆ

Ջուլիա Բլասիուս

Ազատություն և սոցիալական անհավասարություն

Շատերի համար Ամերիկայի Միացյալ Նահանգները համարվում է ազատ և միևնույն ժամանակ սոցիալապես անհավասար և ոչ ներառական երկիր: Բայց ի՞նչ է թաքնված այս ասոցիացիաների հետևում և ո՞րն է դրա պատճառը: ԱՄՆ-ը անկասկած մի երկիր է, ուր տարբեր ոլորտներում անհատական իրավունքներն առավել վեր են, և արդյունքում հասարակությունը ավանդաբար թերահավատ է ցանկացած կենտրոնացված հզոր կառավարության հանդեպ: Պատճառներից մեկն էլ վաղ ժողովրդավարացման գործընթացների և քաղաքական մշակույթի համընթաց զարգացումն է: Սա նաև իր ազդեցությունն է ունենում քաղաքական գործիչների և քաղաքական համակարգի վրա, և կախված է այն բանից, թե ինչպես են հիմնական իրավունքները շփման մեջ մտնում բարեկեցիկ պետության բնութագրի հետ:

ԱՄՆ-ը առաջին արդի ժողովրդավարական պետություններից է, որը նպաստել է հասարակության մեջ հզոր պետականության ոգու ձևավորմանը: Սահմանադրությունում ընդհանուր ընտրական իրավունքը սահմանվել է դեռ 1789թ.: Այն ժամանակ, երբ Եվրոպայում ժողովրդավարությունը հաջորդեց միապետությանը և արդյունքում ունեցավ կենտրոնացված պետական կառույցներ, որոնք արդեն իսկ կազմավորված էին երկար տարիների ընթացքում, Ամերիկայում, կարելի է ասել, ժողովրդավարությունը ի հայտ եկավ Ամերիկայի՝ որպես պետության Անկախության համար պատերազմի ավարտից անմիջապես հետո: Պետության և քաղաքական մշակույթի այսպիսի ընկալումը մնացել է մինչ օրս: Հասարակությունը առաջնություն է տալիս անհատական իրավունքներին և նախընտրում է պետության պասիվություն: Արդյունքում սոցիալական անհավասարությունն ընդունվում է որպես մարդկային գոյակցության բնականոն ընթացք:

Ազատությունը որպես գործունեության բարձրագույն առավելություն

Քաղաքական մշակույթը ևս հստակ բնութագրվում է ազատականությամբ, որը կարևորում է անհատի ազատությունը: Ի տարբերություն Եվրոպայի, ազատականությունը ԱՄՆ-ում չի ենթարկվել փորձությունների այլ տենդենցների կողմից, ինչպիսիք են պահպանողականությունը և սոցիալիզմը, և արդյունքում այն հնարավորություն է ստացել հռչակվելու որպես գերակա սկզբունք՝ չունենալով որևէ այլընտրանք: Այսօր էլ ամերիկյան հասարակությունում ազատությունն ամենագլխավոր ձեռքբերումն է:

Ելնելով դրանից, կառավարությունը շատ քիչ հնարավորություններ ունի և առանձնապես հակված էլ չէ ազդելու տնտեսության վրա և համագործակցելու աշխատավոր

դասի հետ: Արհեստակցական միությունները թույլ են կազմակերպված և չնչին դեր են խաղում, ինչի արդյունքում աշխատանքային պայմանագրերը և աշխատավարձի մասին բանակցությունները կատարվում են անկախ և անհատական ձևով: Այս առումով ԱՄՆ-ը հանդիսանում է պլյուրալիստական ժողովրդավարության տիպիկ օրինակ: Մասնավոր շահերը կարող են ունենալ էական ազդեցություն, հատկապես երբ լավ են կազմակերպված և ֆինանսապես հզոր են: Նույնիսկ լայն խավեր ներգրավող շահերը, որոնք լավ չեն կազմակերպված, չունեն որևէ ազդեցություն: Այն արտահայտվում է առանձին լոբբիստական խմբերի և բիզնես ասոցիացիաների ձևով, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների չնչին ազդեցությամբ:

Գործնականում ի՞նչ է սա նշանակում

Ինչպե՞ս են իրենց դրսևորում այս փաստերը քաղաքական համակարգում և ամերիկյան սոցիալական պետության կազմավորման հարցում: Հիմնական իրավունքների հասկացության ինչպիսի՞ ընկալում է ընկած դրա հիմքում:

Քաղաքական համակարգ

Կառավարման նախագահական համակարգ

ԱՄՆ-ում գործում է կառավարման նախագահական համակարգ, որն ունի երկշերտ կառուցվածք՝ գործադիր և օրենսդիր մարմիններ: Գործադիր իշխանությունը ենթարկվում է նախագահին, որը միևնույն ժամանակ նաև պետության ղեկավարն է: Իշխանության օրենսդիր մարմինը կազմված է Ներկայացուցիչների պալատից և Սենատից, որոնք էլ կազմավորում են Կոնգրեսը: Իշխանության օրենսդիր և գործադիր մարմինները գործում են իրարից անկախ, սակայն փոխկապակցված: Այս «հավասարակշիռ և զսպող» սկզբունքը համապատասխանում է քաղաքական փիլիսոփաներ Մոնտեսքյոյի և Լոքի տեսակետներին և նախատեսված է կանխելու ուժի չարաշահումը: Այս համակարգի նպատակն է պաշտպանել քաղաքացիների անձնական ազատությունը անհիմն ուժի կիրառումից:

Կուսակցությունները որպես ընտրարշավների կազմակերպիչներ

Ավանդաբար ԱՄՆ-ում քաղաքական կուսակցությունները մեծ ազդեցություն չունեն և կուսակցական մրցակցությունն էական դեր չի խաղում: Կուսակցությունների հիմնական գործունեությունը թեկնածուների համար ընտրարշավների կազմակերպումն ու հաջող անցկացումն է: Կուսակցությունները կառավարական որևէ ծրագիր չեն ներկայացնում: Կոնգրեսում նրանք չնչին դեր են խաղում, քանի որ նախ՝ պետք չունեն սատարելու կառավարությանը, և երկրորդ՝ քվեարկում են ելնելով ավելի շուտ անձնական, քան գաղափարական շահերից:

«Կյանք, ազատություն և երջանկության ձգտում»

Սահմանադրությունը և հիմնական իրավունքների համակարգը

ԱՄՆ-ի 1789թ. Սահմանադրությունը սկսվում է հետևյալով. «Կյանք, ազատություն և երջանկության ձգտում»: Այն սահմանում է ֆեդերալ հանրապետություն՝

կառավարման նախագահական համակարգով և ամենահին հանրապետական սահմանադրությունն է, որ գործում է մինչ օրս: Այն ներառում էր համընդհանուր ընտրական իրավունքը, սակայն միայն սպիտակամորթները, ովքեր սեփականատեր էին, կարող էին օգտագործել իրենց ընտրելու իրավունքը:

Ավելին, Իրավունքների օրենքը (Bill of Rights), որ իր մեջ է ներառում Սահմանադրության առաջին 10 կետերի փոփոխությունները, երաշխավորում է Ամերիկայի քաղաքացիների անօտարելի իրավունքները: Դրանք հաճախ անվանվում են հիմնական իրավունքներ և կոչված են անհատներին պաշտպանելու պետության ոտնձգություններից: Սահմանադրության առավելությունը կայանում է նրանում, որ այն պարտադրում է իրականացնել այդ իրավունքները յուրաքանչյուրի հանդեպ:

Բացասականն առանց դրականի. քաղաքացիական իրավունքներ և ազատություններ

Այսպես կոչված քաղաքական հիմնական իրավունքները սահմանում են մինչ օրս ամերիկյան հասարակության հիմնական իրավունքների վերաբերյալ ըմբռնումը: Սակայն այսպես կոչված քաղաքացիների հիմնական իրավունքները կամ բացասական քաղաքացիական իրավունքները և ազատությունները սահմանափակվեցին 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո, երբ սկսեցին միջոցներ ձեռնարկվել ահաբեկչության դեմ պայքարի համար: Սակայն գոյություն ունեն բացթողումներ նաև տնտեսության և սոցիալական իրավունքների, այսինքն՝ դրական քաղաքացիական իրավունքների և ազատությունների հարցում: Դրանք նշված չեն Սահմանադրությունում, ոչ էլ ԱՄՆ-ը ստորագրել է որևէ միջազգային փաստաթուղթ, որը նախատեսում է նման իրավունքներ: Սոցիալական պետության տեսլականը նույնպես ամրագրված չէ Սահմանադրությունում: Դրա հետևանքով քաղաքացիները իրավունք ունեն օգտվելու սոցիալական բարիքներից միայն այն դեպքում, երբ ապահովագրված են կամ աղքատության մեջ են: Այնուամենայնիվ, կարիքավորները երաշխավորված չեն ստանալու այդ իրավունքները, քանի որ Կոնգրեսը ցանկացած պահի կարող է քվեարկել և հրաժարվել այդ գումարները տրամադրելուց:

Քաղաքական տնտեսություն

Անհամաձայնեցված շուկայական տնտեսություն

ԱՄՆ-ը կարող է բնութագրվել որպես ազատական կամ, այլ կերպ ասած, չհամակարգված շուկայական տնտեսությամբ երկիր: Դա նշանակում է, որ ձեռնարկություններն ազատ մրցակցության մեջ են և կառավարության ու սոցիալական մարմինների հետ համագործակցությունն ու համակարգումը չնչին է: Տնտեսությունը ԱՄՆ-ում հիմնականում ուղղված է եկամտի ավելացմանը և ընդլայնմանը: Որոշ ոլորտներ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և զենքի արտադրությունը, ազատված են այդ բացարձակ մրցակցության մեխանիզմից:

Վերջին տարիներին շատ ավելի անդամներ են դուրս գալիս արհեստակցական և աշխատավորական միությունների շարքերից, քանի որ նրանք որևէ ազդեցություն չունեն աշխատավարձերի հաստատման և աշխատանքային պայմաններին վերաբերող հարցերում: Աշխատավարձի շուրջ բանակցություններն ԱՄՆ-ում տեղի են ունենում հաստատության մակարդակում և աշխատավորների պաշտպանության համակարգը դեռևս թույլ է: Սա ճկունություն է ընձեռում տնտեսությանը. մարդիկ շատ արագ կարող են ընդունվել աշխատանքի և միևնույն ժամանակ արագ էլ ազատվել: Ուսուցման համակարգն ուղղված է աշխատավորներին տալու բազում հնարավոր ունակություններ և հմտություններ:

Ուղղվածությունը դեպի բաժնետիրական արժեք

ԱՄՆ-ում ֆինանսական համակարգը նույնպես ճկուն է: Ձեռնարկությունները որպես կանոն ֆինանսավորվում են կապիտալի շուկայից, ինչի արդյունքում արժեթղթերի գինը, այլ կերպ ասած՝ կարճաժամկետ կորպորատիվ շահույթն ունի մեծ առաջնություն: ԱՄՆ-ի բանկերի և ձեռնարկությունների միջև գոյություն չունի սերտ կապ: Ձեռնարկությունների միջև հարաբերությունները հիմված են շուկայական հարաբերությունների և պայմանագրերի իրագործման վրա:

Սոցիալական պետություն. ամերիկյան առաջնահերթությունների հայելին

Մինչև 20-րդ դարը ԱՄՆ-ում գործում էր բավական թերի սոցիալական ապահովություն: 1937թ. սոցիալական ապահովության ակտով առաջին անգամ ներկայացվեց ազգային սոցիալական ապահովության համակարգը: Այն ենթադրում էր ներդրված ավանդի հիման վրա կենսաթոշակային համակարգ, անապահով ընտանիքների համար սոցիալական օգնություն, երեխաների և մեծահասակների, ինչպես նաև գործազուրկների ֆեդերալ ապահովության ծրագրեր: Այնուամենայնիվ ԱՄՆ-ն այսօր համարվում է ազատական-սոցիալական պետություն, քանի որ պետական նպաստները չեն ներառում բոլոր անհրաժեշտ ոլորտները: Սոցիալական նպաստների 1/3 մասն առաջանում է մասնավոր մատակարարներից: Սրա հիմնական պատճառը քաղաքական մշակույթն է և նաև այն փաստը, որ ԱՄՆ-ը հիմնականում կառավարվում է Հանրապետականների կամ Աջակողմյան Դեմոկրատների կողմից, որոնք քիչ ուշադրություն են դարձնում սոցիալական արժեքներին: Տրամադրվում են սոցիալական նպաստներ միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ աղքատությունից խուսափելու համար:

Գործազրկության ապահովագրություն

Գործազրկության ապահովագրություն: Չնայած որոշ նահանգներում ծրագիրը փորձում են կառավարել ինքնուրույն, սակայն գործազրկության ապահովությունն ԱՄՆ-ում իրականացվում է կենտրոնացված ֆինանսավորմամբ: Գործազուրկներն իրավունք ունեն օգնություն ստանալ 6 ամիս, որը կարող է ևս մի քանի շաբաթով

երկարացվել՝ ելնելով արտակարգ հանգամանքներից: Գործազրկության նպաստի չափը կազմում է նախկին աշխատավարձի 30-40 տոկոսը:

Եկամուտների աջակցություն

Եկամուտների աջակցություն: ԱՄՆ-ում եկամուտների աջակցությունը կամ սոցիալական օգնությունը հանդիսանում է միջոց աղքատությունից խուսափելու համար, քանի որ լիովին ուղղված է կարիքավորներին և շատ հաճախ կրում է նսեմացնող բնույթ: Կա նաև ծրագիր հատուկ խմբերի համար, ինչպիսիք են երեխաների խնամառությունը կամ կարիքավոր ընտանիքները: Բացի ֆինանսական օգնությունից, նրանք նաև պարենային օգնություն են ստանում:

Կենսաթոշակներ

Ամերիկյան կենսաթոշակային համակարգը հիմված է կուտակային ֆոնդի վրա: Քաղաքացիները վճարում են եկամտահարկերը, ինչն էլ նրանց իրավունք է տալիս հետագայում ստանալ կենսաթոշակ: Այնուամենայնիվ, ովքեր ունեցել են աշխատանքի հնարավորություն և հետևաբար վճարել են այդ եկամտահարկերը իրավունք ունեն ստանալու կենսաթոշակ, մյուսները ստիպված են ապավինելու միայն սոցիալական օժանդակության համակարգին: Գոյություն ունի նաև եկամտահարկի ավանդի սահմանափակում, ինչի արդյունքում բեռը նրանց համար, ովքեր առավել շատ են վաստակում, ավելի թեթև է:

Առողջապահական համակարգ

Առողջապահական համակարգ: ԱՄՆ-ում չկա ունիվերսալ բյուջետային առողջապահական համակարգ: Հիմնականում կա 3 խումբ, որոնք օգտվում են այդ համակարգից. դրանք զինծառայողներն են, 65 տարեկանից բարձր անձինք և կարիքավորները: Այս վերջին երկու խմբերում մարդկանց քանակն արագ աճում է: Միակ խնդիրն այն է, որ այդ անձանց սպասարկող բժիշկներն այլևս պատրաստակամ չեն կատարելու իրենց աշխատանքը, քանի որ գտնում են, որ պետական վճարումները բավարար չեն:

Կրթական համակարգ

Դպրոցական կրթական համակարգը բաժանված է կրոնական և հանրային դպրոցների: Վերջիններս կազմակերպվում և ֆինանսավորվում են տեղական բյուջեից: Չնայած սա ինքնակարգավորման և մասնակցության տեսակետից առավելություն է, սակայն ունի որոշ թերություններ, քանի որ անհավասար է ուսուցման որակը: Քանի որ դպրոցները ֆինանսավորվում են եկամտահարկերից, այն համայնքները, որոնք առավել կայացած են, կարող են հավելյալ գումարներ ներդնել և համապատասխանաբար է՛լ ավելի բարելավել կրթական համակարգը, մինչդեռ առավել կարիքավոր համայնքներն այդ գումարների բացակայության պայմաններում նման հնարավորություն չունեն: Բնակավայրը և շրջակա համայնքն են շատ անգամ պայմանավորում ուսուցման որակը: Այնուամենայնիվ բարձրագույն

կրթության հարցում ամերիկյան կրթական համակարգն աշխարհում ունի ամենաբարձր ցուցանիշներից մեկը:

Ամփոփում

Ե՛վ քաղաքական, և՛ սոցիալական ապահովության համակարգերն ԱՄՆ-ում բնութագրվում են որպես թույլ, պասիվ, որոնց նպատակն է անհատներին տրամադրել լայնածավալ անհատական (բացասական) ազատություն: Քաղաքական հիմնական իրավունքներն ունեն առավելություն, մինչդեռ սոցիալական և տնտեսական իրավունքները որևէ դեր չեն խաղում: Հետևաբար պետությունը ցանկություն չունի միջամտելու հասարակության կամ շուկայի կարգավորմանը և չի ցանկանում ունենալ դրա վերաբերյալ որևէ միջազգային համաձայնագրեր:

Սա մասնատված, ֆեդերալ քաղաքական համակարգի և ազատական, կրոնական, հանրապետական մշակույթ ունենալու արդյունք է: Դա նշանակում է, որ չնայած ԱՄՆ-ի բարեկեցիկ տնտեսական ցուցանիշներին, այսինքն՝ տնտեսական զարգացմանը, այն բավական թույլ է սոցիալական ապահովության տեսակետից:

Օրինակ, այլ տնտեսապես զարգացած երկրների համեմատ, ԱՄՆ-ն ունի աղքատության ամենաբարձր ցուցանիշը: Ջինիի համարտադրիչով չափվող անհավասարության աստիճանը նույնպես բարձր է: Սոցիալ-դեմոկրատիայի չափորոշիչների տեսանկյունից, որը պահանջում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազատությունների տրամադրում, ԱՄՆ-ի ցուցանիշը նույնպես ցածր է: Եթե դիտարկենք հիմնական իրավունքների տեսանկյունից, քաղաքական և սոցիալական ապահովության համակարգերն ունեն ազատակամության բազմաթիվ տարրեր: Մեկնաբանությունների խնդիր է՝ արդյոք ԱՄՆ-ը պետք է համարել թույլ ընդգծված սոցիալ-դեմոկրատակա՞ն, թե՞ խիստ ազատակամ երկիր: Այնուամենայնիվ սկզբնական տեսքով սոցիալ-դեմոկրատիա գոյություն ունի միայն տեսականորեն, քանի որ նույնիսկ ԱՄՆ-ն ունի տարրական, թեև թերաճ, սոցիալական ապահովության համակարգ:

Նախագահ Բուշի կառավարությունը, ներքին գործերից և սեպտեմբերի 11-ից հետո անվտանգության քաղաքականությունից բացի, երկիրը կառավարում էր ազատակամության ոգով, մասնավորապես տնտեսական և սոցիալական ոլորտներում: Նույնիսկ փորձ արվեց ավելի կրճատել կամ սեփականաշնորհման ենթարկել սոցիալական ծառայությունների համակարգը: Վերջին նախագահական ընտրությունների արդյունքում դեմոկրատների հաղթանակը քիչ հույսեր է ներշնչում, որ կբարելավվի սոցիալական համակարգը, քանի որ համեմատությունը Եվրոպայի

սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հետ ցույց է տալիս, որ սոցիալական խնդիրները դեմոկրատների համար սկզբունքային չեն:

Զբաղվածության մակարդակը 2006թ.	72 %	Մարդկանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Կանանց զբաղվածության մակարդակը 2006թ.	66,1 %	Կանանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Գործազրկության մակարդակը 2006թ.	4,1 %	Գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Երկարաժամկետ գործազրկության մակարդակը 2006թ.	0,5 %	Երկարաժամկետ գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Եկամուտների անհավասարությունը 2006թ. ըստ Ջինիի գործակցի	40,8 %	Հարաբերակցությունն ընդգրկում է եկամուտների անհավասարությունը, որքան բարձր է ցուցանիշը, այնքան բարձր է անհավասարության տոկոսը (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Աղքատության ցուցանիշը 2006թ.	15,4 %	Աղքատության ցուցանիշն իր մեջ ներառում է մի շարք ցուցանիշներ (կյանքի տևողություն, գրագիտության աստիճան, առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն) 0=նվազագույն աղքատության աստիճան, 100=առավելագույն աղքատության աստիճան (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Կրթություն. սոցիալ-տնտեսական հիմքերի կարևորությունը կրթության համար	17,9 %	Ուսանողների մասնակցության համամասնությունը կախված է նրանց սոցիալ-տնտեսական հիմքերից (աղբյուրը՝ ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն), PISA (Սովորողների կրթական ձեռքբերումների ու նվաճումների գնահատման միջազգային ծրագիր) ուսումնասիրությունները, 2006թ.).
Արհեստակցական միությունների խտությունը 2003թ.	12,4 %	Արհեստակցական միություններում ընդգրկված տնտեսապես ակտիվ բնակչության համամասնությունը (Վիսեր, 2006թ. անդամակցությունը արհեստակցական միություններում 24 երկրներում, ամսական աշխատանքային տեսություն (1/ 38-49)

Հետագա ընթերցանության համար

Լև Հիչման (2006թ.) «ԱՄՆ. մտացորդային սոցիալական հասարակություն և ազատակամական ժողովրդավարություն», Թոմաս Մեյեր Praxis der Sozialen Demokratie, Վեստբաղեն, էջ 327– 73,

Winand Gellner and Martin Kleiber (2007), Das Regierungssystem der USA. Eine Einführung, Baden-Baden. Demokratie. Վեստբաղեն, էջ 119 – 153

5.2. Մեծ Բրիտանիա

Քրիստիան Քրեյլ

Նվազ ներառական սոցիալ-դեմոկրատիա

Սոցիալ-դեմոկրատիայի տեսության շրջանակներում Մեծ Բրիտանիան բնութագրվում է որպես նվազ ներառական սոցիալ-դեմոկրատիա: Սա նշանակում է, որ այստեղ իրականացվում են սոցիալական, տնտեսական և քաղաքացիական ու քաղաքական իրավունքները: Կարևորագույն ոլորտներում առկա է նաև սոցիալական համակարգը, որը հիմված է հիմնական իրավունքների վրա: Այնուամենայնիվ սոցիալական ծառայությունները ցածրորակ են: Հիմնական իրավունքներն ունեն ֆորմալ վավերականություն, սակայն գործնականում դրանք հաճախ ոչինչ չեն նշանակում: Մեծ Բրիտանիան հանդիսանում է սոցիալ-ազատակամական դեմոկրատիայի պետություն:

Սոցիալական պետության վաղ զարգացում

Այն փաստը, որ Մեծ Բրիտանիան թերի զարգացած սոցիալական պետություն է, զարմանալի է, քանի որ սոցիալական պետության տարրերն անտեղ շատ ավելի վաղ են ներդրվել, քան եվրոպական այլ պետություններում: Արտադրական և տեխնոլոգիական նորամուծությունները, սկսած 18-րդ դարից, ուղեկցվեցին ոչ միայն հաջողություններով և բարեկեցությամբ, այլև սոցիալական խնդիրների աճով, որոնք կապված էին ինդուստրիալիզացիայի հետ՝ աղքատություն, թերի սնունդ և վատ առողջություն, անչափահասների աշխատուժի կիրառում և ոչ համարժեք սոցիալական ապահովություն:

Չնայած անհաջողություններին, սոցիալական պետության առաջին տարրերն այստեղ ներդրվել էին շատ ավելի վաղ: Ավելորդ է նշել, որ սկզբում խոսք չկար համընդհանուր սոցիալական պետության մասին: Դրա պատճառները պետք է փնտրել առաջին հերթին Մեծ Բրիտանիայի քաղաքական կառույցներում և մշակույթում: Լիբերալիզմն արդեն վաղուց էական դեր էր խաղում Մեծ Բրիտանիայի քաղաքական մշակույթում: Այն խթանում էր ազատ արտադրության զարգացումը և տնտեսական բարգավաճումը, ինչն իր հետ բերեց քաղաքական իրավունքների սահմանափակում: Պետության միջամտությունը սոցիալական հարցերում այնուամենայնիվ մերժվել էր: Դրա փոխարեն 18- 20-րդ դարերում սոցիալական և տնտեսական քաղաքականությունը ձևավորվեց չմիջամտելու լիբերալ համոզմունքով. «Կառավարությունը չպետք է միջամտի»:

Այնուամենայնիվ թերի զարգացած սոցիալական պետություն

Սոցիալական ծառայությունների թերի զարգացումները որոշ չափով փոխհատուցվում էին բարեգործությամբ: Բազում բարեգործական կազմակերպությունները և մասնավոր նվիրատվությունները ձևավորեցին և նպաստեցին Մեծ Բրիտանիայի ոչ կառավարական կառույցների ստեղծմանը, որոնք այսօր էլ գոյություն ունեն: Այս

պրոբլեմը միշտ էլ գոյություն ուներ և կարիքավորներից ոչ բոլորն էին կարողանում օգտվել օգնության ծրագրերից: Բացի այդ բարեգործական կազմակերպություններից, 19-րդ դարում ձևավորվեցին նաև հզոր արհեստակցական միություններ: Ի տարբերություն Գերմանիայի, այստեղ արհեստակցական միություններում մինչ օրս էլ միասնություն չի նկատվում:

Լեյբորիստական կուսակցությունը, այլ կերպ ասած՝ սոցիալ-դեմոկրատականը, կազմավորվել է 1900թ. արհեստակցական միություններից: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Լեյբորիստական կուսակցությունը զարգանալով դարձավ Մեծ Բրիտանիայում երկրորդ ամենահզոր ուժը, որը իշխանության եկավ 1945թ.: Նրա ղեկավարմամբ հնարավոր եղավ զարգացնել Մեծ Բրիտանիան որպես սոցիալական պետություն:

Հետպատերազմական կոնսենսուս և «հասարակական պայմանագիր»

Պահպանողական և Լեյբորիստական կուսակցությունները համաձայնության էին եկել Մեծ Բրիտանիայի՝ որպես սոցիալական պետության հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ: Մեծ Բրիտանիայի հետպատերազմյան կոնսենսուս հասկացությունը հաճախ հանդիպում է որպես սոցիալական պայմանագիր՝ տարբեր սոցիալական խավերի միջև:

Թեթչերյան ժամանակաշրջան

1970-ական թվականներին Պահպանողական կուսակցության ներկայացուցիչ, վարչապետ Մարգարետ Թեթչերը հայտարարեց «սոցիալական պայմանագրի» ավարտի մասին և կոչ արեց վերադառնալ պետության սահմաններին: Ի տարբերություն հետպատերազմյան քաղաքական կոնցեպցիաների, Թեթչերը հայտարարեց, որ պետությունը պարտավորություն չի կրում քաղաքացիների լրիվ զբաղվածության համար: Նրա կարծիքով՝ պետության ցանկացած միջամտություն ազատ տնտեսական դաշտում պետք է մերժվեր: Պետության գործունեությունը պետք է կենտրոնացվեր առաջին հերթին տնտեսական գործունեության ակտիվացման ապահովման վրա, հատկապես դրամական միջոցների կայունացման: Պահպանողական կուսակցության կառավարման ժամանակաշրջանը (1979-97 թթ. կառավարում էր Թեթչերը) բնութագրվում է որպես սեփականաշնորհման և բրիտանական տնտեսության բազում ոլորտներում սահմանափակումների վերացման շրջան:

Թեթչերի կառավարման հետևանքներից է նաև աղքատության և Մեծ Բրիտանիայում սոցիալական անհավասարության զգալի աճը: Այս և այլ ցուցանիշներ Թեթչերի կառավարման վերջում Մեծ Բրիտանիան բնութագրում էին որպես նվազ սոցիալ-դեմոկրատիա պարունակող երկիր:

Թոնի Բլեյրը և Լեյբորիստական կուսակցությունը

1997թ. Թոնի Բլեյրի և Լեյբորիստական կուսակցության ընտրությամբ Մեծ Բրիտանիայում վերականգնվեց սոցիալ-դեմոկրատիայի զարգացումը: Լեյբորիստների հայտարարած մի շարք միջոցառումներով օժանդակվեց սոցիալական ինտեգրացիան: Սոցիալական ծառայությունների համընդհանուր ընդլայնումը, հատկապես առողջապահական և կրթական ոլորտներում, աղքատության վերացմանն ուղղված միջոցառումները և նվազագույն աշխատավարձի սահմանումը հանդիսանում են Մեծ Բրիտանիայի՝ որպես սոցիալ-դեմոկրատական պետության սահմանման միայն մի մասը:

Այնուամենայնիվ ընդգծված ազատական աշխատանքային շուկայի և ազատական տնտեսության պահպանումը, որոնք ձևավորվել էին դեռ Թեթչերի կառավարման ժամանակաշրջանում, ինչպես նաև Բլեյրի՝ պետության նկատմամբ ավտորիտար մոտեցումը և նրա քաղաքականությունը որպես՝ ԱՄՆ-ի գործընկերոջ Իրաքի նկատմամբ, հակասական էր դարձնում «երրորդ ուղու» բրիտանական տարբերակը:

Քաղաքական համակարգը

Մեծ Բրիտանիան միանշանակ համարվում է եվրոպական ամենահին դեմոկրատական պետությունը: Նշելով սա, պետք է նաև ավելացնել, որ բրիտանական քաղաքական համակարգը բնութագրվում է որպես ընտրված դիկտատուրա: Ինչպե՞ս կարելի է համատեղել այս երկու հասկացությունները:

Բրիտանական խորհրդարանը

Այս երկու թվացյալ հակասությունները կարող են կարգավորվել թռուցիկ պատմական էքսկուրսով: Փառահեղ հեղափոխությունից հետո (1688-89թթ.) բրիտանական խորհրդարանը հետզհետե ձեռք բերեց էլ ավելի մեծ ազդեցություն: Դարերի ընթացքում այն իրավունքները և առավելությունները, որ պատկանում էին թագավորին, փոխանցվեցին խորհրդարանին, որն ունի ստորին և վերին պալատներ: Արմատական փոփոխությունները, որ կատարվել էին եվրոպական գրեթե բոլոր երկրներում, հանգեցրին իշխանությունների տարանջատմանը, սակայն Մեծ Բրիտանիայում դա տեղի չունեցավ: Այն լիազորությունները, որ սկզբնական շրջանում ուներ թագավորը, այսօր մեծամասամբ տրվել են խորհրդարանին:

Հետևաբար խորհրդարանն այսօր ունի գրեթե անսահմանափակ իշխանություն և սահմանափակված չէ որևէ այլ ավելի բարձր օղակներով կամ Սահմանադրությամբ: Գերագույն իշխանությունն այսօր կենտրոնացված է բրիտանական խորհրդարանի ստորին պալատի մեծամասնություն կազմող կուսակցության առաջնորդի՝ վարչապետի ձեռքում:

Կա երկու գործոն, որոնք նպաստում են կառավարության հետագա հզորացմանը: Առաջին՝ Բրիտանական պետության կենտրոնացված կառուցվածքը նշանակում է՝ գոյություն չունի որևէ մարզ կամ նահանգ, որ ունակ է ազդելու կենտրոնական կառավարության օրենսդրության վրա: Երկրորդ. ընտրական՝ իշխանության հասած համակարգը նշանակում է, որ կուսակցություններից միայն մեկն է հայտարարվում որպես հաղթող: Կոալիցիոն կառավարությունը, եթե ժամանակաշրջանը ճգնաժամային չէ, չի խրախուսվում և անհրաժեշտություն չէ: Պահպանողական և Լեյբորիստական կուսակցություններն իրար են հաջորդում կառավարության կազմման համար: Այս երկու կուսակցությունների հետ Բրիտանիայի կուսակցական համակարգում Լիբերալ կուսակցությունը կարելի է սահմանել որպես զգալի ուժ: Այլ կուսակցություններ չեն կարողացել ազգային մակարդակում ինքնահաստատվել՝ ընտրական համակարգի պատճառով:

Հզոր կառավարություն

Պետական կառույցների կենտրոնացումը, հաղթող կուսակցության բացարձակ մեծամասնությունը և անկախ խորհրդարանը նշանակում է, որ կառավարությունն ունի գործելու մեծ հնարավորություններ: Քաղաքական ուղղության համընդհանուր հիմնական փոփոխությունների կարելի է հասնել սեղմ ժամկետներում: Ուստի Մեծ Բրիտանիայում սոցիալ-դեմոկրատիայի զարգացմանը կարելի է հասնել ավելի արագ, քան Եվրոպայի այլ երկրներում:

Սոցիալ-դեմոկրատիայի հետագա զարգացումները

Հիմնական իրավունքների համակարգը

Մեծ Բրիտանիան բնութագրվում է հակասական հիմնական իրավունքների տեսանկյունից ևս: Մի կողմից՝ Մեծ խարտիայի (1215թ.) և Իրավունքների հանրագրի (1628թ.) ստորագրումից հետո առաջին հիմնական իրավունքները, որոնք ուղղված էին բռնակալության դեմ և հանդիսանում էին բացասական քաղաքացիական իրավունքներ և ազատություններ, երաշխավորվեցին ավելի վաղ, իսկ մյուս կողմից՝ Մեծ Բրիտանիան չունի Սահմանադրություն, հետևաբար հիմնական սահմանադրական իրավունքների վերաբերյալ չկա որևէ փաստաթուղթ:

Վաղ հիմնարար իրավունքներ

Այնուամենայնիվ Մեծ Բրիտանիան 1976թ. վավերացրել է ՄԱԿ-ի դաշնագրերը քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան նույնպես 1998թ. ընդգրկվել է Մեծ Բրիտանիայի օրենսդրությունում:

Չնայած ֆորմալ իրականությանը, որոշ ոլորտներում հիմնական իրավունքներն ունեն բավական ցնցիչ գործնական արդյունավետություն: Օրինակ՝ աղքատության վերաբերյալ բարձր ցուցանիշների փաստը ստիպում է կասկածել, թե արդյոք երկրում իրականացվո՞ւմ է արժանապատիվ կյանքի իրավունքը:

Արդյոք հիմնարար իրավունքներն իսկապե՞ս արդյունավետ են

Լեյբորիստների իշխանության գալուց ի վեր որոշ հիմնական իրավունքներ ներկայացվեցին առավել ընդարձակ: Օրինակները վերաբերում են նվազագույն աշխատավարձի դրույքաչափերին, որոնք հիմնվեցին 1999թ.: Դրանով գործատուներին պարտադրեցին սահմանել հավասարաչափ աշխատավարձ և աշխատանքային պայմաններ կես դրույքով աշխատողների համար:

Քաղաքական տնտեսությունը

Մեծ Բրիտանիան համարվում է դասական տիպի ազատական-շուկայական տնտեսություն ունեցող երկիր: Համակարգված շուկայական տնտեսության համեմատ մրցակցային շուկան առավել կենտրոնական տեղ է զբաղեցնում:

Շուկաների նշանակությունը

Շուկայի առաջնահերթությունը նշմարվում է, օրինակ, աշխատողների և գործատուների միջև աշխատավարձի դրույքաչափի շուրջ բանակցությունների ժամանակ: Քանի որ արհեստակցական միությունները անկատար են, մասնատված, աշխատավարձի դրույքաչափի հարցը հաճախ դառնում է բանակցության թեմա աշխատակցի և գործատուի միջև և լուծվում է անհատական կարգով: Աշխատավարձի դրույքաչափը ուղղակիորեն կապված է շուկայում առաջարկվող գնի հետ: Մասնակցության կամ վճռականության գաղափարը, որ ակտիվ կերպով գործում է գերմանական մետալուրգիական և քարածխային արդյունաբերությունում, Մեծ Բրիտանիայում բացակայում է:

Ճկուն աշխատանքային շուկա

Մեծ Բրիտանիայում որևէ դժվարություն չկա մարդուն աշխատանքից ազատելու հարցում, քանի որ աշխատավորների պաշտպանվածության համակարգը ևս անկատար է: Սակայն ճկուն աշխատանքային շուկայի պայմաններում որակավորում ունեցող մասնագետները կարողանում են նոր աշխատանք գտնել: Ընդհանուր առմամբ, աշխատողները երկար չեն աշխատում նույն կազմակերպությունում: Արդյունքում՝ նրանք որևէ հնարավորություն չունեն հիմնավոր որակավորում ստանալու որևէ կազմակերպությունում կամ տնտեսական ճյուղում: Սա հանդիսանում է պատճառներից մեկը, ինչի հետևանքով Մեծ Բրիտանիայում արտադրողականությունն այլ երկրների համեմատ առավել ցածր է:

Այն արտադրությունները, որոնք ազատական տնտեսության մեջ են, ներդրումների համար իրենց կապիտալը ստանում են գերազանցապես ֆինանսական շուկաներից, ինչի արդյունքում ստիպված են վերադարձնել այն կարճ ժամկետներում: Առավել երկար ֆինանսավորման հասկացություն, ինչպիսին է «*Hausbanken*»/Բանկերի տունը, գոյություն չունի: Գերմանիայի կազմակերպություններում գոյություն ունի ավանդույթ, համաձայն որի նրանք ունեն երկարա-

ժամկետ, կայուն հարաբերություններ կոնկրետ մեկ բանկի հետ: Այդ պատճառով բրիտանական տնտեսությունը գտնվում է կարճաժամկետ և եկամուտների մաքսիմում ապահովման աքցանի մեջ:

Սոցիալական պետություն

Սոցիալական պետության հիբրիդային բնույթը

Սոցիալական պետությունների համեմատ Մեծ Բրիտանիան, որպես կանոն, բնութագրվում է որպես «հիբրիդային բնույթի» պետություն: Բրիտանական սոցիալական համակարգն իրենից ներկայացնում է տարբեր գաղափարների մի խումբ, որը չի ընդգրկվում մեկ համակարգում: Օրինակ, սոցիալական ապահովության որոշ ծառայություններ, ասենք՝ առողջապահական համակարգը, համատարած տրամադրվում են երկրի յուրաքանչյուր քաղաքացու: Այլ ծառայություններ տրամադրվում են միայն կարիքավորներին, որոնք հաճախ նվաստացնող են: Այնուամենայնիվ Մեծ Բրիտանիան համարվում է ազատական-սոցիալական պետություն: Սոցիալական ապահովության համակարգն ապահովում է հիմնական ռիսկերից, այն դեպքում, երբ ցանկացած այլ կարիքներ, որոնք չեն մտնում այդ հիմնական դրույթների մեջ, պետք է իրականացվեն ազատ շուկայական միջոցներից:

Առողջապահական համակարգ

Առողջապահական համակարգ. Ազգային առողջապահական ծառայությունը (ԱԱԾ) հանդիսանում է բրիտանական սոցիալական պետության մարգարիտը: Այն ֆինանսավորվում է հարկային մուտքերից և երաշխավորում է անվճար բուժօգնություն, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսների և դեղամիջոցների տրամադրում: ԱԱԾ-ի հիմնական առավելություններից մեկն էլ այն է, որ բոլորին հասանելի լինելուց բացի այն նաև թափանցիկ է: Սակայն ԱԱԾ-ի համակարգը երկար տարիներ արդեն ֆինանսավորման կարիք ունի, ինչը բերում է նրան, որ, օրինակ, վիրահատական միջամտության համար մարդիկ ստիպված են սպասել երկար: Սակայն 2000թ.-ից հսկայական գումարներ են ներդրվել ԱԱԾ-ի համակարգում:

Սոցիալական ապահովություն

Սոցիալական ապահովություն. Ազգային ապահովագրական համակարգը ապահովում է մարդկանց մի շարք ռիսկերից, ինչպիսիք են ծերությունը, գործազրկությունը, աշխատավայրում դժբախտ պատահարը կամ հաշմանդամությունը: Ազգային ապահովագրական համակարգը ֆինանսավորվում է կուտակային ֆոնդից՝ ելնելով եկամուտների համամասնությունից: Ծառայությունը տրամադրվում է միանման հիմունքներով և տալիս է միայն բազային ապահովագրություն: Նրանք, ովքեր ցանկանում են ստանալ ապահովագրության առավել լիարժեք փաթեթ, պետք է փնտրեն այն ազատ շուկայում:

Սոցիալական աջակցություն

Սոցիալական աջակցություն. Ազգային սոցիալական աջակցությունը տրամադրում է մի շարք առավելություններ, որոնք հասու են նրանց, ովքեր հնարավորություն չունեն եկամուտների կուտակային հիմքի վրա ստանալու, ինչպես նաև օգտվելու մասնավոր ազատ շուկայում տրամադրվող ապահովագրական ծառայություններից: Այս ծառայությունները ֆինանսավորվում են հարկերից և տրամադրվում են խիստ քննության ենթարկելով դիմողներին, որոնք կարողացել են ապացուցել, որ դա է նրանց օգնելու միակ միջոցը:

Կրթական համակարգ

Կրթական համակարգ. Բրիտանիայում դպրոցական կրթական համակարգը բաժանվում է պետական, մասնավոր, ինչպես նաև հանրային դպրոցների: Ըստ որոշ տվյալների, բրիտանական կրթական համակարգի նման բաժանումն է պատճառներից մեկը, որ կրթական ընդհանուր մակարդակը և մասնագիտական որակավորումը բավական ցածր են: Սոցիալական կարգավիճակի և կրթության միջև հարաբերակցությունն ակնհայտ է: Կրթական համակարգի բարեփոխումները և զարգացումները Լեյբորիստական կուսակցության կարևոր խնդիրներից են, և այդ համակարգում ներդրվել են էական միջոցներ, չնայած միաժամանակ արվում էին նաև բազում հակասական գործողություններ, օրինակ՝ ուսանողների համար կրթության վարձի սահմանումը:

Ամփոփում

1990-ականներից ի վեր Մեծ Բրիտանիան վերսկսեց իր դեպի սոցիալ-դեմոկրատիա տանող զարգացման ուղին: Լեյբորիստական կուսակցության հիմնական նպատակն էր ապահովել սոցիալական ինտեգրացիա բոլոր քաղաքացիների համար՝ առաջին հերթին հնարավորություն ընձեռելով մարդկանց մասնակցություն ունենալու աշխատանքի շուկայում: Սոցիալական ապահովագրությունը պետք է ուղղված լիներ նրանց, ովքեր իսկապես դրա կարիքն ունեին, այլ ոչ թե ապահովեր մարդկանց այնքան թվաքանակ, որքան կարող էր իրեն թույլ տալ, և տրամադրեր այն բարձր մակարդակով: Միևնույն ժամանակ տրամադրում էր սոցիալական նպաստներ նրանց, ովքեր կարողանում էին ապացուցել դրա անհրաժեշտությունը:

Մեծ Բրիտանիայում կայուն տնտեսական աճը և աշխատանքային շուկայում ակտիվ քաղաքականությունը հանգեցրեցին աշխատավորների թվաքանակի աճի, և արդյունքում կարիքավորների քանակը նվազեց և բարձրացավ սոցիալական ակտիվությունը: Այնուամենայնիվ, մշտապես հիմնվելով կարիքավորների ավելացման, սոցիալական նպաստների ցածր մակարդակի և կրթական մակարդակում տրամադրվող հնարավորությունների անհավասարության վրա, Մեծ Բրիտանիան բնութագրվում է որպես սոցիալ-դեմոկրատիա նվազ ներառող երկիր:

Զբաղվածության մակարդակը 2006թ.	71,5 %	Մարդկանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Կանանց զբաղվածության մակարդակը 2006թ.	65,8 %	Կանանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Գործազրկության մակարդակը 2006թ.	5,3 %	Գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Երկարաժամկետ գործազրկության մակարդակը 2006թ.	1,2 %	Երկարաժամկետ գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Եկամուտների անհավասարությունը 2006թ. ըստ Ջինիի գործակցի	36 %	Հարաբերակցությունն ընդգրկում է եկամուտների անհավասարությունը, որքան բարձր է ցուցանիշը, այնքան բարձր է անհավասարության տոկոսը (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Աղքատության ցուցանիշը 2006թ.	14,8 %	Աղքատության ցուցանիշն իր մեջ ներառում է մի շարք ցուցանիշներ (կյանքի տևողություն, գրագիտության աստիճան, առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն) 0=նվազագույն աղքատության աստիճան, 100=առավելագույն աղքատության աստիճան (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Կրթություն. սոցիալ-տնտեսական հիմքերի կարևորությունը կրթության համար	13,9 %	Ուսանողների մասնակցության համամասնությունը կախված է նրանց սոցիալ-տնտեսական հիմքերից (աղբյուրը՝ ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն), PISA (Սովորողների կրթական ձեռքբերումների ու նվաճումների գնահատման միջազգային ծրագիր) ուսումնասիրությունները, 2006թ.).
Արհեստակցական միությունների խտությունը 2003թ.	29,3 %	Արհեստակցական միություններում ընդգրկված տնտեսապես ակտիվ բնակչության համամասնությունը (Վիսեր, 2006թ. անդամակցությունը արհեստակցական միություններում 24 երկրներում, ամսական աշխատանքային տեսություն (1/ 38-49)

Հետագա ընթերցանության համար.

Քրիստիան Կրելլ (2006թ.), «Հետամնացնե՞ր, թե՞ առաջնորդներ» der britische Sozialstaat im Spiegel der Sozialen Demokratie', Թոմաս Մեյեր «Praxis der Sozialen Demokratie», Վեստբաղեն (էջ 130-241):

Ալեքսանդր Պեթրինգ /200 'Großbritannien', in: Wolfgang Merkel et al. (eds), Die Reformfähigkeit der Sozialen Demokratie, Վեստբաղեն (էջ 119-153):

5.3. Գերմանիա

Քրիստոֆ Էգլե

Սոցիալ-դեմոկրատիայի հաջողվա՞ծ պատմություն

Հաշվի առնելով այն քաղաքական և տնտեսական իրավիճակը, որում հայտնվեց Գերմանիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Ֆեդերատիվ Հանրապետության[18] օրինակը կարելի է համարել սոցիալ-դեմոկրատիայի հաջողված օրինակ: Մտավախությունը, թե նացիստների կառավարումից հետո Գերմանիան կարող է դառնալ խաղաղ և դեմոկրատական հանրապետություն, փարատվեց Ֆեդերատիվ Հանրապետությունում դեմոկրատիայի կայունությամբ և կենսական քաղաքացիական հասարակության ամրապնդմամբ: Երկրի ժողովրդավարացման գործընթացը և հասարակության ձևավորումը լիարժեք իրականացվեցին միայն 1960-ականներին: Նացիստական կառավարման անպատվությունը և Վեյմերյան Հանրապետության փլուզումը իրենց հետքը թողեցին Գերմանիայի քաղաքական մշակույթում: Իրական դրությունը լուսաբանելու համար կարելի է նշել նաև ազգայնական հռետորիկայից հրաժարումը և զանկացած ծայրահեղությունների նկատմամբ սկեպտիցիզմը: Փոխզիջումների փնտրումը և «իմաստի» սահմանումը համարվում են Ֆեդերատիվ Հանրապետության կարևորագույն առաքինությունները:

«Գերմանական մոդել»

1945 թվականից հետո, հաջող վերադեմոկրատացման հետ մեկտեղ, «տնտեսական հրաշքը» ևս նպաստեց նրան, որ Ֆեդերատիվ Հանրապետությունը օրինակ ծառայի արևմտյան արտադրապես զարգացած այլ երկրների համար՝ իր տնտեսական զարգացմամբ, քաղաքական կայունությամբ և սոցիալական հավասարակշռությամբ: Գերմանական սոցիալ-դեմոկրատիան նույնացվում է սոցիալական և տնտեսական կարգի ֆեդերալ հանրապետության հետ, ինչն էլ սոցիալ-դեմոկրատները վկայակոչում են իրենց քաղաքական նպատակների իրականացման ճանապարհին: Օրինակ, 1976թ. համընդհանուր ընտրությունների ժամանակ ՍԴԿ-ն իր ընտրարշավը կազմակերպեց «գերմանական մոդելի» հիման վրա: Այնուամենայնիվ վերամիավորումից հետո ավելի ու ավելի ակներև էր դառնում, որ Ֆեդերատիվ Հանրապետությունն այլևս չեր կարող կատարել մոդելի դերը, քանի որ հետ էր ընկել տնտեսական աճը և խնդիրներ էին ծագել նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Հետաքրքիր է, որ մի շարք գործոններ, որոնք 1980-ական թթ. համարվում էին «գերմանական մոդելի» հաջողության պատճառներ, 1990-ականներին սահմանվեցին որպես Գերմանիայի «անկման» պատճառներ: Սրանց մեջ էական տեղ է զբաղեցնում կառավարման համակարգը, որը դանդաղ էր ադապտացվում

[18] Ցավոք, տեղի սահմանափակության պատճառով չենք կարող քննարկել այն զարգացումները, որոնք տեղի ունեցան Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում (ԳԴՀ):

փոփոխվող տնտեսական պայմաններին (օրինակ՝ գլոբալիզացիայի), ինչպես նաև՝ պետական սոցիալական ապահովության որոշ կառույցներ, որոնք մի շարք երկրամասերում աշխատատեղերի ստեղծման ճանապարհին արգելք հանդիսացան, հատկապես կանանց և նրանց համար, ովքեր ունեին ցածր որակավորում: Պատմական հաջողությունն այն էր, որ Հիմնական օրենքը գործեց երկար, չնայած ի սկզբանե ստեղծվել էր անցումային ժամանակաշրջանի համար:

Հիմնական իրավունքների համակարգը Հիմնական օրենքում

Բացասական և դրական քաղաքացիական իրավունքները և ազատությունները Հիմնական օրենքում

Վեյմերյան Հանրապետության փլուզումից քաղած դասերի շնորհիվ Հիմնական օրենքի (*Grundgesetz*) առաջին 20 հոդվածներն ամրագրեցին մարդկային և քաղաքացիական հիմնական իրավունքները և ազատությունները որպես օրենք, որն ավելի վեր է դասվում, քան պետությունը, և որի հիմնական էությունը չի կարող փոփոխվել խորհրդարանի կողմից: Դրանում ընդգրկված են անձնական կյանքին չմիջամտելու այսպես կոչված ազատական իրավունքներ, որոնք արգելում են պետությանը միջամտելու մասնավոր ոլորտին (բացասական ազատություններ) և դեմոկրատական իրավունքներին ու մասնակցության իրավունքին (դրական ազատություններ): Սոցիալական իրավունքները՝ աշխատանքի, բնակության վայրի, կրթության կամ նվազագույն եկամուտի, ընդգրկված չեն Հիմնական օրենքում, չնայած դրանք ամրագրված են որոշ երկրամասերի սահմանադրություններում: Հիմնական օրենքում որևէ հատուկ տնտեսական համակարգ ևս սահմանված չէ, բայց այն չկարգավորվող շուկայական կապիտալիզմի և սոցիալիստական պլանային տնտեսության դեմ ունի մի շարք սահմանած պարսպներ: Օրինակ, Հիմնական օրենքի 14-րդ հոդվածում ամրագրված են սեփականության և ժառանգության իրավունքները, չնայած այդ սեփականության օգտագործումը պետք է «նաև ծառայի հասարակությանը»: Այս դրույթը գտավ իր գործնական արտահայտումը շուկայական սոցիալ-տնտեսական կոնցեպցիայում:

Քաղաքական համակարգը

Տարանջատման և լիազորությունների սահմանափակման բարձր աստիճան

Կառավարման համակարգն այնպես է սահմանված, որ դեմոկրատիայի ձախողումն այլևս անհնարին լինի: Դրա համար ներդրվել են իշխանությունների տարանջատման խիստ մեխանիզմներ, որոնցում գործադիր իշխանության ուժը սահմանափակված է առավել խիստ, քան այլ դեմոկրատական երկրներում: Այս պարիսպները ստեղծվել են առավել հզոր պետությանը հակառակ: Դրանք ներառում են ֆեդերալ համակարգը և ֆեդերալ երկրամասերի մասնակցության հնարավորությունը ֆեդերալ օրենքի ստեղծման գործընթացներին (Բունդեսրատից մինչև Գերմանիայի խորհրդարանի վերին պալատը), Ֆեդերալ Սահմանադրական դատարանի ամուր դիրքերի սահմանումը, ինչպես նաև *Բունդեսբանկի* անկա-

խությունը (ավելի ուշ այն փոխարինվեց Եվրոպական կենտրոնական բանկով), որոշ երկրամասերի ներկայացուցիչների մասնակցությունը պետական քաղաքացիական խնդիրների լուծման գործում և, վերջապես, սոցիալական խմբերի մասնակցությունը սոցիալական ապահովության համակարգի կառավարման գործին: Հիմնվելով այս ամենի վրա, ամերիկացի քաղաքագետ Պետեր Կատզենշտեյնը հայտարարեց, որ Ֆեդերատիվ Հանրապետությունը հանդիսանում է «կիսասուվերեն» հանրապետություն: Այս փաստը շատ կարևոր է, հաշվի առնելով այն, որ մինչև 1990 թ. Ֆեդերատիվ Հանրապետությունը կիսասուվերեն էր նաև ատաքին քաղաքականության հարցում:

Քաղաքական կուսակցությունների կենտրոնական դերը

Ինստիտուցիոնալ պարտականությունները, որոնք ստեղծվել էին բալանսավորելու տարբեր հետաքրքրությունները, որևէ փսաս չեն հասցրել Ֆեդերատիվ Հանրապետությանը: Կառավարման համակարգը բնութագրվում է որպես արդյունավետ ու ներկայացուցչական: Խորհրդարանական համակարգը բաց է սոցիալական զարգացումների համար (օրինակ՝ նոր կուսակցությունների ստեղծման համար) և միևնույն ժամանակ նպաստում է կայունության և կառավարության ստեղծմանը: Օրենսդրական դաշտում ներդրվել է օտարերկրյա փորձը, քանի որ տարբեր շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներ պարբերաբար շփվելու հնարավորություն ունեն: Երկրի զարգացման հարցում կենտրոնական դեր են խաղում քաղաքական կուսակցությունների կարծիքները, սակայն հասարակական գործիչներին ևս արտահայտվելու հնարավորություն է ընձեռվում: Այդպես նրանք կատարում են կարևոր միջնորդի դեր պետության և հասարակության միջև: Քանի որ կուսակցությունները, բացի ֆեդերալ կառավարությունից, կարող են ներկայացված լինել նաև 16 երկրամասերի կառավարություններում, ուստի կուսակցությունները գրեթե երբեք ընդգրկված չեն լինում բացառապես կառավարության կամ ընդդիմության կազմում: Սա հիմնականում վերաբերում է երկու առաջատար կուսակցություններին՝ ԳՍԴԿ-ին և ՔԴԿ/ՔՍՄ-ին: Այնպես որ, ֆեդերալ հանրապետությունը երբեք չի մտնում առանց ֆորմալ կամ ոչ ֆորմալ «մեծ կոալիցիայի»: Այս հարկադրումը համագործակցության համար հիմնականում տնտեսական և սոցիալական քաղաքականության մեջ «միջին ուղու քաղաքականություն» է (Մանֆրեդ Շմիդտ), որն, ինչպես արդեն նշվել է, կատարյալ համընկնում է Գերմանիայի քաղաքական մշակույթի հետ:

Գերմանիայի կայունության կողմնորոշման ուժեղ և թույլ կողմերը

Կուսակցությունները և կառավարման ֆեդերալ համակարգը կարող են միավորվել՝ կանխելու կարևոր որոշումների կայացումը՝ կուսակցությունների բանավեճերի արդյունքում անբավարար փոխզիջումների պայմաններում: Դրա օրինակները 1990 թ.-ից հետո կրկնապատկվել են: Գերմանիայի վերամիավորումից հետո ֆեդերալ միավորների թիվն աճեց, և անհրաժեշտ փոփոխությունները գլոբալի-

զացիայի արագ կայացման պայմաններում չէին կատարվել անհրաժեշտ արագությամբ: Քանի որ նկատվում էր ինտեգրացիայի միտում, քաղաքական համակարգը, որ կողմնորոշված էր դեպի կայունություն, դարձավ լուծում պահանջող խնդիր: Տարիների ընթացքում կատարվում էին ֆեդերալ համակարգի ռեֆորմներ, որոնք հիմնված էին առավել «բարեկամական որոշումների» վրա:

Քաղաքական տնտեսությունը

«Ռեյնի կապիտալիզմը»

Գերմանիան համարվում է այսպես կոչված համակարգված շուկայական տնտեսության տիպիկ օրինակ, որտեղ ձեռնարկությունները ստանում են իրենց երկարաժամկետ վարկերը հենց իրենց բանկերից՝ ի տարբերություն ազատական շուկայական տնտեսությունների, որոնք հիմնված են շուկայական կապիտալի վրա: Դրա շնորհիվ արդյունաբերության և բանկային սեկտորի միջև ստեղծված փոխադարձ կապը հանդիսանում է «Ռեյնի կապիտալիզմի» հիմնական առանձնահատկությունը: Հիմնվելով «համբերատար կապիտալի» վրա, ստրատեգիական ձեռնարկությունները որոշում ընդունելու համար առավել երկար ժամանակ ունեն, քան կարճաժամկետ բաժնետիրական կողմնորոշման ժամանակ: «Գերմանական AG»-ի տիպիկ օրինակ է նաև աշխատողների մասնակցությունը ձեռնարկության կառավարման գործին. ինչպես մասնակցություն կազմակերպման մակարդակում՝ աշխատատեղերի ստեղծում, աշխատանքային ընթացքի կազմակերպում և կադրային հարցեր, այնպես էլ ձեռնարկության մակարդակի մասնակցություն՝ աշխատավորների ներկայացուցիչների ընդգրկվելը բաց բաժնետիրական և այլ խոշոր բաժնետիրական ընկերությունների կազմում: Հաշվի առնելով այս ամենը, սոցիալական հարաբերությունները հիմնականում բնութագրվում են որպես համագործակցություն: Աշխատավարձերի մասին բանակցությունները գործատուի և աշխատակցի միջև դառնում են ազատ (կարող են վերածվել կոլեկտիվ սակարկումների), որոնք հիմնականում կազմակերպվում են ազգային կազմակերպությունների ցույցերի տեսքով: Արտադրական կոնֆլիկտները, միջազգային փորձի համեմատ, ավելի քիչ են և, որպես կանոն, կարճաժամկետ:

Վճռականություն և հավաքական սակարկումներ

Սակայն վերջին տարիներին այս համակարգված շուկայական տնտեսության մոդելը փլուզվեց: Դա մի կողմից կապված է գլոբալիզացիայի, հետևաբար գերմանական ֆիրմաների միջազգային ֆինանսական շուկաներում հայտնվելու, մյուս կողմից՝ արտադրական և սոցիալական հարաբերությունների քայքայման հետ: Արհեստակցական միությունները և գործատուների կազմակերպությունները կորցնում են իրենց ուժը և հետևաբար նաև համակարգելու ունակությունները:

Պահպանողական-կորպորատիվ սոցիալական պետություն

Սոցիալական պետություն

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը համարվում է պահպանողական-կորպորատիվ սոցիալական պետություն: Պատմության մեջ հայտնի է նաև որպես «քրիստոնեա-դեմոկրատական» կամ «Բիսմարկի» պետություն: Սա ցույց է տալիս, որ Գերմանիան, որպես սոցիալական պետություն, կազմավորվել է ոչ թե սոցիալ-դեմոկրատների, այլ առաջին հերթին պահպանողականների և քրիստոնեա-դեմոկրատների կողմից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալական պետության ընդլայնումը տեղի է ունեցել երկու սոցիալական ուղղվածությամբ կուսակցությունների՝ ՔԴՄ/ՔՍՄ-ի և ՍԴԿ-ի շնորհիվ:

Չնայած այն ֆինանսական հսկա է, գերմանական սոցիալական պետությունը բնութագրվում է որպես չափավոր վերաբաշխված, քանի որ գոյություն ունեցող սոցիալական անհավասարությունները հաճախ հավերժ են: Չափավոր վերաբաշխվածության օրինակներն իրենց մեջ ընդգրկում են տարբեր պրոֆեսիոնալ խմբերի սոցիալական ապահովության և առողջապահական օգնության տարբեր համակարգեր: Պարտադիր սոցիալական ապահովագրությունը կիրառվում է միայն աշխատողների դեպքում, իսկ քաղաքացիական ծառայողները և ինքնազբաղվածները ցանկության դեպքում կարող են ապահովագրվել մասնավոր կամ առանձին ապահովագրական համակարգի միջոցով (օրինակ՝ քաղաքացիական կենսաթոշակների ծառայության):

Աշխատանքի դիմաց վճարման լրացուցիչ ծախսեր

Գերմանական սոցիալական պետության հիմնասյուներից են տարբեր անկախ սոցիալական ապահովագրության համակարգերը, որոնք ֆինանսավորվում են աշխատավորների կողմից՝ պարտադիր մուտքերի շնորհիվ: Բացի այդ, որոշ դեպքերում, օրինակ՝ կենսաթոշակային ապահովագրության դեպքում, պարտադիր սուբսիդիաներ են տրամադրվում նաև ֆեդերալ բյուջեից: Քանի որ սոցիալական ապահովագրությունը կատարվում է աշխատավարձերի վճարումներից, հետևաբար աճում է նաև աշխատուժի գինը, այս ֆինանսավորման համակարգը հանգեցրեց նրան, որ դժվարություններ ծագեցին նոր աշխատատեղերի ստեղծման հարցում՝ հատկապես աշխատատար բնագավառներում: Ապահովագրական վճարումները հիմված են քիչ թե շատ համարժեքության սկզբունքի վրա, ինչը նշանակում է, որ որքան երկար է աշխատողը վճարում ապահովագրության համար, և որքան ավելի շատ, հետագայում այնքան մեծ է սոցիալական ապահովության նրա գումարը: Այս համակարգը, որ կենտրոնացված է աշխատանքի վրա, կարող է խնդիրներ առաջացնել նրանց համար, ովքեր չունեն կայուն աշխատանք և ի վիճակի են ձեռք բերել միայն սահմանափակ սոցիալական ապահովություն:

Կենսաթոշակներ. Ստանդարտ կենսաթոշակների վճարումները կատարվում են պարտադիր կենսաթոշակային ապահովագրությունից (առանց հավելյալ ապահովագրական ընկերությունների), որը կազմում է աշխատավարձի մոտ 70 տոկոսը: Վերջին բարեփոխումների իրականացման ծրագրերից հետո այն նվազեց՝ հասնելով մոտ 50 տոկոսի: Այս նվազեցումը փոխհատուցելու և մարդկանց աջակցելու համար ներառվեցին պետական նպաստներ և եկամտահարկեր՝ հավելյալ ֆինանսավորմամբ կենսաթոշակներն ապահովելու համար: Եթե անձի կենսաթոշակային դրույքաչափն ավելի ցածր էր, քան եկամուտները, ապա հիմնական ապահովագրությունն առաջնությունը տալիս էր թոշակային տարիքի մարդկանց:

Կենսաթոշակներ

Գործազրկության ապահովագրություն. «Գործազրկության ապահովագրություն I»-ը տրամադրում է ապահովագրություն գործազրկության դեպքում, որը, կախված ընտանեկան կարգավիճակից, կարող է հասնել նախկին աշխատավարձի 60-67 տոկոսին: Այն վճարվում է 6 -24 ամիս՝ կախված ստացողի նախկին վճարումներից և տարիքից: Երբ այս վճարումները դադարեցվում են, սկսվում է **«**Գործազրկության ապահովագրություն II» ծրագիրը, որը ֆինանսավորվում է հարկերից և այն կարելի է ստանալ ըստ եկամուտների: **«**Գործազրկության ապահովագրություն II» (նրանց համար, ովքեր տվյալ պահին ի վիճակի չեն աշխատելու) կամ եկամուտների աջակցության ծրագրի մասնակիցը ենթադրվում է, որ տնտեսապես ակտիվ է և պատրաստ է անցնել աշխատանքի, սակայն պետք է ապացուցի, որ փորձում է գտնել աշխատանք: Այս սոցիալական նպաստներն օրինական են և երաշխավորում են սոցիալ-մշակութային մինիմում բոլորի համար:

Գործազրկության ապահովագրություն

Առողջապահական համակարգ. Միջազգային չափանիշների համեմատությամբ՝ Գերմանիայում առողջապահական համակարգը առավել շահեկան վիճակում է: Երեխաները, ինչպես նաև չաշխատող ծնողները, նույնպես ներառվում են ապահովագրական համակարգում: Ինքնազբաղվածները և այն աշխատողները, ովքեր ունեն բարձր եկամուտ, պարտավոր չեն վճարել պարտադիր ապահովագրության դիմաց և կարող են ապահովագրվել մասնավոր՝ իրենց համար առավել շահեկան պայմաններով:

Կրթական համակարգ

Կրթական համակարգը համարվում է առավելապես ֆեդերալ երկրամասերի պատասխանատվության կարևորագույն խնդիր: Ուսումնական հաստատությունները կառուցվածքային ու որակական տեսանկյուններից ունեն էական տարբերություններ: Մինչ որոշ երկրամասեր կարող են համեմատվել միջազգային ամենաբարձր կրթական ստանդարտների հետ, մյուսները չեն համապատաս-

Կրթական համակարգ

խանում նույնիսկ ՄՏՀԶ կազմակերպության միջին ցուցանիշներին: Պարզ է, որ առաջադիմության հարցը խիստ կապված է այն բանի հետ, թե տվյալ անձը որ երկրամասում է ստանում իր կրթությունը: Այլ կերպ ասած՝ Գերմանիայի կրթական ոլորտում հավասար հնարավորությունների ընձեռումը հաջողությունների չի հասել: Այնուամենայնիվ, այստեղ գործող մասնագիտական վերապատրաստման համակարգը միջազգային չափանիշներով հանդիսանում է օրինակելի, սակայն ունի ուսանողների թվի խիստ սահմանափակումներ: Այդ համակարգը հնարավորություն է ընձեռում ստանալու մասնագիտական որոկավորում, որն ուղղված է ընկերությունների պահանջներին և կապված է պարտադիր դպրոցական ուսուցման համակարգի հետ՝ հնարավորություն ընձեռելով ստանալու բազմակողմանի կրթություն:

Ամփոփում

«Գերմանական մոդելը» մինչև 1970-ական թթ. դիտարկվում էր որպես սոցիալ-դեմոկրատիայի հաջող օրինակ: Սակայն Գերմանիայի վերամիավորումից հետո և գլոբալիզացիայի պայմաններում այս առավելությունն այլևս վերացավ: Միաժամանակ Գերմանիան կարող է համարվել որպես չափավոր սոցիալ-դեմոկրատիա ներառող պետություն: Դրա հիմնական պատճառն այն փաստերն են, որ երկրի միջազգային մրցունակության հարցում սոցիալական ապահովության ֆինանսավորումն ունեցավ անցանկալի հետևանքներ, ինչպես նաև այն, որ քաղաքական համակարգն ուղղված է կայունության ապահովմանը և անհրաժեշտ բարեփոխումները չեն կատարվում ժամանակին: 1990-ականների կեսերից Քոլի կառավարությունը, այնուհետև, որոշակի տատանումներից հետո, նաև Շրյոդերի կառավարությունը, տնտեսության վերակազմավորման և սոցիալական պետության մասնակի փոփոխման միջոցով փորձում էին ամրապնդել Գերմանիայի մրցունակությունը միջազգային ասպարեզում: Վերափոխումները որոշ շրջաններում հանդիպեցին զգալի դիմադրության: Ամենայն հավանականությամբ անհնարին կլինի ավելացնել աշխատատեղերն առանց այդ վերափոխումների: Սակայն արդյոք Գերմանիան կդառնա՞ այնպիսի երկիր, որ իր մեջ ներառի բարձր աստիճանի սոցիալ-դեմոկրատիա՝ այս հարցը կպարզվի ապագայում:

Զբաղվածության մակարդակը 2006թ.	67,5 %	Մարդկանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Կանանց զբաղվածության մակարդակը 2006թ.	62,2 %	Կանանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Գործազրկության մակարդակը 2006թ.	9,8 %	Գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Երկարաժամկետ գործազրկության մակարդակը 2006թ.	5,5 %	Երկարաժամկետ գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Եկամուտների անհավասարությունը 2006թ. ըստ Ջինիի գործակցի	28,3 %	Հարաբերակցությունն ընդգրկում է եկամուտների անհավասարությունը, որքան բարձր է ցուցանիշը, այնքան բարձր է անհավասարության տոկոսը (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Աղքատության ցուցանիշը 2006թ.	10,3 %	Աղքատության ցուցանիշն իր մեջ ներառում է մի շարք ցուցանիշներ (կյանքի տևողություն, գրագիտության աստիճան, առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն) 0=նվազագույն աղքատության աստիճան, 100=առավելագույն աղքատության աստիճան (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Կրթություն. սոցիալ-տնտեսական հիմքերի կարևորությունը կրթության համար	19 %	Ուսանողների մասնակցության համամասնությունը կախված է նրանց սոցիալ-տնտեսական հիմքերից (աղբյուրը՝ ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն), PISA (Սովորողների կրթական ձեռքբերումների ու նվաճումների գնահատման միջազգային ծրագիր) ուսումնասիրությունները, 2006թ.).
Արհեստակցական միությունների խտությունը 2003թ.	22,6 %	Արհեստակցական միություններում ընդգրկված տնտեսապես ակտիվ բնակչության համամասնությունը (Վիսեր, 2006թ. անդամակցությունը արհեստակցական միություններում 24 երկրներում, ամսական աշխատանքային տեսություն (1/ 38-49)

Հետագա ընթերցանության համար.

Քրիստոֆ Էգլե (2006թ.) «Deutschland: der blockierte Musterknabe», in: Թոմաս Մեյեր (ed.), Praxis der Sozialen Demokratie, Վեսբադեն (էջ 273– 326).

Պետեր Կատզենշտեյն (1987թ.), «Քաղաքականությունը և Արևմտյան Գերմանիայի քաղաքագետները. կիսասուվերեն հանրապետության վերելքը», Ֆիլադելֆիա, Մանֆրեդ Շմիդտ «Das politische System Deutschlands» (2007), Մյունխեն

5.4. Ճապոնիա[19]

Էն Յունգ Լի

Ճապոնիա՝ բացառիկ դեպք

Ակադեմիական քննարկումների ընթացքում որևէ այլ երկիր չի բնութագրվում այնքան տարբեր մեկնաբանություններով, որքան Ճապոնիան: Հատկապես որպես սոցիալական պետություն կամ «սոցիալական հասարակություն», Ճապոնիան ընկալվում է որպես ազատական-պահպանողական սոցիալական պետության ռեժիմ ունեցող երկրից մինչև հզոր սոցիալ-դեմոկրատական ռեժիմ ունեցող երկիր, ինչպես նաև «մարքսիստական անդասակարգ հասարակություն» ուղղվածությամբ պետություն:

ՀՆԱ-ի համաչափությամբ ցածր սոցիալական ծախսեր

Այն պայմանները, որ առկա են Ճապոնիայում, հնարավոր չէ հեշտությամբ ամփոփել ընդունված կաղապարներում: 1955 թվականից յուրաքանչյուր վարչապետ, բացառությամբ 1993-94թթ, եղել է պահպանողական Ազատական-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ: Ինչ վերաբերում է պետության սոցիալական ապահովագրությանն ուղղված գումարներին, Ճապոնիան գտնվում է արդյունաբերական զարգացած պետությունների սանդղակի ամենաստորին մասում: 2001թ. Ճապոնիան, ԱՄՆ-ից և Իռլանդիայից հետո, ՀՆԱ-ի համեմատությամբ ուներ ամենացածր ցուցանիշը սոցիալական ապահովության համար հատկացվող գումարների ցանկում՝ 16,9 տոկոս, երբ Գերմանիան հատկացնում էր 27,4 տոկոս:

Սոցիալական անվտանգության համակարգի բարձր արդյունավետություն

Միաժամանակ Ճապոնիան մի երկիր է, ուր կյանքի տևողության ցուցանիշներն ամենաբարձրն են, մանկական մահացությունը՝ նվազագույնը, ինչպես նաև առկա է զարմանալիորեն հավասարակշռված եկամուտների բաշխում: Այս ամենը Ճապոնիայի սոցիալական անվտանգության համակարգի բարձր արդյունավետության ապացույցն է: Բացի այդ, ըստ հարցումների, ճապոնացիների 90 տոկոսն իրեն համարում է միջին դասի ներկայացուցիչ:

Հաշվի առնելով այս բոլոր առանձնահատկությունները, Ճապոնիային պետք է զգույշ մոտենալ: Հաճախ Ճապոնիայի մասին քննարկումներն առաջ են բերում հակասական հարցեր. արդյոք Ճապոնիան յուրահատո՞ւկ երկիր է, թե՞ ոչ: Եվ պատասխանը պետք է լինի «այո» կամ «ոչ»: Ճապոնիայում, ինչպես և յուրաքանչյուր այլ երկրում, կարելի է գտնել յուրահատուկ և միանման տարրեր: Եվ սա ոչ թե հակասական այլընտրանքի, այլ ավելի շուտ գոյակցության հարց է:

[19] Այս նյութերը վերցվել են 2006թ. Էն Յունգ Լիի «Սոցիալ-դեմոկրատիան Ճապոնիայում» աշխատությունից, ինչպես նաև Թոմաս Մեյերի «Praxis der Sozialen Demokratie» (էջ 374-444)՝ որոշ կրճատումներով:

Քաղաքական համակարգը

Քաղաքական համակարգի զարգացման երեք փուլերը

Ճապոնիայում քաղաքական համակարգը կարելի է բնութագրել որպես խորհրդարանական ժողովրդավարություն: Մի կողմից 1947թ Սահմանադրությունը երաշխավորում է քաղաքացիների հիմնական իրավունքները, մյուս կողմից՝ քաղաքական վիճարկումները և որոշումներ ընդունելու գործընթացները հիմված են քաղաքական կուսակցությունների պայքարի վրա: Քաղաքական համակարգի հետպատերազմյան զարգացումները կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլը (1945-55թթ.) հետպատերազմյան վերականգնման ժամանակաշրջանն է, երկրորդ փուլը (1955-93թթ.) հայտնի է «55 համակարգ» անվանմամբ, մինչդեռ երրորդ փուլը (1993թ.-ից հետո) դիտարկվում է որպես քաղաքական բարեփոխումների ժամանակաշրջան: «55 համակարգ» անվանումն առաջացել է այն փաստից, որ այս համակարգի երկու հիմնասյուները՝ և՛ Ազատական-դեմոկրատական կուսակցությունը (ԱԴԿ), և՛ Ճապոնիայի Սոցիալիստական կուսակցությունը (ՃՍԿ) ստեղծվել են 1955 թվականին: Ազատական կուսակցությունը (*Jiyuto*) և Դեմոկրատական կուսակցությունը (*Minshuto*) միավորվեցին պահպանողական ԱԴԿ-ում, այն դեպքում, երբ ձախ և աջակողմյան սոցիալիստները միավորվեցին ՃՍԿ-ում: Հույս կար, թե երկիրը կզարգանա անգլիական երկկուսակցական համակարգի մոդելով: Սակայն 1960-ականներին արդեն պարզ դարձավ, որ հաստատվել է մեկ կուսակցության բացարձակ գերիշխանություն, որը նման է Շվեդիայում Սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Իտալիայի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության և Հնդկաստանի Ազգային կոնգրես կուսակցության գերիշխանությանը: Բացի 10 ամիս դադարից (1993թ. օգոստոսից մինչև 1994թ. հունիս), ԱԴԿ-ն 1955թ.-ից խորհրդարանում գերիշխող կուսակցություն էր. նրա ներկայացուցիչն էր զբաղեցնում երկրի վարչապետի պաշտոնը:

Սահմանադրություն և հիմնական իրավունքների համակարգ

«Պրոգրեսիվ» սահմանադրություն

1947թ. Սահմանադրությունը, որ սահմանվել էր ամերիկյան ադմինիստրացիայի կողմից՝ գեներալ Դուգլաս ՄաքԱրթուրի գլխավորությամբ, ուժի մեջ մտավ 1947թ. մայիսի 3-ին: Սահմանադրությունը համարվում է բավական պրոգրեսիվ. հոդվածի 9-ը արգելում է վերազինումը, իսկ 25-րդ հոդվածում նշվում է՝

«(1) Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալու մշակույթի և առողջապահական նվազագույն պայմաններ:
(2) Կյանքի բոլոր ասպարեզներում պետությունը պետք է ջանքեր գործադրի ապահովելու և զարգացնելու սոցիալական ապահովությունը և անվտանգությունը, ինչպես նաև առողջապահությունը»:

Սահմանադրության 27-րդ հոդվածն արձանագրում է. «Յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա աշխատելու իրավունք և պարտավորություն»:

Հանձնառությունը սոցիալական պետության հանդեպ

Գերագույն դատարանը, որը հանդիսանում է Ճապոնիայի բարձրագույն մարմինը, բազմիցս սահմանել է, որ 25-րդ հոդվածը չի համարվում իրավունք, այլ պետք է ընկալվի որպես ծրագրային պնդում: Արդյունքում սոցիալական պետության այս հանձնառությունը հիմք է ծառայում պետության և օրենսդրության համար: Սահմանադրությունում հիմնական սոցիալական իրավունքների, ինչպես նաև աշխատանքի իրավունքի սահմանումը պարտադրում է ճապոնական կառավարությանը հաստատել աշխատանքային քաղաքականություն և սոցիալական ապահովություն: Հետևաբար, աշխատատեղերի ստեղծումը և նրանց պահպանումը զբաղեցնում է ճապոնական սոցիալական համակարգի կարևորագույն մասը, մինչդեռ սոցիալական անվտանգության համակարգերը՝ կենսաթոշակներ, առողջապահական համակարգ, գործազրկության ապահովագրություն, պետք է հիմնվեն պետության կայուն ֆինանսական հիմքի վրա:

Քաղաքական տնտեսությունը

Համաձայնեցված տնտեսական շուկա, որը հիմնված է ձեռնարկությունների համագործակցության վրա

Ճապոնիան համարվում է այսպես կոչված «համակարգված շուկայական տնտեսության» երկիր: Նրա ձեռնարկությունների ցանցում առկա է համագործակցությունը՝ ներառյալ միջճյուղային խմբերը և ընտանեկան ընկերությունները: Այս խմբերը հայտնի են որպես «*keiretsu*»: Մասնագետների պատրաստման համակարգը, ինչպես նաև տեխնոլոգիաների փոխանակման գործընթացը, նույնպես կազմակերպված են համաձայն «*keiretsu*» կառույցների: Աշխատավորներին խրախուսվում է ձեռք բերել կոնկրետ մի շարք հմտություններ, որոնք նրանց կապահովեն կայուն աշխատանք: Արհեստակցական միությունները ևս կազմավորված են ձեռնարկությունների հիմքի վրա, ինչը ստեղծում է ձեռնարկության գործունեության հարցերին մասնակցության իրավունքի իրականացման հնարավորություն:

Ճապոնական ձեռնարկությունները ֆինանսավորվում են երկարաժամկետ բանկային վարկերով, որոնք հնարավորություն են ընձեռում որոշակիության հասնել երկարաժամկետ պլանավորումներում՝ թույլ տալով կենտրոնանալ ձեռնարկության երկարաժամկետ զարգացման վրա:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և մինչև 1960-ական թվականները պետության համար աշխատանքի շուկան և աշխատանքի հարցը առաջնային էին: 1960-ականների վերջին և 70-ականների սկզբին ԱԴԿ կառավարությունը սոցիալ-դեմոկրատների ճնշման տակ համակողմանի ընդլայնեց սոցիալական անվտանգու-

թյան համակարգը: Նավթային ճգնաժամից հետո ընդլայնման այս գործընթացները սառեցվել էին, բայց և այնպես այն արդեն անշրջելի էր: Սոցիալական գործընկերների և պետության միջև արդեն կար համաձայնություն, որ աշխատանքի շուկայի վերաբերյալ պետության քաղաքականությունը պետք է ընդլայնվի՝ հաշվի առնելով գլոբալ ինտեգրացիան և դրանից բխող հետևանքներն ու վտանգները:

Աշխատանքի շուկայի ակտիվացման քաղաքականություն

Աշխատանքի շուկայի ակտիվացման քաղաքականության շրջանակներում բազմաթիվ միջոցառումներ էին իրականացվել, այդ թվում նաև աշխատավարձերի սուբսիդավորումը, արտակարգ վարկերի և հետագա կրթության համար ֆինանսների տրամադրումը: Աշխատատեղերի ապահովման գործընթացի ընդլայնումը, ինչպես նաև գործազրկության ցածր մակարդակը, ընդհուպ մինչև 1990-ական թթ. երկրորդ կեսը, ցույց տվեցին, որ այս քաղաքականությունը հաջողված է:

Սոցիալական պետություն

Ընկերության կողմից տրամադրվող սոցիալական նպաստների բազմազանություն

Չնայած Սահմանադրության 25-րդ հոդվածը պարունակում է սոցիալական պետության սահմանում, շատ օրենքներ փոփոխության ենթարկվեցին կամ վերընդունվեցին դեռ 1947թ.-ին: Այնուամենայնիվ Ճապոնիան, հակառակ իր տնտեսական դինամիզմին, սոցիալական պայմանների զարգացման տեսակետից դեռևս վերջին տեղում է: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) այլ երկրների համեմատ, Ճապոնիան ՀՆԱ-ի համամասնությամբ տրվող պետական սոցիալական նպաստների առումով նույնպես ցածր հորիզոնականներում է:

Հաշվի առնելով միայն պետության կողմից տրվող նպաստները, կարելի է թյուր կարծիք կազմել Ճապոնիայի՝ որպես սոցիալական պետության մասին, քանի որ ձեռնարկությունները ևս տրամադրում են սոցիալական նպաստներ, որոնք կազմում են համախառն արտադրանքի 10 տոկոսը: Միջինը կազմակերպություններն ամսական ծախսում են մոտ 570 եվրո յուրաքանչյուր աշխատողի համար և 1000 եվրո՝ ձեռնարկության սոցիալական ապահովության համար:

Ճապոնական սոցիալական պետությունն ուղղված է սահմանելու սոցիալական հավասարություն և սոցիալական ինտեգրացիա, բայց ոչ անհատներին սոցիալական վճարումներ կատարելու, այլ աշխատանքի շուկան բարելավելու և զբաղվածության քաղաքականության զարգացման և այդ ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու միջոցով:

Կենսաթոշակներ

Կենսաթոշակներ. 1973թ. իրականացված բարեփոխումների շրջանակներում կենսաթոշակները՝ «կենսաթոշակառուների հաշվառման» աշխատողների ապա-

հովագրական գումարները բարձրացվեցին միջին աշխատավարձի 45 տոկոսի չափով՝ միջին ապրուստի ցուցանիշին համապատասխան: 1985թ. կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում աստիճանաբար մուծումների դրույքաչափերն ավելացան, ինչպես նաև իջեցվեցին կենսաթոշակների վճարման դրույքաչափերը, որպեսզի 2025թ.-ին փոքր-ինչ վերացվեն երկրի բնակչության արագ ծերացման արդյունքում առաջացող ֆինանսական վտանգները: Այսպես կոչված ազգային կենսաթոշակային ապահովագրությունը որպես հավելում ներդրվեց բոլորի համար գործող պարտադիր ապահովագրության գործում: Այն նախատեսված էր ապահովելու ապահովագրության բազային մակարդակը:

2000թ. տվյալներով՝ ազգային կենսաթոշակների համակարգի ծերության համար տրամադրվող միջին կենսաթոշակային գումարը կազմում էր ամսական մոտ 400 եվրո: 2001թ. 65 տարին լրացած ազգաբնակչության 98 տոկոսը գումար էր ստանում ազգային կենսաթոշակներից: Մեծ մասը նաև իր ձեռնարկությունից էր կենսաթոշակ ստանում, որը կազմում էր ամսական մոտ 800 եվրո, կամ միանվագ նպաստ՝ աշխատանքային տարիների 64 ամսվա միջին աշխատավարձի չափով:

Առողջապահական համակարգ

Առողջապահական համակարգ: Առողջապահական համակարգը հիմնված է ունիվերսալության սկզբունքի և պետական երաշխիքների վրա: Բացի համակարգի ծրագրերից, առողջության պահպանման ծրագիրը տարածվելու է կարիքավորների և նրանց վրա, ովքեր չունեն առողջապահական ապահովագրություն: 1984թ. աշխատավորների առողջապահական ապահովագրության համակարգում բարեփոխումները պարտադրեցին նրանց այդ համակարգ մուտքագրել եկամտի 10 տոկոսը, որը հետագայում ավելացավ՝ հասնելով 20-30 տոկոսի: Սա ազգային առողջապահական համակարգը հասցրեց այն աստիճանի, որ այդ ապահովագրությունը տրամադրվում էր նաև նրանց, ովքեր այլևս աշխատավորների առողջապահական համակարգի շահառուներ չէին (օրինակ՝ ինքնազբաղվածները, ֆերմերները, փոքր ընկերությունների աշխատակիցները և ընտանիքի անդամները): Մուտքերի գումարները, անձնական ավանդի գումարի 30 տոկոսի չափով, պահպանվեցին երկար ժամանակ:

Կրթական համակարգ

Կրթական համակարգ: Կրթությունը Ճապոնիայի սոցիալական պետության համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում: 2001թ. տվյալներով, ճապոնացիների 93,9 տոկոսն ավարտելով պարտադիր կրթությունը (9 տարի), շարունակել է ուսումը: Եթե հաշվարկվի հեռակա ուսուցման և երեկոյան դպրոցների թիվը, ապա կստացվի մոտ 97,3 տոկոս: Այնուամենայնիվ, միջազգային չափանիշների համեմատությամբ կրթության ասպարեզում պետության կողմից հատկացվող գումար-

ները չնչին են և 1999թ. տվյալներով կազմում են ՀՆԱ -ի 3,5 տոկոսը: Ճապոնիայի կրթության նախարարությունն այս փաստը բացատրում է նրանով, որ գոյություն ունի մասնավոր կրթական հաստատությունների համեմատաբար բարձր մասնաբաժին. երկրի համալսարանների 77,5 տոկոսը մասնավոր են:

Զբաղվածության մակարդակը 2006թ.	70 %	Մարդկանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Կանանց զբաղվածության մակարդակը 2006թ.	58,8 %	Կանանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Գործազրկության մակարդակը 2006թ.	4,1 %	Գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Երկարաժամկետ գործազրկության մակարդակը 2006թ.	1,4 %	Երկարաժամկետ գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Եկամուտների անհավասարությունը 2006թ. ըստ Ջինիի գործակցի	24,9 %	Հարաբերակցությունն ընդգրկում է եկամուտների անհավասարությունը, որքան բարձր է ցուցանիշը, այնքան բարձր է անհավասարության տոկոսը (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Աղքատության ցուցանիշը 2006թ.	11,7 %	Աղքատության ցուցանիշն իր մեջ ներառում է մի շարք ցուցանիշներ (կյանքի տևողություն, գրագիտության աստիճան, առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն) 0=նվազագույն աղքատության աստիճան, 100=առավելագույն աղքատության աստիճան (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Կրթություն. սոցիալ-տնտեսական հիմքերի կարևորությունը կրթության համար	7,4 %	Ուսանողների մասնակցության համամասնությունը կախված է նրանց սոցիալ-տնտեսական հիմքերից (աղբյուրը՝ ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն), PISA (Սովորողների կրթական ձեռքբերումների ու նվաճումների գնահատման միջազգային ծրագիր) ուսումնասիրությունները, 2006թ.).
Արհեստակցական միությունների խտությունը 2003թ.	19,7 %	Արհեստակցական միություններում ընդգրկված տնտեսապես ակտիվ բնակչության համամասնությունը (Վիսեր, 2006թ. անդամակցությունը արհեստակցական միություններում 24 երկրներում, ամսական աշխատանքային տեսություն (1/ 38-49)

Հետագա ընթերցանության համար.
Էն Յունգ Լի (2006թ.), «Soziale Demokratie in Japan. Elemente Sozialer Demokratie im japanischen System», in: Թոմաս Մեյեր (ed.), Praxis der Sozialen Demokratie, Վեստբադեն (էջ 374– 444)

Ամփոփում

Ճապոնիայում առկա են սոցիալ-դեմոկրատիայի տարրեր: Այնուամենայնիվ, այլ երկրների համեմատ, այստեղ սոցիալ-դեմոկրատիան գոյացել է առանց սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կամ սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական հիմքերի: Ճապոնական բյուրոկրատական, ակադեմիական և քաղաքական վերնախավը բնութագրվում են որպես հաստատակամ որոշումներ սահմանելու կոմսակից՝ անկախ որևէ գաղափարախոսությունների կամ դոգմաների, և այս նպատակին հասնելու համար այն ամբողջ աշխարհից վերցնում և յուրացնում է տեղեկատվություն, գաղափարներ և կոնցեպցիաներ:

Ճապոնական համակարգի թերություններից մեկն էլ այն է, որ թե՛ տեսական, թե՛ գործնական բնագավառներում երկրում քիչ ուշադրություն է դարձվում ազգային փոքրամասնությունների ինտեգրացմանը: Աշխատանքային ներգաղթն այստեղ սկսվել է վաղուց և ապագայում էլ հավանաբար կաճի: Հետագա բարելավման բնագավառ է համարվում նաև գենդերային հավասարության հարցը:

Այս չլուծված հարցերը ստվեր են նետում Ճապոնիայի՝ թեև բավականին զարգացած և արդյունավետ սոցիալական ապահովության համակարգով սոցիալ-դեմոկրատիայի վրա: 1980-ական թթ. սոցիալական բարեփոխումներից հետո քաղաքական բանավեճերում Ճապոնիայի տնտեսության ինտերնացիոնալացման և գլոբալիզացման համար այն այլևս չի բնութագրվում որպես խոչընդոտ: 1990-ական թթ. գործատուների կազմակերպությունները կոչ էին անում սահմանելու աշխատանքային կառույցների ճկունություն և հիմական աշխատուժի առանձնացում, ինչպես նաև տնտեսության կանոնավորում, որպեսզի հնարավոր լինի դիմակայել տնտեսական անկմանն ու գլոբալ մրցակցությանը: Այն պայմաններում, երբ նրանք այլևս ի վիճակի չեն իրականացնելու աշխատանքի շուկայի պահանջների որևէ առաջընթաց, նույնիսկ գործատուների կազմակերպություններն էին հրաժարվում դրանցից և անդամ կազմակերպություններին ու պետությանը կոչ էին անում բարձրացնել զբաղվածության և մասնագիտական որակավորման մակարդակները: Հիմվելով լայնածավալ և արդյունավետ սոցիալական ապահովության համակարգի և վերը նշված թերությունների ու խնդիրների վրա, Ճապոնիան կարելի է բնութագրվել որպես չափավոր սոցիալ-դեմոկրատիա ներառող երկիր: Այս փաստը հատկապես ուշագրավ է նրանով, որ Գերմանիան նույնպես բնութագրվում է որպես չափավոր սոցիալ-դեմոկրատիա ներառող երկիր, չնայած այստեղ պետության կազմակերպման, սոցիալական և տնտեսական մոդելները հիմականում տարբեր են:

5.5. Շվեդիա

Էրիկ Գուրգդիս

Սոցիալական պետության կարգավիճակի պահպանում

Շվեդիան նույնիսկ այսօր, գլոբալիզացիայի այս դարաշրջանում էլ դեռ ի վիճակի է պահպանելու սոցիալական պետության իր կարգավիճակը, հատկապես ընդարձակ հանրային սոցիալական անվտանգության նպաստների և լավ զարգացած հանրային ծառայությունների ոլորտը: Օրինակ՝ շվեդներն ունեն ազատ մուտքի հնարավորություն կրթական համակարգ՝ տարրական դպրոցներից մինչև համալսարաններ, բացառությամբ մուտքի համար վճարվող նոմինալ գումարի: Առողջապահական համակարգը նույնպես անվճար է, գործազուրկները ստանում են նախկին աշխատավարձի 80 տոկոսի չափով նպաստ, ծերության հետ կապված պետական կենսաթոշակային համակարգը տրամադրում է հարկային ֆինանսավորմամբ երաշխավորված կենսաթոշակներ այն մարդկանց, ովքեր ունեն ոչ բավարար եկամուտներ:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ շվեդների տնտեսապես ակտիվ բնակչության 1/3-ն աշխատում է հանրային սեկտորում, ինչը նշանակում է, որ հարկերի և ներդրված ավանդի հարաբերակցությունը ՏՀԶԿ երկրների շրջանակներում հանդիսանում է ամենաբարձրը, ինչպես նաև այն փաստը, որ 1990-ականներին Շվեդիայում տեղի ունեցավ տնտեսական ճգնաժամ, որը համարվում էր ամենավատագույնը, ապա հարց է առաջանում, թե ինչպե՞ս կարելի է գլոբալիզացիայի այս դարաշրջանում պահպանել սոցիալական պետությունը:

Քաղաքական մշակույթը ձևավորված է սոցիալ-մշակութային միատարրության վրա

Հատկապես պետք է ընդգծել Շվեդիայում ձևավորված քաղաքական մշակույթը և շվեդական մենթալիտետը, որն անհիշելի ժամանակներից հիմնված է սոցիալական հավասարության գաղափարի վրա: Այն բխել է հին գերմանական գաղափարից, որը Շվեդիայի համեմատաբար հետամնաց ֆեոդալիզմն անկարող գտնվեց մարելու: Ականավոր սոցիալ-մշակութային հեգեմոնիան, համենայն դեպս մինչև վերջին տարիները, ուներ այլ բացատրություններ: Համեմատաբար անկախ համայնքները որոշիչ դեր ունեին տեղական կյանքում: Շվեդիան մի երկիր է, որտեղ աշխարհագրական դիրքը թույլ էր տալիս լինելու որոշակի մեկուսացման մեջ և ազգային գիտակցությունում մեծ դեր են խաղում տեղական ադմինիստրացիաները: Այստեղ կենտրոնական օրենքները և կենտրոնական ֆինանսները տրամադրվում էին հավասարապես՝ բնակչության կենսամակարդակի միանման ստանդարտներ ապահովելու նպատակով:

Քաղաքական համակարգ, որը հիմված է կոնսենսուսի և ինտեգրացիայի վրա

Քաղաքական համակարգը

Շվեդիայի քաղաքական համակարգում բանակցությունների և ինտեգրացիայի հարցում մեծ նշանակություն ունի կոնսենսուսի դերը: Բացի այդ, շվեդական օրենսդրական գործընթացները բնութագրվում են քաղաքացիական հասարակության գործընթացներին մասնակցության բարձր ինստիտուցիոնալացմամբ: Այս գործընթացների սկզբում կառավարությունը կազմում է հատուկ հանձնաժողով՝ պարզելու տվյալ գործընթացը: Չնայած կառավարությունն է իր վրա վերցնում այս հարցը, խորհրդարանը, պետական մարմինները և նույնիսկ հասարակական խմբերն էլ կարող են դա անել: Հանձնաժողովը, կախված օրենքից, կազմվում է քաղաքագետներից, փորձագետներից, ինչպես նաև սոցիալական խմբերի ներկայացուցիչներից, ովքեր կազմում են մի հիմական դիրքորոշում, որն էլ հիմք է դառնում հետագա քննարկումների համար: Փոխզիջման և կոնսենսուսի կողմնորոշում ունեցող հասարակությունն ընդգծում է այսպես կոչված *«բացթողումների»* գործընթացը:

Սոցիալ-դեմոկրատիայի իշխող դիրքը

1930-ականներից ի վեր սոցիալ-դեմոկրատիայի գաղափարը Շվեդիայի քաղաքական ասպարեզում զբաղեցնում է իշխող դիրք: Մեծ ճգնաժամի թեժ ժամանակաշրջանում, հակառակ տնտեսական հիմական ուղղությանը, վարկային ֆինանսավորմամբ սկսեցին իրականացվել հանրային աշխատանքային ծրագրեր, որոնց նպատակը ենթակառուցվածքների և բազմանդամ ընտանիքների ընտանեկան պայմանների բարելավումն էր: «Կենտրոնական Եվրոպայում մարդիկ փողոցներում փորձում էին տեղադրել բարիկադներ: Շվեդիայում մենք փորձում էինք հասնել առաջընթացի՝ կառուցելով կամուրջներ»,– ընդգծելով զբաղվածության ծրագրի հետևողականությունը, նշում էր Թեյջե Էրլանդերը, որ երկար տարիներ զբաղեցրել է վարչապետի պաշտոնը: Զբաղվածության ծրագրի հաջողությունը խթանեց ոչ միայն Սոցիալ-դեմոկրատական աշխատավորական կուսակցության ընտրազանգվածի թվի, այլ նաև նրա անդամների ավելացմանը, ինչպես նաև LO (*Landsorganisationen*) արհեստակցական միությունների ստեղծմանը, որոնք հենվում էին իրենց դաշնակիցների վրա: Սոցիալ-դեմոկրատիայի գերիշխող դիրքերը ողջունում էր նույնիսկ կենտրոնական-աջակողմյան ընդդիմությունը: «Սոցիալիստական բլոկը», կազմված լինելով սոցիալ-դեմոկրատներից, կանաչներից և ձախերից, ինչպես նաև նախկին կոմունիստներից, միացավ այսպես կոչված «բուրժուական» կամ աջակենտրոն բլոկին, որը կազմված էր պահպանողականներից, ազատականներից և նախկին ֆերմերների կուսակցությունից և քրիստոնեադեմոկրատներից: Վերջիններս էլ 2006թ. կազմեցին կառավարությունը: Չնայած ընտրություններում այսպես կոչված կենտրոնաջակողմյան բլոկի հաղթանակին՝ «Ալյանս

Շվեդիայի համար» կուսակցությունների մեծամասնությունը կողմակից էր սոցիալական պետությանը:

Սահմանադրությունը և հիմնական իրավունքների համակարգը

Բացասական և դրական քաղաքացիական ազատությունները և իրավունքները Սահմանադրության մեջ

Շվեդիայի Սահմանադրությունն ապահովում է ոչ միայն բացասական, այլև դրական և հեռագնա քաղաքացիական իրավունքներ և ազատություններ: Հիմնական սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները, այսինքն՝ դրական քաղաքացիական իրավունքները և ազատությունները, ի տարբերություն մյուս հիմնական քաղաքական իրավունքների, ոչ թե իրավաբանորեն պարտավորեցնող են, այլ քաղաքական նպատակներ են, որոնց պետք է հասնել: Օրինակ՝ Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է. «Անհատի անձնական, տնտեսական և մշակութային բարեկեցությունը պետք է լինի հանրային գործունեության հիմնական նպատակը: Մասնավորապես այն պետք է պարտավորեցնի հանրային ադմինիստրացիային երաշխավորելու աշխատանքի, ապրելու և կրթության իրավունքը, ինչպես նաև աջակցի սոցիալական նպաստների և սոցիալական անվտանգության ապահովմանը և կյանքի բարեկեցիկ պայմաններ ստեղծելուն»: Սոցիալ-քաղաքական նպատակները, անկախ նրանից՝ ունե՞ն օրինական հիմք, թե՞ ոչ, Սահմանադրության մեջ զբաղեցնում են կարևոր տեղ և երաշխավորում են բարձր հասարակական գիտակցություն: Սա իր արտացոլումն է գտել նաև Շվեդիայի՝ որպես սոցիալական պետության կերտման և նրա շուկայական տնտեսության մեջ:

Քաղաքական տնտեսությունը

Ռեյն-Մայդների մոդելը

1950-ական թթ. LO արհմիութենական կոնֆեդերացիան հանդես եկավ Ռեյն-Մայդների մոդելով: Այս մոդելը, ի տարբերություն Կեյնեսյան տեսակետի, ըստ որի պետք է ապահովվեր լիակատար զբաղվածություն, իր մեջ ներառում է տնտեսական ցիկլի ընթացքում համախառն պահանջարկը պահպանելը: Այս մոդելի փաստարկներից մեկը հետևյալն է՝ քանի որ տնտեսության տարբեր ճյուղեր զարգանում են տարբեր տեմպերով, համախառն արտադրանքի բարձր պահանջարկը բերում է մատակարարման թուլացման: Սա բերում էր նրան, որ այդ փսասված ճյուղերում բարձրացվում էին աշխատավարձերը, ինչը հետագայում դառնում էր գնաճի պատճառ: Միջին ժամկետներում այս ամենը հանգեցնում էր այն բանին, որ այլ ճյուղերում ևս բարձրացվում էին աշխատավարձերը, ինչպես նաև այլ ասպարեզներում ևս աճում էին գները: Այս գնաճն ի վերջո նվազեցնում էր երկրի տնտեսական մրցակցությունը միջազգային ասպարեզում:

Հանրային սեկտորի նշանակությունը

Որպեսզի կուտակված պահանջարկը նվազեցվի, հանրային սեկտորը տնտեսական ցիկլի ընթացքում պետք է ավելցուկ տա: Այն պետք է իրականացվի առաջին

հերթին իջեցնելով ազգային պարտքի չափը՝ երկարաժամկետ ծրագրերով ապահովելով սոցիալական համակարգը ծերացող հասարակությունից և, վերջապես, ֆինանսավորելով հակաճգնաժամային գործողությունները:

Սակայն պահանջարկի այսպիսի նվազեցումը վտանգի է ենթարկում բոլոր այն ձեռնարկությունները և այն աշխատատեղերը, որոնք ունեն քիչ արտադրողականություն և ծախսատար են: Շվեդիայում Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր LO արհմիությունները վարում են այսպես կոչված համերաշխ աշխատավարձային քաղաքականություն, որը հիմնված է հետևյալ սկզբունքի վրա. «Հավասար աշխատավարձ՝ հավասար աշխատանքի պայմաններում», ինչը նշանակում է, որ աշխատավարձերը պետք է բարձրացվեն արտադրողականության բարձրացմանը զուգահեռ: Այն ձեռնարկությունները, որոնք ունեն միջինից ցածր արտադրողականություն, աշխատավարձ պետք է վճարեն ըստ համերաշխ աշխատավարձային պայմանների, որը կողմնորոշված կլինի դեպի միջին արտադրողականությունը: Իսկ այն ձեռնարկությունները, որոնք ունեն բարձր արտադրողականություն, նույնպես պետք է հիմնվեն միջին աշխատավարձի վրա, որը չպետք է անցնի թույլատրելի սահմանը: Արդյունքում առաջացած գերշահույթը պետք է օգտագործվի նոր ծրագրերը ֆինանսավորելու համար, ինչն էլ կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Գործազրկության նվազեցման հետ կապված միջոցառումները որպես հասարակական պարտավորություններ

Այս հարկաբյուջետային և համերաշխ աշխատավարձի քաղաքականության արդյունքում տուժողներն այնուամենայնիվ այն ձեռնարկություններն են, որոնք ունեն քիչ արտադրողականություն: Նրանցում ընդգրկված ցածր արտադրողականություն ունեցող աշխատուժն էլ հենց գործազրկության ամենառիսկային խումբն է կազմում: Առաջացող գործազրկությունը, սակայն, չի ընկալվում որպես հասարակական խնդիր, այլ հակառակը՝ ընդունվում է որպես հասարակական մարտահրավեր, որը պետք է իր լուծումը գտնի ակտիվ աշխատանքային շուկայական քաղաքականության զարգացմամբ: Ուսուցման, ինչպես նաև աջակցության բազմակողմանի ծրագրերն օգնում էին, որպեսզի գործազուրկները սովորեն և նրանցից պատրաստվեն արդյունավետ մասնագետներ և ապահովվեն բարձր աշխատավարձով: Սահմանափակ հարկաբյուջետային համակարգի, համերաշխ աշխատավարձի և ակտիվ աշխատանքային շուկայի քաղաքականության պայմաններում ձեռնարկատերերը համաձայնության են եկել մշտապես նորարարություններ մտցնելու և կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու Շվեդիայի տնտեսությունում՝ նրա համաշխարհային մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

Սա նաև Շվեդիայի՝ 90-ական թթ. ճգնաժամից արագ դուրս գալու բացատրությունն է, քանի որ զարգացած և ակտիվ աշխատանքային շուկան և արհես-

տակցական միությունները նախընտրում են ստեղծել բարձր արտադրողականությամբ լչացուցիչ աշխատատեղեր, որպեսզի կարողանան պահպանել նաև այն աշխատանքները, որոնք ունեն ցածր արտադրողականություն: Նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստում են նաև նորամուծությունները: Շվեդական արտադրանքի արտահանումը վերջին հինգ տարիներին ավելացել է 1/3-ով՝ 33 տոկոսից հասնելով 45-ի:

Սոցիալական պետություն

Հետպատերազմական տնտեսական աճի պայմաններում Շվեդիան ենթարկվեց արագ փոփոխությունների. կարիքավորների և ֆերմերների հասարակությունից այն արագ վերափոխվեց «աշխատավորների հասարակության»՝ օգտվելով մասնավոր սեփականության բարիքներից: Այս արագ զարգացումների պայմաններում սոցիալական կառույցներում գոյություն ունեցող ապահովագրական համակարգը երաշխավորում էր միանման կենսաթոշակներ, և թվում էր, թե արդեն ի վիճակի չէ բավարարելու կարիքավոր ընտրողների պահանջները, ինչը հարկավոր էր իշխանությանը տեղում մնալու համար: Այնուամենայնիվ Շվեդիան, որպես սոցիալական պետություն, նախընտրում է իր քաղաքացիներին պահպանել անկանխատեսելի հանգամանքներից, քան որևէ նպաստ տրամադրել:

Հասարակության կառուցվածքային զարգացումները բերում են սոցիալական քաղաքականության կողմնորոշման փոփոխության

Գոյություն ունի նաև լավ զարգացած հասարակական ծառայությունների համակարգ, որն անվճար հիմունքներով խնամում է երեխաներին և մեծահասակներին, առողջապահական և կրթական համակարգեր, ինչպես նաև կրթական և աշխատանքային շուկայական քաղաքականության շրջանակներում մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրեր՝ «Յուրաքանչյուրը վճարում է իր հարկերի մասնաբաժինը՝ եկամուտներին համապատասխան, իսկ այն, ինչ տրամադրում է պետությունը, ոչ թե այն գումարներն են, որ դու վճարել ես աշխատանքի ընթացքում, այլ հնարավորություն՝ վերագտնելու ինքդ քեզ: Սրանք ոչ թե շուկայում տեղի ունեցող գործընթացների, այլ քաղաքական գործընթացների արդյունք են» (Մայդներ/ Հեդբորգ, 1984թ., 56):

Տրամադրելով տևական աշխատանք, հանրային ծառայությունների ընդլայնման կարելի է հասնել միայն կանանց դերի ակտիվացման շնորհիվ: 1960-1990-ական թթ. եվրոպական այլ երկրների համեմատ, Շվեդիայում տնտեսապես ակտիվ կանանց զբաղվածությունն աճել է մոտ 50 տոկոսով, իսկ ընդհանուր աշխարհի ցուցանիշներով՝ 83 տոկոսով: Կանայք, որ աշխատանքի հարցով համարվում էին հանրային ծառայությունների հիմնական շահառուները, դարձան սոցիալ-դեմոկրատների պոտենցիալ ընտրազանգվածը:

Սոցիալական պետության սյուները դասակարգված են հետևյալ կերպ.

Կենսաթոշակներ

Կենսաթոշակներ. 1950-ականների կեսերին LO արհմիութենական կոնֆեդերացիայի նախաձեռնությամբ առաջարկվել էր կենսաթոշակների հավելյալ ֆինանսավորում: Այդ առաջարկը ստրատեգիական փոփոխություն էր՝ անցում ունիվերսալ հիմնական ապահովագրությունից դեպի անհատական ապահովագրություն, որն ուղղվելու էր կենսական հիմնական ստանդարտների պահպանմանը: Այս միջոցով սոցիալ-դեմոկրատները հույս ունեին իրենց համակիրների շարքերում ընդգրկել առավել շատ «սպիտակ օձիքներով» աշխատավորների, որպեսզի ընդլայնեն իրենց ընտրողների շարքերը:

Գործազրկության ապահովագրություն

Գործազրկության ապահովագրություն. Ի տարբերություն սոցիալական ապահովագրության այլ համակարգերի, գործազրկության ապահովագրությունը հիմված է կամավորության սկզբունքի վրա և հրապարակավ սուբսիդավորվում է: Մինչև 2007թ. բարեփոխումները, արհեստակցական միությունների անդամներն ընդգրկված էին գործազրկության հիմնադրամներում: Աշխատավորների մոտ 90 տոկոսն այս հիմնադրամների անդամ էր: Այդ հիմնադրամները մինչև 2007թ. ֆինանսավորվում էին անդամների համեստ ներդրումներից և պետական բյուջեից: Գոյություն ուներ նաև հիմնական պետական նպաստների համակարգ նրանց համար, ովքեր գործազուրկ էին:

Սոցիալական աջակցություն

Եկամուտների աջակցություն. Շվեդիայում եկամուտների աջակցությունը գտնվում է Առողջապահության նախարարության և Սոցիալական անվտանգության ծառայության պատասխանատվության ներքո, սակայն այն կազմակերպված է տեղական իշխանությունների կողմից և հիմնականում ֆինանսավորվում է տեղական հարկերից: Եկամուտների աջակցության մակարդակը սահմանվում է Ազգային առողջապահության հանձնաժողովի և Սոցիալական ապահովության կողմից՝ հիմնվելով կենսական մակարդակի սահմանների վրա:

Առողջապահական համակարգ

Առողջապահական համակարգ. Շվեդիայի բոլոր բնակիչները գրեթե անվճար հիմունքներով ունեն բուժօգնության իրավունք: Այս համակարգը գտնվում է շրջանային խորհուրդների իրավասության ներքո և հիմնականում ֆինանսավորվում է եկամտահարկերից: Հնարավոր է առողջապահական ծառայությունների համար պահանջվի որոշ գումար, որը երկրի տարբեր շրջաններում տարբեր է: Բացի այդ, նրանք, ովքեր տարեկան վաստակում են 6000 կրոնից ավելի, իրավունք ունեն ստանալու հատուցում իրենց կորցրած պոտենցիալ եկամուտների դիմաց: Առողջապահական ապահովագրությունը ֆինանսավորվում է գործատուների պար-

տադիր ավանդներից, ինչպես նաև ապահովագրական ներդրումներից, որոնք վճարվում են հարկերից զատ:

Ունիվերսալության սկզբունքը

Չնայած այսօր Շվեդիան ՏՀՁԿ երկրներում ամենաշատ հարկերի հարաբերակցությամբ երկիրն է, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ սոցիալական ապահովագրությամբ այս երկիրը «թանկ» է: ԱՄՆ-ի քաղաքացիները ևս բավականին մեծ գումարներ են վճարում գործազրկության ապահովագրության, առողջապահության, ծերության և այլ հիմնական ապահովագրությունների համար: Այս երկու երկրների տարբերությունն այն է, որ Շվեդիայում ապահովագրված են անխտիր բոլորը, իսկ ԱՄՆ-ում նրանք, ովքեր վճարունակ չեն, դուրս են մնում ապահովագրական մասնավոր համակարգից:

Եթե գլոբալիզացիայի արդյունքում տնտեսական սահմանները բացվում են, ապա միջազգային արտահանումը ներքին շուկայում ստեղծում է խնդիրներ այն ձեռնարկությունների համար, որոնք ունեն ցածր արտադրողականություն: Եթե այժմ աշխատանքներ իրականացվեն այն ուղղությամբ, որ ցածր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունների աշխատողները չմտածեն աշխատանքը կորցնելու մասին, ընձեռելով նրանց ուսման հնարավորություններ և եկամուտների ապահովագրություն, ապա տնտեսական քաղաքականությունում նման հարցերից խուսափելու համար կստեղծվեն առավել մեծ հնարավորություններ և ներքին շուկայում կկրճատվեն քաղաքական ծախսերը: Երկրի սոցիալական քաղաքականությունն ուղղված է ուսումնական և կենսական հիմնական ստանդարտների ապահովմանը, այսինքն՝ ուղղված է ապահովելու նրանց, ովքեր տնտեսապես առավել վատ վիճակում են:

Կրթական համակարգ

Կրթական համակարգ. Քանի որ ժամանակակից արդյունաբերական և հասարակական ծառայությունների հիմնական «հումքը» կրթությունն է և այն արդյունավետ օգտագործելու կարողությունը, կրթական համակարգը ստրատեգիական կարևորություն է ձեռք բերում հետագայում՝ գլոբալացված տնտեսական պայմաններում զարգանալու համար: Շվեդիան այս տեսակետից ևս շահեկան վիճակում է, քանի որ կրթությունը, նախադպրոցական մակարդակից մինչև համալսարանական, տրամադրվում է գրեթե անվճար:

Շվեդիայում կրթությունը պարտադիր է 7-16 տարեկան երեխաների համար, և բոլոր երեխաները հաճախում են համալիր դպրոցներ՝ *Grundskola*: Ավարտողների 90 տոկոսը հաճախում է նաև 3 տարի տևողությամբ և ոչ պարտադիր գիմնազիա՝ *Gymnasieskola*. Այսպես կոչված *Högskola* կամ «քոլեջները», կամ երկրորդական

բարձրագույն համալսարանները բաց էին բոլորի համար մինչև 1970-ական թթ.: Համալսարանն ընդունում էր այնքան ուսանող, ինչքան տեղ ուներ, իսկ մյուսները հերթագրվում էին և ներառվում ցուցակներում: Այստեղ նաև առկա էր զարգացած կրթական համակարգ մեծահասակների համար:

Եվ, վերջապես, ռազմավարական կարևորություն ունեցող միջին դաս. Սկանդինավյան սոցիալական պետությունը կգոյատևի այնքան, ինչքան միջին դասի ներկայացուցիչներին կգոհացնեն այն նպաստները, որոնք նրանք ստանում են: Նրանք են կատարում ներդրումների ահռելի մասնաբաժինը և հետևաբար ակնկալում են բարձրորակ ծառայություններ: Այնուամենայնիվ, եթե հանրային ապահովագրական ծառայություններն այլևս չգոհացնեն հասարակությանը, այն կուղղվի դեպի մասնավոր ապահովագրության սեկտոր: Բնականաբար ոչ ոք չի ցանկանում մի բանի համար վճարել կրկնակի, այնպես որ շատ շուտով դա իր արձագանքը կգտնի ընդդիմությունում: «Սա միայն կարիքավորների և անապահովների ապահովագրության հարցը չէ, - նշում է Հարզ IV-ը, - այլ նաև ողջ բնակչության ապահովումն է նպաստների բարձր մակարդակով»: Սա սոցիալական պետության սկանդինավյան պատասխանն է:

Հիմվելով Սահմանադրությունում բացասական և դրական քաղաքական իրավունքների և ազատությունների ամրապնդման վրա, Շվեդիայում հիմնական իրավունքները ոչ միայն զուտ ֆորմալ բնույթ են կրում, այլ նաև գործադրվում են իրականում: Հետևաբար Շվեդիան կարող է բնութագրվել որպես ամենաշատ սոցիալ-դեմոկրատիա ներառող երկիր:

Զբաղվածության մակարդակը 2006թ.	73,6 %	Մարդկանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Կանանց զբաղվածության մակարդակը 2006թ.	70,7 %	Կանանց քանակը, ովքեր ընդգրկված են աշխատանքի ոլորտում (15-64)՝ բնակչության ընդհանուր թվի համեմատ (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Գործազրկության մակարդակը 2006թ.	7,1 %	Գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Երկարաժամկետ գործազրկության մակարդակը 2006թ.	1,1 %	Երկարաժամկետ գործազուրկների համամասնությունը տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում (աղբյուրը՝ «Եվրոստատ»)
Եկամուտների անհավասարությունը 2006թ. ըստ Ջինիի գործակցի	25 %	Հարաբերակցությունն ընդգրկում է եկամուտների անհավասարությունը, որքան բարձր է ցուցանիշը, այնքան բարձր է անհավասարության տոկոսը (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Աղքատության ցուցանիշը 2006թ.	6,5 %	Աղքատության ցուցանիշն իր մեջ ներառում է մի շարք ցուցանիշներ (կյանքի տևողություն, գրագիտության աստիճան, առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն) 0=նվազագույն աղքատության աստիճան, 100=առավելագույն աղքատության աստիճան (աղբյուրը՝ «Մարդկային զարգացման զեկույց»)
Կրթություն. սոցիալ-տնտեսական հիմքերի կարևորությունը կրթության համար	10,6 %	Ուսանողների մասնակցության համամասնությունը կախված է նրանց սոցիալ-տնտեսական հիմքերից (աղբյուրը՝ ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն), PISA (Սովորողների կրթական ձեռքբերումների ու նվաճումների գնահատման միջազգային ծրագիր) ուսումնասիրությունները, 2006թ.).
Արհեստակցական միությունների խտությունը 2003թ.	78 %	Արհեստակցական միություններում ընդգրկված տնտեսապես ակտիվ բնակչության համամասնությունը (Վիսեր, 2006թ. անդամակցությունը արհեստակցական միություններում 24 երկրներում, ամսական աշխատանքային տեսություն (1/ 38-49)

6. ԵԶՐԱՓԱԿԵԼՈՎ՝ ԴԵՊԻ ՍԿԻԶԲ

Ո՞րն է սոցիալ-դեմոկրատիայի հիմքերի վերաբերյալ այս գիրքն ամփոփելու ամենալավ եղանակը: Միջոցներից մեկը արդյունքների ամփոփումն է՝ նշելով դրանց նշանակությունը և ամեն բան թողնելով իր տեղում: Բայց, միևնույն է, կլինեն բացթողումներ, քանի որ, ինչպես այս գիրքը ներկայացրեց, սոցիալ-դեմոկրատիան չի կարելի ուղղակի եզրափակել ո՛չ որպես կոնցեպտուալ մոդել, ո՛չ էլ որպես քաղաքական խնդիր: Հակառակը, եթե սոցիալ-դեմոկրատիան պետք է հաջող իրականացվի որպես գաղափար և քաղաքական գործունեություն, պետք է բազմիցս թեստավորվի, ադապտացվի և վերաիմաստավորվի:

Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերյալ բանավեճերի առանձնահատկությունն այն է, որ սոցիալ-դեմոկրատիան ինքը ստատիկ վիճակում չէ, հետևում է հասարակական զարգացումներին, ռիսկերի է գնում, օգտագործում է հնարավորությունները և ապա իրականացվում է քաղաքականապես: Այս ամենը սոցիալ-դեմոկրատիան առանձնացնում է մյուս քաղաքական մոդելներից, այն չի կառչում նրանից, ինչն արդեն ժամանակավրեպ է, ցանկանում է փոխել իրականությունը և պատրաստ է նոր մարտահրավերների:

Ամենագլխավոր մարտահրավերներից մեկն այսօր և հետագա 10 տարիներին լինելու է գլոբալիզացիայի խնդիրը: Սա և՛ ռիսկերի, և՛ նոր հնարավորությունների հանգրվան է: Գերմանիայի ՍԴԿ-ն իր Համբուրգյան ծրագրում սահմանեց այն խնդիրները, որոնք սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից առաջանում են գլոբալիզացիայի հետևանքով:

Բարգավաճում, արդարություն և ժողովրդավարություն
«21-րդ դարը համարվում է իրական գլոբալիզացիայի դարաշրջան: Ողջ աշխարհում մարդիկ երբեք իրարից այսքան կախման մեջ չեն եղել, ինչքան հիմա: […]
Այս դարաշրջանը կա՛մ լինելու է սոցիալական, էկոլոգիական և տնտեսական առաջընթացի ժամանակաշրջան, որը բոլորին բերելու է առավել բարգավաճում, արդարություն և ժողովրդավարություն, կա՛մ լինելու է դաժան մրցակցության և անվերահսկելի բռնության ժամանակաշրջան: Մերօրյա արդյունաբերական հասարակությունների կենսակերպը լարվածության մեջ է պահում երկրագնդի էկոլոգիական կայունությունը… Վտանգված են մարդկանց՝ կյանքն արժանապատիվ վայելելու հնարավորությունները, խաղաղությունը և, վերջապես, հրատապ է երկրագնդի չափից ավելի բնակեցման հարցը»: (Համբուրգի ծրագիր, 2007թ., 6)

Ճիշտ գործող կապիտալի և ֆինանսական շուկաներ

«Ժամանակակից, գլոբալ մակարդակով կապակցված ազգային տնտեսությունները պահանջում ենք լավ գործող ֆինանսական և կապիտալի շուկաներ: Մենք ցանկանում են օգտագործել շուկաների ներուժն առավել բարձրորակ աճ ապահովելու համար: […] Ֆինանսական շուկաները ձգտում են ստեղծել միայն կարճաժամկետ եկամուտներ՝ վտանգելով ձեռնարկության երկարաժամկետ զարգացման ստրատեգիան և, հետևաբար, վերացնելով հետագայում նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները: Մենք ցանկանում ենք օգտագործել հարկերը և կազմակերպության օրենքներն այլ բաների հետ, որպեսզի օգնենք այն ներդրողներին, ովքեր պատրաստ են կատարել ոչ թե կարճաժամկետ և արագ շահույթ ապահովող, այլ երկարաժամկետ ներդրումներ… Միջազգային մակարդակում ֆինանսական և ապրանքային փոխկապակցվածության մակարդակի բարձրացումը էլ ավելի հրատապ է դարձնում դրանց միջազգային կարգավորման գործընթացների համակարգման անհրաժեշտությունը»: (Համբուրգի ծրագիր, 2007թ., 47)

Արժանապատիվ աշխատանք

«Երբ մարդիկ ունեն ապագայի նկատմամբ հեռանկարներ, որոնց կարող են ապավինել, միայն այդ դեպքում կարող են լիովին զարգացնել իրենց շնորհները և կարողությունները: Արժանապատիվ աշխատանքն իր մեջ համատեղում է ճկունություն և ապահովություն: Գիտական և տեխնոլոգիական առաջընթացի տեմպերը, աշխատանքային ոլորտում արագընթաց փոփոխությունները և մրցակցությունը պահանջում են առավել ճկունություն: Միաժամանակ ընձեռվում են անհատի զարգացման առավել լայն հնարավորություններ: Որպեսզի ճկունությունը և ապահովությունը համատեղվեն, ինչպես նաև երաշխավորվի անվտանգությունը փոփոխությունների ժամանակ, մենք ցանկանում ենք զարգացնել ժամանակակից աշխատանքային քաղաքականությունը և գործազրկության ապահովագրությունը վերամոդելավորել որպես զբաղվածության ապահովագրություն: Բայց որքան էլ ճկունությունը լինի անհրաժեշտ և ցանկալի, այն չպետք է չարաշահել: Մենք ցանկանում ենք զբաղվածություն, որը լինի մշտական և ենթակա սոցիալական ապահովագրությանը, ինչպես նաև ցանկանում ենք վերացնել անկայուն զբաղվածությունը, որպեսզի աշխատավորներն իրենց առավել ապահովված զգան»: (Համբուրգի ծրագիր, 2007թ., 54)

Վերը նշված կետերը ցույց են տալիս, որ սոցիալ-դեմոկրատիան պետք է անընդհատ զարգանա և դիմագրավի նոր մարտահրավերները՝ լիովին ըմբռնելով իր հիմքերը և ռեալ նայելով իրականությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միշել Ագլիետտա (2000), *Ein neues Akkumulationsregime. Die Regulationstheorie auf dem Prüfstand*, թարգմանել է Մարիոն Ֆիսչը, Համբուրգ

Մաքս Ադլեր (1926), *Neue Menschen. Gedanken über sozialistische Erziehung*, երկրորդ, ընդարձակ հրատարակություն, Բեռլին

Դետլեր Ալբերս և Ադրեա Նալես (2007), *Linke Programmbausteine.Denkanstöße zum Hamburger Programm der SPD*, Բեռլին

Էլմար Ալտվատեր (2006), *Das Ende des Kapitalismus, wie wir ihn kennen. Eine radikale Kapitalismuskritik*, չորրորդ հրատարակություն, Մյունխեն

Կուրտ Բեկ և Հուբերտուս Հեիլ (2007), *Soziale Demokratie im 21, Jahrhundert. Lesebuch zur Programmdebatte der SPD*, Բեռլին

Դիետռիխ Բեններ և Ֆրիդհելմ Բրուգեն (1996), «Das Konzept der Perfectibilité bei Jean-Jacques Rousseau. Ein Versuch, Rousseaus Programm theoretischer und praktischer Urteilsbildung problemgeschichtlich und systematisch zu lesen», in: Otto Hansmann (ed.), *Seminar: Der pädagogische Rousseau*, Հատոր 2: *Kommentare, Interpretationen, Wirkungsgeschichte, Weinheim*, էջ 12– 48

Իսայա Բերլին (1958), «Ազատության երկու կոնցեպցիա», Օքսֆորդ

Էդուարդ Բերշտեյն (1899), *Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie*, Շտուտգարտ

Հանս Ջուրգեն Բիելինգ, Կլասու Դոր (2001), *Flexibler Kapitalismus. Analysen, Kritik, politische Praxis*, Համբուրգ

Ուլրիչ Բրիկման Կարոլինե Կրենն և Սեբաստիան Շիեֆ (2006), *Endspiel des Kooperativen Kapitalismus. Institutioneller Wandel unter den Bedingungen des marktzentrierten Paradigmas*, Վեստբադեն

Ուլրիչ Բրիկման և Կլաուս Դորր (2006), *Prekäre Arbeit. Ursachen, Ausmaß, soziale Folgen und subjektive Verarbeitungsformen unsicherer Beschäftigungsverhältnisse*, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Բոնն

Հուբերտուս Բուշստեյն, Միքայել Հեյն և Դիրկ Ժորկե (2007), *Politische Theorien, Wochenschau für politische Erziehung, Sozial- und Gemeinschaftskunde*, Ֆրանկֆուրտ

Պիեռ Բուրդյե. (1997), Ժամանակակից հասարակության սոցիալական տառապանքները, Ստենֆորդ

Հելգա Գրեբինգ (2007), *Geschichte der deutschen Arbeiterbewegung. Von der Revolution 1848 bis ins 21, Jahrhundert*, Բեռլին

Ռոբերտ Դահլ (2000) «Բազմիշխանություն. Մասնակցություն և ընդդիմություն», Նյու Հևեն

Ալեք Դեմիրովիչ (2007), *Demokratie in der Wirtschaft. Positionen, Probleme, Perspektiven*, Մյունխեն

Դիետեր Դով և Կլոձբահ Կուրտ (2004), *Programmatische Dokumente der Deutschen Sozialdemokratie*, 4-րդ նորացված հրատարակություն, Բոնն

Կլաուս Դոր (2005), «Prekarität – eine arbeitspolitische Herausforderung», in: WSI-Mitteilungen 5 / 2005, էջ 250– 258

Հարմանն Դունկեր (1931), «Einleitung», in: Max Beer, *Allgemeine Geschichte des Sozialismus und der sozialen Kämpfe*, Բեռլին

Ֆրից Էռլեր (1947), *Sozialismus als Gegenwartsaufgabe*, Շվեյնինգեն

Վոլտեռ Էուչեր և Հելգա Գրեբինգ (2005), *Geschichte der sozialen Ideen in Deutschland. Sozialismus– Katholische Soziallehre – Protestantische Sozialethik*. 2-րդ հրատարակություն, Վեստբադեն

Ֆերդինանդ Լասսալ (1987), *Reden und Schriften*, խմբագրել է Ջուրգեն Ֆրեդերիկը, 1-ին հրատարակություն, Լայպցիգ

Դետլեֆ Լեներտ (1983), *Sozialdemokratie zwischen Protestbewegung und Regierungspartei 1848–1983*, 1-ին հրատարակություն, Մայնի Ֆրանկֆուրտ

Դի Լինկ (2007), Programmatische Eckpunkte der Partei Die Linke. Տես՝ http://www.die-linke.de/index.php?id=377 (accessed on 24 July 2009).

Ջոն Լոք (1988), «Կառավարման երկու թեզիս» 3-րդ հրատարակություն, Քեմբրիջի համալսարանական հրատարակություն

Ռոզա Լյուքսեմբուրգ (1990 [1899]), *Sozialreform oder Revolution? Mit einem Anhang Miliz und Militarismus*, Ռոզա Լյուքսեմբուրգ, *Gesammelte Werke*, Հ. 1, 1893– 905, մաս 1, 7-րդ հրատարակություն, Բեռլին, էջ 367– 466

Իմանուել Կանտ (1963), *Grundlegung zur Metaphysik der Sitten, in: Kants Werke in sechs Bänden*, խմբագրել է W. Weischedel, հատոր IV, Դարմշտատ

Ռոբերտ Կաստել (2000), «Աշխատավորներից մինչ աշխատավարձով աշխատողներ. Սոցիալական հարցի տրանսֆորմացիա», թարգմանվել է ֆրանսերենից Թիչարդ Բոյդի կողմից, Նյու-Բրասվիգ և Լոնդոն

Մանուել Կաստելս (2003), «Տեղեկատվության դարաշրջան», հ. 1 «Համագործակցող հասարակության վերելք», հ. 2 «Անհատականության ուժը», հ. 3 «Դարաշրջանի վերջը», Օքսֆորդ, Վիլլի Բլաքվիլ

Վոլֆգանգ Կերստինգ (2000), *Politische Philosophie des Sozialstaats*, Weilerswist

Էրվին Կարիգրետ (2001), *Gesellschaftliche Solidarität. Prinzipien, Perspektiven und Weiterentwicklung der sozialen Sicherheit*, Բազել, Ժնև և Մյունխեն

Զուրգեն Կոկ, (1995) (ed.), *Bürgertum im 19, Jahrhundert*, հատոր 1: *Einheit und Vielfalt Europas*, Գետինգեն:

Համբուրգի ծրագիր (ՍԴԿ) (2007), *Grundsatzprogramm der Sozialdemokratischen Partei Deutschlands*, վերահաստատվել է 28 հոկտեմբերի 2007թ. Համբուրգում ՍԴԿ համաժողովում

Զորջ Հավերկեյտ (1992), *Verfassungslehre. Verfassung als Gegenseitigkeitsordnung*, Մյունխեն

Վոլգանգ Հեյդելմեյեր (1997) *Die Menschenrechte. Erklärungen, Verfassungsartikel, internationale Abkommen,* 4-րդ ընդարձակ և նորացված հրատարակություն, Պատեռբորն, Մյունխեն, Վիեննա և Ցյուրիխ

Թոմաս Հեյնրիխ (2002), *Freiheit und Gerechtigkeit. Philosophieren für eine neue linke Politik*, 1-ին հրատարակություն, Մյունխեն

Կառլ Օտտո Հոնդրիխ և Կլաուդիա Կոխ-Ազբերգեր (1994), *Solidarität in der modernen Gesellschaft*, Մայնի Ֆրանկֆուրտ

Վոլֆգանգ Մարկել (2006), *Die Reformfähigkeit der Sozialdemokratie. Herausforderungen und Bilanz der Regierungspolitik in Westeuropa*, 1-ին հրատարակություն, Վեստբաղեն

Կարլ Մարքս (1998), *Kritik der politischen Ökonomie* (=MEW 23), Բեռլին

Ռուդոլֆ Մեյդներ և Աննա Հեդբորգ (1984), *Modell Schweden. Erfahrungen einer Wohlfahrtsgesellschaft*, Ֆրանկֆուրտ, Նյու Յորք

Թոմաս Մեյեր (2005), *Theorie der Sozialen Demokratie*, 1-ին հրատարակություն, Վեստբաղեն

Թոմաս Մեյեր (2006), *Praxis der Sozialen Demokratie*, 1-ին հրատարակություն, Վեստբաղեն

Թոմաս Մեյեր և Նիկոլ Բրեյեր (2005), *Die Zukunft der Sozialen Demokratie*, Բոնն

Շառլ Լուի Մոնտեսքյո (1989), «Օրենքի Ոգու մասին» խմբագրվել է և թարգմանվել Անն Քոլերի, Բասիա Կարոլինի և Հորոլդ Սամուել Ստոնի կողմից, Քեմբրիջի համալսարանական հրատարակություն

Գերո Նեգեբայեր (2007), *Politische Milieus in Deutschland*. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Բոնն

Ֆրանս Շուլթերիս և Կրիստինա Շուլց (2005), *Gesellschaft mit begrenzter Haftung. Zumutungen und Leiden im deutschen Alltag*, Կոնստանս

Մաթիաս Պլատզեկ, Ֆրենկ Վոլթեր Ստեյմեյեր և Փիր Ստեյնբրուկ (2007), *Auf der Höhe der Zeit. Soziale Demokratie und Fortschritt im 21, Jahrhundert*, Բեռլին

Դիետեր Պլեֆֆ և Բեռնարդ Վալպեն (2001), *«Gedanken zu einer Soziologie der Intellektuellen des Neoliberalismus»*, in: Hans-Jürgen Bieling, Klaus Dörre et al. (2001), *Flexibler Kapitalismus. Analysen, Kritik, politische Praxis*, Համբուրգ, էջ 225–239

Զուրգեն Ռիտսերտ (1997), *Gerechtigkeit und Gleichheit*, 1-ին հրատարակություն, Մյունխեն

Զոն Ռոուլզ (1979), *«Արդարության տեսություն»,* նորացված հրատարակություն, Հարվարդի համալսարանական հրատարակություն

Զուլիան Նիդա Ռումելին և Վինֆգանգ Թեյիռս (1997), *Philosophie und Politik*, 1-ին հրատարակություն, Էսսեն

Ժան Ժակ Ռուսո (1997), *«Մտորումներ անհավասարության մասին»,* թարգմանել է Մաուրիսե Կրանսթոնը

Ամարտա Սեն (1985) *«Ապրանքներ և հնարավորություններ»,* Ամստերդամ:

Միքայել Վալզե (1997), *«Pluralismus und Demokratie»*, Զուլիան Նիդա Ռումելին և Վինֆգանգ Թեյիռս (1997), *Philosophie und Politik*, 1-ին հրատարակություն, Էսսեն, էջ 24– 40

Նենսի Ֆրեսեր և Ատել Հոնեխ (2003), *Umverteilung oder Anerkennung? Eine politisch-philosophische Kontroverse*, Մայնի Ֆրանկֆուրտ

ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏՐՎՈՒՄ ԸՆԹԵՐՑԵԼ

Հետևյալ գրականությունն առաջարկվում է նրանց, ովքեր ցանկանում են առավել խոր ուսումնասիրել սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը:

Քաղաքական գաղափարների պատմություն

Euchner, Walter, Helga Grebing et al.
Geschichte der sozialen Ideen in Deutschland. Sozialismus. Katholische Soziallehre. Protestantische Sozialethik. 2005
Այս ծավալուն ձեռնարկն ընդարձակ կերպով ներկայացնում է սոցիալական շարժումների և գաղափարների զարգացումների պատմությունը՝ կենտրոնանալով սոցիալիզմի, կաթոլիկ-սոցիալական դոկտրինի և բողոքական-սոցիալական էթիկայի վրա:

Langewiesche, Dieter:
Liberalismus und Sozialismus. Ausgewählte Beiträge. 2003,
Verlag J. H. W. Dietz Nachf. (ISBN: 978-3-8012-4132-2)
Իր 17 էսսեներում թյուբինգենյան ականավոր պատմաբան Դիտեր Լանգևիեշեն քննության է առնում 19-20-րդ դարերի դինամիկ և փոխկապակցված սոցիալական գաղափարախոսությունների պատմությունը՝ լիբերալիզմը և սոցիալիզմը, իրենց մշակութային, սոցիալական և քաղաքական կոնտեքստներում:

Հիմքեր

Թոմաս Մեյեր
«Սոցիալ-դեմոկրատիայի տեսություն», 2007թ., գրքի բնօրինակի գերմանական հրատարակությունը՝ 2005թ.
Ազատակամական դեմոկրատիա և սոցիալ-դեմոկրատիա. ներկայիս գլոբալիզացված աշխարհում այս երկու ուժերը մրցակցում են իրար հետ: Մեյերն իր այս գրքում շարադրում է սոցիալ-դեմոկրատիայի տեսական հիմքերը, որը հիմնական քաղաքական և քաղաքացիական իրավունքներից բացի ներառում է նաև սոցիալական և տնտեսական իրավունքները:

Թոմաս Մեյեր՝ Նիկոլ Բրեյերի հետ համագործակցությամբ
Die Zukunft der sozialen Demokratie. 2005,
Politische Akademie der Friedrich-Ebert-Stiftung. (ISBN: 3-89892-315-0)
Այս հրատարակության մեջ ամփոփված են *սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը* և *Praxis der Sozialen Demokratie.*

Սոցիալ-դեմոկրատիան Գերմանիայում

Albers, Detlev, and Andrea Nahles:

Linke Programmbausteine. Denkanstöße zum Hamburger Programm der SPD.

2007, Vorwärts Verlag. (ISBN: 9783866020)

Այս գրքում տեղ են գտել ՍԴԿ ծրագրային կոմիտեի անդամների և ՍԴԿ ֆեդերալ երկրամասային անդամների հոդվածները մի շարք քաղաքական թեմաներով՝ աշխատանքային շուկա, սոցիալական հարցեր և էներգետիկա, ինչպես նաև Եվրոպայի և միջազգային հարաբերությունների վերաբերյալ թեմաներով: Այս գրքում, որ համարվում է բանավեճերից առաջացած Համբուրգյան Ծրագրով հաստատված կուսակցության նոր ծրագրի հավելումը, զետեղված են բազմաթիվ նոր ու հետաքրքիր գաղափարներ:

Neugebauer, Gero:

Politische Milieus in Deutschland. Die Studie der Friedrich-Ebert-Stiftung.

2007, Verlag J. H. W. Dietz Nachf. (ISBN: 978-3-8012-0377-1)

2006թ. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը իրականացրեց երեք նոր ուսումնասիրություններ, որոնց նպատակն էր պարզել հնարավոր նոր բարեփոխումների ընդունման հնարավորությունները և թե ինչ խնդիրներ կարող են առաջանալ դրանք հասարակությանը ներկայացնելուց հետո: Այս քանակական հետազոտություններում արժեքները և տեսակետները հետազոտվել էին քաղաքական ինը տարբեր շրջանակներում: Այդ շրջանակները, որոնք անվանվեցին «կախյալ անհուսալիություն», միանգամից արժանացան հասարակական բուռն քննարկումների ու բանավեճերի:

Platzeck, Matthias, Peer SteinbrƦck and Frank-Walter Steinmeier (eds):

Auf der Höhe der Zeit.

Soziale Demokratie und Fortschritt im 21, Jahrhundert. 2007,

Vorwärts Verlag. (ISBN: 978-3-86602-629-2)

Վիլլի Բրանդտը մեկ անգամ ևս հիշեցրեց, որ եթե կուսակցությունը ցանկանում է որևէ օգուտ տալ, պետք է քայլի «ժամանակին համընթաց»: Կուսակցության ղեկավարները վերսկսեցին բանավեճերն այն մասին, թե ինչպես ՍԴԿ-ն իր՝ ազատության, արդարության և համերաշխության մասին արժեքները կարող է վերափոխել սոցիալական առաջադիմական քաղաքականության և նպաստել սոցիալական պետության ստեղծմանը: Այս խնդիրներն ի հայտ եկան կուսակցության նոր ծրագրի քննարկման ընթացքում:

Beck, Kurt, and Hubertus Heil (eds):
Soziale Demokratie im 21, Jahrhundert.
Lesebuch zur Programmdebatte der SPD. 2007,
Vorwärts Verlag. (ISBN: 978-3-86602-525-7)
Այս գրքի խմբագիրները համախմբվեցին այլ հեղինակաների հետ՝ բանավիճելու կուսակցության ծրագրի և ապագայի կարևորագույն մարտահրավերների շուրջ: Ինչպե՞ս կարող ենք նպաստել գլոբալիզացիայի ձևավորմանը և ո՞ւմ հետ: Որտե՞ղ է գլխավորվում Եվրոպան: Ինչպե՞ս կարելի է վերակենդանացնել ժողովրդավարությունը: Ինչպե՞ս կարելի է ապահովել արագ տնտեսական աճ և միևնույն ժամանակ լուծել սոցիալական և բնապահպանական խնդիրները: Ինչպե՞ս ստեղծել նոր աշխատատեղեր և ի՞նչը կարող է նպաստել սոցիալական պետության ստեղծմանը, էներգիայի հարցում հավանական փոփոխություններին: Սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական դաշինքի ի՞նչ հեռանկարներ կան այսօր:

Սոցիալ-դեմոկրատիան միջազգային ասպարեզում

Թոմաս Մեյեր
Praxis der Sozialen Demokratie. 2005,
VS Verlag für Sozialwissenschaften. (ISBN: 978-3-531-15179-3)
Այս հատորը ներկայացնում է Թոմաս Մեյերի «Սոցիալ-դեմոկրատիայի տեսության» ներքո բնագավառի առաջատար մասնագետների կողմից տարբեր երկրների որակական վերջին ուսումնասիրությունները: Ուսումնասիրվող երկրների շարքում են Շվեդիան, Ճապոնիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները և ԱՄՆ-ն: Այս աշխատությունն ընդգրկում է նաև սոցիալ-դեմոկրատիայի չափման նոր ինդեքս:

Politische Akademie der Friedrich-Ebert-Stiftung:
Soziale Demokratie in Europa. 2005, (ISBN: 3-89892-357-6)
Այս հրատարակությունն իր մեջ ներառում է բազմաթիվ քաղաքական գործիչների և գիտնականների տեսակետներ, որոնք հանդես եկան Ծրագրի շուրջ բանավեճերում և քննարկումներում: Կիզակետը հանդիսացավ Եվրոպայի առավել կարևոր սոցիալական պետության մոդելների համեմատությունը:

Merkel, Wolfgang, Christoph Egle, Christian Henkes,
Tobias Ostheim and Alexander Petring:
Die Reformfähigkeit der Sozialdemokratie. Herausforderungen und Bilanz der Regierungspolitik in Westeuropa. 2005,
VS Verlag für Sozialwissenschaften. (ISBN: 978-3-531-14750-5)
1990-ականների վերջում սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն իրենց մասնակցությունն ունեին Եվրոմիության անդամ երկրների կառավարություններում: Որքա-

նո՞վ են հաջողվել բարեփոխումների նրանց ծրագրերը: Արդյոք նրանք հետևո՞ւմ էին միասնական «երրորդ ուղուն»: Հիմնվելով տվյալ երկրի մանրամասն ուսումնասիրությունների վրա, Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Նիդեռլանդների, Շվեդիայի և Դանիայի սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը ենթարկվեց վերլուծման և գնահատման:

Պատմություն

Dieter Dowe:

Von der Arbeiter-zur Volkspartei. Programmentwicklung der deutschen Sozialdemokratie seit dem 19, Jahrhundert. Reihe Gesprächskreis Geschichte 2007, Heft 71 (http: / / library.fes.de /pdf-files/historiker/04803, pdf)

Դիտեր Դոուն ներկայացնում է սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը սկսած 1848թ. հեղափոխությունից և ծրագրային ու գործնական տեսակետներից որպես պետության և հասարակության միջև ազատ, ժողովրդավարական և արդար կարգերի մասին երկարատև և երբեք չավարտվող բուռն բանավեճերի կարևորագույն մաս:

Miller, Susanne, and Heinrich Potthoff:

Kleine Geschichte der SPD 1848– 2002, 2002,

Verlag J. H. W. Dietz Nachf. (ISBN: 978-3-8012-0320-7)

ՍԴԿ հակիրճ պատմությունը դարձավ մի ստանդարտ աշխատություն: Այն ներկայացնում է Գերմանիայի ամենահին կուսակցության պատմությունը՝ ծագումից մինչև Գերհարդ Շրյոդերի կառավարման ժամանակաշրջանը: Գրքում զետեղված ժամանակագրական աղյուսակը ընթերցողներին է տրամադրում այն ամենը, ինչ նրանց հարկավոր է նախնական գիտելիքներ ձեռք բերելու համար:

Schneider, Michael:

Kleine Geschichte der Gewerkschaften. Ihre Entwicklung in Deutschland von den Anfängen bis heute. 2000,

Verlag J. H. W. Dietz Nachf. (ISBN: 978-3-8012-0294-1)

Մայքլ Շնայդերը ընթերցողին է ներկայացնում արհեստակցական միությունների պատմությունը՝ ստեղծումից մինչև ինդուստրիալիզացման շրջանը, ինչպես նաև մինչև գլոբալիզացման ժամանակաշրջանի մարտահրավերները:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ջուլիա Բլասիուս (1981թ), Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամում աշխատում է որպես ռեֆերենտ: Պասսաուի համալսարանում ուսումնասիրել է լեզուներ, տնտեսագիտություն և մշակույթ: Ապա Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում ստացել է եվրոպական քաղաքական տնտեսության ոլորտի մագիստրոսի աստիճան:

Ֆրեդերիկ Բոլ (1983թ.), Մյունստերի համալսարանի (Westfälischen Wilhelms-Universität Münster) ուսանող, ուսումնասիրում է քաղաքական գիտություններ, ինչպես նաև հասարակագիտություն և հոգեբանություն:

Թոբիաս Գոմբերտ (1975թ.), հանձնաժողովների աշխատանքային սեմինարների կազմակերպիչ: 2003-2005թթ. ՍԴԿ Երիտասարդ սոցիալիստների փոխնախագահն էր, իսկ 2005-2007թթ. գործադիր մարմնի անդամ: Նրա գիտական աշխատությունները կենտրոնացված են Ժան Ժակ Ռուսոյի, մարքսիստական տեսության և բարոյական փիլիսոփայության վրա:

Էրիկ Գուրդիես (1944թ.), 1993թ.-ից Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Մեկլենբուրգ Առաջավոր Պոմերանիայի ռեգիոնալ կենտրոնի տնօրենն է: Ուսումնասիրել է տնտեսագիտություն և սոցիոլոգիա: Դասավանդում է Բերգնոյշտադտի և Արենսբուրգի համալսարաններում (*Heimvolkshochschule*), ինչպես նաև Համբուրգի տնտեսագիտության և քաղաքականության բարձրագույն դպրոցում:

Քրիստոֆ Էգլե (1974թ.), գիտաշխատող է Մյունխենի համալսարանում (Ludwig-Maximilians-Universität München): Ուսանողական տարիներին ուսումնասիրել է քաղաքագիտություն, սոցիոլոգիա և փիլիսոփայություն, պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Գերմանիայում և Ֆրանսիայում տնտեսական և սոցիալական քաղաքականության ռեֆորմները» թեմայով: 2001-2004թթ. ներգրավվել է Հայդելբերգի համալսարանի (Ruprecht-Karls-Universität Heidelberg) Արևմտյան Եվրոպայի երկրների սոցիալ-դեմոկրատական ռեֆորմների քաղաքականության գիտահետազոտական ծրագրերում:

Յոն-Յեունգ Լի (1963թ.), Հելլե-Վիտենբերգում Մարթին Լյութեր Քինգի անվան Քաղաքագիտական համալսարանի դասախոս: Ուսուցանել է Գետինգենի Ջորջ Ավգուստի անվան համալսարանում, որտեղ և ստացել է դոկտորի գիտական աստիճան: 2001թ. Հելլե-Վիտենբերգում Մարթին Լյութեր Քինգի անվան համալսարանում ավարտում է իր աշխատանքը: Նրան շնորհվում է Ալեքսանդր ֆոն

Քաղաքականությունը պահանջում է հստակ ուղղվածություն: Միայն նրանք, ովքեր ունակ են հստակ արտահայտելու իրենց նպատակները, կհասնեն դրան և իրենց հետևից կտանեն նաև մյուսներին: Հավատարիմ մնալով այս գաղափարին, այս գիրքը փորձում է քննարկել սոցիալ-դեմոկրատիայի իմաստը 21-րդ դարում: Որո՞նք են դրա հիմքում ընկած արժեքները, որո՞նք են նպատակները, ինչպե՞ս այն կարող է կիրառվել գործնականում: Այս գրքի թեմաները քննված են Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի սեմինարների հիման վրա: Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան ստեղծվել է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի կողմից, որպեսզի ապահովի դասընթացներ նրանց համար, ովքեր հետաքրքրվում են քաղաքականությամբ:

Ակադեմիայի գործունեության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելել www.fes-soziale-demokratie.de **կայքը:**

ISBN 978-99941-2-553-1

Հումբոլդ Ստիֆտանգի թոշակ, այնուհետև որպես գիտաշխատող հրավիրվում է Տոկիոյի համալսարան: Ներկայումս դասախոսում է Գերմանիայի և Կորեայի համալսարաններում:

Քրիստիան Կրելլ (1977թ.), Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի անդամ է, Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի պատասխանատուն: Չիգենի և Յորքի համալսարաններում ուսումնասիրել է քաղաքագիտություն, պատմություն և սոցիոլոգիա: 2007թ. ստացել է քաղաքագիտության դոկտորի կոչում՝ «ՍԴԿ-ի, Լեյբորիստական և Սոցիալիստական կուսակցությունների եվրոպական քաղաքականությունը» թեզի համար:

Մարկ Հերտեր (1974թ.), Համի (Վեստֆալիա) ՍԴԿ հանձնաժողովի խմբի անդամ: Մյունստերի համալսարանում ուսումնասիրում է իրավաբանություն (Westfälischen Wilhelms-Universität Münster): 2002թ.-ից NRW-ՍԴԿ ռեգիոնալ ղեկավարն է, իսկ 2006թ.-ից՝ ռեգիոնալ կուսակցական վերահսկիչ կոմիտեի անդամ:

Մաթեաս Նեյիս (1976թ.), Մյունստերի համալսարանում (Westfälischen Wilhelms-Universität Münster) ուսանել է գերմաներեն, ինչպես նաև քաղաքագիտություն և հասարակագիտություն: 2004-2006թթ. Ռեքլինխաուզենի գիտա-հետազոտական համալսարանում աշխատել է որպես գիտահետազոտական ծրագրերի ասիստենտ «Arbeit-Bildung-Patizipation» ծրագրով: 2006թ. որպես գիտահետազոտական ասիստենտ մասնակցել է Յենի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի HBS «Ակադեմիական հովանավորությունը որպես տնտեսական գործոն» ծրագրի աշխատանքներին:

Քրիստինա Ռենտչ (1982թ.), Մյունստերի համալսարանում ուսումնասիրում է հասարակագիտություն, քաղաքագիտություն և հոգեբանություն (Westfälischen Wilhelms-Universität Münster): Մինչ այդ Քյոլնում ուսումնասիրել է գովազդի ոլորտը:

Մարտին Տիմպ (1978թ.), ՍԴԿ Երիտասարդ սոցիալիստների (Յուզոս) համալսարանական խմբի դաշնային նախագահն է, իսկ 2007թ.-ից՝ Սոցիալ-դոմոկրատիայի ակադեմիայի սեմինարների կազմակերպման ղեկավարը: Քաղաքագիտություն է ուսանել Օտտո-Սուհի ինստիտուտում, որը Բեռլինի Ազատ Ֆամալսարանի մասն է կազմում:

Հետագա ընթերցանության համար՝
Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի օնլայն ակադեմիայի «Սոցիալ-դեմոկրատիա» մոդուլն առաջարկում է առավել խորացված տեքստեր և նյութեր սոցիալ-դեմոկրատիայի ծագման և արժեքների մասին:
Այն հասանելի է հետևյալ վեբ-կայքում. www.fes-onlineakademie.de

Մենք ցանկանում ենք ձեզ հրավիրել մասնակցելու սոցիալ-դեմոկրատիայի շուրջ բանավեճերի: Դրա համար Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան առաջարկում է գործունեության լայն ասպարեզ: Սեմինարների յոթ մոդուլները, սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները և նրանց գործնական կիրառումը՝

Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը

Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան

Սոցիալական պետությունը և սոցիալ-դեմոկրատիան

Գլոբալիզացիան և սոցիալ-դեմոկրատիան

Եվրոպան և սոցիալ-դեմոկրատիան

Ներգաղթ, ինտեգրում և սոցիալ-դեմոկրատիա

Պետություն, քաղաքացիական հասարակություն և սոցիալ-դեմոկրատիա

Խաղաղությունը և սոցիալ-դեմոկրատիան

www.fes-soziale-demokratie.de